


ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐԱԳՈՒՅՆ  
Հ Ա Յ Բ









# ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

---

ԽՈՐԱԳՈՒՅՆ  
Հ Ա Յ Ք



Խմբագիրներ՝ **Մ. Գ. ՄԱԶՄԱՆՅԱՆ****Վ. Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Խորագրույն Հայք նահանգը հարուստ է ճարտարապետական նշանավոր հուշարձաններով, որոնց ուսումնասիրությամբ մեկանում շատ քիչ են վրադվել:

Աշխատության մեջ հուշարձաններից յուրաքանչյուրի վերաբերյալ տրված է պատմական համառոտ տեղեկանք, վերլուծված են դրանց ճարտարապետական-ոճական առանձնահատկությունները, արժեքավորված են որպես արվեստի գործեր:

Գիրքը հազեցված է բավաթիվ գծագրերով և լուսանկարներով, որոնք ակներև են դարձնում պատմական Հայաստանի ինչպես կենտրոնում, այնպես էլ ծայրագավառներում ստեղծված հուշարձանների ճարտարապետական-ոճական ընդհանրությունը:

Մ  $\frac{80102 (146)}{705 (01) 77}$  138, 77 «Տ»



Մեծ Հայքի 14-րդ նահանգ Խորագույն Հայքը գտնվում էր Սև ծովի հարավ-արևելակողմում, ծովից անջատված Պոնտական լեռնաշղթայի Պարխար լեռնազանգվածով: Այդ խիստ լեռնային և անտառապատ երկիրը տարածվում էր Վոհ (այժմ՝ Ճորոխ) գետի հոսանքում, Ալորդ (այժմ՝ Թորթում), Բողխա, Բերդիկ (այժմ՝ Բանակ, Փենեկ) գետերի և սրանց վտակների ավազաններում: Խորագույն Հայքը ընդգրկում էր նաև Կուր գետի ակունքների շրջանը՝ Կող գավառը (այժմ՝ Գյուլե):

Նրան սահմանակից էին հյուսիսից՝ Կղարջքն ու Արդահանը, արևելքից՝ Վանանդը, հարավից՝ Բասեանը, հարավ-արևմուտքից՝ Կարինն ու Սպերը, հյուսիս-արևմուտքից՝ Խաղտիքը:

Խորագույն Հայքի մասին առաջին գրական տեղեկությունները հանդիպում ենք ասորեստանյան և ուրարտական արձանագրություններում, որտեղ այս երկիրը հիշատակվում է «Դայանի», «Դիաուեխի» ձևերով<sup>1</sup>: Անտիկ գրականության մեջ առաջին մանրամասն տեղեկությունները հանդիպում ենք Քսենոֆոնի մոտ: Վերջինս հաղորդում է, որ այդ երկրի բնակիչները խիպախ էին և ռավմասեր, գրեթե չէին ենթարկվում Աքեմենյան Պարսկաստանին և ինքնուրույն էին:

Արդեն մ.թ.ա. VIII դարում Խորագույն Հայքի տերիտորիան Դիաուեխի անունով գտնվում էր ուրարտական պետության կազմում: Հետագայում, մ.թ.ա. VII դարի վերջում, երբ առաջ եկավ Հայկական թագավորությունը, Ուրարտուի պետության տերիտորիայի հետ միասին այս նահանգը ևս մտավ նրա կազմը: Աքեմենյանների տիրապետության ժամանակաշրջանում նախկին Հայկական թագավորության տերիտորիան «Արմենիա» անունով վարչականորեն բաժանվեց երկու մասի՝ 13 և 18-րդ սատրապությունների, Խորագույն Հայքը մտավ վերջինիս կազմը: Մ.թ.ա. III դարում, երբ

հույն-մակեդոնական աշխարհակալությունը քայքայվեց, նորից բարձրացավ Հայկական թագավորությունը Երվանդունի դինաստիայի գլխավորությամբ, որը ընդգրկում էր նաև այս նահանգի տարածքը: Նույն սահմաններն ուներ Մեծ Հայքի թագավորությունը Արտաշիսյանների ժամանակաշրջանում: Խորագույն Հայքը Հայաստանի կազմումն էր նաև մարպպանական և արաբական տիրապետության ժամանակաշրջաններում:

Աշխարհագրական տեսակետից Խորագույն Հայքը (Տայքը) շատ հստակ հասկացություն է և VII դարի «Աշխարհացոյցը» շատ պարզ պատկերացում ունի այս երկրի մասին: Ստորև բերում ենք այդ նկարագրությունը. «Տասնչորսերորդ (աշխարհն է) Տայքը, Գուգարքին հարևան, ամրոցներով ու բերդերով հարուստ, ունի ութ գավառ. Կող (գավառ), որը գտնվում է արևելյան մասում, որտեղից բխում են Կուր գետի աղբյուրները Կրիակունք կոչված գյուղից: Եվ Կուր գետը (այստեղից) հոսում է դեպի արևմուտք Արտահան երկայնաձև թաղանթի տակ, ապա դառնում է դեպի հյուսիս և իջնում է Սամցխե (գավառը), որից հետո դառնում է դեպի արևելք, մինչև Կասպից ծովը:

Իսկ Կող գավառից արևմուտք գտնվում են Բերդացիոր, Պարտիպացիոր, ձակք, որից արևելք և հարավ (գտնվում են) Բուղխա, Ոքաղե և Ալորդացիոր գավառները իրենց (համանուն) գետակներով, որոնք խառնվելով իրար՝ թափվում են Վոհ գետը: Այս գավառներից արևմուտք է Արսյացիորը (գավառը)՝ Պարխար լեռների փեշերին, որտեղից հոսում է Վոհ գետը, որը գալով Սպեր (գավառից), Թուխարք բերդով անցնում է Կղարջք (գավառը), այստեղից էլ՝ Եգր (աշխարհ)՝ Նիգալ Մրուղ և Մրիտ գավառներով հոսելով, թափվում է Պոնտոսի ծովը, որը եզերացիները կոչում են Ակամսիս, իսկ Խաղտիք՝ Կակամար: Տայքում կա թուլ, թթու նուռ, աղտոր, սերկևիլ, պողպատունկ և նուշ<sup>2</sup>: Անհրա-

<sup>1</sup> Б. Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1963, էջ 45, 54, 57, 64:

<sup>2</sup> Ս. Տ. Երևյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 110—111:



ժեշտ է նշել, որ նահանգում, ինչպես գավառների, գետերի և լեռների, այնպես էլ բոլոր բնակավայրերի անունները չնչին բացառությամբ հայկական են: Նույնիսկ վերջին դարերում, երբ այն նվաճվեց օսմանյան Թուրքիայի կողմից, մինչև Մեծ եղեռնի տարիները, այս տերիտորիայի քարտեզը պահպանել է գրեթե միայն հայկական անուններ թուրքական արտասանությամբ: Առաջին ինպերիալիստական պատերազմի տարիներին նահանգի հայ ազգաբնակչության մի մասը 1915—1921 թթ. գաղթեց Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս, իսկ մի մասն էլ կոտորվեց:

Ֆեոդոսյական հարաբերությունների ձևավորման ու խլրացման ժամանակաշրջանում նախկին Մեծ Հայքի թագավորության տերիտորիայի վրա առաջ են գալիս հայկական ֆեոդալական տիրույթներ՝ նախարարություններ և իշխանություններ, որոնցից յուրաքանչյուրը ուներ իր ուրույն քաղաքական և տնտեսական շահերը, հանգամանք, որ լայն կերպով օգտագործում էին օտար նվաճողները՝ նախ արաբները, ապա բյուզանդացիները: Խորագույն Հայքը մ.թ. առաջին դարերից սկսած կապում էր Մամիկոնյան նախարարական տան ժառանգական կալվածքը: Մամիկոնյանները գլխավորում էին հայ ժողովրդի պայքարը Սասանյան Իրանի, ապա՝ արաբական խալիֆայության տիրապետության դեմ, հենվելով բյուզանդական կայսրության վրա: Սակայն ժամանակի ընթացքում արաբների հետ համաձայնության ելք գտան Բագրատունյաց, Արծրունյաց, Սյունյաց և այլ նախարարական տներ: Հետագայում Բագրատունիները խալիֆայությունից ստացան Տարոնը, Խորագույն Հայքը և այլ գավառներ: IX—X դարերի արաբական մատենագիրները և զուգահեռաբար՝ չէին տարբերում Շիրակից, որովհետև երկուսն էլ Բագրատունիների սեփականությունն էր դարձել, ուստի կոչում էին «Սիրաջ-Տայր», այսինքն՝ «Շիրակ-Տայք»<sup>1</sup>:

Նախարարական Հայաստանի ներքին քաղաքական վիճակը պզալի փոփոխություններ կրեց 773—775թթ. ապստամբությունից հետո, և Մամիկոնյանները վերացան քաղաքական ասպարեկից: Նրանց մնացորդները հապիվ պահպանում

էին իրենց գոյությունը Բագրևանդում և Խորագույն Հայքի անտառապատ, անմատչելի լեռներում: Արաբական պատժիչ արշավախումբը ամայացնում է Խորագույն Հայքը և Կղարջքը: Հատկապես ավերվում են այնտեղի վանքերը, իսկ նրանց վանականները կամ ոչնչացվում, կամ փախչում են Հայաստանի անմատչելի տեղերը: Մամիկոնյանների կալվածքներում ապաստան են գտնում նրանց հետ խնամիական կապերով կապված Վասակ Բագրատունին և նրա եղբոր՝ Սահակ Բագրատունու երկու որդիները՝ Աշոտ Մսակերը և Շապուհը: Աշոտ Կույր Բագրատունու որդի Վասակ Բագրատունին պատսպարվում է Կղարջք գավառի Արտանուշ ամրոցում, որը նա բարեկարգում է և դարձնում իր և իր ժառանգների կենտրոնը:

Վասակ Բագրատունու հետ Հայաստանի հյուսիս-արևմտյան ծայրամասում ապաստան գտած նրա եղբոր որդիներից Աշոտ Մսակերը տիրացել էր Խորագույն Հայքի երբեմնի տերեր Մամիկոնյանների կենտրոն Իշխանաց գյուղից ոչ հեռու գտնվող Կաղամախ ամրոցին:

Հայաստանի կենտրոնական գավառներում մնում էր Բագրատունիների Խլաթի ճյուղը, որը հավատարիմ էր արաբներին և կարողացավ իր ձեռքում պահել Հայոց իշխանի և Հայոց սպարապետի գործակալությունները: Սահակ Բագրատունու որդիներ՝ Բագարատը, որը տիրել էր Տարոնին, և Աշոտը համագործակցում էին արաբների հետ և 773—775 թթ. ապստամբական շարժման ճնշումից հետո նշանակվեցին՝ Աշոտը՝ իշխան Հայոց (775—804 թթ.), Բագարատը՝ սպարապետ Հայոց (775—786 թթ.): Աշոտի մահից հետո Հայոց իշխան է դառնում նրա որդին՝ Սմբատ Բագրատունին (804—805 թթ.), սակայն վերջինս մեկ տարուց հետո մահանում է՝ իշխանության գլուխ է անցնում Խորագույն Հայքի Կաղամախի ամրոցում իշխող Աշոտ Մսակերը: Վերջինս մոր կողմից պատկանելով Կամսարականների տոհմին, գնում է Շիրակ և Արշարունիք գավառները, ամրապնդվում Հայաստանի կենտրոնական մասերում, Խորագույն Հայքը թողնելով իր ժառանգներին: Արաբները, սակայն, նախկինի պես հովանավորում էին Խլաթի և Տարոնի Բագրատունիներին: Աշոտ Մսակերի մահից հետո խալիֆը նրա պաշտոնը հանձնեց Բագարատ Բագրատունուն:

Ստեղծված քաղաքական իրադրության այս պայմաններում, երբ խալիֆայությունը օրըստօրե

<sup>1</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»-ի, Երևան, 1963:

կորցնում էր իր քաղաքական դիրքերը, բյուզանդական կայսրությունը հետպետե դադարում է հովանավորական քաղաքականություն տանել հայ և վրաց Բագրատունիների և աբխազաց թագավորների հանդեպ: Այժմ կայսրությունը ուշադրություն է դարձնում Խորագույն Հայքի և Կղարջքի Բագրատունիների վրա, որոնց շնորհում է կյուրապաղատի տիտղոս: Սրանք ընդգրկվում են կայսրության քաղաքական ոլորտը և հակադրվում հայոց և աբխազաց թագավորներին: X դարի վերջում Խորագույն Հայքի Բագրատունիների տոհմից նշանավոր քաղաքական դեմք էր «Կիրապաղատ Հայոց»<sup>1</sup> Դավիթը (960—1001), որը միառժամանակ դառնում է ամենապզդեցիկ դեմքը հայ և վրաց իշխանների մեջ: Նրա հետ հաշվի են նստել ոչ միայն Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի, այլև Բյուզանդիայի տերերն ու կայսրերը: Դավթի օրոք Խորագույն Հայքը որևէ հարձակման չի ենթարկվել, ընդհակառակը, նրա տիրույթների սահմաններն են ժամանակ առ ժամանակ ընդարձակվել: Նրա ժամանակակից Ասողիկի վկայությամբ «Դավիթը եկեղեցիների մեծ շինարար էր»:

Բյուզանդիայում այս ժամանակաշրջանում թագավորող «մակեդոնական» դինաստիան հասել էր իր հզորության գագաթնակետին: Բյուզանդական Բարսեղ (Վասի) Բ Բուղարասպան կայսրը (976—1025) գործում էր և արևմուտքում՝ Բուղարիայում, ծնկի բերելով բուղարական թագավորությունը, և արևելքում՝ շախշախելով խալիֆայության հզորությունը: Կայսրը իր առաջ նպատակ է դնում իրեն ենթարկելու նաև Հայաստանը, և այդ քաղաքականությունը նա իրագործում է Դավիթ կյուրապաղատի միջոցով, սակայն Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության առաջին փուլը դառնում է հենց ինքը՝ Դավիթը:

979 թվականին կայսեր դեմ ապստամբում է իր կորավարներից մեկը՝ Վարդ Սկլերոսը, սակայն վերջինս պարտվում է կայսրին Դավիթ կյուրապաղատի ցույց տված ռազմական օգնության շնորհիվ: Երկրի որոշ մասերում շարունակում էին մնալ Մամիկոնյանների շառավիղները, որոնք հայտնի էին «Թռռնիկեան» կամ «Չորդվանեկեան» անուններով և ժամանակի ընթացքում նորից տիրում են Մա-

միկոնյանների վաղեմի կալվածք Տարոնին և Սասունին<sup>2</sup>: Մամիկոնյանների այս շառավիղները X—XI դարերում հանդես են գալիս իբրև Խորագույն Հայքի կյուրապաղատների վասալներ: Երբ Բարսեղ Բ Բուղարասպան կայսեր վրա կախվում է մահացու վտանգը, Թեոփանես թագուհին իր մոտ է կանչում Աթոսի լեռում գտնվող ճգնաժամ դարձած հռչակավոր Իվերոնի վանքի հիմնադիր Չորդվանեկի որդի Հովհաննես-Թռռնիկին և 10000-անոց զորքով ուղարկում է Դավիթ կյուրապաղատի մոտ: Վերջինս նրան օգնության է տալիս իր զորքերը իշխանաց իշխան Չոջիկի հրամանատարությամբ, որը նույն Թռռնիկյան տոհմից էր, և նրանք միասին գնում են պատերազմի ու հաղթում Վարդ Սկլերոսին (979 թ.): Այս ծառայության համար կայսրը Դավիթ կյուրապաղատին շնորհում է իբրև ավատ, ոչնչացված կայսիկների ամիրայության տերիտորիան՝ Հարքը, Ապահունիքը և շրջակա այլ գավառները, ներառյալ Բասեն, Կարին և Չորմայր գավառները: Սակայն Դավթի այդ կերպ ուժեղացումը չէր մտնում բյուզանդական կառավարության հաշիվների մեջ, և նրա ջանքերով Տարոնի կյուրապաղատությունը գնալով հակադրվում է Խորագույն Հայքի կյուրապաղատությանը: 982 թվականին Տարոնի Բագրատունիների իշխանությունը «միացվում» է կայսրությանը և այնուհետև դառնում հենակետ բյուզանդական կայսրության առաջխաղացման՝ թափանցելու Հայաստանի և Արաբական խալիֆայության թիկունքը: Կայսրը գնալով սկսում է ավելի մեծ ուշադրություն դարձնել իր հավատարիմ վասալ Տարոնի Բագրատունիներին, հանգամանք, որ սառնություն և թշնամություն է առաջ բերում Դավթի մոտ և վերջինս սպասում է հարմար առիթի, հաշվեհարդար տեսնելու կայսեր հետ: Այդպիսի առիթ է հանդիսանում մի այլ բյուզանդական կորավար, նորից հայապզի Վարդ Փոկասի ապստամբությունը կայսեր դեմ (987 թ.): Դավիթ կյուրապաղատը օգնում է Վարդ Փոկասին, սակայն, վերջինս շախշախվում է Բարսեղ Բ-ի կողմից, և Դավիթը պետք է անձնատուր լիներ կայսեր ողորմածության: Հարկավ, այս «ողորմածությունը» ձեռք է բերվում շատ թանկ գնով: Դա-

<sup>1</sup> Ասողիկ, Պատմություն Հայոց, III, ԼԸ, ՍՊԲ, 1885, էջ 266:

<sup>2</sup> Հ. Ներսես Աղինյան, տե՛ս «Թռռնիկյանց ճյուղազրությունը» և «Թռռնիկյանք ի Սասուն» հոդվածները «Մատենագրական հետազոտություններ», հատոր Դ, Վիեննա, 1938, էջ 49—88:



վիթ կյուրապաղատը մնացել էր անժառանգ և կայսրը ստիպում է նրան կտակ կազմել, ըստ որի իր մահվանից հետո կայսեր էին վերադարձվում ոչ միայն ավատ ստացած վերը հիշատակված գավառները՝ Մանազկերտ քաղաքով, այլև իր ժառանգական կալվածք խորագույն Հայքը<sup>1</sup>: Ահա այս կտակի հիման վրա Դավթի մահվանից հետո (1001 թ.) նրա կյուրապաղատության տերիտորիան «միացվում» է Բյուզանդիային: Բարսեղ Բ Բուղարասպանի հաջորդ՝ Կոստանդին 8-րդ կայսրը (1025—1028) Դավթի կյուրապաղատության տերիտորիայի և հարևան գավառների հիման վրա կազմակերպում է առանձին վարչական միավոր՝ Իվերական թեմը՝ Կատեպանատը<sup>2</sup>:

Տերիտորիալ վեճերը Բյուզանդիայի հետ առաջ են բերում Բարսեղ Բ Բուղարասպանի արշավանքները Հայաստանի և Վրաստանի խորքերը, որի ընթացքում նրանք ավերում են այդ երկրամասերի 12 գավառներ, հարկադրում Բագրատ Գ-ի հաջորդ Գեորգի Ա-ին (1014—1027) հաշտության պայմանագիր<sup>3</sup> խնդրել:

Սակայն այս քաղաքական հանգամանքները կայսրության հաղթական երթի վերջին փայլուն էջերն էին, շուտով սրանց պիտի հետևեին թուրք-սելջուկների հրոսակախմբերի ներխուժումները, որոնց դեմն առնելու համար Բյուզանդիան պիտի շտապ կերպով վերականգներ հայկական և վրացական թուլացած ռավական պոտենցիալը, բայց ավաղ, արդեն ուշ էր: Կայսրությունը մեկը մյուսի հետևից պիշում է իր դիրքերը արևելքից ներխուժող քոչվոր հորդաներին: Անիի Բագրատունիների թագավորության անկումը 1044 թվականին բյուզանդական նվաճողական քաղաքականության վերջն էր Արևելքում: Այնուհետև ընդամենը 20 տարի տևեց բյուզանդական կայսրության տիրա-

պետությունը Հայաստանում: 1064 թվականին Անին ընկնում է, սելջուկները հաստատվում են Հայաստանի մայրաքաղաքի փլատակների վրա, իսկ 1071 թվականին ընկնում է Մանազկերտը: Բյուզանդիան անընդհատ նահանջում է, թողնելով թշնամուն գրեթե ամբողջ Փոքր Ասիան: Անժառանգ Դավթի կյուրապաղատի կալվածք խորագույն Հայքի բյուզանդական կառավարիչ էր նշանակված Գրիգոր Բակուրյանը, որը շառավիղն էր Մամիկոնյան-Թոռնիկյան տան: 1071 թ. Մանազկերտի խայտառակ պարտությունից հետո կայսրության քաղաքական դիրքերը Հայաստանում այլևս հնարավոր չէր պահպանել:

Խորագույն Հայքի հետագա ժամանակաշրջանի պատմությունը դուրս է մեր ներկա հետաքրքրության շրջանակներից այնքանով, որքանով ուսումնասիրվող ճարտարապետական հուշարձանները 10-րդ դարից այս կողմ չեն անցնում:

\*  
\*  
\*

Խորագույն Հայքում միջնադարի ճարտարապետական բարձրարժեք հուշարձաններ անհամեմատ շատ կան՝ բոլորը քարակերտ, շքեղ կառուցված:

Սույն աշխատության մեջ ուսումնասիրվում են Իշխանն ու Բանակը, Օշկն ու Խախուն, Էգրեկն ու Տայոց Քարը, Իսն ու Սբիսեչը, Չորդվանն ու Պարխարը, Մուկլաշիքիլիսեն և մի շարք այլ տաճարներ:

Մենք այժմ սրանց մասին ճիշտ նյութեր ունենք, մյուսների՝ ողջ երկրամասով մեկ սփռված հարյուրավոր կոթողների վերաբերյալ ամբողջական, լիակատար տեղեկություններ չունենք: Չկան նկարագրություններ, չկան չափագրություններ, ոչ էլ դրանք լուսանկարված են: Եվ քանի որ այդ հուշարձանները գտնվում են մեր երկրից դուրս (թուրքական պետության ներկա սահմաններում), նրանց անմիջական ուսումնասիրության հնարավորությունը մեկ համար առայժմ բացառված է:

Այստեղ ներկայացված հուշարձանների վերաբերյալ հիշատակություններ են թողել Գեորգի Մերչուլը, Բագրատունիների պատմաբան Դավթի որդի Սումբաթը, Վախուշտին, Ն. Սարգսյանը, Կարլ Կոխը, Ղ. Ալիշանը, Ե. Վելդենբաումը, Դ. Բաքրաձեն, Հ. Ոսկյանը, Հ. Էփրիկյանը, Ն. Ակին-

<sup>1</sup> История Византии, т. 3., 1967, էջ 414 «1000—1001, захват области Тайк в Армении войсками византийского императора Василия II», նաև Ս. Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն (դասագիրք), հատ. 2-րդ, Երևան, 1965, էջ 57: «Հայաստանի նկատմամբ բյուզանդական կայսրության վարած նվաճողական քաղաքականության բնորոշ օրինակ է Տայքի և Մանազկերտի գրավումը»:

<sup>2</sup> E. Honigmann, Die Ost-grene des Byzantinisches Reiches vom 363 bis 1071, Bruxelles, 1935, S. 222, նաև История Византии, т. 2, Москва, 1967, էջ 225:

<sup>3</sup> Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Գ, Երևան, 1952, էջ 16—18:

յանը, Ատրպետը, Ն. Օկունը, Ե. Թաղաիշվիլին, Ն. Տոկարսկին և ուրիշներ:

Խորագույն Հայքի հուշարձանները, որ նշանակալից են մեր ճարտարապետության պատմության համար, զգալի չափով կործանվել են, ծածկվել հողաշերտով, իսկ նրանք, որ դեռ կանգուն են և շարունակում են իրենց գոյությունը մեր ժամանակներում, տասնամյակներով անխնամ և անպաշտպան մնալու հետևանքով վտանգված են, որմերն ու ծածկերը խախտված, ենթակա վերահաս փլուզման:

Այս հուշարձանների մասին առկա տվյալները, որ մեծ մասամբ հավաքվել են Ն. Օկունի<sup>1</sup> և Ե. Թաղաիշվիլու ղեկավարած հնագիտական երեք արշավախմբերի կողմից 1902, 1907 և 1917 թվականների ընթացքում Կարսում ու Կաղվվանում, Արդահանում ու Սպերում և ամբողջ Խորագույն Հայքում<sup>2</sup>, ստացել են փաստական նյութի նշանակություն, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ անցած վաթսուներկու ժամանակամիջոցում այդ հուշարձանները շարունակ ավերվել են և, թերևս, նրանց որոշ մասը արդեն չկա:

Առանձնապես հիշատակելի է քաղաքացիական ինժեներ-ճարտարապետ Ա. Կալգինի, նաև Է. Լիսյենի և Բուլբենկոյի աշխատանքը՝ հուշարձանների չափագրման և լուսանկարման գործում:

\* \* \*

Խորագույն Հայքը լինելով Մեծ Հայքի օրգանական և կարևոր նահանգներից, նրա հետ ապրել է մեկ կյանքով: Թերևս սրանով էլ պիտի բացատրել այն, որ այստեղ և Մեծ Հայքի մյուս նահանգներում դեռևս վաղ միջնադարից սկսած նկատելի է մեր ժողովրդի շինարարական գործու-

նեության, կառուցվող շինությունների ոճական ու կոմպոզիցիոն մտահղացումների և գործադրած ճարտարապետական միջոցների ընդհանրություն, օրգանական կապ, նախասիրությունների յուրահատուկ ինքնատիպությամբ հանդերձ: Հենց այս վերջին հանգամանքն էլ ահա հնարավորություն է ընձեռել, որ Խորագույն Հայքի 10-րդ դարի կառուցումներում տեսնվի հայ ճարտարապետության մի որոշակի դարոցի առկայություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Խորագույն Հայքի ճարտարապետությունը կապմուն է հայ ճարտարապետության օրգանական մասը, նրա վարձագման բոլոր շրջաններում, որ այստեղ բարձրացվող կառույցները հիմք և նախօրինակ են ունեցել, այն, ինչ ստեղծված է եղել Հայաստանի կենտրոնական գավառներում, այդ նույն ձևով էլ կենտրոնական գավառներում անդրադարձում են գտել այստեղ և մյուս ծայր գավառներում շինարարական արվեստում ձեռք բերված մեծ նվաճումները<sup>3</sup>:

Խորագույն Հայքի հիմքում խաչաձև ունեցող եկեղեցիները նախօրինակ են ունեցել Էջմիածինն ու այստեղ ստեղծված խաչաձև բազմաթիվ կառույցները, ապա վարպետները վարձացրել են այն և մի այլ ձևով վերադարձրել Էջմիածին: Իշխանում մշակվել է խորանի էքստերային ձևը: Մինչ այդ, սովորաբար խորանները ստեղծվում էին խուլ պատով, իսկ Իշխանում այն ստեղծվել է պոնակամարաշարով: Ահա այս նորույթը նույն Իշխանը կառուցող, այն ժամանակ դեռևս եպիսկոպոս Ներսեսը վարձացնում, ստեղծում է բոլորովին նոր տիպի եկեղեցի՝ Չվարթնոցը, երբ արդեն դարձել էր հայոց կաթողիկոս «Ներսես Գ. Շինող»: Երբ լիակատար մարմնացում էր ստացել հրաշակերտ Չվարթնոցի տիպը, նույն դարում էլ այդ տի-

<sup>1</sup> Н. Л. Окунев. Отчет о командировке летом 1917 года на Кавказский фронт для охраны памятников древностей и культуры (Известие Российской АН № 17, 1917, СПб).

<sup>2</sup> Е. Такайшвили. Бана. (Материалы по археологии Кавказа в. XII) Москва, 1909; его же Альбом грузинской архитектуры, Тифлис, 1924; его же Археологическая экспедиция 1917 года в южные провинции Грузии, Тбилиси, 1952 г.

Ե. Թաղաիշվիլի, 1907 թվականի հնագիտական արշավախումբը Կոլա-Օլթիսիում, Չանգիում (վրացերեն), Փարիզ, 1938: Նույնի՝ 1917 թվականի հնագիտական արշավախումբը Վրաստանի հարավային ծայր գավառներում (վրացերեն), Թբիլիսի, 1961 թ.:

<sup>3</sup> Ատրպետը իր «Ճորոխի ավազանը» աշխատության ներածականում այս հարցի վերաբերյալ գրում է. «...Ինչ ձևի (հուշարձաններ), որ մնացել են Հայաստանի կենտրոնական նահանգներում, մինևույն ճարտարապետական ոճը նկատելի է ամբողջ Ճորոխի ավազանում, արև ապացույց է, թե կոլտուրան քալլ առ քալլ առաջ է գնացել ինչպես կենտրոնում, նույնպես ծայր նահանգներում, որի շոշափելի վկան է Չվարթնոցի ճարտարապետությամբ կիրառված Անիի Գազկաշենը և Ուղտիքի-Տայոցքար Բանայի տաճարները: Պարխարյան աշխարհն իր հիշատակարաններով տարբերություն չունի կենտրոնական արարատյան աշխարհից...»:



պը կրկնվում է Խորագույն Հայքի կողմերում, հանձին Բանակ տաճարի:

Ահա այսպիսի փոխադարձ, անխզելի կապի մեջ են եղել հայ ճարտարապետության տարբեր հատվածների ստեղծագործողներն ու նրանց ստեղծագործությունները:

Ուրեմն, Էջմիածինը նախորդել է Իշխանին, Իշխանը՝ Չվարթնոցին, Չվարթնոցը՝ Բանակին: Մյուս կողմից, Դվինը նախորդել է Թալինին, Թալինը՝ Օշկին, այս վերջինս էլ իր հաջորդներին: Ճարտարապետության վարգացման թելը անխզելի գնում ու երկրի տարբեր մասերը հաջորդաբար իրար է կապում, միահյուսում մի ընդհանուր ընթացքի մեջ, կենտրոն ունենալով Մեծ Հայքի կենտրոնական նահանգները:

Հայ ճարտարապետության հուշարձաններն ընդհանրապես ունեն արձանագրություններ: Կան նաև այնպիսիները, որոնց վրա արձանագրության հետքեր չկան՝ կամ չեն եղել, թերևս ոչնչացել են և կամ բեկորների ձևով մնացել թաղված ավերակների փուլքերի մեջ: Այդ արձանագրությունները գերազանցապես վիմական են— փորագրված քարի վրա:

Խորագույն Հայքի հուշարձանները այս առումով բացառություն չեն, սակայն այստեղ դրանք իրենց որոշ մասով ոչ թե փորված են, այլ ուղղակի գրված են քարի վրա սև կամ կարմիր ներկով: Ներկով գրված այդ արձանագրությունները Ե. Թաղաիշվիլու մանրամասն նկարագրություններից բացի, ուսումնասիրվել են նաև անցած դարի հայտնի հետապտող մխիթարյան Ներսես Սարգսյանի կողմից: Նա, որ շուրջ տասը տարի շրջեց Հայաստանը, հուշարձանների վրայից արտագրեց, արտանկարեց և վերծանեց հայերեն, վրացերեն, հունարեն և այլ բազմաթիվ արձանագրություններ, 1864 թվականին Վենետիկում տպագրած իր «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս» աշխատության մեջ հանրահայտ Օշկ վանքի նկարագրությանը նվիրված 8-րդ էջում գրում է. «Յարձանագրած եկեղեցւոյն շատք եղծեալ են, քանպի համօրեն շինուածն ոչ միայն ի կակուղ քարանց է դեղնագոյն, այլ զի և գրուածքն նկարածոյ են կարմրաներկ գունով, իսկ վիմաքանդակ և ոչ մի...»:

Այն, որ Խորագույն Հայքի հայկական որոշ հուշարձանների վրա կան նաև այլալեզու արձանագրություններ, նշան է այն բանի, որ տաճարը կառուցող և կամ նրա շրջապատում ապրող հայ

ազգաբնակչությունը եղել է ոչ միայն հայադավան, այլև քաղկեդոնական:

Արձանագրությունների լեզվի հարցը, որի վերաբերյալ մեծ խոսակցություններ են տեղի ունեցել նաև անցյալում, լիակատար պարզաբանման կարիք ունի:

Բանն այն է, որ Խորագույն Հայքի հուշարձանները գտնվում են առանձնահատուկ պայմաններում: Դրանք կապված են այդտեղ տարածում գտած քաղկեդոնականության հետ: Համաձայն Պետրիժոնի կանոնագրքի 182-րդ հոդվածի հայերը քաղկեդոնական եկեղեցիներում պաշտոնական ժամասացությունը պիտի կատարեն ոչ հայերեն, անկախ նրանից, որ աշխարհիկ կյանքում խոսակցական լեզուն մնում էր հայերենը: Ըստ որում, Պետրիժոնի կանոնագրքի հիշյալ հատվածը, ինչպես և այլ դրույթներ, ինչ խոսք, գործելիս են եղել շատ ավելի վաղ, քան այդ կանոնագրքի կազմավորումը, որպես այդպիսին:

Այս առումով անհետաքրքիր չէ «Մատենադարանի Բանբերի» 6-րդ համարում (էջ 249—250) տպագրված ուսումնասիրությունը «Պղնձե քաղաքի» պատմության վերաբերյալ: Մխիթարյան գիտնական Ներսես Ակինյանը 1958 թվականին հայտնաբերում և հրատարակում է 10-րդ դարի վերջին տասնամյակի մի կարևոր փաստաթուղթ՝ «Զրոյց Ե. Խաւսկ առաջի թագաւորացն և իշխանացն, զոր թարգմանեցին Դավիթ կյուրապաղատին» ի հայ լեզուի տաճիկ լեզուէ»:

Պարզվում է, որ «Պղնձե քաղաքի» պատմությունը Դավիթ Մեծ կյուրապաղատի պատվերով արաբերենից թարգմանվել է հայերեն, որպեսզի պատմվի արքունիքում ի վարձություն թագավորների և իշխանների:

Քաղկեդոնականության տվյալ շրջանի ազդեցության ոլորտում, այդ թվում՝ Խորագույն Հայքի որոշ եկեղեցիներում պաշտոնական լեզուն հայերենը չէր: Հասկանալի է, որ հայ համայնքի հարևար կառուցված այդ նույն քաղկեդոնական եկեղեցիներում էլ արձանագրությունները պիտի գրվեին ոչ հայերեն:

Այդ նույն ձևով, նույն մոտիվներով Հայաստանի Բյուզանդիային սահմանակից մյուս մարզերում, հունական եկեղեցու ազդեցության ոլորտում գրտնըվող հայկական քաղկեդոնական եկեղեցիներում պաշտոնական լեզուն հունարենն էր, եկեղեցիների վրայի արձանագրություններն էլ հունարեն են:

«Գրիգոր Խանձթեցու վարքի» հրատարակման առաջաբանում (էջ 16) Ն. Մառը գրում է. «Դեռևս X դարի կեսում, երբ Գեորգի Մերչուրը գրում էր, համաձայն «Վարքում» եղած ակնարկի, վրացերենը Կղարջքում բնակչության լեզու չէր, եկեղեցական էր»:

Հիմնվելով վրաց աղբյուրների<sup>1</sup> վրա, Ն. Մառը իր «Аркаун...» աշխատության 22-րդ էջում գրում է՝ «... 9-րդ և նույնիսկ 10-րդ դարում վրաց վանականները<sup>2</sup> Տայքում և Կղարջքում շրջապատված էին թեպետև նույն հավատքն ունեցող, սակայն այլազգի՝ հայ բնակչությանը...»:

Իհարկե, Խորագույն Հայքի ազգաբնակչության միայն մի մասն էր քաղկեդոնական (գլխավորապես վերնախավը), մյուս մասը լուսավորչական էր: Նորահայտ տվյալներով<sup>3</sup> Կղարջքում, Արտանուշի անմիջական մոտերքում (Տանձոտ)<sup>4</sup> XI դարի կեսերում (1059 թ.), ապրում էին լուսավորչական հայեր:

Այս առումով ընդունելի չպիտի համարել այն թեպետ, թե «ապրեցության ոլորտին համապատասխան քաղկեդոնական հայերը սկսեցին ձուլվել վրացիներին, հույներին կամ սիրիացիներին»<sup>5</sup> և կամ «1083 թվականին, երբ հիմնադրվում էր Պետրիծոնի վանքը, այդ երկրամասի քաղկեդոնական հայերը իրենց արդեն համարում էին բնական վրացիներ, թեպետ դեռևս պահպանում էին հայ գրագիտությունը»<sup>6</sup>:

Անկախ հայ և այլազգի կրոնականների կարծի-

քի<sup>7</sup>, միշտ էլ (եզակի բացառություններով) քաղկեդոնական հայը մնացել է հայ<sup>8</sup>:

Այսպիսով պարզ է դառնում, որ Խորագույն Հայքի որոշ եկեղեցիների ավելի ուշ, առավել ևս ներկով գրված այլազգու արձանագրությունների առկայությունը առանձին վերցրած, չի փոխում ողջ երկրամասի հուշարձանների ոճային և ազգային պատկանելությունը: Հայ ճարտարապետության հուշարձաններից Օշկի, Իշխանի ու Խախուի հարցում ոմանք վկայակոչում են Հակոբ Կարնեցու խոսքը, թե «Եւ կայ ի մեջ ձորոյն մեծամեծ վանորայք վրաց ի գիւղն Խախու, Օշկ և Իշխան, որ հար և նման ոչ գոյ նոցա, բայց թե լինի միայն սուրբ Սուփի ի Կոստանդինուպոլիս»: Հարցի պարզաբանման անհրաժեշտությունից ելնելով շարունակենք Կարնեցու ընթերցումը. «Եւ էին բնակիչք երկրիս կէսն հայ ազգաւ, կէսն կրօնիւք վրացի, բայց հայի լեզուաւ խոսէին...»<sup>9</sup>, այսինքն՝ հայ քաղկեդոնականներ էին:

Հայտնի է, որ լուսավորչական կրոնին հավատարիմ մնացած հայ վանականները Հայաստանի արևմտյան գավառներում քաղկեդոնականություն ընդունած հայերին, անկախ նրանց մշտապես հայ մնալուն և հայերեն խոսելուն, անվանում էին «հոռոտ», որ հոմանիշ էր «հույն» հասկացողության: Այդ նույն ձևով ասորիների (սիրիացիների) շրջապատում քաղկեդոնություն ընդունած հայերին (ոչ ասորիներին) անվանում էին «մելքիտներ» և այլն:

\*  
\*  
\*

Հայ ճարտարապետության որոշ տիպերի սկզբնավորման պատմությունը ցույց է տալիս, որ

<sup>8</sup> Յուրովի է գնահատվում Խորագույն Հայքում հայ վերնախավի կրոնափոխությունը Ատրպետի կողմից. «Կրոնափոխությունը,— ասում է նա,— լեզվի փոփոխությունը տալեցի կավածատեր իշխանի համար տարալի նման է եղել, հետևել է իշխողներին, բայց ոչ մի կրոն այնտեղ հիմունք չի գտել, միմիայն հպատակության ձև է, ուրիշ ոչինչ: Կրոնական համոզումները և հավատալիքները չեն քարացել, կամ ամրացել Կիսկիմում, այլ ծիսակատարության ձևեր են դարձել»:

<sup>9</sup> Հակոբ Կարնեցին բնիկ կարնեցի է, Երպրում քաղաքի հայոց միաբան ս. Աստվածածին եկեղեցու 15 քահանաներից մեկը: Նա իր «Տեղեկագիր Վերին Հայոց» աշխատությունը, որից առնվում են վերոհիշյալ տեղեկությունները, գրել է 17-րդ դարի առաջին կեսի ընթացքում (Յակովբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, էջ 17—18), տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հատոր 2-րդ, կապմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 554:

<sup>1</sup> Жордания. Хроника и пр. 1, 1893, Тбилиси, էջ 125:

<sup>2</sup> Պատմական տվյալներով հիմնավորված է, որ այդ վանականները քաղկեդոնական հայեր են եղել:

<sup>3</sup> Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր «Բանբեր Մատենադարանի», 5, 1960, Երևան, էջ 411—413:

<sup>4</sup> Տանձոտը (կամ Տանձոտը) հայկական բնակավայր է Խորագույն Հայքի հյուսիսատյոզում, որը սակայն ընկնում է Կղարջքը տվյալ երկրամասից բաժանող մոտավոր սահմանագծից հյուսիս: Այնտեղ կա ճարտարապետական հուշարձան:

<sup>5</sup> Н. Я. Марр. Аркаун монгольское название христиан в связи с вопросом армянских халкедонитов, СПб, 1905.

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Գրոսսե. Հայոց պատմություն սկզբից մինչև 1071 թ., (Ֆրանսերեն), Փարիզ, 1947 թ., էջ 501—502:



խաչաձև կենտրոնագմբեթ և երկայնական տա-  
ճարների կոմպոզիցիաների միահյուսումով դեռևս  
VI—VII դարերում ստեղծվել են նոր կոմպոզիցիա-  
ներ, որոնցից մեկը Ավան-Հռիփսիմեի տիպն է,  
մյուսը՝ Պտղնի-Արուճի գմբեթասրահների տիպը,  
երրորդը՝ Դվինի, դեռևս 607 թվականին Սմբատ  
Բագրատունու կողմից սկսած տաճարը, որի կա-  
ռուցումը ավարտել է Կոմիտաս կաթողիկոսը: Ահա  
այս գմբեթավոր եռանավ տաճարի տիպը նույն  
դարի երրորդ քառորդում կրկնվել է Թալինում,  
հանձին Կաթողիկե մեծ տաճարի, կառուցված  
Կամսարականների կողմից:

Խորագույն Հայքի Իշխան, Օշկ և Խախու տա-  
ճարները իրենց հատակագծային, ընդհանուր ծա-  
վալային-տարածական հորինվածքով հարում են  
վերոհիշյալ տիպերից երրորդին:

Բանն այն է, որ Հայաստանի մեծ մասի և  
Վրաստանի խաչաձև կենտրոնագմբեթ կառուց-  
վածքներում հորինվածքի գլխավոր մասը՝ գմբեթը,  
որ գերիշխում է տաճարի մնացած մասերի վրա,  
գրավում է կենտրոնական դիրք, կայուն (ստա-  
տիկ) հավասարակշռություն ստեղծում ողջ կա-  
ռուցվածքի համար: Այս կանոնիկ վիճակից առկա  
շեղումները չնչին բացառություններ են, երբեմն  
նշանակությամբ փոքր ու ոչ որոշիչ, երբեմն՝ ար-  
գասիք հետագա վերակառուցումների, կամ հավե-  
լումների՝ գավիթների կամ նախագավիթների ձևով:

Խորագույն Հայքում առանձնահատուկն այն է,  
որ տաճարի գմբեթը կենտրոնում չէ, այլ՝ արևելա-  
կողմում: Նա ողջ կառուցվածքը պահում է դինա-  
միկ վիճակում: Այստեղ, շինության արևելյան մա-  
սում պահպանվում է խաչաձև կենտրոնագմբեթ  
եկեղեցիների տիպը, իսկ արևմտյան թևը, որ սովորա-  
բար լինում էր կիսաբոլորակ, կամ ուղղանկյուն,  
իր չափով հավասար մյուս թևերին, փոխարկվում,  
ընդունում է եկեղեցիների երկայնական տիպին  
յուրահատուկ տեսք, ինչպիսիք են ուղղանկյուն  
երկայնական սրահները: Ուրեմն Խորագույն Հայքի  
կարևոր հուշարձանների յուրահատուկ կողմը բնորոշ-  
վում է գմբեթի գրաված դիրքով տաճարի  
արևելք-արևմուտք առանցքի վրա<sup>1</sup>:

Բապիլիկ տաճարներում ներքին տարածության  
կիպակետը, որտեղ կենտրոնանում է եկեղեցական

<sup>1</sup> Այս հարցին նվիրված ուսումնասիրություն է գրել  
ճարտարապետ Արմեն Խաչատրյանը (Փարիզ), որը լույս է  
տեսել 1967 թվականին Գրաբարի և Ուբերի խմբագրու-  
թյամբ Փարիզում հրատարակվող «CAHIEPS APCHEO-  
LOGIANES» հանդեսի 17-րդ պրակում:

Նկատենք, որ մի խումբ հուշարձանների վերոհիշյալ

արարողությանը ներկա գտնվողների ուշադրու-  
թյունը, խորանն է, որ գտնվում է միջին նավի  
արևելյան ծայրում:

Կենտրոնագմբեթ եկեղեցիներում, այդ առումով,  
ստեղծվում է որոշակի երկվություն: Տաճարի արև-  
մուտակողմից, այսինքն՝ գլխավոր մուտքից ներս  
մտնողի համար գլխավորը դառնում է դեպի վերև  
բացվող, լույսով ողողված գմբեթը, նոր, ապա, սա-  
հող հայացքը, գալիս, կանգ է առնում արևելակող-  
մի խորանում:

Գմբեթի և արևելյան խորանի սերտ մոտիկու-  
թյունը որոշակիորեն միասնական է դարձնում  
ներքին տարածության այդ երկու կարևոր, գերիշ-  
խող մասերի (դոմինանտների) նշանակությունը՝  
ավելի պոթել՝ նրանց ներգործող ուժը: Հենց այս  
սկզբունքներն են առկա Խորագույն Հայքի ամե-  
նակարևոր հուշարձաններից Իշխան, Օշկ և Խա-  
խու տաճարներում, նրանց կոմպոզիցիոն հորին-  
վածքի հիմքում:

Հայ ճարտարապետության այս առանձնահա-  
տուկ կողմը իր որոշակի արտահայտությունն է  
գտել արևմտա-եվրոպական վերածնության շրջանի  
ճարտարապետության մի քանի կարևոր ստեղծա-  
գործություններում:

Խորագույն Հայքի 10-րդ դարի ճարտարապե-  
տական դպրոցը մինչև որոշակի տեսք ստանալը,  
ունեցել է կապավորման վարգացման իր նախա-  
շրջանը, հանձին այդ տիպի նախօրինակների, ի՞նչ  
փուլթ, թե դրանք իրենց ծավալով փոքր են, նշա-  
նակությամբ, ձևավորման հարստությամբ ու կա-  
ռուցողական արվեստով ավելի համեստ: Այդ  
նախօրինակները, այն մի շարք, համեմատաբար  
փոքր խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցիներն են,  
որոնց արևելակողմում առկա են երեք՝ հյուսիսա-  
յին, արևելյան և հարավային ուղղանկյուն հավա-  
սարաթև կամ կիսաշրջանաձև գմբեթարդ խո-  
րանները, իսկ արևմտակողմում՝ ուղղանկյունի,  
երկարած, կամ առնվազն երկարելու նշաններով  
օժտված թաղածածկ միանավ, կամ եռանավ սրահ-  
ները:

Այսպիսի շատ եկեղեցիներ կան ինչպես տվյալ,  
այնպես էլ Մեծ Հայքի մյուս նահանգներում, նաև  
մոտ ու հեռու հայ գաղթօջախներում:

առանձնահատկությունը բավարար պայման չէ տվյալ ճար-  
տարապետությունը ամբողջությամբ առանձնացնելու և ինք-  
նուրույն անվանակոչելու համար: Այդ կարգի տարբերու-  
թյունները հիմք են տալիս այդպիսիք գնահատելու լոկ  
որպես մայր ճարտարապետության մի «ուրույն» դպրոց:

Իշխան տաճարը գտնվում է Խորագույն Հայքի, նրա ճակք գավառի Իշխանաց գյուղում: Վերջինս տարածվում է այն ձորահովտում, որտեղ հաջորդաբար միախառնվում են Ակորդ (Թորթում), Բողխա և Վոհ (Ճորոխ) գետերը: Հողը բերրի է, ջրերով առատ, ծածկված պտղատու այգիներով: Գյուղը կոչվում է Իշխանանիստ, շրջակայքը՝ Իշխանանիստ ձոր, որովհետև այն երբեմն Մամիկոնյան տոհմի նստոցն էր:

Ղ. Ինձիճյանը հայտնում է, որ կաթողիկոսական գավապանագրերից մեկում՝ այս գյուղը հիշատակվում է իբրև Ներսես Գ. Շինող կաթողիկոսի ծննդավայր:

Տասներորդ դարի պատմաբան Գեորգի Մերչուլի «Երանելի Գրիգոր Խանձթեցու վարքը» աշխատության մեջ շատ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել, որոնց համաձայն կաթողիկոս Ներսես Գ. Շինողը իր հայրենիքում կառուցել է եկեղեցիներ: Ներսեսը իր իսկ կառուցած եկեղեցուն եղել է եպիսկոպոս, թեմի առաջնորդ, նախքան Ամենայն Հայոց կաթողիկոս դառնալը (641 թ.):

Իշխան եկեղեցին իր ընդհանուր ծավալային-տարածական հորինվածքով մինչև մեր օրերը պահպանում է իր կանգուն գոյությունը՝ որոշակի փոփոխություններով ու հավելումներով հանդերձ: Նրա այժմյան վիճակը (նկ. 7) տազնապալի է՝ ենթակա քայքայման ու կործանման: Ընկած են բոլոր խաչաթևերի թաղերը, իսկ գմբեթը, որ թվում է օդից կախված, հենվել է բոլոր կողմերից բացված չորս մայր մույթերը իրար կապող կամարներին:

Իշխանը հայ ճարտարապետության Խորագույն Հայքի (Տայքի) յուրօրինակ դպրոցի ամենանշա-

նավոր հուշարձաններից է՝ խաչաձև, կենտրոնագմբեթ, արևմտյան երկարած թևով (գծ. 1):

Տաճարի արևելակողմի խորանը բոլորաձև է, ստեղծված սյունակամարաշարով, ծածկը՝ գմբեթարդ: Հյուսիսային և հարավային թևերն ուղղանկյունի են, թաղածածկ: Արևմտյան թևը երկայնական սրահ է, որի կողային պատերն ու թաղավոր ծածկը որմնասյուներով ու թաղակիր կամարներով բաժանված են չորս հատվածների: Արևմտյան թևի հյուսիսակողմում գոյություն ունի երկայնական սրահ: Արևմտյան թևի հարավակողմում, ինչպես ենթադրում է Ե. Թաղաիշվիլին, գոյություն է ունեցել բաց սյունասրահ, ինչպիսին կա Օշկ և Խախու տաճարներում: Իշխանի գմբեթը բարձրաձև է առանձին կանգնած չորս հաստահեղույս մույթերը իրար կապող գմբեթակիր կամարների վրա: Այդ կամարների ուրվագիծը պայտաձև է, նաև երկկենտրոն՝ գագաթում ունի բեկվածք:

Գմբեթակիր մույթերից արևելակողմի երկուսը, որ կամարներով կապված են խորանի սյունակամարաշարի հետ, հիմքում բազանկյունի են՝ ինը նիստերով: Մյուս՝ արևմտակողմի երկու մույթերը հիմքում խաչաձև են, խաչաթևերի միջև, անկյունագծի ուղղությամբ՝ երեք քառորդ շրջանի հիմքով սյուներ:

Արևելակողմի երկու գմբեթակիր մույթերը կողքի պատերի հետ կապված են պայտաձև կամարներով: Նրանց վերնամասում փոքր չափերի մեկական պատուհան կա: Այդ նույն՝ հյուսիս-հարավ գծով, երկու ավանդատների պատերի միջնամասում մեկ սյունով միացած երկուական պատուհաններ են, պայտաձև-կամարակապ վերնամասով: Դրանցով երկրորդ հարկի օթյակները բացվում են հյուսիսային և հարավային խաչաթևերի վրա:

Մեկ սյունով միացած նույնափաի կույզ պատու-



հաններ վերնահարկ օթյակներից բացվում են արևելյան խորանի վրա:

Արևելյան խորանը լուսավորում է արևելակողմի պատի վրա բացված մեկ լուսամուտ, հյուսիսային ու հարավային խաչաթևերը՝ երկուական այլ լուսամուտներ: Մուտքի դռներ կան արևմտյան թևի ծայրում և հարավակողմի երկայնական պատի վրա: Հյուսիսակողմի պատի վրայի դուռը բացվում է մեծ ավանդատան վրա: Հետագայում դռներ են բացվել նաև կողային թևերի վրա, որոնցից հարավայինը դրսի կողմից ունի շքեղ ձևավորում:

Իշխան տաճարը կանգնած է աստիճանաձև որմնախարիսխի վրա: Այդպիսի որմնախարիսխից պուրկ են տաճարի արևելյան, ինչպես և հյուսիսարևմտյան պատերը: Արևմտյան թևի հյուսիսակողմի երկայնական սրահի պատճառով հյուսիսային և արևմտյան պատերի մոտ տաճարը շրջանցող որմնախարիսխն ընդհատվում է:

Խաչաթևերը դիմացից փակող արտաքին պատերը վերևում ավարտվում են ճակտոններով:

Տաճարի արտաքին պատերի վրայով անցնում է դեկորատիվ սյունակամարաշար՝ խոր լույս ու ստվերով: Սյունակամարաշարով է պատված նաև գմբեթաթմբուկը: Թմբուկի տասնվեց նիստերի վրա մեկընդմեջ բացված են երկայնական և կլոր պարագծերով լուսամուտներ, յուրաքանչյուրից ութ հատ:

Թմբուկն ավարտվում է եռանկյունաձև առանաշար քիվով, որից վերև գմբեթի կոնաձև տանիքն է (նկ. 1):

Յոթերորդ դարում կառուցված Իշխան տաճարը մեկ է հասել պարբերական նորոգումներով, IX—XI դարերի ընթացքում կրած արտաքին երեսապատման պզալի փոփոխություններով:

\*  
\* \*

Ճարտարապետական արվեստի պատմության մեջ ընդունված է, և այժմ էլ տիրապետում է այն կարծիքը, որ յոթերորդ դարի երեսնական թվականներին Խորագույն Հայքի եպիսկոպոս Ներսեսի իր հայրենիքում կառուցած եպիսկոպոսանիստ եկեղեցին՝ կաթողիկեն, իբր ունեցել է Չվարթնոցի կամ Բանակի հորինվածքը, այսինքն՝ տետրակոնիս, փաթաթված շրջանց սրահով, արտաքինից՝ բոլորանիստ, եռաստիճան, կենտրոնագմբեթ: Եվ իբր

այս եկեղեցին IX դարի սկզբներում արդեն ավերված էր ու նրա տեղում Գրիգոր Խանձթեցու<sup>1</sup> բարեկամ, աշակերտ ու գործակից Սաբանը կառուցել է այժմյան կանգուն վիճակում գտնվող «հնի» համեմատ բոլորովին «նոր»՝ հիմքում խաչաձև հորինվածք ունեցող եկեղեցին, որի արևելակողմի խորանը, առնվազն նրա սյունակամարաշար ներքնամասը ներսեսաշեն տաճարի մնացորդն է (նկ. 8):

Գ. Ն. Չուբինաշվիլին և Ն. Պ. Սևերովը Իշխանի մասին գրում են. «Մենք այդ տիպի (Չվարթնոց, Բանակ—Տ. Մ.) շարքն ենք դասում Իշխանի մայր եկեղեցու սկզբնական ձևը<sup>2</sup>:

Ունանք Բանակը ավելի մոտ են համարում Իշխանին, քան Չվարթնոցին. օրինակ, Ն. Տոկարսկին գրում է. «Իշխանին այդքան մոտ հարևանությամբ Բանայի<sup>3</sup> նման կառուցվածքի երևալը, մեր կարծիքով, վկայում է, որ Ադրնեբսեիը ոչ թե հեռավոր Վաղարշապատում, այլ Իշխանում գտավ այն օրինակը, որը որոշեց վերարտադրել»<sup>4</sup>: Հետևում է, որ Իշխանը նման է եղել Բանակին:

Շ. Յ. Ամիրանաշվիլին ուղղակի ասում է, որ Բանակի «... հատակագիծը Իշխանի հատակագծի կրկնությունն է»<sup>5</sup>, այսինքն՝ Իշխանը ունեցել է այնպիսի հատակագիծ, ինչպիսին ունի Բանակը: Ինքնին հասկանալի է, որ Շ. Յ. Ամիրանաշվիլին նկատի ունի ո՛չ թե ժամանակակից, այլ «հին», Իշխանի՝ ներսեսաշեն տաճարի հատակագիծը:

Ե. Թադաիշվիլին այդ նույն դրվագի մասին ասում է. «... ինձ թվում է հավանական, որ Իշխան եկեղեցու արևելյան պատը, առնվազն նրա ներքնամասը, այսինքն՝ սյունաշարը, Ներսեսի VII դարում կառուցած տաճարի մնացորդն է»<sup>6</sup>:

Նույնն է ասում նաև Ն. Սևերովը, որ «Իշխանը XI—XII դարերի տաճար է, կառուցված հին հայկական տաճարի տեղում, որից և պահպանված

<sup>1</sup> Այս անունն առաջ է եկել Անձիտ, Հանձիթ ձևից, հայերեն՝ «խանձիթ», վրացերեն՝ «խանձթաթ»:


<sup>2</sup> Г. Н. Чбинашвили и Н. П. Северов, Пути грузинской архитектуры, Тбилиси, 1936, էջ 69:

<sup>3</sup> «Բանա»-ն Բանակ բնակավայրի և նրա տաճարի անվան վրացական ձևն է:

<sup>4</sup> Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961; էջ 132:

<sup>5</sup> Ш. Амиранашвили, История грузинского искусства, Москва, 1963, էջ 151:

<sup>6</sup> Е. Такайшвили, Бана, Материалы по археологии Кавказа, в. XII, Москва, 1909 г., էջ 116:



1. Իշխան տաճարի հատակագիծը  
 (չափագրություն՝ Ա. Կալցինի, կատարում՝ Ն. Սևերովի)

մի մասը ամբողջական ձևով ներառված է ներկայիս կառուցվածքի մեջ:

Այդ առավել հին մասը՝ սեղանը, պատկանում էր, ինչպես ենթադրում են, տեղացի հայ եպիսկոպոս Ներսեսի VII դարում կառուցած բոլորակ տաճարին, նա հետագայում, արդեն իբրև Հայաստանի կաթողիկոս՝ Էջմիածնին մոտիկ այդ նույն ձևով կառուցեց Չվարթնոցի տաճարը:

Իշխանի և Բանայի համեմատությունից երևում է, որ Իշխանի ութ սյուներով կազմված բոլորակ սյունաշարը Չվարթնոցի և Բանայի տիպին պատկանող, բոլորակ սրահով պատված քառակոնիս հին տաճարի սեղանի դրվագն է<sup>1</sup>:

Այս իմաստով բավական ուշագրավ է Կարլ Կոխի 1843 թվի հիշատակությունը, թե «Նեֆսի—Փենյակի բնակիչները ինձ պատմեցին, որ այս նույն (Բանակ տաճարի—Տ. Մ.) ձևով է կառուցված այս կողմերի ամենանշանավոր եկեղեցին, և այն Իշխանումն է, տակայն նրա չափերը, ինչ համեմատություն, մեծ են: Այն ևս այժմ ամայի է»<sup>2</sup>:

Ուշադրություն դարձնելով վերոհիշյալ տեղեկությանը, Ե. Թաղաիշվիլին այն համարում է ո՛չ արժանահավատ, ո՛չ ճշմարտանման, քանի որ այդ ժամանակ՝ 1843 թվականին, Իշխանում եղած տաճարը չպետք է լիներ Բանակի նման, չէ որ Երմակովի արած լուսանկարում (1879) տաճարը երևում է ո՛չ թե Բանակի նման բոլորակ, այլ դրսից ուղղանկյունի է, խաչաձև, արևմտյան երկարած նավով, բարձր թմբուկով և գմբեթի կոնաձև ծածկով: Փենյակցիների ցուցման անհավանականությունը հաստատելու նպատակով, Թաղաիշվիլին հիշատակում է նաև Բրոսսեի հրատարակած Մխիթարյան հայրերից Ներսես Սարգսյանի թողած կարճառոտ տեղեկությունը<sup>3</sup>, որ Թորթոմի հովտի այդ երեք՝ Իշխան, Խախու և Օշկ տաճարները միմյանց շատ նման են և որ նրանք ոչ միայն մի ժամանակաշրջանի, այլ նույն վարպետի ստեղծագործություններ են, այն տարբերությամբ միայն, որ Իշխանում արևելյան պատը բոլորակ սյունաշար է և կողքերից ունի խորաններ: Եվ քանի որ Օշկն

ու Խախուն ոչ թե բոլորակ, այլ խաչաձև եկեղեցիներ են, հետևում է, որ Իշխանն էլ խաչաձև է:

Հետագայում Ե. Թաղաիշվիլին 1917 թ. արշավախմբի կազմում, որպես նրա ղեկավար, մեկնում է Իշխան, ուսումնասիրում այն ու նյութերը հրատարակում «1917 թվականի հնագիտական արշավախումբը Վրաստանի հարավային գավառներում»<sup>4</sup> աշխատության առաջին գլխում:

Իշխանի նյութերում տեղ են գտել մեծ թվով լուսանկարներ, ինչպես և ժամանակակից տաճարի հատակագիծը, ճակատների և դրվագների գծագրեր ու կտրվածք, որ կատարել է Ն. Սևերովը Ա. Կալգինի ղեկավարությամբ, վերջինիս չափագրությունների հիման վրա:

Այս տարակարծությունները, ինչ խոսք, մի առանձին հետաքրքրություն են ստեղծում VII դարի Իշխանի ներսեսաշեն տաճարի հատակագծային, ինչպես և ծավալա-տարածական պատկերի որոշման շուրջ, մի բան, որ ցարդ, փաստորեն մնում է անհայտ և անորոշ:

Արդ, Իշխանի, VII դարում կառուցված ներսեսաշեն տաճարի հատակագծային պատկերը որոշելու երկու ճանապարհ կա, նրանցից մեկն անցնում է պատմագրության տվյալների վրա արված եկրակացություններով, մյուսը՝ ժամանակակից տաճարի հատակագծի ստեղծման վերլուծությամբ և նրա ու վվարթնոցատիպ մյուս տաճարների համեմատության արդյունքներով:

Իշխանի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում պատմաբան Գեորգի Մերչուլը (վախճ. 950-ական թվականներին), իր «Երանելի Գրիգոր Խանձթեցու վարքը»<sup>5</sup> աշխատության 14-րդ, 15-րդ և 26-րդ գլուխներում: 14-րդ գլխում կարդում ենք. «Եվ երբ մոտեցան Իշխանին (Իշխանաց գյուղին—Ս. Ե.), կամոքն Աստոն՝ Երանելի Գրիգորին և արժանապատիվ Սաբանին հայտնվեց Իշխան վայրի և նրա սուրբ եկեղեցիների նախկին փառահեղությունը: Եվ հրամայվեց ի վերուստ, որպեսզի նրանք վերստին նորոգվեն իրենց նախնական տեսքով Սաբանի ձեռքով: Մատնացույց արվեց նաև նրանց մոտենալու ճանապարհը դեպի այդ

<sup>1</sup> Н. П. Северов, Памятники грузинского зодчества, Москва, 1947, էջ 191—192:

<sup>2</sup> Koch — Reise in Pontischen Gebirge, II, 1846 Weimar, էջ 243:

<sup>3</sup> Հ. Ներսես Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 94:

<sup>4</sup> Е. Такайшвили, Археологическая экспедиция 1917 года в южные провинции Грузии, Тбилиси, 1952. (Նույնը վրացերեն, 1961 թ.):

<sup>5</sup> Георгий Мерчул, Житие св. Григория Хандзтийского, грузинский текст, Н. Мапп, С. Петербург, 1911 г.



վայրը, քանի այն ժամանակ անմատչելի էր դարձել մարդկանց համար:

Եվ երբ նրանք ժամանեցին Իշխան, շատ ուրախացան այս վեհանիստ վայրը գտնելու համար, որը օժտված էր հոգևոր և մարմնական մխիթարություն գտնելու համար: Սաբանը այդ ժամանակ իսկ ցանկացավ մնալ այդտեղ, մակայն Նրանելի Գրիգորն ասաց նրան. «Տղբայր իմ, նախ և առաջ տեսնենք Խանձթայում գտնվող մեր եղբայրների և ապա կամոքն Աստուծո՞ւ և աղոթովք նոցա վերստին կվերադառնա»<sup>1</sup>:

Այդ հատվածը բնագրում կարդացվում է՝

Եւ յտարԿա Մոյճինեց ՄաբլոբեղաԼ յՄեհնաՍ. ԳամոյեքեաԼա ԼՄրտոՍա Միեր ՆեճարՍա ԳրիգոլԼս Եւ ԼորՍաՍա Սաբաս յՄեհնոՍա Քիրքեղո ճիճեբլղեճա. Եւ ճաբասա ՄոՍա ՄՄիճանո յԵղեՍանո. Եւ յեղՄեյա, յտարՄեղ յեղաԼա ԳանաբեղեաԼ աճ Քիրքեղեբը Եղոտա Սաբանոտա. Եւ յԵճոճա ԳՅԿա ՄոՍաճեաԼաԼ. Բամեթո ՄոՍ յաճոՍա յԿտաճան ՄոյեաԼ յոյո աճԳոլո յոյո: Եւ Մո.Բա.Յիճեց յՄեհնս, ԳրոճաԼ յՄեհրոճա Քոյեճա ճիճեբլղեճոՍա ՄոՍ աճԳոլոՍաճա:—

Բամեթո յոյո Մաս Մոնա ՆեյեՄոնոՍոՍաԿեՄեղո Սեղոյերո Եւ Եորճոյեղո. Եւ Սաբաս, Մեճեյեճեյե ԳեղՍ Եճեա ճաճԳոճա. Եոլո ՆեճարՄան Գրոճոլ Քրճեյա. «ՄՄար ՔիրքեղաԼ յոյոնեթ ՄՄանո Բեյեճնո Եանճոճան Մոնա Մեյոճնո Եւ Նեբոտա ԼՄրտոՍաճա Եւ Լոճեյոտա Մատոտա յեղաԼա Մոյճոլո աճԳոլոճա Մաս ՄՄոճաճա:

Բնագրի այդ հատվածը Ե. Թադախչվիլու թարգմանությամբ ստացվել է՝

Когда они приблизились к Ишхану, то блаженному Григорию и достойному Сабе по воле Бога открылись первоначальное величие Ишхана и святые церкви сего местечка, и последовало извещение свыше, что они подлежат возобновлению в первоначальном виде рукою Сабана, указан был и путь к ним, ибо людьми того времени местность сия не была

<sup>1</sup> Այս և հաջորդ մեջբերումները հին վրացերենից թարգմանել է, ինչպես և նախաբանի պատմական մասը կապմելիս անհրաժեշտ մասնագիտական օգնություն ցույց տվել ակադեմիկոս Ս. Տրենյանը, որի համար հեղինակը հայտնում է իր խորին շնորհակալությունը:

посещаема. И когда они прибыли в Ишхан, были очень обрадованы открытием сей величественной местности, потому что в ней было все для утешения и души и тела. Саба тогда же пожелал там остаться, но блаженный Григорий сказал ему: «брат, сначала посмотрим братьев своих, находящихся в Хандзте, а потом по воле Бога и молитвами братьев снова вернешься в сие место».

Ահա այդ նույն հատվածը Ն. Մառի թարգմանությամբ.

Когда они прибыли в окрестности Ишхана, блаженному Григорию и достойному Сабе от Бога открылась прежняя слава Ишхана, святые церкви в селе при нем, и было им возведено, что [Ишхан] опять обновиться рукою Сабана. Указан был и путь, чтобы дойти туда, так как место то было недоступно для людей того времени.

Когда они добрались в Ишхан, очень были обрадованы обретением славного места, так как в нем имелось и духовное, и телесное утешение. Сава тотчас задумал остаться там, но блаженный Григорий сказал ему: «Брат, сначала повидаем наших братьев, пребывающих в Хандзте, и потом ты опять придешь в это святое место волею Божьею и молитвами их».

Անհրաժեշտ է նշել, որ Ն. Մառի թարգմանության այս հատվածի առաջին պարբերության միջնամասում բաց է թողնված վրացական տեքստում եղած, մեզ համար վճռական նշանակություն ունեցող «Սկզբնականի տեսքով» արտահայտությունը, մինչդեռ այդ ճշտությամբ բերված է Ե. Թադախչվիլու թարգմանության մեջ «...в первоначальном виде рукою Сабана...»:

15-րդ գլխում կարդում ենք. «Խանձթա՛ ժամանելոց որոջ ժամանակ անց, Գրիգորը Սաբանին ուղարկեց Իշխան, տալով նրան երկու աշակերտ»:

26-րդ գլխում կարդում ենք. «Հարկավոր չէ երկարացնել իմ խոսքը՝ կամոքն Աստուծո՞ւ՝ Սաբանը դարձավ Իշխանի եպիսկոպոս, նստեցով երանելի Ներսես կաթողիկոսի կողմից կառուցված կաթողիկե եկեղեցում և նրա գահի վրա, որը բազում տարիներ այրիացած էր: Արդ վերստին տեղի ունեցավ նրա հոգևոր հարսանիքը և երկրորդ ան-

գամ կառուցվեց այս (Սաբան) Երանելու կողմից, հարկավ բարեպաշտ թագավորների մարմնավոր (սյուլթական) օժանդակությամբ»:

Այդ հատվածը բնագրում կարդացվում է՝

«Ամիս շեմընգոմալ Կըրապալատի միջիլա ռիճանս. լա նեդարնի ռի յաճնի մամաճ ցրիցոլ լա մամաճ սաձա տանա. լա ֆրիալ շեյթյար լա Կըրապալատս ալցիլի ռի: արամեյլ ռաճսալա ցանցարձոձ սիճ. յյտա. նեձիտա լմրտիսաճտա ռիճնա սաձա ղեբիսկո- յոս ռիճանսա շեձա նեդարիսա ներսեյ Կատալիցո- յիսա ալճեմեյլսա Կաոլոլիցեյ ղեկեյսիասա լա սալարսա միսսա. ռոմեյլի ճեկիճաձտա մրալալտա լաճըրիցեյլսա ղիլ: աճ յեձալա ղիճնա սեյլիցրի յորճիլի լա մեյորեյլ ալցեմեյնա ղիճնա նեդարիսա միցր. իլոլո իլոլոլեյլալ մոլլաճըբիտա լմրտիս. մսաճըրտա մաձ մեյթեյալալ:—

Բնագրի այդ նույն հատվածը՝ Ե. Թադախիզիլի թարգմանությամբ ստացվում է՝

«Но к чему распространять речь, по воле Бога Саба сделался епископом Ишхана, Кафоллической церкви, построенной блаженным католикосом Нерсе, и кафедры его, которая много лет была вдовствующей, но ныне снова последовало духовное венчание, и второй раз она [Ишханская церковь—Е. Так.] была построена блаженным Сабою при материальном содействии благочестивых тех царей».

Ահա այդ նույն հատվածը Ն. Մառի թարգմանությամբ.

«...но к чему затягивать речь? Божьею волею Сава сделался епископом в Ишхане, построенном блаженным католикосом Нерсесом, в соборной церкви и на кафедре его, которая многие годы была во вдовстве. Ныне вновь состоялся духовный брак, и вторично была [церковь—Н. Марр] обстроена нашим блаженным Сабою при материальном попечении богочестивых царей».

Ինչպես 14-րդ գլխի հատվածում երրորդ անգամ բերված «Իշխան», այնպես էլ 26-րդ գլխի հատվածում երկրորդ անգամ գրված «եկեղեցի» բառերը մեր կողմից առնվել են անկյունավոր փա-

կագծերի մեջ, նկատի ունենալով, որ այդ բառերը Գ. Մերչուլի վրացերեն տեքստի այդ մասում չկան, այդպիսիք ավելացրել է Ն. Մառը՝ տեքստը ռուսերեն թարգմանելիս:

Այդ նույն մտիվով «Իշխանի եկեղեցին» բառերը նույնպես առնված են անկյունավոր փակագծերի մեջ, սակայն հեղինակի՝ Թադախիզիլի կողմից, այդ բառերը ինքն է ավելացրել վրացերեն տեքստը ռուսերեն թարգմանելիս:

Գ. Մերչուլի աշխատության 26-րդ հատվածի հիման վրա, ուր ասվում է. «...և երկրորդ անգամ այն կառուցվեց...», Ե. Թադախիզիլին, Գ. Չուբինաշվիլին և շատ ուրիշներ եպրակացնում են, որ իբր «Իշխանի կաթողիկեն... 9-րդ դարի առաջին կեսին արմատապես ձևափոխվել-վերականգնվել է...», այսինքն՝ ներսեսազեն եկեղեցու տեղում Սաբանը կառուցել է մի, բոլորովին նոր եկեղեցի:

Գ. Մերչուլից բերված վերջին հատվածը (26-րդ գլխից) պարզաբանվելու խիստ անհրաժեշտություն ունի:

Բանն այն է, որ այդ հատվածի բնագիրը անադարտ վիճակում ավելի ճշգրիտ է հաղորդում հեղինակի միտքը՝ ասելիքի բովանդակությունը: Մերչուլը պարզ և մեկին ասում է «...կամո՞քն աստո՞՞ Սաբանը դարձավ Իշխանի եպիսկոպոս, նստելով Երանելի Ներսես կաթողիկոսի կողմից կառուցված կաթողիկե եկեղեցում...»: Նախադասությունը լիակատար է և այստեղ միտքը ավարտվում է: Մեջբերման մնացած մասը ամբողջությամբ վերաբերում է կաֆեդրային: Տվյալ դեպքում մինչև նույն է, թե «կաֆեդրա» բառի տակ ի՞նչ կհասկացվի՝ ամբիոն-ֆիլիկական խնամտով, կամ թեմ, որի առաջնորդն է եպիսկոպոսը: Այսպես «...և նրա գահի վրա, որը բազում տարիներ այրիացած էր: Արդ վերստին տեղի ունեցավ նրա հոգևոր հարսանիքը և երկրորդ անգամ կառուցվեց այս Երանելու կողմից...»:

Այստեղ «երկրորդ անգամ կառուցվեց»-ը վերաբերում է գահին և ոչ մի դեպքում եկեղեցուն: Իսկ եթե ոչ գահին, այլ թեմին, ապա «կառուցվեց»-ի փոխարեն տեքստի համապատասխան խոսքը պետք է հասկացվի «վերստին վերանորոգվեց» կամ «վերստին վերականգնվեց», «կրկին վերանորոգվեց» խնամտով: Այս դեպքում թեմը կարող է վերանորոգվել, նրա գործունեությունը վերականգնվել, վերսկսվել, վերակենդանանալ, վերահաստատվել և այլն:

Այստեղից հետևում է, որ «կառուցեց» կամ «շրջակառուցեց»-ի փոխարեն «վերանորոգեց» կամ «վերականգնեց» կարգալով, բնական է դառնում, որ այդ վերաբերում է թեմին և ոչ եկեղեցուն: Ինչ խոսք որ եկեղեցին ևս անպայման պիտի կգար վերանորոգման անհրաժեշտություն, այն երկար ժամանակ եղել էր լքված ու, թերև, այս կամ այն չափով վնասված՝ ենթակա վերանորոգման: Ուրեմն կարող ենք ասել, որ Կաթողիկե եկեղեցին վերըստին նորոգվեց և Սաբանը նստեց Ներսեսի երբեմնի եպիսկոպոսական գահի վրա:

Գ. Մերչուլի աշխատության համապատասխան հատվածները Ե. Թադաիշվիլու ձևով ընդունելու դեպքում ակնբախ է դառնում հակասությունը վերը բերված հատվածներից առաջինի և երրորդի միջև: Առաջինում ոչ մի խոսք չի ասվում եկեղեցու քանդված, ավերված լինելու մասին, **ակնարկ կա նորացնելու, նորոգելու մասին, այն էլ նախկինի ձևով**, մինչ երրորդ հատվածում, բոլորովին անսպասելի, առանց որևէ անհրաժեշտության, որ պիտի երևար նախորդ հատվածներում, կարդում ենք «Իշխանի եկեղեցին երկրորդ անգամ կառուցվեց...» և այլն:

Մերչուլի աշխատության բնագիրը մեզ չի հասել: Ն. Մառը հիշյալ աշխատության իր հրատարակության նախաբանում (էջ VII) գրում է.

«Памятник, однако не дошел до нас подобно в том виде, какой он принял под пером обновителя. Рукопись наша едва-ли древнее XII века, и она списана не с архетипа, а с позднейшего хахульского списка, куда постепенно вносились добавления, особенно в конце с LXXXV-й главы, но местами и раньше. И в этих позднейших наслоениях преобладает интерес к чудесному и созидательному. В это время и могли прокрасться в текст некоторые анахронизмы».

Այս հակասությունը անմիջապես վերանում է, երբ երրորդ հատվածի համապատասխան մասը մեկնաբանվում է՝ հիմնվելով առաջին հատվածի վրա, քիսեցվում է նրանից:

Գ. Մերչուլի աշխատության հիշյալ հատվածների առավել ուշադիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ երբ Գրիգոր Խանձթեցին և նրա քրոջ որդի Սաբանը հասել են Իշխան,

նրանց հիացքի առարկան է եղել առաջին հերթին ներսեսաշեն հոյակապ եկեղեցին, որն ամենայն հավանականությամբ կանգուն էր, համենայն դեպս գտնվում էր այնպիսի վիճակում, որ գյուղի արվարձաններին հազիվ մոտեցած Գրիգոր Խանձթեցուն և Սաբանին հիացրել է իր վեհ շուքով, կանգուն շինությամբ և ո՛չ ավերակով: Ուրիշ ի՞նչը պիտի բացվեր նրանց «աստուծո կամոք»: Այստեղ եկեղեցական գործունեությունը վերսկսելու-վերականգնելու կապակցությամբ անհրաժեշտ է եղել կատարել վերանորոգումներ և կամ շինության վնասվածքների վերականգնումներ, այնպես, որ եկեղեցին վերստանար իր «ակաբնական տեսքը»:

Անշուշտ պարանալի է, որ այս նույն մեջբերումների տվյալների հիման վրա Ե. Թադաիշվիլին հանգում է տրամագծորեն հակառակ եզրակացության, նա գրում է. «IX դարի առաջին կեսին սակայն Իշխանի աթոռը այրիացած էր, Ներսեսի կառուցումները, ինչպես երևում է, ավերված էին, նրանց մոտենալն անգամ դժվար էր»:

Այդ նույն ձևով են պատկերում Իշխանի ներսեսաշեն եկեղեցու վիճակը IX դարի առաջին կեսում նաև այլ հետապոտողներ:

Ահա և մենք ականատես ենք Իշխանի ներսեսաշեն եկեղեցու IX դարի առաջին կեսի գոյավիճակի միմյանցից տարբեր մեկնաբանումների:

Առաջին դեպքում համաձայն վրացերեն տեքստի՝ տաճարում կատարվել են **նորոգումներ**, ըստ երևույթին կապված «հոգևոր պսակադրման»՝ եպիսկոպոսական աթոռի նորոգման հետ: Այդ միանգամայն բնական է և հավանական:

Մյուս դեպքում՝ համաձայն Ն. Մառի ռուսական թարգմանության, եկեղեցին շրջակառուցվել է, կամ շրջակառուցապատվել: Այս էլ հասկանալի է, եթե ենթադրելու լինենք, որ Իշխան տաճարի շուրջը եղած այլ կառուցվածքներ ստեղծվել են Սաբանի կողմից:

Երրորդ դեպքում՝ համաձայն Ե. Թադաիշվիլու ռուսական թարգմանության, «...և երկրորդ անգամ նա [Իշխանի եկեղեցին] կառուցվեց երանելի Սաբանի կողմից», բոլորովին հասկանալի չէ: Նորից հիշենք, որ տեքստում ոչ մի խոսք չի ասվում եկեղեցու ավերված լինելու վերաբերյալ և հանկարծ խոսքի վերջում ասվում է, թե «երկրորդ անգամ կառուցվեց» և այլն: Հնարավոր էր ենթադրել, որ այս, թերև, արգասիք է բնագրի Ե. Թադաիշվիլու ազատ մեկնաբանման: Ուրիշ ինչո՞վ է ազատ-



ինել նրա եպրակացությունը, թե «...Ներսեսի կառուցումները, ինչպես երևում է, ավերված էին»: Եվ դա այն դեպքում, երբ նույն տեքստում ասվում է՝ «... Երանելի Գրիգորի և արժանապատիվ Սաբանի առաջ բացվեցին Իշխանի սուրբ եկեղեցիները»:

Թվում է, որ Թաղաիշվիլին ևս նկատել է, որ Գ. Մերչուլից մեջբերված երրորդ հատվածը կարող է ունենալ տարբեր մեկնաբանություններ. ու, եթե նա դեռևս այս դարի առաջին տասնամյակում «Բանա» աշխատության մեջ ամբողջությամբ բերել է Մերչուլի աշխատության հիշյալ երրորդ հատվածը, ապա ավելի ուշ (1952 թ. ռուսերեն և 1961 թ. վրացերեն) լույս տեսած ուսումնասիրության<sup>1</sup> մեջ չի բերում. նա նույնությամբ, չակերտների մեջ բերում է առաջին և երկրորդ հատվածները, իսկ երրորդը՝ այդ ամենակարևոր հատվածը շարադրում է իր կողմից, ինչպես որ ինքն է ընդունում: Ահա Մերչուլի աշխատության 26-րդ գլխի մեջ մեկ հետաքրքրող այդ հատվածը՝ շարադրված Ե. Թաղաիշվիլու կողմից 1952 թվականի ռուսերեն հրատարակության 24-րդ էջում:

«Сабан принял за дело и при материальном содействии Баграта куропалата, сына Ашота I и его братьев построил Ишханский храм. Таким образом, Ишхан вторично был построен в начале IX века на месте развалин храма епископа Нерсе... Сабан сделался первым грузинским епископом Ишхани, заняв кафедру первого православного епископа Нерсе, которая многие годы была во вдовстве».

Հետագայում Ե. Թաղաիշվիլին իր եպրակացությունները հիմնում է արդեն ոչ թե բնագրի, այլ իր իսկ շարադրության վրա, որ բերվեց վերևում: Սրանով Ե. Թաղաիշվիլին խնդրի լուծումը վերցնում է իր ձեռքը, կրկնելով իր աշխատության նոր ընթերցողին բնագիրը վերլուծելու հնարավորությունից:

Ե. Թաղաիշվիլին իր «Բանա» աշխատության մեջ (տե՛ս էջ 114) գրում է. «Գրիգոր Խանձթեցու կենսագիրը թեկուզ կարճառոտ, սակայն այնպիսի

հիացմունքով է արտահայտվում Իշխանում Ներսեսի կառուցումների վերաբերյալ, որ հենց միայն այդ կարող էր նրան տալ «Ներսես Շինող» անվանակոչումը»:

Ուրեմն, Գրիգոր Խանձթեցու կենսագիր Գեորգի Մերչուլը մինչև 951 թվականը՝ գտնվելով Իշխանում, տեսել է Ներսեսի կառուցած հոյակապ տաճարները:

Եթե Իշխանի եկեղեցին Մերչուլի ժամանակներում (X դարի 40—50-ական թվականներին) դեռևս գոյություն է ունեցել, հետևում է, որ Սաբանը IX դարի առաջին կեսի ընթացքում ներսեսաշեն տաճարը լոկ նորոգել է, և ոչ նրա տեղում կառուցել նորը: Ուրեմն՝ Սաբանի եպիսկոպոս դառնալու ժամանակ ներսեսաշեն եկեղեցին եղել է կանգուն, և ոչ «ավերակի վերածված», ինչպես ընդունում է Ե. Թաղաիշվիլին:

«Էնց այդ է հաստատում պատմաբան Մերչուլի աշխատության 26-րդ գլխի համապատասխան հատվածը, որտեղ ասվում է. «... կամոքն աստծո՝ Սաբանը դարձավ Իշխանի եպիսկոպոս, նստելով երանելի Ներսեսի կողմից կառուցված կաթողիկե եկեղեցում և նրա գահի վրա, որը բազում տարիներ այրիացած էր: Արդ, վերստին տեղի ունեցավ նրա հոգևոր հարսանիքը»: Ավելի պարզ չէր կարող ասվել և Մերչուլի ժառանգության ամեն մի այլ մեկնաբանություն, անտարակույս՝ բռնապետիկ է:

«Վրացական ճարտարապետության ուղիները» աշխատության մեջ (էջ 69) Գ. Չուբինաշվիլին Իշխանի VII դարի ներսեսաշեն եկեղեցու մասին գրում է, որ այն «IX դարի առաջին կեսին և հետո, հատկապես XI դարի առաջին կեսին, ենթարկվել է արմատական ձևափոխման և վերականգնման»:

Շ. Ամիրանաշվիլին լույս ընծայած իր աշխատության<sup>2</sup> մեջ անդրադառնալով Իշխանին տարբեր առիթներով, տարբեր ձևով է ներկայացնում այդ տաճարի շինության հետ տեղի ունեցած փոփոխությունները: Նա գրում է. «Արաբների ավերածություններից հետո, IX դարի առաջին կեսում նա (տաճարը—Տ. Մ.) Գրիգոր Խանձթեցու գործակից վրացի Սաբանի<sup>3</sup> կողմից նորոգված էր (был подновлен): 1032 թվականին Բագրատ

<sup>2</sup> Շ. Ամիրանաշվիլի, История грузинского искусства, Москва, 1963, էջ 110:

<sup>3</sup> Ն. Մառը գործ է ածում այս անվան Սավա (հայերեն՝ Սահակ) ձևը:

<sup>1</sup> Е. Такайшвили. Археологическая экспедиция 1917 года в южные провинции Грузии, Тбилиси, 1952, стр. 24, тоже 1961 г. (на грузинском языке), էջ 8:

4-րդի օրոք նորից նորոգվել էր և երեսապատվել (был снова обновлен и облицован)»:

Այս տողերից բացի, հենց նույն էջում նա գրում է. «Տաճարը ենթարկվել է բազմաթիվ ձևափոխությունների», և ապա՝ «Սկզբնական շինությունից պահպանվել է սեղանի արսիդը՝ հենված սյունակամարաշարին»:

Նույն աշխատության մի այլ տեղում (էջ 165) նա գրում է. «Այդ տաճարը... արմատապես (հիմնավորապես—Տ. Մ.) վերաշինվել էր (коренным образом перестроен) Գրիգոր Խանձթեցու աշակերտ Սաբանի կողմից, վերականգնվել (реставрирован) Գեորգի 1-ի (1014—1027) և 1032 թվականին թագավոր Բագրատ 4-րդ Կյուրապաղատի օրոք»:

Չուբինաշվիլին պարզ ու մեկին ասում է, որ IX և XI դարերի առաջին կեսերում տաճարը կրել է արմատական ձևափոխություններ, մինչ Ամիրանաշվիլին IX դարի առաջին կեսի փոփոխությունները մի դեպքում որակում է իբրև «նորոգումներ», մյուս դեպքում՝ նրան տալիս «արմատապես վերաշինվելու» բնույթ: Միանգամայն հասկանալի է, որ սրանք արմատապես տարբեր գաղափարներ են և չեն կարող միաժամանակ հանդիսանալ նույն երևույթի միարժեք գնահատումներ: «Շինությունը նորոգել» նշանակում է հնացած մասերը փոխարինել նորով, վնասված տեղերը վերականգնել, ամեն ինչ թարմացնել, բոլոր միջոցներով վերականգնողանալ հինը, վերականգնել առաջվանը, մինչ՝ «հիմնավորապես վերաշինելը», «արմատապես ձևափոխելը» նշանակում է՝ նոր շինությունը կարող է նաև նման չլինել հինին, կամ հին հիմքի վրա կառուցել նոր շինություն և, նույնիսկ, հինը քանդել հիմնիվեր և տեղը կառուցել նորը:

Պարզ երևում է, որ Շ. Ամիրանաշվիլին փաստական որևէ տվյալ չունենալով Իշխանի VII դարի ներսեսաշեն տաճարի IX դարում ավերված լինելու վերաբերյալ, գրում է, թե այն նորոգվել կամ վերանորոգվել է Սաբանի կողմից: Նա ասում է այն, ինչ բխում է Մերչուլի ասածից (տե՛ս «Վարքի» 14-րդ գլուխը), մյուս դեպքում նա հետևում է այն տարածում գտած դրույթին, թե իբր սկզբնապես ներսեսաշեն տաճարը եղել է Բանակի տիպի տաճար, իսկ հիմա ուղղանկյուն-խաչաձև է, ուրեմն «սկզբնականը» պետք է արմատապես ձևափոխվեր, քանդվեր հիմնիվեր, որ ստացվեր այն, ինչը կա այսօր:

Ելնելով ահա այս իրավիճակից, նա իր աշխատության հաջորդ էջերում շարադրում է երկրորդ ձևով, ճիշտ այնպես, ինչպես Չուբինաշվիլին և Թաղաիշվիլին:

Այժմ պայմանականորեն ենթադրենք, որ իսկապես IX դարի առաջին կեսում Իշխանի ներսեսաշեն եկեղեցին «արմատապես ձևափոխվել և վերականգնվել է», և այդ արել է Երանելի Սաբանը, որին Թաղաիշվիլին կրկնելով անվանում է «Ներսեսից հետո Իշխանի երկրորդ կառուցող»: Բնականորեն հարց է առաջանում, այդ ինչպե՞ս է, որ Գրիգոր Խանձթեցու կենսագիր Մերչուլը Սաբանից ավելի քան 100 տարի հետո X դարի առաջին կեսում «հիացմունքով է արտահայտվում Իշխանում **Ներսեսի կառուցումների** վերաբերյալ», ինչպես գրում է Թաղաիշվիլին: Ինչո՞ւ հիացմունքի արժանի այդ կառուցումները Մերչուլը չի վերագրում Սաբանին, չէ որ այդպիսիք «արմատական ձևափոխման» հետևանքով պետք է ստացած լինեին նոր կերպարանք, դարձած մի նոր նվաճում, ստեղծված Սաբանի կողմից, ինչպես որ ընդունում են վերոհիշյալ արվեստաբանները:

Տվյալ դեպքում հնարավոր չէ ենթադրել, թե գուցե Մերչուլը տեսել է Ներսեսի հռչակավոր տաճարի ավերակը և հիացել նրա մնացորդներով: Բանն այն է, որ Մերչուլի ժամանակ ավերակի մնացորդներ չեն եղել, գոյություն է ունեցել կանգուն եկեղեցի. այն պետք է լիներ կամ Ներսեսի, կամ Սաբանի կառուցածը, որովհետև Սաբանը պետք է կառուցած լիներ Ներսեսի տաճարի ավերակի տեղում: Եվ քանի որ Մերչուլը տեսել է կանգուն եկեղեցի և այն համարել է ներսեսաշեն, ուրեմն Սաբանը չի կարող համարվել «Իշխանի երկրորդ կառուցող» (նորը կառուցելու իմաստով):

Անհրաժեշտաբար կրկնում ենք, որ Գ. Մերչուլի աշխատությունից բերված մի հատվածի և մյուս հատվածի միջև եղած հակասությունը, ըստ երեւոյթին, պետք է վերագրել Մերչուլի ժառանգության ոչ ճիշտ ընթերցմանը կամ մեկնաբանմանը: 26-րդ գլխի մեկ հետաքրքրող հատվածում «**երկրորդ անգամ**» արտահայտությունը վերաբերում է տաճարի «հոգևոր պատկարմանը», եկեղեցու գործունեության վերականգնմանը-վերակսմանը, այն **հունա-վրացադավան դարձնելու** առնչությամբ և ոչ տաճարի վերաշինությանն ընդհանրապես: Տաճարը ամբողջական վերաշինության կարիք չի ունեցել:

Իսկ եթե, այնուամենայնիվ, «երկրորդ անգամ կառուցելը» փորձենք վերագրել ո՛չ թե թեմին, այլ բուն եկեղեցուն, ապա այդ արտահայտությունը աներկբա պետք է հասկացվի «վերանորոգելու» իմաստով և ոչ այլ կերպ: Տեղն է այստեղ մեջ բերել Հովսեփ Օրբելու կարծիքը Անիի պալատական եկեղեցու երկու արձանագրությունների վերաբերյալ, որտեղ նա ասում է. «շինել» բայը արձանագրություններում գործ էածվում ոչ միայն կառուցել, կերտել նշանակությամբ, այլև պակասն ավարտելու, վերանորոգելու իմաստով, ըստ երևույթին պզալի նորոգումների և շտկումների պայմաններում»<sup>1</sup>: Ահա, հենց այս ձևով էլ պետք է ընդունել Մերչուլի կառուցել խոսքը Խանձթեցու «Վարք»-ում:

Որ միջին դարերում եկեղեցիների վրա կատարված նորոգումները արձանագրվում էին «կառուցեցի», «շինեցի» բառերով, հաստատվում է հենց Իջևան տաճարի հարավային կողմի երկրորդ պատուհանի կամարի և աջակողմի պատահատվածի վրա եղած վրացերեն մի արձանագրությամբ, որ անցյալ դարի կեսերին արտագրել և հրատարակել է մխիթարյան Ներսես Սարգսյանը<sup>2</sup>. «Անուամբն Աստուծոյ եւ Աստոնիոս արքեպիսկոպոս նորոգեալ աւարտեցի վկայողիկէ եկեղեցիս... ի փառաւորութիւն Բագարատ Կյուրապաղատի, և ի հիշատակ աղոթից վասն իմոյ հոգոյս և թողութեան մեղաց իմոց: Ի պատկական թուխ ՄԾԲ (1032): Ծիսեցի պա ձեռամբ Իւանէի Մորախցեան»<sup>3</sup>:

Ահավասիկ, արձանագրության սկզբնամասից երևում է, որ խոսքը վերաբերում է Իջևան եկեղեցու նորոգման ավարտմանը, իսկ վերջնամասում գրում է. «շինեցի»:

«Երկրորդ անգամ կառուցել» արտահայտությունը ինչպես մատենագիրների, այնպես էլ մեր ժամանակների հետապոստոլների կողմից ընդունվում է իբրև «վերանորոգում», բայց ոչ երբեք «նորի կառուցում»: 1887 թ. հրատարակված Դ. Բաքրաձեի «Статьи по истории и древностям Грузии» աշխատության 29-րդ էջում կարդում

<sup>1</sup> И. А. Орбели. Избранные труды, Ереван, 1963, էջ 419:

<sup>2</sup> Ներսես Սարգսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 98:

<sup>3</sup> Սարգսյանի գրքում բնագիրը «ձեռամբ»-ի փոխարեն թարգմանված է «միջնորդությամբ», որը, ըստ երևույթին, ճիշտ է:

ենք. «Ինչը՝ ինձ հատկապես պարմացրեց Օպիպյուն, այդ այն մինչև օրս պահպանված, թեպետև հարավային պատին դժվարությամբ կառչած որմնանկարն է, ի միջի այլոց Կյուրապաղատ Աշտի պատկերով և մակագրությամբ. «Կյուրապաղատ Աշտ, երկրորդ կառուցող Օպիպայի և այս սուրբ տաճարի»: Բաքրաձեն շարունակում է. «Որ Օպիպան վերականգնված է, այդ նկատելի է...»:

Գ. Չուբինաշվիլին գտնում է, որ Բանակ տաճարը կառուցվել է VII դարում, վերականգնվել IX—X դարերի սահմանագծում, և ահա այս վերականգնումը նա անվանում է «երկրորդ կառուցում»: Նա իր «Վրաց արվեստի պատմություն» աշխատության (1936 թ.) 175—176 էջերում ուղղակի ասում է. «Այստեղից հետևում է, որ Սուևբաթի թողած տեղեկությունը (Բանակ տաճարի վերաբերյալ—S. U.) պետք է հասկանալ, որպես մայր եկեղեցու «երկրորդ կառուցում», այսինքն՝ վերականգնում, կապված նոր եպիսկոպոսի նշանակման հետ»:

Ե. Թաղաիշվիլին Չորդվան եկեղեցու (վրացերեն Օթխթա Էկլեսիա) մոտակայքում գտնվող ամրոցի ներսի եկեղեցու արձանագրության կապակցությամբ գրում է. «Երկրորդ անգամ կառուցել» արտահայտությունը վրացական արձանագրություններում՝ նշանակում է եկեղեցու վերանորոգում»<sup>4</sup> կամ վերականգնում:

Անհրաժեշտ է նշել, որ ներսեսաշեն Իջևան եկեղեցում Սաբանի շինարարական գործունեությունը պարպաբանելու համար հետապոստոլները վկայակոչում են «Գրիգոր Խանձթեցու վարքի» 14, 15 և 26-րդ գլուխների հայտնի հատվածները միայն, մինչև անուշադրության է մատնվում 5-րդ գլխից այս հատվածը. «Возымеv такое доброе намерение и вступив на путь его существования, он с помощью Христовой благодати обрел добрых друзей, Саву, который был прозван Сабаном, племянника своего, возобновителя Ишхана и его епископа...»

Այստեղ հեղինակը Սաբանին (Սավային) որոշակիորեն անվանում է «Իջևանի վերանորոգող» (եթե խոսքը վերաբերում է եկեղեցու բուն շինությանը) կամ «վերակառուցող-վերականգնող» (եթե խոսքը վերաբերում է թեմի գործունեությանը),

<sup>4</sup> Выражение «второй раз построил» в грузинской эпиграфике означает реставрацию церкви». Տե՛ս Է. Կայիշվիլի. Археологическая экспедиция 1917 г... церковь «Отхта еклесия».



բայց ոչ «կառուցող», ինչպես այդ կարողում ենք 26-րդ գլխում:

Անկարևոր չէ, և պետք է նկատել, որ Սաբանը Խանձթայ վերադառնալու ճանապարհին, հասնելով Իշխան, ցանկություն է հայտնել իր ուսուցիչ և բարեկամ Գրիգոր Խանձթեցուց բաժանվելու գնով այլևս չջարունակել ճանապարհը դեպի իրենց յուրայինները, այլ **անմիջապես** այդտեղ մնալ: Եթե Իշխանում լոկ ավերակներ լինեին, մի՞թե Սաբանը կցուցաբերեր այդպիսի ջերմ ցանկություն անմիջապես մնալ այնտեղ բաց երկնքի տակ. մինչդեռ, ինչպես կարողում ենք «Վարք»-ում, «Այնտեղ կար ամեն ինչ թե՛ հոգու, թե՛ մարմնի մխիթարության համար»: Եվ մի՞թե բնական է, որ **ավերակի վրա, նախքան նրա վերականգնումը՝ «երկրորդ անգամ կառուցելը»**, Սաբանը կարող էր թողնել յուրայիններին, գնալ Իշխան, մնալ այնտեղ և դառնալ եպիսկոպոս: Համաձայն Մերչուլի, Սաբանը երկար ժամանակ Իշխանումն էր, երբ ստանալով Կյուրապաղատի նամակը մերժեց գնալ նրա մոտ և Գրիգոր Խանձթեցու միջամտությունը միայն նրան տարավ և ընդունելության արժանացրեց Կյուրապաղատին ու դրանից հետո էր, որ Կյուրապաղատը այդ հոգևորականների ուղեկցությամբ այցելեց Իշխան, սիրեց այդ վայրերը և, ապա, միջոցներ տրամադրեց վերանորոգումների հետ կապված Սաբանի ծախքերի համար:

Ահա այս ամենը նկատի ունենալով, պետք է ընդունել, որ Սաբանի շինարարական գործունեությունը Իշխանում սահմանափակվել է վերանորոգումներով և ոչ ավելին: Եվ, ապա, պետք է կարծել, որ Սաբանը ինչ էլ որ արել է Իշխանում,— շատ, թե քիչ,— համենայն դեպս նա չի գնացել «արմատական ձևափոխությունների» գծով, այլ «վերականգնել է սկզբնականի տեսքով» (в первоначальном виде), չէ որ հենց այդպես է եղել պատգամը «ի վերուստ» ու, թերևս սրանով էլ բացատրվի այն, որ Գրիգոր Խանձթեցու կենսագիր Գեորգի Մերչուլը իր հիացունքի առարկա Իշխանի եկեղեցիները կապում է առաջին կառուցող Ներսեսի և ո՛չ «սկզբնական տեսքով»... «երկրորդ կառուցող» Սաբանի անվան հետ:

Եթե ընդունելու լինենք այն տեսությունը, որ Իշխանը սկզբնապես ունեցել է Բանակի կամ Չվարթնոցի նման բոլորակ հատակագիծ, ինչպես և այն, որ մեզ ժամանակակից Իշխանի հատակագիծը արևելակողմի խորանի բացառությամբ իրա-

կանում ոչնչով նման չէ Վարթնոցատիպ տաճարների հատակագծերին, ապա պետք է ենթադրել երկու վիճակ: Առաջինն այն է, որ IX դարի սկզբներում Իշխանի ներսեսաշեն եկեղեցին, արևելյան խորանի սյունակամարաշարի բացառությամբ, եղել է հիմնահատակ ավերված, և Սաբանը անկախ «Երանելի Ներսեսի» նկատմամբ ունեցած նկատելի ակնածանքի և «ի վերուստ առաքված պատգամի» **անհնար** է համարել այն վերականգնել «**նախկին ձևով**»: Նման երևույթ չէր կարող տեղի ունենալ: Տաճարի ամբողջական կործանման դեպքում ոչ մի ուժ չէր կարող արևելյան խորանի սյունակամարաշարը պահպանել այնպես անվթար, որ հնարավոր լիներ այն նույնությամբ ներառնել կառուցվող եկեղեցու օրգանիպի մեջ:

Երկրորդ ենթադրությունն այն է, որ եկեղեցին եղել է կիսականգուն, սակայն Սաբանը **հիմնահատակ քանդել** է այն, ու նրա սրբագործված տեղում փորել նոր հիմքեր, կառուցել այլ ձևի, մի բոլորովին նոր եկեղեցի, ներառնելով նրա օրգանիպի մեջ, քանդումից պահպանված, արևելակողմի սյունակամարաշարը միայն:

Դրան համաձայնելու դեպքում, պետք է ընդունել, որ այդ ժամանակ հուշարձանի տեղում առաջացած է եղել մոտ 50 մետր տրամագծով, 10—15 մետր բարձրության հապարավոր բեկորների ու մեծականգված փուլքերի մի բլուր: Չէ՞ որ շրջակա, արաբների անայացնող տիրապետության շրջանում նոսրացած բնակիչները դեռ չէին հասցրել տանել ավերակի շինաքարը այլ կառուցումներում օգտագործելու համար:

Այս պայմաններում պետք է կարծել, որ Սաբանը որքան էլ տոգորված լիներ ներսեսաշեն տաճարի խորանի սյունակամարաշարը իր նոր կառուցելիք եկեղեցու մեջ պահպանելու ջերմ ցանկությամբ, իրեն չէր գցի այնպիսի մի փորձության մեջ, որ ստիպված լիներ կործանված տաճարի մեծածավալ վանգվածները փշրել, տեղանքը մաքրել հապարավոր խորանարդ մետրի հասնող մի հսկայածավալ տաճարի փուլքերից: Այդպիսի աշխատանքը վեր է եղել նրա ուժերից և հնարավորություններից:

Իշխան տաճարի շրջապատի մի բոլորովին ազատ տեղում նոր եկեղեցի կառուցելը անհամեմատ հեշտ պիտի լիներ, և Սաբանը անպայման ճիշտ կգնահատեր իրերի վիճակը, ոչ մի դեպքում չէր գնա անհաղթահարելի դժվարությանն ընդա-

ուաջ, նման բան չի էլ հիշատակված Գ. Մերչուլի կողմից:

Այսպիսով, կրկին անգամ եպրակացվում է, որ Իշխանի VII դարի ներսեսաշեն կաթողիկե եկեղեցին Սաբանի ձեռքով, համենայն դեպս, «արմատական ձևափոխման» չի ենթարկվել և որ ժամանակակից պատմագրության մեջ տարիներ ի վեր պահպանված այդ թեպը չի ամրացված անհրաժեշտ հիմքով և արդյունք է այդ խնդրի վերաբերյալ առանձին հետապոտողների քնահաձ մոտեցման:

Ն. Տոկարսկին, որ 1915 թ. գտնվել է Իշխանում և, ինչպես ինքն է ասում, մանրամասն հետապոտել է տաճարը, որոջ հարցերում չի բաժանում նախորդ հետապոտողների հայացքները հուշարձանի կրած վերակառուցումների վերաբերյալ: Նա գտնում է՝ «Սաբանի միջոցառումների մեջ տեսնել տաճարի արմատական ձևափոխությունն այնպես, որ բոլորակ տաճարը դառնա խաչաձև, որպիսին պահպանվում է մինչև մեր օրերը, անհիմն է այնքան, որքան երկիրը արաբների ջարդերից հետո, Կյուրապաղատ Աջոտի օրոք նոր-նոր էր միայն սկսել շտկվել»<sup>1</sup>: Տոկարսկին համոզված է, որ Սաբանը IX դարում լոկ վերանորոգել է ներսեսաշեն տաճարը և որ նրա ժամանակ կատարված շինարարական աշխատանքները նպատակ են ունեցել տաճարը այնպես կարգավորել, որ այնտեղ հնարավոր լինի կբաղվել եկեղեցական արարողությամբ:

Տոկարսկին ևս կարծում է, որ այնուամենայնիվ Իշխանի ներսեսաշեն եկեղեցին եղել է բոլորաձև, և որ նրա տեղում հետագայում կառուցվել է հիմքում խաչաձև եկեղեցի, սակայն, ի տարբերություն մյուս հետապոտողների, նա եկեղեցու այդ արմատական ձևափոխությունը վերագրում է, ինչպես տեսանք, ոչ Սաբանին, այլ Դավիթ Մեծ Կյուրապաղատին: Նա ենթադրում է, որ X դարում ներսեսաշեն եկեղեցին եղել է այն աստիճան ավերված, որ հնարավոր չի եղել նրա վերականգնումը նախկինի ձևով:

Սաբանի կողմից Իշխանում IX դարի քսանական թվականների վերջերում կատարած նորոգումներից հետո, մինչև X դարի կեսերը անցել է ընդամենը մեկ հարյուրամյակից մի քիչ ավելի: Ինչ էլ տեղի ունեցած լիներ այդ ժամանակամիջոցում, գործող եկեղեցին այնպես չափաի ավերվեր,

որ նրա վերականգնումը նախկինի նմանողությամբ դարձած լիներ անհնարին: Դավիթը, այդ ավանդապահ, կրոնասեր Կյուրապաղատը ինչո՞ւ պիտի հիմն ի վեր քանդեր արդեն սրբագործված VII դարի կաթողիկեն ու նրա տեղում հիմնադրեր մի, բոլորովին նոր տիպի, իր չափերով ու շքեղությամբ նախկինին ակներևաբար վիշող եկեղեցի: Դավթի պես փառքի արժանացած ոչ մի Կյուրապաղատ նման գործողության չէր դիմի: Ավելի տրամաբանական է ենթադրել, որ նա մեծ չափով ավերված Բանակը վերականգնող Ադրնեսուեհի նմանողությամբ Իշխանը կվերականգներ իր նախկին ձևով, կամ այդ տեղում կկառուցեր նախկինը որոշակիորեն գերազանցող մի նոր տաճար: Իսկ եթե կառուցելու էր ավելի փոքր չափերի եկեղեցի, կկառուցեր ոչ թե Բանակի ավերակի վրա, այլ կողքին<sup>2</sup>, որը և ամբողջությամբ կապված կլիներ միայն և միայն իր, Դավիթ Մեծ Կյուրապաղատի անվանը և համեմատության մեջ չէր դրվի նախկինում այդտեղ գոյություն ունեցած համբավավոր տաճարի հետ:

Եվ ապա, եթե Իշխանը հիմն ի վեր կառուցված լիներ X դարում մեծ կյուրապաղատ Դավթի կողմից, նա կունենար այնպիսի՝ տեսք և կգտնվեր այնպիսի՝ վիճակում, որ ամենևին կարիք չէր լինի նրա նոր երեսապատման, որպիսին իրոք կատարվել է X դարում կամ XI դարի երեսնական թվականներին:

Իշխանը լքված է եղել արաբների արշավանքներից հետո միայն, իսկ Սաբանի նորոգումներից հետո, մինչև Դավիթ Կյուրապաղատի ժամանակները լքված չի եղել, շարունակաբար գործել է, իսկ գործող եկեղեցիները շարունակաբար նորոգվում, պաշտպանվում են:

«Հետապոտողներից ունաք Իշխանի «արմատական ձևափոխումը» առանց բավարար հիմք ունենալու տարածում են նաև, ու հատկապես՝ XI դարի առաջին կեսի ընթացքում տաճարում կատարված շինարարական աշխատանքների բնույթի վրա: Սակայն չպետք է մոռանալ, որ XI դարում Իշխան

<sup>2</sup> Ճիշտ է, միջնադարյան մարդու ստածողության տեսակետից նոր տաճարներ կառուցելիս աշխատում էին կառուցել նախկին տաճարների տեղերում, որոնք ժամակակի ընթացքում սրբագործվել, դարձել էին սրբավայրեր, բայց չէ՞ որ սրբավայր էր համարվում ո՞չ միայն բուն եկեղեցու տեղը, այլ նաև նրա անմիջական շրջապատը: Այդ հիման վրա էին ստեղծվում վանքերը բազմաթիվ մեծ ու փոքր կառույցներով:

<sup>1</sup> Н. М. Токарский, Архитектура Древней Армении, Ереван, 1946, էջ 206.

տաճարում կատարված մեծ շինարարական աշխատանքները, ինչպես ասվեց, վերաբերում են հիմնականում արտաքին պատերի երեսապատմանը, դեկորատիվ սյունականարաշարի ստեղծմանը, մի աշխատանք, որը սակայն **ձևափոխության իմաստով չի անդրադարձել տաճարի հատակագծային պատկերի, ինչպես և ծավալա-տարածական հորինվածքի վրա:**

Որ հաջորդ դարերի շինարարական աշխատանքները վերաբերում են նորոգումներին, ինչպես և տաճարի արտաքին պատերի երեսապատմանը, հաստատվում են հուշարձանում պահպանված արձանագրություններով, որ բերում է Ե. Թաղաիշվիլին իր վերոհիշյալ աշխատության 30-րդ էջում:

Այսպիսով պարզվում է, որ Իշխանը «Արմատական ձևափոխությունների» չի ենթարկվել նաև 1032 թվականին, եթե նկատի չառնենք տաճարի արտաքին պատերի երեսապատմանը:

Ն. Տոկարսկին, որ Իշխանի «արմատական ձևափոխությունը» վերագրում է Դավիթ կյուրապաղատին, ժամանակը՝ X դարի կեսերը, գտնում է, որ տաճարի կառուցողը կրկնել է այդ ժամանակ արդեն գոյություն ունեցող Օշկի հիմնական կուպոլիցիան: Նա այդ համոզման է եկել նկատի ունենալով, որ Իշխանի արտաքին ճարտարապետական մշակումը Օշկի համեմատությամբ ավելի ուշ ժամանակի երևույթ է, և որ այդ տաճարների ներքին դրվագներում առկա են նույնությունն հիշեցնող քանդակապարդեր և այլն:

Պետք է նկատել, որ տաճարների այդ տիպը (Իշխան, Օշկ, Խախու) սկսել է վերջնականապես կազմավորվել Իշխանում: Թերևս Տոկարսկու թեպը վերագրենք միայն հին շինության նոր երեսապատմանը, մանավանդ, որ նա իր միտքը փորձում է ապացուցել, հիմնվելով ճարտարապետական մանրամասների վրա, որոնք և ստեղծվել են հետագայում:

Եթե ժամանակակից Իշխանը ամբողջությամբ ստեղծվեր Օշկ տաճարից հետո, նա էլ Օշկի նման կունենար հստակ ու կատարյալ հատակագիծ (գծ. 33):

Վերոհիշյալ վերակառուցումներից բացի, այսինքն՝ XI դարից հետո, ընդհուպ մինչև 1843 թվականը, պատմությունը նոր վերակառուցումներ չի հիշատակում: Հետևաբար, երբ փենյակցիները Կարլ Կոխին հայտնել են, թե Իշխանում կա Բանակ տաճարի նման եկեղեցի, նկատի են ունեցել

հենց VII դարում կառուցված ներսեսաշեն եկեղեցին, որը, ինչպես տեսանք, մինչև 1843 թ. կանգուն էր: Ճիշտ է, առաջին կառուցումից ի վեր որոշ ճակատների տեսքը նոր երեսապատմից փոխվել, դարձել էր ավելի ժամանակակից, սակայն հիմնականում պահպանվել էր նախնական ընդհանուր ձևը՝ տիպը:

Եվ քանի որ այս այսպես է, մնում է արձանագրել, որ **սկզբնապես, VII դարում կառուցված Իշխանը բոլորովին էլ նման չի եղել Բանակ տաճարին:** Այս դեպքում ինչպե՞ս լուծել փենյակցիների ստեղծած առեղծվածը. այդ ի՞նչ նմանություն են նրանք տեսել հիշյալ երկու տաճարներում: Պետք է ենթադրել, և այդ ամենահավանականն է, որ տեղացիները մեծ նմանություն են տեսել այդ երկու տաճարների որոշ, սակայն ամենակարևոր դրվագների՝ արևելակողմի խորանների ու հատկապես նրանց սյունականարաշար ներքնամասերի մեջ (նկ. 3, 4, 23, 24, 25):

Դրանք այդ տաճարներում, իսկապես որ նման են և կարող էին լիակատար առիթ տալ տեղացիներին Կարլ Կոխի ուշադրությանն արժանացնել նաև Իշխան եկեղեցին: Կարլ Կոխի այդ կողմերում գտնվելու ժամանակից մինչև 1879 թվականը Իշխանի տաճարը ձևափոխման չի ենթարկվել, ուրեմն Երմակովի լուսանկարում պատկերված է այն նույն եկեղեցին, որը ակնարկում էին տեղացիները Կարլ Կոխին:

1879 թվականից մինչև 1917 թվականը ընկած ժամանակամիջոցում ևս Իշխանը որևէ ձևափոխություն չէր կարող կրել, հետևաբար Ե. Թաղաիշվիլու աշխատության մեջ տեղադրված բոլոր լուսանկարները, որոնք կատարվել են 1917 թ. հնագիտական արշավանքի ժամանակ, պատկերում են նույն Իշխան տաճարը, որը կառուցվել է VII դարում Ներսեսի կողմից, ապա IX և XI դարերի ընթացքում ենթարկվել է վանական նորոգումների ու փոփոխությունների, բայց ոչ երբեք «արմատական ձևափոխությունների»:

Ահա այս այն միակ տրամաբանական ելրակացությունն է, որին հանգելու հնարավորություն են ընձեռում պատմագրական տվյալները:

Իշխանի ժամանակակից տաճարի սրածայր կոնաձև տանիքը Ե. Թաղաիշվիլին համարում է ուշ ժամանակի գոյծ. միանգամայն հնարավոր է, այդ նույն ձևով շատ քանդակներ են ավելացվել, ար-



ձանագրություններ գրվել ավելի ուշ երեսապատման, վերանորոգումների ընթացքում:

Իսկ եթե Ե. Թաղաիշվիլին ակնարկում ու ելքակացնում է, որ VII դարի Իշխանի գմբեթը պիտի ունենար ոչ թե կոնաձև, այլ կիսագնդաձև ծածկ, ապա դա պուրկ է բավարար հիմքից: Թորամանյանի ուսումնասիրությունները պարզել են, որ VII դարի հայկական եկեղեցիների գմբեթները, չնչին բացառությամբ, ունեցել են կոնաձև ծածկ:

Նույնիսկ կոր պատուհաններով գմբեթաթմբուկը<sup>1</sup>, նոր երեսապատման որոշ մասերի՝ քիվի, որրուն սյուների<sup>2</sup> և այլ դրվագների բացառությամբ, խորթ չէ VII դարին, որ նա կրում է նախնականի ինչ-որ դրոշմ, վեր է կասկածից:

Մեր VII դարի տաճարներում եղել են սյունակամարաշարով պատած գմբեթներ, եղել են նաև այնպիսիները, որոնք ունեցել են կլոր պատուհաններ. այդ են ցույց տալիս Գագկաշենի մոդելը (նկ. 34). (այն Գագկաշենի, որը կառուցվել է Չվարթնոցի ճարտարապետությամբ, ուրեմն Չվարթնոցում ևս գմբեթում պատուհանները կարող էին կլոր լինել), ինչպես և Սեն-Շապելի Չվարթնոցի պատկերն արտահայտող քանդակները (նկ. 56): Եվ ահա, Իշխանի գմբեթի վրա ևս երկար պատուհանների հետ մեկընդմեջ տեղ են գտել լրիվ կլոր պատուհաններ, նրանց թիվը 8-ն է, քանի որ զբմբեթն ունեցել է 16 նիստ (նկ. 1), հենց այդքան նիստերով էլ պատկերված է Չվարթնոցի գմբեթը

<sup>1</sup> Ե. Թաղաիշվիլու «1917 թ. հնագիտական արշավախումբը Վրաստանի հարավային գավառներում» աշխատության ալբոմում տեղադրած է Կալգինի չափագրության հիման վրա և նրա ղեկավարությամբ Սևերովի կատարած Իշխան տաճարի կտրվածքի գծագիրը, որտեղ գմբեթակիր կամարների զագաթները ցույց են տրված միննույն բարձրությամբ, մինչդեռ նույն ալբոմի 24-րդ էջում տեղադրված լուսանկարից հասկացվում է, որ այդ կամարների զագաթները եղել են տարբեր բարձրությունների վրա: Այդ բնական է, քանի որ գմբեթատակ տարածությունը ստեղծված չորս հաստահեղույս մույթերով՝ ոչ թե ճիշտ քառակուսի է, այլ 0,6—0,7 մետրի չափով ձգված է արևելք-արևմուտք առանցքի ուղղությամբ, հետևաբար, գմբեթակիր կամարների թռիչքները այդ չափով էլ տարբեր են, իսկ նրանց զագաթները՝ տարբեր բարձրության վրա:

Նույն կտրվածքում գլխավոր խորանի վերնամասում երևացող օթյակների կույզ պատուհանները ևս ցույց են տրված ոչ իրենց տեղում:

<sup>2</sup> Տաճարի ուսումնասիրությունը տեղում կարող էր պարզել, թե գմբեթի սյուները հենց սկզբից են այդպես դրվածքով ստեղծվել, թե՛ սկզբնապես եղել են հարթ, իսկ հետագայում՝ ձևափոխվել:

Թորամանյանի վերակալության նախագծում (նկ. 52): Կլոր կամ բոլորակ պատուհանները հատկապես VII դարում և, ապա, հաջորդ ժամանակներում մեծ գործադրություն են ունեցել, ինչպես գմբեթների վրա, այնպես էլ ճակատներում և ճակտոններում:

Շ. Ամիրանաշվիլին Իշխանի գմբեթի բոլորակ պատուհանները համարում է հետագա նորոգումների արգասիք, նա գրում է. «Վերջին վերանորոգման ժամանակ, այսինքն 1032 թվին, թմբուկի ութ խուլ նիստերի վրա ծակվել, բացվել են բոլորակ պատուհաններ»<sup>3</sup>:

\*  
\*

Նախորդ էջերում ասվեց, որ Իշխանի VII դարի ներսեսաշեն տաճարի հատակագծի ձևը որոշելու երկրորդ ճանապարհը գոյությունը պահպանած տաճարի հատակագծի ստեղծման վերլուծությունն է, նրա համադրումը զվարթնոցատիպ տաճարների հատակագծերի հետ:

Ե. Թաղաիշվիլին կոնկրետանալով Իշխան տաճարի հատակագծային մանրամասներում, իր «1917 թվականի հնագիտական արշավախումբը Վրաստանի հարավային գավառներում» աշխատության 1952 թվականի (ռուսերեն) հրատարակության մեջ (էջ 95) գրում է. «Առջևի երկու սյուներից սկսվում է բարձրադիր բեմը՝ շքականարը հենված առջևի այդ երկու սյուների վրա (տախ. 14, 1): Այսպիսով Ներսեսի տաճարի բարձրադիր բեմը և նրա սյունաշար ներքնամասը այժմ ներառված են Սաբանի տաճարի արևելյան մասի մեջ ու երեք կողմերից բոլորված են անցումներով (տախ. 1, 2)»<sup>4</sup>:

Ոչ ոք չի վիճարկում, որ խորանի ներքնամասի սյունակախարաշարը պատկանում է ներսեսաշեն տաճարին: Այս սյունակախարաշարի բոլորաձև

<sup>3</sup> Ш. Амиранашвили, История грузинского искусства, Москва, 1963, էջ 166:

<sup>4</sup> «От двух передних столбов начинается алтарное возвышение; триумфальная арка перекинута на этих двух передних столбах (табл. 14, 1). Таким образом, возвышенный алтарь и его нижняя часть с колоннадой Нерсесова храма оказались теперь включенными с трех сторон обходами (табл. 1 и 2)».

Ե. Թաղաիշվիլին այս «տաճարի, բարձրադիր բեմը» արտահայտության փոխարեն, իր «Բանա» աշխատության մեջ դեռևս 1909 թ. գրել է «Իշխան տաճարի արևելյան պատր» արտահայտությունը:

խարսխապատը, որ բաց է խորանի հետնամասում գտնվող նեղ սրահի կողմից (նկ. 15), իր կառուցվածքային բոլոր հատկանիշներով (քարի չափը, նրա մշակման ու շարվածքի բնորոշ ձևը, շաղախակարերի տեսքը և այլ մանրամասներ) ամենևին չի տարբերվում նույն սյունակամարաշարի վրա բարձրացած խորանի պատից, Թաղաիշվիլու հիշատակած առջևի սյունների գծի վրա գտնվող՝ քառակուսի հիմքով սենյակների արևմտահայաց պատերից և, ընդհանրապես, ողջ տաճարի ներքին պատկերից, որոնք պատկերված են սույն աշխատության այբուբանի մի շարք լուսանկարներում և կապում են նրանց օրգանական մասը: Այդ պատերը իրենց ամբողջության մեջ միասնական են, շարված են միաժամանակ: Նրանց վրա առանձնապես շատ չեն տարբեր ժամանակներում կատարված նորոգման կամ վերանորոգման հետք ու նշանները: Բոլոր առումներով՝ թե՛ կառուցման տեխնիկայով, թե՛ շինանյութի առանձնահատկություններով և, հատկապես նրանցում տեղ գտած գեղարվեստական միջոցներով (պայտաձև կամարներ և այլ ընդհանրություններ), վերոհիշյալ պատերը և ողջ սյունակամարաշարը բոլորովին նույնն են: Այստեղից հետևում է Ե. Թաղաիշվիլու ճշմարիտ լինելը, երբ նա ոչ միայն սյունաշարն է համարում ներսեաշեն տաճարի մնացորդը, այլ հենց արևելյան խորանն իր ամբողջությամբ վերցրած (տե՛ս ռուսերեն մեջբերումը):

Տաճարի ներքին տեսքը պատկերող բոլոր նյութերը (դրվագների և ամբողջական հանգույցների լուսանկարներ) և դրանց հիման վրա շինարվեստի տեսանկյունով կատարված պրպտումները կասկած չեն թողնում, որ Իշխան տաճարի կենտրոնական խաչաձև մասը մեկ ժամանակամիջոցի արդյունք է:

Այսպիսով, նկատի առնելով առկա բոլոր փաստերը, հնարավոր է դառնում եզրակացնել, որ **տաճարի ներքին պատերը կառուցվել են սյունաշարի խարսխապատի, հետևաբար նաև այս վերջինիս վրա բարձրացող սյունակամարաշարի հետ միաժամանակ՝ դեռևս VII դարի երեսնական թվականներին:**

Անկասկած, Թաղաիշվիլու հիշատակած քառակուսի հիմքով սենյակները, և հատկապես նրանց արևմտակողմի պատերը, որ իրենց վերնամասերում ունեն խիստ բնորոշ կույզ բացվածքներ, որոշակիորեն հիջեցնում են Բանակ տաճարի երկարած խաչաթևերի միջև եղած չորս աշտարակա-

նան ծավալները իրենց օթյակների կույզ բացվածքներով: Ըստ երևույթին Իշխան ու Բանակ եկեղեցիների միմյանց նմանվող նաև այս հանգույցներն են, որ առիթ են հանդիսացել որոշ հետապոտողների, այդ թվում Շ. Ամիրանաշվիլու համար, եզրակացնելու, թե Բանակի հատակագիծը Իշխանի հատակագծի կրկնությունն է:

Այդ երկու տաճարների հատակագծերի ավելի ուշադիր համադրությունը ցույց է տալիս, որ քառակուսի սենյակների դիրքը Իշխանի հատակագծային կոմպոզիցիայում և աշտարականման ծավալների դիրքը Բանակի հատակագծային կոմպոզիցիայում՝ նման են լույ առաջին հայացքից, իսկ հիմնականում խիստ տարբերվում են:

Իրերի վիճակը ավելի պարզ է դառնում, երբ փորձում ենք Իշխանի հատակագծի վրա, նրա իսկ տվյալներով ստեղծել հատակագիծ՝ Բանակի հատակագծի կոմպոզիցիայով, պատրանք ունենալով այդ միջոցով գտնել Իշխանի «նախնական» հատակագիծը (գծ. 2):

Որպես հիմք անփոփոխ ընդունելով խորանի կիսաբոլոր սյունակամարաշարը, այդ նույն ձևի ևս երեք սյունակամարաշար է ստեղծվում գմբեթատակ քառակուսու նաև մյուս երեք էջերի վրա: Այդ դեպքում կասկածի տակ չի դրվում այն, որ վերակառուցողը «նոր» խաչաձև եկեղեցին պիտի դնէր «հին»՝ Բանակի տիպի եկեղեցու կենտրոնը կազմող խաչաձևի վրա: Եվ ահա, Բանակ տաճարի քառակուսի հիմքով սենյակների նմանողությամբ, Իշխանի քառակուսի սենյակները չեն գրտնում իրենց տեղերը խաչաթևերի միջև՝ անկյունագծերի ուղղությամբ: Դրանք, ժամանակակից տաճարի այդ քառակուսի սենյակները, կտրում-անցնում են բոլորակ թմբկապատը, իսկ նրանց արևմուտակողմի ուղղագիծ պատերը ընկնում են բոլորակ հիմքով էքսեդրների տակ, իսկ այդ վերջիններս կտրում, անցնում են «տաբանաշեն» տաճարի հյուսիսային և հարավային թևերի ճակատային պատերը, որոնք, համաձայն տրամաբանության, էքսեդրի գագաթում թերևս համընկնեին:

Ապարդյուն են անցնում Իշխանի խորանի սյունաշարը, հյուսիսային և հարավային քառակուսի սենյակները և, հատկապես, նրանց արևմտակողմի պատերը, Բանակ տաճարի հատակագծային կոմպոզիցիայի մեջ հարմարավոր ձևով տեղավորելու բոլոր փորձերը:

Հատակագծերի համադրման երկրորդ տարբե-

րակը վերաբերում է Իշխանի հատակագծի վրա՝ նրա տվյալներով Չվարթնոցի հատակագծային կոմպոզիցիայի ստեղծմանը: Այս անգամ անփոփոխ է թողնվում արևելյան խորանի կենտրոնական վեց սյունը միայն (նույնքան թվով սյուն, որքան սյուն ունի Չվարթնոցի յուրաքանչյուր խաչաթևը (էքստերը), նկատի առնելով որոշ հետապտոողների ենթադրությունը, թե Իշխանի սյունակամարաշարի երկու ելքային սյուները արդյունք են հետագա վերակառուցումների:

Այս տարբերակում արդեն չեն համընկնում «հին» ու «նոր» տաճարների գմբեթների տեղը բնորոշող գմբեթատակ քառակուսիները, գմբեթակիր մույթերն ու սյուները: Մինչդեռ «նորի» կառուցողը ի վիճակի էր հաշողացնել, որ այդպիսիք համընկնեին. այդ դեպքում նաև սյուները կորվեին մույթերի, իրենց չափերով բավարար հիմքերի վրա<sup>1</sup>:

Ներսեսաշեն տաճարի արմատական վերափոխման թեկը հավաստի դարձնելու համար հետապտոողները, այդ թվում տաճարի ակնատեսներ Ն. Տոկարսկին (1915 թ.) և Ե. Թադաիշվիլին (1917 թ.), արևելյան խորանի սյունակամարաշարից բացի, ոչ մի այլ փաստի չեն դիմում: Օրինակ, եթե կիսավեր շինությունը վերականգնում են, կամ հին շենքից որևէ մաս ներառնում նորակառույց շենքի օրգանիկ մեջ, բնականորեն առաջանում են դժվարություններ, որոնց հաղթահարման հետքերը միշտ էլ մնում են նկատելի: Այդ հետքերը արտահայտվում են պատի շարվածքում ոչ սովորական կարերի ձևով, երբեմն տարբեր քարհանքերից բերված, տարբեր չափի քարերի առկայությամբ, գործադրված շաղախի կապնության տարբեր բաղադրությամբ և նույնիսկ տարբեր գույնով, հին շինության քարերի նոր շինության շարվածքում իրենց ոչ կատարյալ հարմարվածությամբ և այլն:

Դատելով հատակագծերի համադրումից (գծ. 2), Իշխանի խաչաձև հատակագիծը ծածկում է ենթադրաբար Բանակի հատակագծաձևն ունեցող ներսեսաշեն Իշխանի կենտրոնական մասը միայն: Տաճարի առաջին աստիճանի կենտրոնը շրջանցող բոլորաձև սրահի արտաքին պատն իր վրա եղած

<sup>1</sup> VII դարում կառուցված Իշխան տաճարի համար Ս. Մնացականյանի առաջարկած հատակագիծը մասնագիտորեն բավարար նյութ չի ընձեռում դրան անդրադառնալու համար:

մուտքերով և այլ հարմասերով դուրս է մնում խաչաձև տաճարի սահմաններից: Հետևաբար այդ պատի հիմքերի հետքերը, եթե այդպիսիք իրականում եղել են, կարող էին դեռևս երևալ, զգացնել տալ իրենց երբեմնի գոյությունը: Բացի այդ, «հին» համբավավոր տաճարից թերևս պիտի մնացած լինեին արձանագրություններ, ճարտարապետական ձևերի ամբողջական բեկորներ՝ խոյակներ, քանդակածածկ քարեր, քիվի հատվածներ և այլն, որոնց նկատմամբ ակնածանքը, ինչպես և «թանգարանային» արժեքը նրանց փրկած կլիներ կորուստից, պահպանվելիս կլինեին «նոր» եկեղեցու շրջապատում, ներսում և այլուր: Մինչդեռ, այդ կարգի երևույթների վերաբերյալ հետապտոողները ոչինչ չեն ասում:

Այս դեպքում մեզ մնում է ենթադրել, որ բավական մեծ փորձառության տեր մեր այդ հետապտոողները չէին կարող դրանց մասին չգրել, այդ կլիներ խիստ տարօրինակ, եթե միայն այդպիսիք հուշարձանում, իրոք, առկա լինեին:


Այսպիսով, այս տաճարների հատակագծերի համադրման և վերլուծության արդյունքներով նույնպես եկրակացվում է, որ **Ներսեսը VII դարի երեսնական թվականներին Իշխանում կառուցել է ո՛չ թե վարթնոցատիպ բոլորաձև տաճար, այլ հատակագծում, թե՛ ներսից, թե՛ դրսից՝ խաչաձև տաճար:** Ըստ որում, նա արևելակողմի խորանի տրադիցիոն խուլ պատը այստեղ փոխարինել է սյունակամարաշարով:

Մեր եկեղեցաշինության մեջ մտցրած այս նորույթը Ներսեսի առաջին քայլն էր այդ ուղղությանը: Հետագայում նա ստեղծել է մի բոլորովին նոր՝ Չվարթնոցի կոմպոզիցիան, նրանում ավելի համարձակորեն անդրադարձնելով Իշխանի այդ կարևոր դրվագը:

Իշխանի ամբողջական կոմպոզիցիան իր անդրադարձումը գտել է ո՛չ թե վարթնոցատիպ տաճարներում, ո՛չ թե Բանակում, այլ Օշկ<sup>2</sup>, Խախուն և այլ տիպի մյուս տաճարներում:

<sup>2</sup> Որոշ հետապտոողների մոտ ընդունված այն կարծիքը, թե Բագրատի եկեղեցու համար նախատիպ, օրինակ է հանդիսացել Օշկը, այդ թերևս, որոշ չափով միայն ճիշտ է, այն էլ արտաքին պլաստիկ մշակման առումով, մինչև հատակագծապատկերով Բագրատի եկեղեցին ավելի մոտ է Դվինին (VII դար) և, հատկապես նույն ժամանակի (VII դ.) Թալինի կաթողիկե եկեղեցուն. նրա և այս վերջինի չափերը ևս միմյանց մոտ են:





2. Իշխան տաճարի «հին» և «նոր» հատակագծերի համադրման փորձ (գծ. Տ. Մարությանի)

Տոկարսկին հնարավոր է համարում, որ Չվարթնոցը հանդիսացել է **Իշխանի վարգացումը**, իսկ մյուս հետապոտոդները՝ Բանակն են համարում **Չվարթնոցի վարգացումը**: Այս դեպքում, էլ ինչպե՞ս կարող էր «Բանակը հանդիսանալ Իշխանի կրկնությունը»:

Արդ, ելրակացնելով, որ Իշխանի, մեր օրերում կիրակործան վիճակում գոյություն ունեցող, հիմքում խաչաձև տաճարը, ժամանակի ընթացքում կրած որոշակի փոփոխություններով հանդերձ, Ներսես Գ Շինող կաթողիկոսի կառուցածն է, նշանակում է նրա կառուցման ժամանակը ընդունել VII դարի երեսնական<sup>1</sup> թվականները: Մինչ, ինչպես հայտնի է, մեր ժամանակակից հետապոտոդները այդ տաճարը համարում են X—XII դարերի գործ: Այդ հետապոտոդների կարծիքները մեջ բերվեցին սույն աշխատության նախորդ էջերում: Արդ, որոնք են և որքանով են հավաստի ներկայացվող հիմքերը Իշխանը վարգացած միջնադար տեղափոխելու համար:

Ինչպես հատակագծային, այնպես էլ ծավալատարածական հորինվածքի առումով դրա համար հիմքեր չկան, քանի որ VII դարում խաչաձև հիմքով կենտրոնագմբեթ տաճարները եզակի չէին, ընդհակառակը, VII դարը բնորոշ է դեռևս IV—V դարերից կառուցվող կենտրոնագմբեթ տաճարների նորանոր տարբերակների հայտնաբերմամբ, նոր տիպերի ստեղծմամբ, դրանց վարգացման ու կառուցման բուռն թափով:

Ակներև է, սակայն, որ Իշխանի կառուցվածքում, ներսում ու հատկապես դրսում առկա են ճարտարապետական ձևեր և քանդակներ, որոնք ինչ-որ չափով ավելի բնորոշ են ճարտարապետական արվեստի վարգացման X—XI, քան VII դարի համար: Ճարտարապետական հենց այդ ձևերն էլ ունանց հիմք են տալիս տաճարը համարել X—XI դարի գործ: Սակայն նկատենք, հիշյալ ճարտարապետական ձևերի գերակշռող մասը արդյունք է հետագա հավելումների՝ իրականացած նորոգումների ընթացքում:

Տաճարի հարավային խաչաթևի մուտքի տիպանում պահպանվել է արքեպիսկոպոս Անտոնի (Անտոնիոսի) արձանագրությունը այն մասին, որ

իր կողմից է նորացվել այդ շքամուտքը (համաձայն Ե. Թաղաիշվիլու՝ 1014—1027 թվականներին):

Սույն աշխատության 30-րդ էջում բերված այս նույն Անտոնի 1032 թվակիր արձանագրությամբ հայտնվում է նոր նորոգումների վերաբերյալ: Գ. Չուբինաշվիլու կարծիքով 1032 թվականին տաճարը կրել է արմատական ձևափոխություններ, գրեթե նորից է կառուցվել այն: Ե. Թաղաիշվիլու կարծիքով այդ ժամանակ շինությունը ստացել է նոր երեսապատում:

Եթե տաճարը արմատական ձևափոխությունների ենթարկված լիներ, արքեպիսկոպոս Անտոնը չէր ասի «... նորոգեալ աւարտեցի...», կասեր՝ «նորը կառուցեցի»: Հետևաբար 1032 թվականին տաճարը լոկ նորոգվել է:

Այժմ, այդ «նորոգեալ աւարտեցի» խոսքի տակ արդյո՞ք հնարավոր է հասկանալ ողջ տաճարի երեսապատումը, թե՞ այդ եղել է ընթացիկ նորոգումներից մեկը միայն, իրականացված արքեպիսկոպոսի կողմից, հայտնի չէ, մանրամասնություններ արձանագրություններում չկան: Իշխանը, որ եղել է Խորագույն Հայքի ամենահարգի սրբություններից մեկը, կարո՞ղ էր աչքաթող արվել «եկեղեցիների մեծ շինարար» հորջորջված մեծ կյուրապաղատ Դավթի կողմից: Պետք է կարծել, որ այդ մեծածավալ աշխատանքը, Իշխանի պես շինության այնպիսի երեսապատումը, ինչպիսին տեսնում ենք, թերևս միայն Դավիթը կարող էր իրականացնել:

Զբաժանելով Ն. Տոկարսկու կարծիքը՝ Իշխանը Դավթի կողմից կառուցված լինելու վերաբերյալ, հավանական կարող ենք համարել Ներսեսի, մոտ 300 տարի առաջ կառուցած տաճարը Դավթի կողմից նորացրած, որոշ մասեր երեսապատած լինելու ենթադրությունը:

Իշխան տաճարի արտաքին պատերի երեսապատման բնույթը լիակատարությամբ պարզելու համար լուսանկարները քիչ նյութ են տալիս, լուսանկարի վրա ամեն ինչ չի երևում այնպես, ինչպես կարելի էր տեսնել տեղում: Որքան հայտնի է, Ներսեսի կառուցումներից և ոչ մեկի պատերը դրսից զուրկ չեն եղել լավ երեսապատումից, պետք է, որ նրա կառուցած Իշխան տաճարի արտաքին պատերը ևս երեսապատված լինեին սրբատաշ քարով: Սակայն, հնարավոր չէ չհամաձայնել, որ այդ պատերի, նաև գմբեթաթմբուկի վրայով անց-

<sup>1</sup> Եվ ոչ հիսնական թվականները, ինչպես փորձում է համոզել Ս. Մնացականյանը (Չվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971):

նող սյունակամարաշարերը, ճակատները, նաև գմբեթաթմբուկը վերևից պասկող քիվերը, պատուհանների որոշ շրջանակներ, կամարաղեղներ և այլ գոտիներ իրականացվել են տաճարը սկզբնապես կառուցվելուց հետո միայն: Անկասկած, շինության ամբողջական երեսապատման մասին չէ խոսքը, դրա կարիքը չի եղել, դրա ապացույցները չկան, բայց հնարավոր չէ չտեսնել, որ շինության այն մասերը, որտեղ պատերն անհարկի հաստ են, երեսապատված են (գծ. 1): Օրինակ, հյուսիսային ու հարավային խաչաթևերի ճակատային պատերի հաստությունը սյունակամարաշարերի հետ միասին, հասնում է 2,0 մետրի: Մինչդեռ այդ նույն թևերի թաղերը կրող կողային պատերն ունեն ընդամենը 0,8—1,0 մետր հաստություն: Արևմտյան խաչաթևի արևմտյան պատի հաստությունը հասնում է 2,5 մետրի, հյուսիսային պատի հաստությունը՝ 2,7 և հարավային պատի հաստությունը՝ 3,0 մետրի:

Հատակագծից երևում է, որ պատերը միջպատուհանային հատվածներում սյունակամարաշարի ձևով ստացել են 180 սմ լայնության և 70—100 սմ հաստության հավելումներ: Ըստ որում, հիմքում կլոր և հարթ անկյունավոր մասերով ստեղծված մույթերի փունջը օրգանապես կապված չէ միջսյունային հարթությունների՝ պատերի հետ: Քարակերտ շարքերի հորիզոնական կարերը չեն համընկնում՝ փոխադարձաբար միահյուսված չեն: Նկատելի է, որ որոշ տեղերում, մասամբ նորով են փոխարինված միջսյունային պատերի որոշ քարեր, երբեմն հին երեսապատման վրա իրականացվել են նոր քանդակներ:

Տաճարի արևելյան ճակատի փնջաձև մույթերը և եռանկյունի հիմքով խորշերը սկսում են բարձրից՝ արևելյան խորանի թիկունքակողմի սրահի (գալերեայի) թաղակապ ծածկի վրայից: Այդ նշան է այն բանի, որ նոր երեսապատումը իրականացնելու ժամանակ հիշյալ սրահը գոյություն է ունեցել: Ճշտորեն նույնպիսի փիճակ գոյություն ունի նաև տաճարի արևմտյան ճակատում, այնտեղ երբեմնի գոյություն ունեցած նախանուտքի կամ գավթի պատճառով: Տաճարի նոր երեսապատված մասերում պատերն օժտվել են որմնախարխխուլ:

Տաճարի ներսը համեմատաբար պահպանվել է անաղարտ: Մայր մույթերի խարխիսների որոշ քանդակների առկայությունը բավարար չէ ներկա մույթերը սկզբնապես կառուցված տաճարինը

չհամարելու համար: Չի բացառված դրանց իրականացումը հետագայում, սկզբնական հարթ շարվածքի վրա և, նույնիսկ ներքնամասի, այժմ քանդակապատված, ինչ-որ չափով վնասված քարերը նորով փոխարինված լինելու ենթադրությունը:

Խորամուխ լինելով մանրամասներում, պարզվում է, որ Իշխանում գործադրված ուշ ժամանակի համարվող քանդակամոտիվները հանդիպում են վաղ միջնադարի մի շարք հուշարձաններում: Օրինակ՝ բոլորակ բլիթներով ստեղծված շարքը, որ առկա է Իշխանի գմբեթի քիվի, արևելակողմի մույթերի խոյակների և խարխիսների, Օշկի հյուսիս-արևելյան, նաև Տբեթի հարավ-արևելյան որմնամույթերի խարխիսների գոտիների վրա, մինչ այդ գործադրվել է Օձունում և Գայանեում որոշ պատուհանների կամարաղեղների վրա: Իշխանի արևելյան մույթերի խոյակներում և արևմտյան մույթերի, ինչպես և Օշկի հարավ-արևմտյան մույթի խարխիսներում առկա սափորաշար քանդակի մոտիվը իր ժամանակին գործադրվել է Պտղնի տաճարի կառուցողի կողմից, շինության քիվը կերտելիս: Պտուտականման կամ պարանանման ոլորվածքով գոտիների մոտիվը, որ լայնորեն գործադրվել է Իշխանում, տեսնում ենք Մաստարայի պատուհաններից մեկի կամարաղեղում: Սղոցի առամների տեսք ունեցող քանդակը, որ կա Իշխանի գմբեթի քիվում և այլ տեղեր, գործադրված է նաև Թալինի մեծ եկեղեցու, փոքր ձևափոխումով նաև Արթիկի կաթողիկեի պատուհանների կամարաղեղներում: Ընդհատվող շրջագծերով ստեղծված քանդակամոտիվը, որ կա Իշխանի հարավ-արևելյան խարխիսի վրա, հանդիպում ենք Թալինի մի հնադարյան կոթողի ներքնամասում: Նոր համարվող, շրջագծի մեջ հաջորդաբար բացվող երեքնուկի մոտիվը, որ մեծ գործադրություն է գտել Իշխանի պատուհանների շրջանակների և մույթերից մեկի խարխիսի վրա, իր օրինակներն ունի Ավանում, Հռիփսիմեում, Մահմուտճուքում, Սիսիանում:

Ի տարբերություն խարխիսներից մեկի, համեմատաբար ուշ ժամանակ բնորոշող քանդակի, արևմտյան մայր մույթերի խոյակների տերևաքանդակը անմիջականորեն նմանվում է այն քանդակներին, որոնք կան Ծոփքի միանավ կառուցվածքի խոյակի վրա, Քասաղի բավիղկայի արևմտյան



ձակատի և Տեկորի հյուսիսային ձակատի շքամուտքերի սյուների խոյակների վրա:

Տերևաքանդակի այս մոտիվը լայն տարածում ուներ վաղ միջնադարում, որոնց օրինակները ցարդ պահպանվում են բազիլիկ հուշարձաններում: Այդպիսիք չեն գործադրվել ուշ շրջանի հուշարձաններից և ոչ մեկում:

Բացառիկ երևույթներից է Իշխան տաճարի գմբեթաթմբուկի ներքին բոլորակ հարթությունը ձևավորող դեկորատիվ սյունակամարաշարը: Ունանց կարծիքով այս դրվագը նույնպես ուշ ժամանակի արգասիք է, ո՛չ հատուկ VII դարի համար: Նկատենք, որ ուշ ժամանակի գմբեթները ծածկվում էին սրբապատկերներով, մինչ վաղ շրջանի հուշարձաններում գմբեթների ներսում կային դեկորատիվ քարակերտ խաչեր, յուրաքանչյուր թևը ստեղծված մեկ, երկու երեք ճառագայթներով: Գմբեթաթմբուկների ներքին հարթությունները մշակվում էին խորշերով, որմնամույթերով, կամարներով, բոլորակ բլիթների շարքով: Ընդգծենք, որ ամենևին էլ ժամանակավրեպ չէ Իշխանի գմբեթում առկա պատկերը: Այդտեղ փոքր տրամագծի կույզ սյուներ են միմյանց կապված սովորական, պարզ կողադեմ ունեցող կամարներով: Կամարների ներսում ձգված համաչափության և բոլորածև պատուհանները փոխեփոխ հաջորդում են միմյանց: Պատուհանների վերևում մեղափոխներ են, թվով 16 հատ:

Նույն ժամանակի հուշարձաններից Չվարթնոցում և համաձայն Թորոս Թորամանյանի կազմած հատակագծի նաև Բանակում նույնպիսի սյուներով և կամարներով են պատած եղել բոլորակ սրահների արտաքին պատի ներքին հարթությունները: Դրանցից շատ էլ չեն տարբերվում նույն հուշարձանի թմբկապատերի նաև արտաքին հարթությունները: Մտավորապես նման բան է եղել նաև Լյակիթում, ինչպես և Գանձասարի գմբեթի ներսում, ավելի ուշ՝ Գագկաշենում և այլուր:

Իշխանում գործադրված վարդամոտիվները իրենց գերակշիռ մասով ակներև հարավատ են VII դարում կառուցված արևելյան խորանի սյունակամարաշարի խոյակների վարդաձևերին, հետևաբար այդպիսիք պետք է լինեն միմյանց ժամանակակից ու չեն կարող նշվել, որպես փաստեր տաճարն ամբողջությամբ վեոգրած X—XII դարերի գործ համարելու համար:

\*  
\* \*

Իշխանի արևելյան խորանի սյունակամարաշարը հարուստ է հետաքրքիր կողմերով՝ արժանի հետապոտողների ուշադրության:

Ինչպես երևում է առկա լուսանկարներից, հիշյալ խորանը ունեցել է ութ սյուն ինը կամարակապ թռիչքով, ըստ որում՝ միջին յոթ թռիչքները<sup>1</sup> բավական նման են Չվարթնոցի և Բանակի համապատասխան յոթ թռիչքանի սյունակամարաշարերին, մինչ՝ երկու ծայրերի թռիչքները տարբերվում են: Նրանք հանդիսանում են յուրովի անցում և կապ արևելակողմի երկու գմբեթակիր սյուների հետ: Հատակագծում նրանք խորանի ընդհանուր կորից մի քիչ ետ են գնում, իսկ բարձրությամբ գերապանցում են սյուներին: Տարբեր է նաև Կամարաձևը. եթե խորանի յոթ թռիչքները պայտաձև կամարներ են, ապա երկու եզրափակողները՝

<sup>1</sup> Այդ յոթ թռիչքներից երկու եզրայիններում կամարները, որ սյուների նման պայտաձև են, միջին հինգ թռիչքների կամարներից բարձր են դրվել, որի հետևանքով կամարներից յուրաքանչյուրի մի կողմը խոյակի վրա որոշ չափով ուղիղ բարձրանալուց հետո միայն սկսում է ընդունել իր պայտաձևությունը: Այդ նույն կամարների մյուս կողմը, առանց ուղիղ հատվածի, նստում է ծայրի, սյուների համեմատությամբ ավելի բարձր բուն ունեցող սյան խոյակի վրա (նկ. 8):

Մեր համոզմամբ, վերոհիշյալը արվել է սկզբնապես, առաջին կառուցողի կողմից, խորանի սյունակամարաշարի տպավորությունն ուժեղացնելու համար:

Կառուցողը, սյունակամարաշարին հեռանկարային տեսք տալով, փորձել է խորանի ավելի մեծ խորության պատրանք ստեղծել: Ըստ երևույթին, այդ նույն նպատակի հետապնդումն է, որ այստեղ սյունակամարաշարը Բանակի և Գագկաշենի նման ոչ թե վեց սյունով (7 թռիչքով) է ստեղծված, այլ ութ սյունով (9 թռիչքով):

Այս երևույթի վրա ուշադրություն է դարձրել նաև Թադաիզվիին:

Այլ կարծիքի է Ն. Մ. Տոկարսկին, նա հնարավոր է համարում ենթադրել, որ առաջին և ութերորդ սյուները կամարաշարի հետագա հավելումներ են:

Այլ միջոցներով, սակայն, նույնպիսի նպատակ է հետապնդել XVI դարի ճարտարապետ Բրամանթեն՝ հեռանկարային ձևով մշակելով Միլանի Սան Սատիրոյի մոտակայքի Մարիամի եկեղեցու կենտրոնական նավի ծայրամասի խորը, դրանով իսկ ստեղծելով բնական մասի շարունակման պատրանք: Բրամանթեի այս միջոցառումը բարձր է գնահատված ճարտարապետության արվեստի պատմության կողմից, որպես հեռանկարային ռելիեֆի գործադրման հետաքրքրագույն օրինակ:

առաջինն ու իններորդը, աղեղնաձև բարավորներ են (նկ. 15):

Իշխանում անցումը բարակ սյուներից դեպի վերև՝ խորանի հաստ պատը, ստեղծված է երկրորդ, առաջինից ավելի դուրս եկած՝ խոյակին գրեթե չնստող կամարաղեղի միջոցով (նկ. 7, 8), մի բան, որ որոշ չափով տարբեր է Չվարթնոցի և Բանակի միմյանց շատ նման նույն դրվագներից: Ըստ որում, Իշխանում այդ երկրորդ ժապավենաձև կամարաշերտը երկու ծայրերի սյուների վրայից բարձրացել, դարձել է խորանի գմբեթարդ ծածկի եպրակամար (նկ. 11, 12): Այս պարագան աներկբա ցույց է տալիս, որ միաժամանակ են կառուցվել խորանի ողջ վերնամասը և նրա ներքնամասի սյունակամարաշարը:

Իշխանի գլխավոր խորանի սյուների խոյակները միմյանցից զգալի տարբերվում են ու չեն կրկնվում: Հայ ճարտարապետության այդ սովորույթը այստեղ առկա է (նկ. 8): Եթե խմբավորելու լինենք, ապա այս կամ այն չափով միմյանց նման են՝ առաջինն ու ութերորդը (հաշված ձախից), ինչպես և երրորդը:

Սրանք վերնասալի (աբակա) տակ ծաղկաքանդակ մեղալիտներ են կամ հարթ խոյողներ, կենտրոնում կախված կորածև կապով, և հենված են փոքր տրամագծով բոլորակ գլանի վրա:

Ամբողջությամբ միատեսակ են երկրորդ և յոթերորդ խոյակները: Վերնասալի տակ իրարից հեռացած, Գառնիի խոյակների նման հարթությունից դուրս եկող երկու ձիգ ոլորքով խոյողներ են նստած մեծ տրամագծով բոլորակ գլանի վրա: Քանդակված են միայն խոյողների կողային մասերը՝ հոնիական խոյակների նմանողությամբ:

Միմյանց նման են նաև չորրորդ և հինգերորդ խոյակները, որոնք դասավորված են խորանի գլխավոր առանցքի նկատմամբ սիմետրիկ ձևով: Սրանք միաչափ, տարբեր տեսքի ակնաթանկան մեծ տերևներով և խաղողի ողկույզով քանդակված խորանարդներ են, ամուր նստած փոքր տրամագծով բոլորակ գլանների վրա:

Մյուսներից տարբեր է վեցերորդ խոյակը. նրա կողային տեսքը նման է երրորդի ծաղկանկար մեղալիտին, առանց կախված կլոր կապի, իսկ գլխավոր տեսքը՝ հարթ և նոսր ոլորված խոյողներ են, միմյանց հետ կապված լայն ընդգրկող կորով: Այստեղ բացակայում է կողովահյուս քանդակը:

\* \* \*

Չգալի հետաքրքրություն է ներկայացնում Իշխանի գմբեթատակ քառակուսուց գմբեթի բոլորակ հիմքին անցնելու համակարգի բնույթը, տաճարի կառուցման ժամանակի որոշման առումով:

Ե. Թաղաիշվիլին այդ համակարգը համարում է առազաստային (Паруса ложкообразными в них украшениями)<sup>1</sup>: Առազաստային է համարում նաև Ն. Տոկարսկին «Купол покоится на арках и парусах...»<sup>2</sup>:

Գմբեթային փոխանցման տրոմպային համակարգը առավելապես գործադրվել է մեր ճարտարապետության վաղ միջնադարի հուշարձաններում, բացառիկ դեպքերում ավելի ուշ առազաստային համակարգը՝ զարգացած միջնադարում, որոշ դեպքերում, նաև VII դարում:

Տրոմպներն ու առազաստները բնույթով ու ձևով տարբեր բաներ են, ամեն մեկն ունի իր յուրահատուկ կողմը, տեխնիկական հստակ սահմանումը, իր ուրույն կառուցելակերպը: Տրոմպի հորիզոնական պրոեկցիան ուղղագիծ է՝ ճակատային գծին հենված եռանկյունի, կտրվածքը ուղիղ գծերով ստեղծված բեկյալ է: Առազաստի և՛ հորիզոնական պրոեկցիան, և՛ ուղղաձիգ կտրվածքը բնորոշվում են կորագծերով:

Ե. Թաղաիշվիլին և Ն. Տոկարսկին Իշխանի հարցում ակներև վրիպում են, Իշխանի գմբեթային փոխանցման համակարգը որակելով առազաստային:

Իրականում Իշխանում գմբեթային փոխանցման համակարգը կատարյալ տրոմպային է, այն էլ երկաստիճան՝ երկշարք: Մայր մույթերի խոյակներից զգալի բարձր, գմբեթակիր կամարների վրա հենված առաջին շարքի մեծ տրոմպի եպրակամարն է, նրանից անմիջապես վերև — տրոմպի կամարի երկու ծայրերում, հենված հիշյալ կամարի և երկու կողմերի գմբեթակիր կամարների վրա երկրորդ շարքի, կոնաձև փորված փոքր տրոմպներն են, պատրաստված մեկական քարից: Այս վերջինների վրա շարունակում են բարձրանալ քարի ևս երեք շարքեր, որ իրենց վերևում ունեն գմբեթի հիմքով անցնող կատարյալ շրջագծային գոտին:

<sup>1</sup> Е. Такайшвили Археологическая экспедиция 1917 года в южные провинции Грузии. Тбилиси, 1952, էջ 26:

<sup>2</sup> Н. Токарский. Архитектура древней Армении, Ереван, 1946, էջ 206:

Մեծ տրումպի եպրակամարը ոչ թե պառկած է առագաստի հարթության վրա, այլ ամբողջությամբ գտնվում է հիմքում ուղղագիծ, բարձրությամբ ուղղաձիգ հարթության մեջ՝ նրա կրկաքարերի, փականաքարերի, նաև նրանց միջև գտնվող շարքային քարերի ճակատային երեսները ունեն ուղղաձիգ դիրք: Դեռ ավելին՝ կառուցողը, որ փոքր տրումպներից վերև գտնվող քարի երեք շարքերը, առագաստային շարքերի նմանողությամբ առաջ թեքելով, անմիջապես գոտու տակ կարող էր ստեղծել լիակատար շրջագիծ, այդ անհրաժեշտ չափով չի արել և դրա հետևանքով գոտուն նախորդող շարքի բարձրության վրա, փաստորեն ստացվել է անկյունները, համեմատաբար փոքր շառավիղով կտրացած քառակուսի: Տրումպների վերևներում գմբեթատակ գոտին պատից զգալի առաջացել է, այն դեպքում, երբ գմբեթակիր կամարների վերեվում առաջացել է բավական զուսպ կողադեմից էլ պակաս չափով:

Իշխանի մեծ տրումպները սովորական տրումպներից մեծ կարևորություն չունեցող լոկ մի մանրամասով են տարբերվում: Սովորական տրումպի եպրակամարի ներսում ընդունված է տեսնել լիակատար կիսակոն: Իշխանում կիսակոնի գագաթը սովորականից իջել է ցած և ծալքավոր հարթությունը, փոխանակ ուղղագիծ, ինչ-որ կորագծով իջնում և ավարտվում է գմբեթակիր կամարների հանդիպման տեղում: Ըստ երևույթին նախորդ հետապոտողներին շփոթեցրել են մեծ տրումպների ներքնամասում ստեղծված հենց այս՝ գդալաձև, թերևս՝ խխունջաձև ծալքավոր հարթությունները, որոնք, պարզապես, որպես երևույթ տեղական են:

Կախեթական հին Շուամթայի գմբեթավոր եկեղեցիներում տրումպների ներքնամասը հատկորեն եպրագծված կոներ չեն, այլ հասարակ ձևով ստեղծված խորջեր: Եվ ինչպես հայտնի է, գմբեթային փոխանցման համակարգը մեծ ու փոքր Շուամթաներում չի համարվում առագաստային, այն տրումպային է:

Իշխանում գմբեթային փոխանցման համակարգի տրումպային լինելը բնական է և բացատրվում է տվյալ տաճարի, իրոք VII դարում կառուցված լինելու հանգամանքով:

Իշխանը հռչակված է նաև իր որմնանկարներով, որոնց մի մասը, հատկապես արևելյան խորանի և գմբեթի ներսում եղածները, մեծ հնություն ունեն, մյուս մասը՝ արևմտյան խաչաթևում եղած-

ները, համեմատաբար նոր են, ոչ ուշ, քան 966 թվականը:

Ե. Ամիրանաշվիլու կարծիքով գմբեթի որմնանկարները պետք է կատարված լինեն IX դարի առաջին կեսի ընթացքում— (Роспись купола, — գրում է նա, — целиком, по-видимому, выполнена еще ранее, именно во время первой реставрации храма учеником Григория Хандзтели Сабаном (Савой) в первой половине IX века)<sup>1</sup>.

Այն հանգամանքը, որ արևելյան խորանի զգմբեթարդ ծածկի ձախակողմում եղած մեղալիոններից մեկի վրա Հայաստանում քրիստոնեության առաջին պաշտոնական ընդունող և տարածող Տրդատ թագավորի կնոջ՝ Աշխավարի (Աշխենի) պատկերն է դրոշմված, ուր առկա են նաև հայկական գրերի դրվագներ, մեղալիոններից մյուսի վրա, ինչպես հաղորդում է Թաղաիշվիլին, Վրաստանում ս. Նունեից առաջին քրիստոնեություն ընդունող Նանայի (Միհրան թագավորի կնոջ) պատկերն է, վրացերեն գրերի մնացորդներով, ինքսին ցույց է տալիս, որ այդտեղ ամեն ինչ շատ հնից է գալիս, և այդ ամենը իրենց վրա կրող կառուցվածքները, այդ թվում նաև գմբեթը, պետք է որ շատ հին լինեն:

Իշխանում ներսի պատերը կոնստրուկտիվ նշանակալից մասերի բացառությամբ կառուցված են համեմատաբար մանր քարերով ու լայն կարաններով, հետևաբար պատերի անմիջական կառուցումից հետո այդպիսիք սվաղվել են, այդ ժամանակ էլ պատկերավարդվել. ուրեմն, Իշխանի որմնանկարների մի մասը պետք է որ շատ հին լինի, թերևս Ներսեսի ժամանակներից:

(Փակագծերի մեջ նկատենք, որ Ե. Թաղաիշվիլին իր «1917 թ. հնագիտական արշավախումբը Վրաստանի հարավային գավառներում» աշխատության թե՛ ռուսերեն, թե՛ վրացերեն հրատարակություններում, ի հակադրություն որոշ ընդդիմախոսների, հատկապես ընդգծում է իր հանրավածությունը, որ մեղալիոններից մեկի վրա Աշխենի պատկերն է: Այդ կապակցությամբ իր աշխատության 38-րդ էջում գրում է՝

«Пока я не сомневаюсь, что в указанном медальоне был представлен рисунок первой

1 Ш. Амиранашвили, История Грузинского искусства, Москва, 1963 : էջ 167:






1. Իջևան տաճարը հարավակողմից



2. Իշխան տաճարը հյուսիս-արևմտակողմից




3. Իշխան տաճարը և փոքր եկեղեցին հարավակողմից




4. Իշխան տաճարը արևելակողմից







5. Բշխան տաճարի արևմտյան  
քի հարավային պատի դրվագ



6. Բշխան տաճարի գմբեթը  
հենված հյուսիս-արևելյան մույթին  
արևմտակողմից



7. Իշխան տաճարի կենտրոնական մասի այժմյան տեսքը (1970 թ. լուսանկար Ֆրանկո Մարալի)



8. Իշխան տաճարի արևելյան խորանի սյունակամարաշարը






9. Իշխան տաճարի գմբեթային մասի ներքին տեսքը




10. Իշխան տաճարի արևելյան խորանի ստորին մասը




12. Բշխան տաճարի հարավ-արևելյան հատվածի ներքին տեսքը







13. Իշխան տաճարի արևելյան խորանի կամարաշարի դրվագ (հարավային ծայրը)




14. Իշխան տաճարի արևելյան խորանի սյունակամարաշարի դրվագ



15. Իշխան տաճարի արևելյան խորանի սյու-  
ներ իրենց խարսխապատով, տեսքը  
արևելակողմի սրահից



16. Իշխան տաճարի յայնական կտրվածք  
հյուսիս-հարավ առանցքով (վերակազմու-  
թյուն Ա. Կալգինի, գծ. Ն. Սևերովի)




17. Բշխան տաճարի հարավ-արևելյան հատվածի ներքին տեսքը





18. Բշխան տաճարի գմբեթակիր մույթեր և կամարներ



19. Իշխան տաճարի հարավային թևի ներքին տեսքը



20. Իշխան տաճարի հարավային թևի արևմտյան անկյունը



21. Իշխան տաճարի հյուսիսային թևի վրա բացվող վերնահարկի կամարակապ վույգ բացվածքներ



христианской царицы Армении, супруги царя Трдата, Ашхавнар или Ашхен... в поврежденной грузинской части надпись по его снимку я тоже ничего не разобрал, но проверка надписи на месте дала, как было сказано выше, другие результаты. Поэтому полагаю, что специалист по армянской эпиграфике смог бы кое-что разобрать на месте. Но это дело будущего».

Մինչև այժմ գոյություն ունեցող այն կարծիքը, թե Բշխան տաճարը եղել է շրջանց սրահով բոլորված տետրակոնիս, գուրկ է բավարար հիմքից և չի ապացուցվում: Արևելյան խորանի փաստական նմանությունը Չվարթնոցի և Բանակի խաչաթևերին դեռևս հիմք չի տալիս պնդելու և հավաստելու վերոհիշյալ հիպոթեզի ճշտությունը: Ընդհակառակը՝ Գեորգի Մերչուլի հեղինակած «Գրիգոր Խանձթեցու վարքում» առկա տեղեկությունները, ինչպես և հատակագծային վերլուծությունները, մեզ բերում են այն հաստատ համոզման, որ Բշխանը հենց սկզբից Ներսեսի կողմից կառուցվել է այնպիսին, ինչպիսին ներկայիս հիմքում խաչաձև տաճարն է, ժամանակի ընթացքում կրթած բազմաթիվ նորոգումներով, որոշակի փոփոխություններով հանդերձ<sup>1</sup>:

<sup>1</sup> Փոփոխությունները գլխավորապես վերաբերում են դեկորատիվ սյունակամարաշարի մասերին, գմբեթի, խաչաթևերի և շքանույթերի քիվերին, ոլորուն գոտիներին, վար-

Նկատի առնելով, որ Չվարթնոց, Բանակ և Իջևան տաճարների խորանների որոշակի նմանության բացառությամբ գոյություն չունի առաջին երկուսի և երրորդի հատակագծերի որևէ նմանություն, հնարավոր է դառնում նաև եզրակացնել, որ Բանակ տաճարի ստեղծման պրոցեսում ճարտարապետը նկատի է ունեցել արդեն գոյություն ունեցող Չվարթնոցը (նաև Բագարանը) և ո՛չ երբեք «կրկնել Բշխանի հատակագիծը»:

Մամիկոնյանների նախարարական տան նըստոց ձակք գավառի Բշխան գյուղում տեղի հայ հոգևորական թեմի առաջնորդ եպիսկոպոս Ներսեսի (հետագայում հայոց կաթողիկոս Ներսես Գ Շինող) VII դարում կառուցած, ժամանակի ընթացքում մի քանի նորոգումներ կրած, մինչ այժմ մասամբ կանգուն, հիմքում խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցին հայ ճարտարապետության դասական շրջանի հուշարձաններից է և իր ուրույն տեղն ունի մեր արվեստի հնագույն արժեքների շարքում:

դաբանդակներին, պատերի որոշ մասերի երեսապատմանը և այլն: Այդ բոլոր փոփոխությունների ընթացքում, ինչպես ասվեց վերևում, օգտագործվել են հայ ճարտարապետության վաղ միջնադարում կառուցված տաճարներում և բազմաթիվ կոթողների վրա առկա օրինակներն ու մոտիվները: Նախօրինակներ չունեցող որոշ քանդակատեսակներ, կամ այլաձևություններ, որ եզակի բացառություններ են, անպայման տեղական են:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԱՐԿ

Բանակ<sup>1</sup> տաճարը, որ այժմ ավերակ է, գտնվում է Խորագույն Հայքի երկրորդ՝ Բերդաց Փոր գավառում: Այդ գավառը հետագայում վերանվանվեց և կոչվեց Բանակի, ավելի ուշ՝ Փենիքի շրջան<sup>2</sup>:

Հուշարձանի ավերակը ժամանակակից քարտեզներում ցույց է տված Օլթիից (Կարսի մարզ) հյուսիս-արևելք, Օլթի-Կարս խճուղու վրա, Բանակ գետակի աջափնյա բարձրադիր տեղում, որտեղից բացվում են շրջակա լեռների հեռուները:

Բանակ տաճարը իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով վարթնոցատիպ է՝ քառակոնիս, առնված շրջանց սրահի մեջ, դեպի վերև փոքրացող եռաստիճան կենտրոնագմբեթ կառուցվածք:

Տաճարի կենտրոնը խաչաձև դասավորությամբ չորս թևեր ունի, որոնք ծայրերից սահմանափակվում են սյունակամարաշար խորաններով (էքսե-

դըրներով), ըստ որում՝ արևելյանն ստեղծված է վեց, մյուսները՝ չորսական սյուններով:

Խաչաթևերի միջև անկյունագծով տեղավորված են ավանդատներ, որոնց վրա բարձրանում են կամարակապ պատուհաններով դեպի տաճարի ներսը բացվող վերնահարկ օթյակներ (զծ. 8—10, 20):

Ավանդատներով և վերնահարկերով ստեղծված այդ եռահարկ, քառակուսի հատակագիծ ունեցող աշտարականման ծավալների չորս անկյուններից ներսինը  $\frac{3}{4}$  տրամագծով որմնամույթ է: Այդպիսի չորս որմնամույթերը իրար կապող կամարների վրա էլ բարձրանում է տաճարի գմբեթը:

Բանակի ներսում շրջանց սրահներ կան տաճարի առաջին և երրորդ աստիճաններում, ինչպես և երկրորդ աստիճանի առանձին քառորդներում (զծ. 10, 20):

Բանակ տաճարն արտաքուստ եռաստիճան է՝ հաջորդաբար փոքրացող տրամագծերով՝ երեք թմբուկներ դրված իրար վրա: Առաջին և երկրորդ թմբուկները ծածկված են միաթեթ, իսկ գմբեթաթմբուկը՝ կոնաձև տանիքներով: Թմբուկների վրայով անցնում է դեկորատիվ սյունակամարաշար: Նիստերի թիվը թմբուկներից առաջինում և երկրորդում 28 է, իսկ երրորդում, որ և գմբեթն է՝ 16: Նիստերից յուրաքանչյուրի վրա կա մեկ լուսամուտ:

Առաջին աստիճանի թմբկապատն արտաքուստ, ըստ բարձրության, մի բարակ գոտով բաժանվում է երկուսի: Այդ գոտու և դեկորատիվ սյունաշարի կամարների միջև ընկած հարթությունը (անտրիվոլտ) ծածկված է խաղողի ու նռան, նրանց ճյուղերով ու տերևներով հյուսված քանդակներով: Գոտուց վերև, մինչև թմբուկը պակաս թիվը, ոչ մեծ բարձրության հարթ պատ է, առանց բացվածքների:

<sup>1</sup> Մինչ այժմ գործածական է եղել այս տաճարի անվան վրացական ձևը՝ Բանա: «Բանակ» և «Բանա» անվանումների միջև տարբերություն չկա. «կ» տառը վրացերեն քերականության համապատասխան կանոնով, պարզապես սղդվում է, ինչպես հայերեն «դանակ», վրացերենում «դանա» և այլն: Վախուշտին հիշյալ վայրը անվանում է «Փանական» Կարլ Կոխը՝ «Նեֆսի Փենյակ», Թորամանյանը՝ «Փենիկ, Բանակ», Տոկարսկին՝ «Փենյակ» և այլն:

Անիրաժեշտ համարելով վերականգնել տաճարի իսկական անվանակոչումը՝ սույն աշխատության մեջ այսուհետև գործ կածվի այդ ձևը, իսկ մեջբերումներում այնպես, ինչպես իրենց բնագրերում է: Համաձայն Սո. Մալխասյանցի բացատրական բառարանի (տե՛ս էջ 396, 2) Բանակ. գ (կրոն.)—Դատաստանի տախտակ, որ հրեից քահանայապետերը դատաստան նստելու կախում էին կրծքից:

<sup>2</sup> Ս. Ս. Ե ք ե մ յ ա ն, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 44:

Տաճարի հիմնական մուտքերը երեքն են՝ արև-  
մուտքից, հյուսիսից և հարավից (գծ. 18):

Բանակ տաճարը կառուցվել է VII դարի հիսու-  
նական թվականներին և գոյատևել մինչև XIX  
դարի կեսերը:

Տաճարը իր գոյության հարյուրամյակները ըն-  
թացքում մի քանի անգամ վնասվել է, որոշ մասեր  
կործանվել, բայց ամեն անգամ վերականգնվել է,  
շարունակ գործել: Այս առումով հնարավոր է նշել  
տաճարի կանգուն գոյության երեք շրջան՝ VII  
դարի կեսերից մինչև IX դարը (գծ. 32ա), X դարի  
սկզբներից մինչև XV—XVI դարերը (գծ. 32բ), XVI  
դարից մինչև XIX դարի կեսերը՝ մինչև վերջնական  
կործանումը (գծ. 32գ):

Առաջին ժամանակաշրջանում տաճարը եղել  
է այնպիսին, ինչպիսին կառուցվել է VII դարում  
(գծ. 15, 16, 18, 20, նկ. 52): Երկրորդ շրջանում  
նախօրոք զգալի չափերով կործանված շինու-  
թյունը թագավոր Ադրնեբսեհի օրոք վերա-  
կանգնվել է: Այդ շրջանին է վերաբերում մեծ  
թմբկապատի զգալի մասի վերականգնումը, ինչ-  
պես և հաստացումը ներսի կողմից կամարակապ  
հոծ պատի ձևով (գծ. 8, 9, 12): Տվյալ վերակա-  
ռուցմամբ մեծ թմբկապատի արտաքին հարթու-  
թյունը նախկինի համեմատությամբ ստանում է այլ  
ձևավորում, պարզեցվում է դեկորատիվ կամար-  
ների կողադեմը (պրոֆիլ), անտրիվոլտը չի ծածկը-  
վում քանդակներով, վերանում է պատը երկուսի  
բաժանող հորիզոնական գոտին և այլն (նկ. 32,  
34, գծ. 17):

Իններորդ դարի վերջերում վերականգնված  
տաճարը մինչև XV—XVI դարերը անաղարտ պահ-  
պանում է VII դարում կառուցված տաճարի ծա-  
վալատարածական ընդհանուր հորինվածքը՝ բո-  
լորակ, եռաստիճան:

XV—XVI դարերի վերակառուցմամբ տաճարը  
նոր տեսք է ստանում: Առաջին աստիճանի  
թմբկապատի վրա բարձրացվում են նոր պատեր,  
որոնցով առաջանում է շրջանց սրահի երկրորդ  
հարկաբաժինը: Նույն թմբկապատին մի քանի  
տեղում կցվում են աշտարականման ծավալներ:  
Առաջին աստիճանի շրջանց սրահի ներսում մեծ  
խորության կամարները լցվում են նոր պատերով,  
արևելյան խորանի հետևանապես հոծ պատերով  
անջատվում է տաճարի մուտքից մասից: Երրորդ  
շրջանում կատարված այս բոլոր ամարվեստ վերա-  
փոխությունները եղծում են տաճարի նախնական

չքեղ տեսքը, դարձնում բավական անհրապույր և  
որ ամենակարևորն է, փոփոխելով շինության  
ծավալային հորինվածքը, եռաստիճան տաճարը  
դարձնում են երկաստիճան (գծ. 14): Ահա այս  
վիճակով էլ VII դարի տաճարը հասնում է մինչև  
XIX դարի կեսերը, մինչև լիակատար ավերակի  
վերածվելը մեր օրերում (նկ. 30):

Պատմագրության մեջ այդ տաճարի վերա-  
բերյալ տեղեկություններ են թողել պատմաբան  
Դավթի որդի Սուսբաթը և XVIII դարի վրաց աշ-  
խարհագրագետ Վախուշտին, ապա, հուշար-  
ձանի ականատեսներ՝ հայտնի բուսաբան, ճանա-  
պարհորդ Կարլ Կոխը, Ե. Գ. Վեյդենբաումը և  
ուրիշներ:

Դավթի որդի Սուսբաթը Բագրատունիների  
պատմության մեջ գրում է. «Կյուրապաղատ Դավ-  
թի (881) որդի Ադրնեբսեհը՝ Կյուրապաղատ  
Գուրգենի օգնությամբ Ասպինձայում (888 թ.)  
հաղթեց և սպանեց իր հորը սպանող Նասրին,  
և հետո նա կարգվեց վրացիների վրա թագավոր,  
և այդ Ադրնեբսեհը, սպանված Կյուրապաղատ  
Դավթի որդին, Բանան կառուցեց Կվիրիկե Բանե-  
լու ձեռքով, որը եղավ Բանայի առաջին եպիս-  
կոպոսը»<sup>1</sup>:

Վախուշտին Վրաստանի աշխարհագրությանը  
նվիրած իր գրքում գրում է. «Փանասկերտից  
վերև, Բանա-Փանասկերտ գետի վրա, սարերում  
գտնվում է Բանան, որ այժմ կոչվում է Փանական:  
Այստեղ կա մեծ չափերի գմբեթավոր տաճար,  
հիանալի կառուցված հարմար և գեղեցիկ տեղում:  
Այն կառուցել է թագավոր Ադրնեբսեհը և այնտեղ  
թաղված են թագավորներ: Նստում էր Փանաս-  
կերտի և ողջ Տաօի, Օլթիի ու Նարունանիի կամ  
Նարիմանիի հովիվ-եպիսկոպոսը: Այժմ այն  
ամայի է»<sup>2</sup>:

Կարլ Կոխը, դեռևս 1843 թվականին գտնվելով  
Խորազույն Հայքում, իր «Ճանապարհորդությունն  
Պոնտական սարերում»<sup>3</sup> աշխատության մեջ հետե-  
վյալ ձևով է նկարագրում տաճարը. «Հետևյալ առա-  
վոյան մենք դիտեցինք եկեղեցին, տեղադրված  
վերևից հարթ բոլորակ բլուրի վրա... Այս եկեղե-

<sup>1</sup> E. Такайшвили, Бана, Материалы по археологии  
Кавказа, выпуск XII, Москва, 1909 г. էջ 88; Исто-  
чники грузинских летописей. Три хроники, Тифлис, 1900,  
էջ 146:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Koeh — Reise in Pontischen Gebirge, II, 1864  
Weimar, էջ 243:



ցին Կոնստանդնուպոլիսի բացառությամբ (ակնարկում է Ս. Սոֆիայի տաճարը—Տ. Մ.), մեր բոլոր տեսածներից ամենագեղեցիկն էր և ամենահոյակապը ողջ Արևելքում: Կառուցվածքը արտաքինից թվում էր մի հսկայական գմբեթ, որի լայնական տրամագիծը մոտավորապես հավասար էր բարձրությանը: Անհրաժեշտ ենք համարում նկատել, որ Կարլ Կոխի հիշյալ աշխատության 243-րդ էջից մեր կողմից քաղվածաբար բերված այս հատվածը ավելի վաղ Ռ. Գ. Շմիդտի թարգմանությամբ տեղ է գտել Ե. Թաղաիշվիլու «Բանա» աշխատության մեջ (էջ 88): Այդտեղ մեջբերումն ավարտվում է «...մոտավորապես հավասար էր գմբեթի բարձրությունը» արտահայտությամբ: Գերմաներեն բնագիրն իրականում ավարտվում է առանց այս «գմբեթ»-ի, ինչպես որ բերված է մեր կողմից:

#### ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Բանակ տաճարի կառուցման ժամանակի վերաբերյալ հետազոտողների կարծիքները բաժանվում են:

Ե. Թաղաիշվիլին, հիմնվելով պատմագրության վերոհիշյալ նյութերի վրա և նկատի ունենալով այն, որ Ադրներսեհը կյուրապաղատ է եղել 888—923 թվականների ընթացքում, ելքակացնում է, թե Բանակ (Բանա) տաճարը պետք է կառուցված լինի IX դարի վերջերում կամ X դարի սկզբներում: Ե. Թաղաիշվիլու կարծիքը իր ժամանակին, ինչպես և այժմ բաժանում են որոշ հետազոտողներ:

Շ. Ամիրանշվիլին նույնությամբ մեջ է բերում պատմաբան Դավթի որդի Սումբաթի վկայությունը, որ Բանակ տաճարը կառուցել է կյուրապաղատ Ադրներսեհը (881—923)<sup>1</sup>:

Ն. Պ. Սևերովը գրում է, որ տաճարի կառուցման ճիշտ ժամանակը հայտնի չէ, և որ ենթադրաբար կարելի է համարել IX—X դարերը<sup>2</sup>:

Ն. Մ. Տոկարսկին, հիմնվելով Ե. Թաղաիշվիլու հրատարակած վրացական ժամանակագրությունների վրա, գրում է. «Ինչպես վկայում են վրացական տարեգրությունները, X դ. սկսվում վրա-

ցական թագավոր Ադրներսեհը (Ադրնասե), Իշխանից ոչ հեռու Բանա (այժմ Փենյակ) գյուղում կառուցեց տաճար, ճարտարապետությամբ և արտաքին հարդարանքի սխտեմով հիմնականում նման Չվարթնոցին, և հետևապես, ըստ խորանի տեսքի, նաև Իշխանին»<sup>3</sup>:

Վ. Մ. Հարությունյանը և Ս. Ա. Սաֆարյանը գրում են, որ Չվարթնոցի տիպի մյուս տաճարը կառուցվել է «վրացական թագավոր Ադրներսեհի (888—929) օրոք Տաօ-Կարջեթի շրջանի Բանա գյուղում»<sup>4</sup>:

Ա. Վ. Կուլնեցովը գրում է՝ Բանան «կառուցված է, ինչպես ենթադրում է հետազոտողների մեծամասնությունը, IX դարավերջում, կամ X դար սկսվելու»<sup>5</sup>:

Ավստրիական գիտնական Հ. Ստրիգոլսկին 1918 թվականին լույս ընծայած իր «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան»<sup>6</sup> երկատոր աշխատության մեջ Բանակ տաճարի կառուցման ժամանակի վերաբերյալ շարադրում է վրացական ժամանակագրությունից վերցված Ե. Թաղաիշվիլու պատմագրական հաղորդումները այն IX—X դարերում Ադրներսեհի կողմից կառուցված լինելու վերաբերյալ, միաժամանակ շինության մասերի և, հատկապես սյուների խոյակների ու հարդարանքի մյուս դրվագների հատկանշական կողմերը նկատի առնելով, շարունակում է՝ «...կարելի է մտածել, որ այդ բոլոր խոյակները 900-ական թվականներից անհամեմատ հին են»<sup>7</sup>:

Գ. Ն. Չուբինաշվիլին գրում է, որ «Բանա տաճարը այդ շարքում (Իշխան, Չվարթնոց—Տ. Մ.) պետք է համարել վերջինը և կառուցման ժամանակը տանել VII դարի կեսերը»<sup>8</sup>:

Վերջին տարիների ընթացքում ինչպես Վրաստանում, այնպես էլ Մոսկվայում լույս տեսնող

<sup>3</sup> Н. М. Токарский. Архитектура Армении IV—XIV в.в., Ереван, 1961, էջ 132:

<sup>4</sup> В. М. Арутюнян, С. А. Сафарян. Памятники армянского зодчества, Москва, 1951 г., էջ 44:

<sup>5</sup> А. В. Кузнецов. Тектоника и конструкция центрических зданий, Москва, 1951 г., էջ 131:

<sup>6</sup> Strzykowski J. Die Baukunst der Armenie und Europa, Wien, 1918.

<sup>7</sup> Иосиф Стржиговский «Архитектура армян и Европы», рукопись на русском языке, էջ 717:

<sup>8</sup> Г. Н. Чубинашвили и Н. П. Северов, Пути грузинской архитектуры, Тбилиси, 1936 г., էջ 70.

<sup>1</sup> Ш. Амираншвили, История грузинского искусства, Москва, 1963 г., էջ 151:

<sup>2</sup> Н. П. Северов. Памятники грузинского зодчества, Москва, 1947 г., էջ 190:

հրատարակություններում (դասագրքեր<sup>1</sup>, հանրագիտարաններ<sup>2</sup> և այլ գրքեր<sup>3</sup>), Բանակ տաճարի կառուցման ժամանակը նշվում է VII դարը, իսկ վերակառուցումը՝ IX—X դդ. սահմանագիծը:

### ԻՆՉ ՉՍՓՈՎ Է <ԵՏԱՉՈՏՎԱԾ ՏԱՃԱՐԸ

Բանակ տաճարի ավերակը չի պեղվել: Չափագրվել է, որքան հնարավորություն է ընձեռել հուշարձանի արևելակողմի հատվածը, քանի որ միայն դա է համեմատաբար ազատ եղել սեփական փուլերից: <Իշյալ չափագրությունների հիման վրա էլ ստեղծվել են վերակազմության նախագծեր ճարտարապետ Ս. Գ. Կղիաշվիլու (1902 թ. չափագրումների հիման վրա) և քաղաքացիական ինժեներ Ա. Ն. Կալգինի կողմից (1907 թ. չափագրումների հիման վրա): Այս երկու չափագրումներն էլ իրականացվել են Ե. Թաղաշվիլու ղեկավարած արշավախմբերի Կարսի նահանգի Օլթիում և Խորազուն Հայքում 1902 և 1907 թվերի ընթացքում կատարած հետազոտություններին կուզընթաց:

Ավելի վաղ, Էսքիպի ձևով հատակագծեր են կազմել հուշարձանի ականատեսներ Կարլ Կոխն ու Դ. Բաքրաձեն, իսկ Թորամանյանը՝ կանոնավոր հատակագիծ (գծ. 3, 4, 5):

Վերոհիշյալ չափագրական և գծագրական նյութերը միմյանցից այս կամ այն չափով տարբերվում են, որոշ դեպքերում, նույնիսկ՝ արմատապես: Եթե Թ. Թորամանյանի կազմած հատակագծում խաչաթևերից յուրաքանչյուրն ավարտվում է վեց սյուն ունեցող կամարաշարով, ապա Ա. Կուլնեցովի մոտ՝ չորս սյուն ունեցող կամարաշարով. Կարլ Կոխի, Կղիաշվիլու և Կալգինի մոտ՝ արևելյան խորանը՝ վեց, մյուս երեք խաչաթևերից յուրաքանչյուրը՝ չորս սյուն ունեցող կամարաշարով:

Ծավալա-տարածական առումով ևս դրանք տարբերվում են: Եթե Կղիաշվիլու վերակազմությանը տաճարն արտաքինից ստեղծված է երկու աստիճանով, ուր առաջին աստիճանում բոլորակ սրահը երկհարկանի է, ապա Կալգինի վերակազմությանը տաճարն արտաքինից ստեղծված է

երեք աստիճանով, ուր բոլորակ սրահներ կան առաջին և երրորդ աստիճաններում, ինչպես և երկրորդ աստիճանի առանձին քառորդներում, իսկ վերնահարկեր՝ երկուստեք, որոնք ցույց են տրված ներքին աշտարականման ծավալների վերին երկու հարկերում:

Ծավալային կերպարի որոշման համար նշանակալից է նաև 1881 թ. ականատես Դ. Բաքրաձեի<sup>4</sup> այն արտահայտությունը, թե տաճարի «թըմբուկն ուներ ոչ թե բոլորակ, այլ խաչաձև տեսք, չէ որ խաչի կիսաբոլորակ ճյուղը<sup>5</sup> թմբուկից դուրս էր գալիս կիսաբոլորակով»: Այս բառացիորեն նշանակում է, որ տաճարի առաջին թմբկաձև աստիճանի վրա բարձրացել է նրա կենտրոնական մասը կազմող «եկեղեցու» ծավալը:

Մոտավորապես այդպիսին է ենթադրում Բանակ տաճարը Գ. Չուբինաշվիլին, երբ գրում է. «Տաճարի արտաքին կանգվածները պետք է ներկայացնեն միանգամայն յուրօրինակ երևույթ: Վերևում, մնացած ծավալների համեմատությամբ ոչ մեծ գմբեթ, ապա կանգվածների բավական շարժուն միջին օղակ, համապատասխան ներքին քառակոնխին և անկյունային սենյակներին, դրանից բխող կտուրի որոշակի խաղ ներգաշնակված խորանարդաձև մասերին, ի վերջո, ներքևով անցնող շրջանց սրահի օղակը—ներքնամասը՝ սյունակամարաշարով պատած նիստերով թըմբուկ»<sup>6</sup> (ընդգծումները ամենուրեք մերն են—Տ. Մ.):

Այս ամենով պարզ է դառնում, որ մինչև օրս չի ստեղծված Բանակ տաճարի ինչպես ներքին կազմության, այնպես էլ արտաքին ծավալային կերպարը բնորոշող վերակազմության լիակատար

<sup>4</sup> Ե. Թաղաշվիլին փոստանքով նշում է, որ Դ. Բաքրաձեն իր ժամանակին (1881 թ.) լինելով Բանակում (Բանայում), երբ տաճարը դեռ կանգուն էր, չի չափագրել, չի կազմել նրա ճակատը պատկերող գծագիր: Նա շարունակում է. «Այդ էլ առավել արժանի է փոստանքի նաև նրանով, որ ողջ Վրաստանում ոճով և հատակագծաձևով նրանման մի այլ տաճարի մենք չենք հանդիպում»:


<sup>5</sup> Երբ Դ. Բաքրաձեն գտնվում էր Բանակում, տաճարը վնասված վիճակում էր: Պետք է ենթադրել, որ այդ ժամանակ արդեն քանդված է եղել տաճարի երկրորդ աստիճանի դրսի թմբկապատը, իսկ էքսեդրների վերնամասի պատերը երեքական յուսամուտներով մնացել են ներքին թմբկապատից դուրս ցցված. այս դեպքում միայն տաճարը կարող էր երևալ Դ. Բաքրաձեի նկարագրության ձևով:

<sup>6</sup> Գ. Ն. Կլինաշվիլի և Ն. Ս. Սևրով, Пути грузинской архитектуры, Тбилиси, 1936 г., էջ 69:


<sup>1</sup> Всеобщая история архитектуры, 1, Москва, 1958, էջ 452:

<sup>2</sup> Искусство стран и народов мира, 1, Москва, 1962, էջ 626. Всеобщая история архитектуры, 3, Москва 1966 г. էջ 319:

<sup>3</sup> В. Беридзе, Грузинская архитектура, Тбилиси, 1967, էջ 35:



3. Բանակ տաճարի հատակագիծը  
(գծ. Կարլ Կոխի)



4. Բանակ տաճարի հատակագիծը  
ըստ Գ. Բաքրաձեի

նախագիծ: Այս իրավիճակը միանգամայն հասկանալի է, քանի որ հուշարձանը այժմ գտնվում է Թուրքիայի պետական սահմաններում, հետևաբար և հնարավոր չէ նոր հետազոտություն բուն ավերակում:

Ներկայումս Բանակ տաճարի ուսումնասիրության համար միակ արժանահավատ աղբյուրները այն բազմաթիվ լուսանկարներն են, որ կատարվել են Երմակովի, այս 1902 և 1907 թվերի ընթացքում Ե. Թաղաիշվիլու ղեկավարած արշավախմբերի մասնակիցներ Ա. Մամուչաշվիլու, Է. Լիոպենի կողմից, Թ. Թորամանյանի կատարած լուսանկարները, որոնք տեղաբաշխված են Սորժիգովսկու վերոհիշյալ գրքերում, Ն. Լ. Օկուննի 1917 թ. ամռան արշավախմբի իրականացրած լուսանկարները, որոնք պահպանվում են Լենինգրադում, ինչպես և Ֆրանկո Մարրայի 1970 թվականին կատարած լուսանկարները, որոնք և օգտագործված ու տեղադրված են սույն աշխատության էջերում:

Մեր դարակալբուն տաճարն ուսումնասիրող Ե. Թաղաիշվիլին իր ընդարձակ «Բանա» աշխատությանը կանխորոշեց հետագա ուսումնասիրությունների ուղղությունը:

Թաղաիշվիլին հավաստեց, որ տաճարը կառուցվել է IX դարի վերջերում, կամ X դարի սկզբներում, և որ այն կառուցել է կյուրապաղատ Աղրներսեհը... այսինքն այնպես, ինչպես ինքը ժա-

ռանգել է պատմաբան Դավթի որդի Սուսբաթից և Վախուշտիից, առանց փորձ անելու բացահայտելու այդ հաղորդումների ստույգությունը: Թաղաիշվիլին իր աշխատության մեջ զարգացրեց այն թեզը, որ տաճարը կանգուն վիճակում (և ոչ բազում վերակառուցումներով) գոյատևել է մինչև XIX դարի երկրորդ կեսը, որ իբր կառուցող ճարտարապետին հայտնի է եղել այդ տիպի մյուս տաճարների տիպը վիճակը, որ իբր նրանք կարճատև գոյությունից հետո կործանվել են իրենց կոնստրուկտիվ անմշակվածության հետևանքով, և, իմանալով այդ ճարտարապետը նախազուգական միջոցներ է ձեռնարկել՝ խիստ հաստացրել պատերը, ուժեղացրել մայր մույթերը, Չվարթնոցի մասսիվ մույթերի փոխարեն, նրանց տեղում կանգնեցրել աշտարականման ծավալներ: Բանակը (Բանան) համարելով «տաճար հինգ խորաններով», Թաղաիշվիլին ի վերջո ելրակացնում է, թե նա «Չվարթնոցի հետագա զարգացումն է»:

Հետագայում Ե. Թաղաիշվիլու կարծիքները ամբողջությամբ բաժանում է Շ. Ամիրանաշվիլին և ավելի ընդարձակում նոր դրույթներով: Գ. Չուբինաշվիլին նրանց հետ անհաշտ է միմիայն տաճարի կառուցման ժամանակի հարցում:

Այդ ընդհանուր կարծիքին համամիտ են նաև Ն. Սևերովն ու Ա. Կուլնեցովը:

Այս ամենը, ահա, որոշ հետազոտողների հա-



մար հետպիտեռն դարձել է անառարկելի ճշմարտություն, ընդունվել նրանց կողմից, կրկնվել գրեթե անփոփոխ ձևով:

### ՏԱՃԱՐԻ ՆԱԽՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Այն բոլոր հուշարձանները, որոնք կառուցվել են Բանակ տաճարից վաղ, այս կամ այն չափով նրա համար հանդիսացել են նախօրինակ կամ նախադրյալ:


Լուսանկարների և վերակապնության փորձերի ուշադիր վննման ընթացքում, պարպորոշ նկատվում են տաճարի շինարարությանը նախորդող շրջանում ստեղծված այն նվաճումները, որոնք տեղ և գործադրություն են գտել Բանակ տաճարում:

Նախքան Բանակ տաճարի կառուցումը, Չվարթնոցում արդեն մշակված էր ընդհանուր հատակագծային կոմպոզիցիան (գծ. 29, 29ա): Տաճարի կենտրոնում, որպես հիմնականը, տեղադրվել է խաչաձևը (քառակոնխը), որին բոլորում է շրջանաձև սրահը, և նրանց փոխադարձ կապը իրականացվում է էքստերիորով (այլուսկամարաշարով ստեղծված խորաններով): Սակայն Բանակում կենտրոնը կապնող մասը Չվարթնոցի համապատասխան մասի՝ պարզ խաչաձևի մեխանիկական կրկնությունը չէ: Չվարթնոցից բացի և նրանից առաջ, մեկ մոտ արդեն կառուցվել էին եկեղեցիներ, որոնցում խաչաթևերի միջև արարողության և եկեղեցական այլևայլ կանոններով որոշակի նպատակների համար առաջացել էին փոքր չափերի սենյակներ (խորաններ և ավանդատներ):

Այդ վերջիններիս նմանողությամբ Բանակ տաճարը կառուցողը իր նոր ձեռնարկության, նոր կառուցյի կենտրոնում պարզ խաչի փոխարեն տեղադրում է ամբողջական, հիմքում նույնպես խաչաձև եկեղեցի՝ տրադիցիոն չորս խորաններով, ու այդ եկեղեցին, Չվարթնոցի օրինակով, պատում շրջանց սրահով:

Բանակ տաճարի կենտրոնական մասի անմիջական նախորդը՝ հատակագծաձևի առումով անցյալ էտապից ամենամոտը, պետք է համարել այդ ժամանակներում հռչակված Բագարանի կաթողիկե եկեղեցին, կառուցված 624—631 թվականներին:

Այստեղ գմբեթածածկ քառակուսուց խորանները թաղակապ միջանկյալ ուղղանկյուն տարա-



5. Բանակ տաճարի հատակագիծը (գծ. Թ. Թորամանյանի)

ծությանը հեռացվել են այնքանով, որ դրսից նրանք՝ այդ խորաններն ու եկեղեցու արտաքին քառակուսու անկյունները ճշտորեն ընկնում են արտագծված շրջագծի վրա: Հենց այդպես է նաև Բանակ տաճարի կենտրոնական մասը:

Հետաքրքիր է, որ Ստրժիգովսկին, ավելի քան կես դար առաջ, անդրադառնալով Բանակ տաճարին, նշում է. «Վերակապնության փորձ կատարելու դեպքում պետք է նկատի ունենալ Բագարանը»: Գիտնականն այստեղ նկատում է, որ «գմբեթի և էքստերի միջև փոքր սենյակներին համապատասխան ներդրված են երկար գլանաձև թաղեր», և ապա ծանոթագրում, թե «տես Բագարանը, կամ Առաքելոց եկեղեցին Ասիում, և փոքր սենյակների կապակցությամբ՝ Խծկոնքը (Մարգսի եկեղեցին—գծ. 25—Ե)», մենք կավելացնեինք նաև Գառնիի ու Մարմաշենի բոլորակ եկեղեցիները (գծ. 25—Գ և Դ):

Բագարանում հատկանշականն այն է, որ ճարտարապետը կարողացել է եկեղեցու կենտրոնական մասում ստեղծել բավական ընդարձակ, վեհացնող ներքին տարածություն՝ ծածկելով այն փոքր տրամագծի գմբեթով: Ինչպես տեսնում ենք, այդ նույն արդյունքին է հասել կառուցողը նաև Բանակ տաճարում:

Նախքան Բանակ տաճարի կառուցվելը, ներ-

քին կարևոր դրվագների կոնստրուկտիվ լուծումն արդեն կատարելապես ձևակերպվել էր Չվարթնոցում: Այնտեղ առաջին աստիճանի ներքին խաչաձևի վրա բարձրացվել էր երկրորդ աստիճանի բոլորակ թմբկապատը, հիմք ունենալով մեծաթռիչք (8—10 մետր) երկկոր թաղերը: Այդ մի աննախադեպ կառուցելակերպ էր և, իր ժամանակի տեխնիկայի մակարդակը նկատի ունենալով՝ մի խիպախ մտքի հմուտ իրականացում: Եվ ահա, այդ նույն դրվագները Բանակ տաճարում ստանում են նույնպիսի իրականացում. ի՞նչ փույթ, թե այս վերջինում կամարաթաղերը երկկոր չեն (տե՛ս նկ. 45) և ունեն երկու անգամ փոքր թռիչքներ:


Երկուստեք, նախ՝ Չվարթնոցում, ապա՝ Բանակում, բոլորակ սրահները ծածկվել են շրջանաձև թաղերով, խաչաթևերը՝ կիսագմբեթարդով (կոնխետրով) և այլն:

Բանակի թմբկապատերի արտաքին պլաստիկ մշակման համար օրինակ է հանդիսացել Չվարթնոցի համապատասխան հարթությունների կոմպոզիցիոն և պլաստիկ մշակումը, առանձին դրվագների և մասերի, այդ թվում՝ սյուների, խոյակների, կամարների, գոտիների և քանդակավարդերի համար՝ Գառնիի, Իշխանի, Չվարթնոցի, Դվինի համապատասխան դրվագները և այլն: Ինչ խոսք, որ որոշ դեպքերում հիշյալ նախատիպերը օգտագործվել են ավելի մեծ չափերով, կրկնելով այդպիսիք, որոշ դեպքերում պակաս չափով, վերցվել են միայն սկզբունքները, հնարքները՝ ընդհանրություն հիշեցնող գծերով և ոչ մանրամասներով:

Բանակ տաճարի արտաքին ծավալային կերպարի վերստեղծման համար որպես նախօրինակ մեծապես ծառայել է Չվարթնոցը: Այդ են ցույց տալիս հուշարձանի պահպանված մասերի լուսանկարները և ավերակների ընձեռած տվյալներով ստեղծված վերակազմությունները, այդ թվում՝ կազմված Ս. Կղիաշվիլու կողմից՝ Բանակ տաճարի, Թ. Թորամանյանի կողմից՝ Չվարթնոցի ու Գազկաշենի և Ա. Կալգինի կողմից՝ դարձյալ Բանակ տաճարի համար, ինչպես և Գազկաշենի մոդելն ու Փարիսի Սեն-Շապել եկեղեցու հանրահայտ քանդակները Չվարթնոցի կերպարով:

#### ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանակ տաճարի վերակազմության նախագիծ կազմելու առաջին փորձը կատարել է ճարտարապետ Ս. Կղիաշվիլին, որը ավերակը չափագրել է՝



6. Բանակ տաճարի առաջին աստիճանի հատակագիծը (վերակազմություն Ս. Կղիաշվիլու)

1902 թվականին, որպես Ե. Թաղաիշվիլու ղեկավարած հնագիտական արշավախմբի մասնակից:

Հիշյալ վերակազմության գնահատականը տալիս Ե. Թաղաիշվիլին հայտնում է, որ ժամանակի սղության պատճառով ճարտարապետ Ս. Կղիաշվիլին հնարավորություն չի ունեցել ավերակից վերցնել հնարավոր առավելագույնը՝ տաճարի լիակատար վերակազմություն ստեղծելու համար, սակայն նրա արածը որոշակի հետաքրքրություն ունի: Այդ վերակազմությունը ներկայացնում են երեք հատակագծեր և մեկ կտրվածք (գծ. 6, 7): Համաձայն այդ գծագրերի՝ տաճարը եղել է երկաստիճան՝ առաջին աստիճանի մեծ թմբուկով և երկրորդ աստիճանի փոքր գմբեթաթմբուկով, ավարտված կիսագմբեթով ծածկով:

Ս. Կղիաշվիլու վերակազմության մեջ անդրադարձել է տաճարի սկզբնապես կառուցված արտաքին բոլորակ պատի վրա հետագայում (XV—XVI դդ.) բարձրացված պատը, ինչպես և նրանով պայմանավորված առաջին աստիճանի բոլորակ սրահի վերնահարկը (գծ. 7), սակայն չի անդրադարձել ավելի վաղ ժամանակներում իրականացված մի կարևոր վերակառուցում՝ դրսի թմբկապատի հաստացումը շրջանց սրահի ներսի կողմից՝ մեծ խորության կամարակապ բոլորակ պատի ձևով, որի հետևանքը եղել է շրջանց սրահի զգալի նեղացումը: Վերոհիշյալ վերակառուց-

ման անտեսումով, և անպզույշ չափագրման հետևանքով Կղիաշվիլու կապմած գծագրերում տաճարի ընդհանուր հատակագիծը ստացվել է իսկականից բավական փոքր, իսկ մեծ թմբուկի նիստերի ընդհանուր թիվը ընդամենը 24: «Համընդհանուր ճարտարապետության պատմության» դասընթացում տեղադրված կտրվածքի գծագրում բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժինը, ինչպես և գմբեթային մասը մշակված է Կղիաշվիլու վերակազմության հիման վրա<sup>1</sup> (այս վերակազմության վերաբերյալ որոշ մանրամասնություններ բերում է Ե. Թաղաիշվիլին իր «Բանա» աշխատության մեջ):

Ս. Կղիաշվիլուց հետո Բանակ տաճարի համար նոր վերակազմություն է ստեղծել քաղաքացիական ինժեներ Ա. Կալզինը, որը համեմատաբար հանգամանալի չափագրման է ենթարկել ավերակը:

Ա. Կալզինի վերակազմությունը ներկայացնում են չորս հատակագծեր, մեկ կտրվածք, տաճարի ճակատը<sup>2</sup> արևմտյան կողմից և ներքին աշտարականման ծավալի երկրորդ հարկի օթյակի սյան (խարիսխով և խոյակով) չափագրության գծագիրը:


Համաձայն Կալզինի ներկայացրած նյութերի, Բանակ տաճարը ևս դեպի վերև փոքրացող եռաստիճան, բոլոր աստիճաններում բոլորաձև հիմքով կառուցվածք է:

Պարզվում է, որ Բանակ տաճարը ընդհանրապես նման է եղել Չվարթնոցին (համաձայն Թորամանյանի և Կալզինի վերակազմությունների):

Ա. Կալզինը եղել է ավերակում, ուսումնասիրել է այն և չափագրել՝ իր տրամադրության տակ ունենալով համեմատաբար բավարար ժամանակամիջոց: Այդ ժամանակ կիսաքանդ վիճակում, սակայն ընդհանուր առմամբ կանգուն էին բոլորակ սրահի պատերը (բացառությամբ հյուսիսարևմտյան հատվածի), իսկ կենտրոնական մասից կանգուն էր լոկ արևելակողմի հատվածը՝ գլխավոր խորանը և երկու աշտարականման ծավալները ողջ բարձրությամբ:

<sup>1</sup> Всеобщая история архитектуры, I, Москва, 1958, էջ 452:

<sup>2</sup> Մինչև այժմ լույս տեսած ճարտարապետության պատմությանը վերաբերող գրքերում, որոշ բացառությամբ, Բանակ տաճարը ներկայացվում է առանց արտաքինը պատկերող ճակատի:



1:100

7. Բանակ տաճարի կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (վերակազմություն Ս. Կղիաշվիլու)


Ավերակի կանգուն մնացորդները հնարավորություն են տվել Ա. Կալզինին ստեղծել վերակազմության նախագիծ, որտեղ զգալի ճշտությամբ (որոշ վերապահումներով) վերարտադրվել են տաճարի առաջին և երկրորդ աստիճանները:

Ինչպես հայտնի է, Չվարթնոցում տաճարի երկրորդ աստիճանի արտաքին բոլորանիստ կազմությունը մեր օրերի հետազոտողներից մեկի կողմից չի ընդունվում:

Դեռևս 1900-ական թվականներին այդ տաճարի առաջին վերակազմության հեղինակ Թորոս Թորամանյանի նախագիծը ուժ ստացավ այն բանից հետո միայն, երբ 1906 թվականին ակադեմիկոս Ն. Մառի կողմից պեղվող Անիի Գագկաշենի ավերակում հայտնաբերվեց այդ տաճարի քարակերտ մոդելը<sup>3</sup> (նկ. 55), որի արտաքին ուրվանկարը ճիշտ և ճիշտ այնպիսին էր, ինչպիսի վերակազմություն էր ստեղծել Չվարթնոցի համար Թորամանյանը: Նշենք, որ XI դարի պատմաբան Ասողիկի վկայությամբ Գագկաշենը կառուցվել էր այդ ժամանակ ավերված Չվարթնոցի ճարտարապետությամբ և չափերով:

<sup>3</sup> Տաճարի հիշյալ մոդելը փոլքերի տակից դուրս բերվելուց հետո նրա մասնակիորեն վնասված վերնամասը ճշտորեն վերականգնվել է՝ հողի մեջ պահպանված սեփական բեկորները ի մի բերելով:





8. Բանակ տաճարի առաջին աստիճանի հատակագիծը (վերակազմություն Ա. Կալգինի)


Որպես փաստ Չվարթոսցը բոլոր աստիճաններում արտաքուստ բոլորածև լինելուն Թորամանյանը հիշատակում է նաև համեմատաբար լավ պահպանված Վվարթոսցատիպ Բանակ տաճարը: Մինչդեռ, ինչպես բերվեց վերևում, համաձայն Դ. Բաքրաձեի և Գ. Չուբինաշվիլու նկարագրության՝ Բանակ տաճարի երկրորդ աստիճանում պետք է որ նույնությամբ իրեն արտահայտությունը գտներ տաճարի կենտրոնը հանդիսացող եկեղեցու քառակոնխային կապույթունը և ոչ բոլորածև թմբուկը, ինչպես վերակազմել էր Կալգինը:

Արդ, Բանակ տաճարի կապույթյան և ընդհանուր պատկերի վերաբերյալ եղած կարծիքներից ու վերակապույթյուններից որի՞ն տալ նախապատվությունը, դրանցից ո՞ր մեկն իր հիմքում

ունի առավել ստույգ փաստեր, ո՞րն է ավելի հավանական ձևով պատկերում հուշարձանը: Տվյալ դեպքում քննության առարկան տաճարի երկրորդ աստիճանի հորինվածքի հարցն է՝ խաչաձև՞ է եղել այն իր հիմքում, թե՞ բոլորակ թմբուկ: Կալգինը (ինչպես և ճարտ. Կլդիաշվիլին) այն ներկայացրել է բոլորակ թմբուկի ձևով: Ստորև բերվող ստույգ փաստերով, ինչպես կտեսնենք, անառարկելիորեն հաստատվում է, որ ճշմարտացի է Կալգինը:

Կալգինը կազմել է չորս հատակագիծ՝ տաճարի տարբեր աստիճանների համար: Դրանցից առաջինը պատկերում է առաջին աստիճանի առաջին հարկաբաժինը (գծ. 8):

Այն կապավորված է կենտրոնի խաչաձևն ստեղծող չորս խորաններով՝ կիսաբոլորակ էքսեդր-



9. Բանակ տաճարի հատակագիծը երկրորդ հարկի բարձրության վրա (վերակազմություն Ա. Կազինի)

րային (սյունակամարաշարային) վերջավորությամբ, անկյունագծային դասավորության չորս ավանդատներով և շրջանց սրահով:

Հատակագծերից երկրորդը պատկերում է տաճարի առաջին աստիճանի սահմաններում առկա երկրորդ հարկաբաժինը՝ դեպի տաճարի ներսը սյունակամարապարզով բացվող օթյակների բարձրության վրա (գծ. 9):

Հատակագծերից երրորդը, որի վրա այժմ պիտի կանգ առնենք, պատկերում է տաճարի երկրորդ աստիճանի կազմությունը ներքին աշտարականման ծավալների երրորդ հարկաբաժնի բարձրության վրա (գծ. 10):


Եթե այս հատակագիծը չլիներ, դժվար պիտի լիներ ճիշտ պատկերացնել, թե ինչպիսի՞ արտաքին տեսք ու ներքին կազմություն է ունեցել տաճարի երկրորդ աստիճանը, որը տարբեր ուսում-

նասիրողների մոտ ստացել է տարբեր պատկերավորում:

Այդ հատակագծի համաձայն, տաճարի երկարած չորս խաչաթևերի միջև տեղ գտած աշտարականման ծավալների առաջին և երկրորդ հարկաբաժինների քառակուսի ձև ունեցող հատակագիծը այստեղ՝ երրորդ հարկաբաժնի սահմաններում փոխվել, դարձել է մոտավորապես եռանկյունաձև (սրա ներքնաձիգը ոչ թե ուղղագիծ է, այլ, ավելի ճիշտ՝ աղեղաձև):

Հատակագծերի հենց այս ձևափոխության նկատմամբ անուշադիր գտնվելով ոմանք չեն ընդունում տաճարի երկրորդ աստիճանի բոլորաձև լինելը: Իրականության առջև չմեղանչելու և ճշտությանը առավել մոտ գտնվելու համար՝ դիմենք ավերակի լուսանկարներին:

Բարեբախտաբար չի կործանվել, պահպանվել



Տրած Առիթ Ա. Կալգինի

0 10 20 30 40 50 60 70 80 90 100

10. Բանակ տաճարի երկրորդ աստիճանի հատակագիծը (վերակազմություն Ա. Կալգինի)

և լուսանկարում (նկ. 34) տեղ է գտել վերը նկարագրված հարավ-արևելյան աշտարականման ծավալի երրորդ հարկաբաժնի, մոտավորապես եռանկյունաձև սենյակի դրսի՝ բոլորաձևություն ունեցող պատահատվածը ողջ բարձրությամբ (լուսանկարում ցույց է տրված սլաքով): Պետք է պզուշանալ և այդ պատահատվածը չչփոթել արևելակողմի խորանի հարավային կեսի հետ:

Անհրաժեշտաբար նախօրոք նշենք, որ այդ դրմնահատվածը իրականացման տեխնիկայով, կանոնավորությամբ և շարքի բարձրության չափով՝ անառարկելիորեն պատկանում է սկզբնապես կառուցված շինությանը<sup>1</sup>: Այն հետագա հավելում-

ների և ձևափոխությունների արգասիք չէ և նրանց հետ ոչինչ ընդհանուր չունի: Եվ, ահա, այդ պատահատվածը չափագրել և ճշտությամբ իր կազմած հատակագծում վերարտադրել է Ա. Կալգինը (գծ. 10): Իրոք, պատահատվածի երկր մոտ պատը քարե երեսապատում չունի, երևում է պատամեջը: Այդ բանը նույնությամբ անդրադարձել է Կալգինի հատակագծում: Հենց այդ տեղ եղել է դրսի թմբկապատի հետ կապող շարվածքը: Լուսանկարից երևում է, որ այդ կապող շարվածքը, որ այժմ գոյություն չունի հարավակողմի խորանի աջ պատուհանին կից, գոյություն ունի արևելյան խորանի երեք պատուհաններից ձախակողմյանի ձախ եզրին կից: Այդ պարպ երևում է լուսանկարում և ճշտորեն անդրադարձել է հատակագծում: Լուսանկարում երրորդ հարկաբաժնի եռանկյունաձև սենյակի բոլորաձև

<sup>1</sup> Այդ պատահատվածի շարքը որքան էլ կանոնավոր, այնուամենայնիվ թմբկապատերի արտաքին երեսապատման համեմատությամբ պակաս մշակվածություն ունի և չի կարող համարվել արտաքին պատի երեսապատում:



պատահատվածի վերին եզրի վրա նշմարվում են դուրս կարկառված մի քանի քար. պարպորեն հասկացվում է, որ այդտեղ սկսվել է այդ պատի և տաճարի երկրորդ աստիճանի դրսի թմբկապատի միջև գոյություն ունեցող ոչ լայն, միջանցքի տեսքով բոլորակ սրահի թաղակապ ծածկը:

Ճշտորեն նույն պատկերն է առկա ավերակի հյուսիսակողմից արված լուսանկարում (նկ. 30), այստեղ արդեն առավել որոշակի է ուրվագծվում հյուսիս-արևելակողմի բոլորակ սրահի երբեմնի գոյություն ունեցող թաղածածկը: Այժմ նրա արևելյան վերջավորության հետքն է մնացել:

Տաճարի հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան աշտարականման ծավալների երրորդ հարկի եռանկյան ձև ունեցող սենյակների աղեղաձև պատերի վրա պահպանված դրվագները աներկբա հաստատում են, որ այդ աղեղաձև պատերին կուգահեռ, դրսի կողմից գոյություն են ունեցել այլ, նույնպես աղեղաձև պատեր: Ահա հենց դրանք էլ հանդիսացել են տաճարի երկրորդ աստիճանի սահմաններում ներքին խաչաձևի չորս խորաններն ու չորս աշտարականման ծավալները դրսից ի մի ամփոփող բոլորակ թմբկապատի հատվածները, որոնք ճշտությամբ վերարտադրված են Ա. Կալգինի վերակազմության մեջ:

Շատ հետաքրքիր է, որ Կալգինի կազմած երկրորդ աստիճանի հատակագծի (գծ. 10) և Բաքրաձեի Բանակին վերաբերող աշխատությանն առընթեր հատակագծի (գծ. 4) միջև կա բնորոշ ընդհանրություն: Երկուստեք բոլորաձև սրահը ստեղծված է չորս, միմյանցից անշատ քառորդներից, սենյակները եռանկյունաձև են, առկա են արտաքին բոլորակ թմբկապատը և վերջիններիս միջև գտնվող նեղ միջանցքը: Եթե այդպես չլիներ, Բաքրաձեն չէր գրի, թե «...ամեն մի յարուստում կար բոլորակ սրահ»: Բայց և իրավացի չէ Բաքրաձեն, որ հիշյալ հատակագծում իր ձեռքով կատարել է փոփոխություն, փորձելով սրահի չորս հատվածները միավորել մի ընդհանուր օղակի մեջ<sup>1</sup>:

Այս հարցում նկատելի պարզությունն են

մտցնում ավերակի նորերս (1970 թ.) կատարված և Միլանից Հերման Վահրամյանի կողմից մեկ ուղարկված մի շարք լուսանկարներ, որոնք սույն աշխատության պլանում ստացել են 30, 33, 38 համարները:

33-րդ լուսանկարը ներկայացնում է ժամանակակից ավերակի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից՝ տաճարի արտաքին թմբկապատի տասը նիստերի ընդգրկումով: Աջակողմյան երկու նիստերը պատկանում են սկզբնապես կառուցված տաճարին, մնացած ութը՝ X դարի վերակառուցմանը: Արտաքին թմբկապատի վրա ուշ դարերում բարձրացված պատի արևելյան հատվածի կործանումով բացվել է տաճարի երկրորդ աստիճանի բոլորակ թմբկապատի մի դրվագը՝ արևելյան խորանի կենտրոնական պատուհանով նիստը և երկու կից նիստերից փոքր հատվածներ: Երկրորդ թմբկապատի հիշյալ դրվագի լուսանկարում երևացող նիստերի հանդիպման անկյունները որոշակիորեն բնորոշում են մեծ տրամագծի թմբկապատ՝ կուգահեռ արտաքին թմբկապատին:

Լուսանկարների 28-րդում պատկերված է ավերակի ընդհանուր տեսքը արևելակողմից: Այստեղ պարպորոշ երևում են արևելյան խորանի երկու լուսամուտների լայնացած բացվածքները և հյուսիս-արևելյան հանգույցի արտաքին բոլորակ թմբկապատի հիմքի մնացորդները տաճարի երկրորդ աստիճանի բարձրության վրա: 30-րդ լուսանկարում նույն հանգույցն է, նայված հյուսիս-արևելակողմից, ուր պատկերված են՝ ներքին բոլորակ պատը, արտաքին բոլորակ պատի սկիզբն ու հիմք կազմող բետոնապանզվածքը: 38-րդ լուսանկարում երևում է արևելյան խորանի ձախ վերնամասը որոշ մանրամասներով:

1902—1907 թվականներից հետո՝ անցած 70 տարիների ընթացքում Բանակ տաճարի ավերակը շարունակել է քայքայվել, փլվել են հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան ավանդատներն ու կամարակապ օթյակները, բացվել են ներքին սենյակների մանրամասներ, որոնց մեծ բարելավչ-ճուրայմը և հնուտ վարպետությամբ տասնամյակներ առաջ ճարտարապետ Կալգինը անդրադարձել է իր ստեղծած վերակազմության գծագրերում:

Ի վերջո այս «առեղծվածի» վերջնական լուծումը մեկ պարզում է Ն. Օկունևի, դեռևս 1917

<sup>1</sup> Ե. Թաղաիշվիլին իր «Բանակ» աշխատության մեջ նշում է, որ Բաքրաձեն իր ձեռքով փոփոխություն է մտցրել այն հատակագծում, որը տեղ է գտել Բաքրաձեի գործերում և որը բերում է ինքը՝ Թաղաիշվիլին (գծ. 4, այստեղ ակներև է Բաքրաձեի կատարած հիշյալ փոփոխությունը):

թվականի լուսանկարներից մեկը (նկ. 46): Այդ լուսանկարում պատկերված է տաճարի հյուսիսարևելյան հատվածի կործանումով բացված շինության ներքին տեսքը՝ վերից վար: Այդտեղ էլ՝ լուսանկարի վերնամասում երևում են տաճարի երկրորդ աստիճանի արտաքին թմբկապատի մի հատվածը և նրանով ստեղծված քառորդ շրջագծի երկարության, նեղ միջանցքի տեսք ունեցող բոլորակ սրահի բացվածքը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Ա. Կալզինի առաջարկած Բանակ տաճարի վերակազմության երկրորդ աստիճանի հատակագիծը համապատասխանում է ավերակի տվյալներին, այսինքն՝ տաճարը իր երկրորդ աստիճանի սահմաններում արտաքուստ եղել է բոլորաձև թմբուկ<sup>1</sup> (գծ. 10, նկ. 29):

Այս նաև նպաստ է Չվարթնոցի Թորամանյանի վերակազմությանը տաճարի երկրորդ աստիճանի թմբկաձևությունը հավաստելուն:

Համաձայն Ա. Կալզինի, Բանակ տաճարը իր երկրորդ աստիճանի սահմաններում, ինչպես ասվեց, եղել է բոլորակ՝ առաջին աստիճանի համեմատությամբ ավելի փոքր շառավիղով, 28 նիստեր ունեցող թմբուկ: Նա այդպես է ընկալել, այդ ժամանակ դեռևս կիսականգուն տաճարը ուսումնասիրելով:

Չվարթնոցում չկային խանգարող հանգամանքներ, որ տաճարի երկրորդ աստիճանը լիներ հիմքում բոլորակ՝ թմբկաձև, և որ այդ թմբկապատի վրա որոշակի քայլով տեղադրվեին պատուհաններ: Բանակ տաճարում թմբկապատը

<sup>1</sup> Ս. Մնացականյանը մի առիթով գրում է. «Թորամանյանի Չվարթնոցի վերակազմության դեմ արվող առարկությունները հիմնականում վերաբերում են վեր տանող աստիճաններին, վերնահարկին և վերջինիս գոյությամբ պայմանավորվող երկրորդ յարուսի ռոտոնդաձև հորինվածքին»:

Բանակ տաճարի օրինակը ցույց է տալիս այդ թեպի սխալ լինելը: Բանակում վերնահարկերը Չվարթնոցի համեմատությամբ այլ կառուցվածք ունեն: Այստեղ, տաճարի առաջին աստիճանում, բոլորաձև սրահը վերնահարկ չունի, մինչ շինության երկրորդ աստիճանը ռոտոնդաձև է:

Չվարթնոցի կառուցվածքով հետաքրքրվողներից ոմանք իրենց համար դեռևս պարզված չհամարելով առաջին աստիճանի վերնահարկի գոյության հարցը, տաճարի երկրորդ աստիճանի թմբկաձև լինելու խնդրում ոչ մի կասկած չունեն:

Անկախ վերնահարկերի լինել-չլինելուն, Չվարթնոցն ու Բանակն իրենց երկրորդ աստիճանի սահմաններում թմբկաձև են:

ստացվում էր, սակայն հիմքում քառանկյունի եռահարկ աշտարականման ծավալների դրսի անկյունների անձևակերպ լինելու պատճառով պատուհանների որոշակի քայլով դասավորություն չէր ստացվում: Մինչդեռ դրա անհրաժեշտությունը կար, դա պետք էր արտաքին դեկորատիվ կանոնավոր սյունակամարաշար ստանալու համար: Այս վերջինս էլ արվելու էր հանուն այն համահնչուն ներդաշնակության, որ պիտի ունենային տաճարի երեք աստիճանների թմբկապատերը միմյանց հետ, որպես շինության միասնական, ամբողջական հորինվածքի ստացման նախասյայման:

Իր առաջ դրված խնդիրը դրականորեն լուծելու համար հնարամիտ ճարտարապետը երրորդ հարկի սահմաններում աշտարականման ծավալներից յուրաքանչյուրի դրսի անկյունը կտրում, քառանկյունու փոխարեն, սենյակներին տալիս է եռանկյունու ձև: Վերջիններիս դրսի պատը ոչ միայն կրկնում է արտաքին թմբկապատի կորությունը, այլև հետ է կանգնում նրանից: Այս միջոցառման շնորհիվ արտաքին թմբկապատի և եռանկյունաձև սենյակների դրսի պատերի միջև առաջանում է ոչ լայն միջանցք: Այս միջանցքի առկայության պայմաններում տաճարի երկրորդ աստիճանի թմբկապատի արտաքին հարթությունը, առանց որևէ դժվարության, պատվում է դեկորատիվ սյունակամարաշարով և նիստերից յուրաքանչյուրի վրա բացվում է մեկ պատուհան:

Ինչպես հասկացվում է, Բանակ տաճարի ճարտարապետը նախապես որոշած է եղել շինության երկրորդ աստիճանում նույնպես ունենալ բոլորակ թմբկապատ, ինչպես առաջին աստիճանում է, և նա այդ հաջողացրել է վերը նկարագրված միջոցառումներով: Եթե, իրոք այդպես չլիներ, հնարավոր չէ ենթադրել մի այլ առիթ, ներքին աշտարականման ծավալներում ուղղանկյան փոխարեն սենյակներին եռանկյան ձև տալու համար: Եթե արտաքին թմբկապատը նախորոշված չլիներ, երրորդ հարկի սենյակներն էլ առաջին և երկրորդ հարկերի սենյակների նըման քառանկյան ձև կտանային. տաճարը իր երկրորդ աստիճանի սահմաններում կունենար ճշտորեն այնպիսի պարագիծ, ինչպիսին ունի Բագարանի կաթողիկեն, և այդ առարկություն չէր վերցնի, կընդունվեր որպես օրինական երևույթ:

Երբ Կալզինը չափագրում էր, հուշարձանի

երկրորդ աստիճանի արտաքին թմբկապնուի չըկար, կործանվել էր, թողնելով լոկ հետքեր ավերակում: Դրանից ելնելով էլ նա հատակագծում այդ թմբկապատը ցույց է տվել ոչ թե ամբողջապես սև, այլ եպրագծերով միայն:

Կալգինի կապնած չորրորդ հատակագիծը տաճարի երրորդ աստիճանն է՝ վաղուց կործանված գմբեթային մասը (գծ. 11), որը հեղինակը պատկերել է, նկատի ունենալով այլ տաճարներ (Հռիփսիմե, Եղեգնամոր և այլն), որոնք կանգուն են, ինչպես և իր ձեռքի տակ ունեցած Չվարթնոցի և Գագկաշենի Թորանանյանի ստեղծած վերակապնությունները:

Չվարթնոցատիպ հուշարձանների շարքում Բանակ տաճարի թմբկաձև առաջին աստիճանի տրամագիծը ամենամեծն է, մոտ 38 մետր, մինչ գմբեթատակ քառակուսին, որով ընդհանրապես բնորոշվում է գմբեթի տրամագիծը, շատ փոքր է, մոտ ութ մետր: Սրանց հարաբերությունը մոտենում է մեկը-հինգին: Այդ հարաբերությունը Չվարթնոցում և Գագկաշենում կապնում է մեկը-երեքին: Ա. Կալգինը ճիշտ գնահատելով իրավիճակը, գտել է, որ Բանակ տաճարի պես նշանակալից շինության ճարտարապետը չէր կարող այս լայնանիստ, մեծածավալ տաճարը ավարտել այդքան փոքր գմբեթով:

Այս հարցում Ա. Կալգինի կարծիքը շատերն են բաժանում:

Հռիփսիմեի գմբեթաթմբուկի տրամագիծը գմբեթատակ քառակուսու համեմատությամբ զգալի մեծ է: Նախ, նրա պատերն են գմբեթային բոլորակի եպրեթից ետ դրված և, ապա, դրանք բավական հաստ են: Նրա կառուցողը այդ հաստ պատերը անհրաժեշտ չափով թեթևացրել, նրանցում ստեղծել է շուրջ 16 խորշեր: Այդ միջոցառման շնորհիվ Հռիփսիմեի գմբեթաթմբուկի պատերըն աշխատում են տարածականորեն, դիմագրավելով ծածկի հսկայաչափ կիսագնդից առաջացող, դեպի դուրս հրող ուժերը:

Ե. Թաղաիշվիլու 1907 թվականի արշավախումբը, իր հետապոստությունների հենց սկզբում գտնվելով Կարսի մարզում, Կաղզվանի շրջանի Չանգի՝ պատմական Եղեգնամոր գյուղի մինչ այժմ կանգուն եկեղեցում, ականատես է դառնում մի յուրօրինակ կապնության գմբեթի: Չափագրությամբ պարզվում է, որ այդտեղ պատերը մեկու-

կես-երկու անգամ հաստ են տաճարի ներքնամասի պատերից: Կառուցողը այդ հաստ պատերը, որ ստեղծել է գմբեթի կայունությունը մեծացնելու նպատակով, թեթևացրել է ներսի կողմից մեծ չափերի խորշերի ստեղծումով, որոնց եպրակամարները հենել է գմբեթային բոլորակի եպրագծով անցնող սյունակամարաշարին: Այս ձևով գմբեթի շուրջը առաջացել է սյունապարզ անցում<sup>1</sup>:

Այս տաճարը չափագրել է Ա. Կալգինը, հրատարակել՝ Ե. Թաղաիշվիլին իր «Բանա» աշխատության էջերում:

Եղեգնամորի գմբեթի կապնությունը օգնել է Ա. Կալգինին լուծելու Բանակ տաճարի գմբեթային մասի առեղծվածը:

Կալգինը, օգտվելով տաճարի ներքնամասի ընձեռած հնարավորություններից, գմբեթի թմբկապատը զգալի հետ է տարել, իսկ գմբեթային բոլորակի եպրագծով բարձրացրել է սյունակամարաշար: Գմբեթի թմբկապատի և սյունակամարաշարի միջև բոլորակ սրահի ստեղծումով Կալգինը Բանակ տաճարի գմբեթի լայնական չափերը մեծացրել, համապատասխանեցրել է լայնանիստ ներքնամասին:


Ա. Կալգինի վերակապնությամբ Բանակ տաճարի գմբեթը պետք է ունեցած լինի զգալի կայունություն: Դրանում դեպի դուրս հրող ուժերը դիմագրավել է տարածականորեն աշխատող օրգանիզմը՝ գմբեթային բոլորակ վերնասրահը:

Կառուցողական առումով այդ գմբեթը դժվարությունների առիթ չէր կարող տալ: Այն իր բնույթով, չափերով, իրականացման ձևով չի տարբերվել տաճարի ներքնամասի սյունակամարաշար խաչաթևերից: Եվ եթե այս վերջիններս իրենց վրա տարել են մեծածավալ տաճարի ողջ վերնամասը, ապա վերնասրահը կրել է լոկ գմբեթային ծածկը:

Հիշյալ վերնասրահը առանձնապես մեծ չէ, ունի մոտ երկու մետր լայնություն. նրա մակերեսի մի մասը զբաղեցնում են այն չորս սանդուղքները, որոնք բարձրացել են վերևում բերված եռան-

<sup>1</sup> Սույն աշխատության այբումում ներկայացվում է նաև Քյոլնի (ԳՅՀ) Առաքելոց տաճարի (1192—1230) արևելյան խորանի լուսանկարը (նկ. 88): Այդտեղ պատկերված է խորանի վերնամասի շրջանց սրահը, ստեղծված ճշտորեն Եղեգնամորի գմբեթային շրջանց սրահի ձևով: Լուսանկարի վերևում նշմարվում է նույն բնույթի ևս մի անցում գմբեթաթմբուկի ներսում:





11. Բանակ տաճարի երրորդ աստիճանի հատակագիծը (վերակազմություն Ա. Կալգինի)

կյունաձև սենյակներից: Դրանց մնացորդները Կալգինը չափագրել և պատկերել է հատակագծում: Այդ սանդուղքները, անկասկած, բավարարել են վերնասրահ բարձրացողներին:

Գմբեթի շուրջը պլանսարահ ենթադրելու և ցույց տալու համար Կալգինը անպայման կարող էր հիմնվել նաև Դ. Բաքրաձեի ավելի քան հստակ և որոշակի ասած խոսքի վրա, թե «...ամեն մի յարուսում կար բոլորակ սրահ», ավելի կոնկրետ՝ «բուն գմբեթի շուրջը, նրա հիմքի բարձրության վրա, կամ եկեղեցու պատերի ավարտում (խաչաթևերի գմբեթարդ ծածկերից բարձր—Տ. Մ.) վերևով անցնում էր հին գալերեան՝ կապը վերին սենյակների միջև»:<sup>1</sup>

Դ. Բաքրաձեն այսպես կարող էր գրել միայն ու միայն սեփական աչքերով վերնասրահը տեսնելու կամ կործանված վերնասրահից այդ ժամանակներում դեռևս պահպանված նրա հետքերը տեսնելու դեպքում միայն: Հետևում է, որ տաճարի տվյալ հանգույցի կալգինյան վերակազմությունը ճշմարտանման է, միանգամայն տրամաբանական:

Դ. Բաքրաձեի ասածի հիման վրա ամենևին հնարավոր չէ պատկերացնել պատշգամբի ձևի հարթակ գմբեթի ներսում, ինչպիսին առկա է Հռիփսիմեում: Հռիփսիմեի այդ բոլորաձև հարթակը բարձրացել են հյուսիս-արևմտյան ավանդատանը դրված փայտե սանդուղքով՝ ծածկի վրա թողնված անցքից ներս մտնելով, նեղ անցումներով, թերևս սողեսող հասել են այնտեղ: Բանակում քարակերտ սանդուղքները սկսվել են տաճարի հատակից և կանոնավոր բարձրացել մինչև վերնասրահ: Եռանկյունաձև սենյակներից առկա սանդուղքներով հնարավոր էր դուրս գալ միայն սրահ: Պատկերացնել, թե այդ սանդուղքները մարդկանց կարող էին տանել նաև գմբեթի ներսում ենթադրվելիք հարթակը, հնարավոր չէ: Այդ նաև անհիմաստ է այն առումով, որ տասնյակ մետրեր կանոնավոր սանդուղքներով բարձրանալուց հետո անհրաժեշտ պիտի լիներ նեղ ու վարտուղի անցումներով, թերևս՝ սողեսող, որ նաև անպատշաճ է, հասնել ներքին հարթակ:

Հիշենք, որ այդ վերնասրահը միաժամանակ միակ հնարավոր կապն է վերին սենյակների միջև, հետևաբար այն պետք է լիներ բանուկ, տրվյալ նպատակի համար հարմարավետ, այսինքն մոտավորապես այնպես, ինչպես այն վերստեղծել է Ա. Կալգինը իր վերակազմության մեջ:


Կալգինի առաջարկած գմբեթային մասն իր ներքին կազմությամբ ակներև յուրօրինակ է:

Ա. Կալգինի մոտ համեմատաբար անհաջող է ստացվել գմբեթային մասի արտաքին արտահայտությունը, և այդ որոշ առումով բնական է, չէ որ ավերակն այդ խնդրում հեղինակին անհրաժեշտ չափով չի օգնել, ըստ երևույթին բաց վիճակում չեն եղել տաճարի երրորդ աստիճանին վերաբերող ամբողջական պնդվածներ և, նույնիսկ, բեկորներ:

Ճակատի վերակազմության գծագրում գմբեթաթմբուկը նա պատկերել է 24 նիստերով, այն ժամանակ, երբ ստորին՝ մեծ տրամագծի թմբուկներն ունեն ընդամենը 28 նիստեր: Գմբեթաթմբուկի նիստերի մեծաքանակ լինելու հետևանքով, դրանց՝ այդ նիստերի լայնության չափը ընդամենը 213 սանտիմետր է, այն ժամանակ, երբ երկրորդ աստիճանում նիստի լայնքը հասնում է մոտ երեք մետրի (սկ. 29):

Այստեղ՝ գմբեթաթմբուկի շուրջը, Հռիփսիմեի չորս փոքր աշտարակների նմանողությամբ տեղ

<sup>1</sup> Ե. Թադաշչվիլի. Բանա (Материалы по археологии Кавказа, в. XII), Москва, 1909, էջ 105:



12. Բանակ տաճարի կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (վերակազմություն Ա. Կալգինի)

են գտել չորս ոչ մեծ ծավալներ, որոնցով ճանապարհ է ստեղծվում վերին բոլորակ սյունասրահը բարձրանալու համար: Ահա այդ, հիմքում բազմանկյունի ծավալի նիստերի չափերը և՛ չափազանց փոքր են (Հռիփսիմեում այդ փոքր աշտարակները հատակագծում բոլորակներ են):

Նույն պատկերն է ստեղծվում նաև պատուհանների համեմատությունից: Տաճարի երկրորդ աստիճանում պատուհաններն ունեն 90 սանտիմետրից ավելի լայնք, երրորդ աստիճանում պատուհանների լայնքը հասնում է ընդամենը 50—55 սանտիմետրի: Վերոհիշյալ չորս փոքր ծավալների վրայի պատուհանների լայնքը հավիվ հասնում է 20 սանտիմետրի, այն էլ այդ բարձրության վրա:

Տաճարի վերակազմության նույն ճակատի վրա բոլորովին նույն ելքագծի մի քանի խումբ պատուհաններ կան և բոլորը խիստ տարբեր չափեր ունեն: Սա, իսկապես որ, անհավանական է: Նախագծում բնականորեն որոշ քանակի պատուհաններ դուրս են ընկնում շինության ընդհանուր մասշտաբից, խորթ են նրա մյուս մասերին: Նաև այս է պատճառը, որ Կալգինի վերակազմությամբ տաճարը երևում է ծանրանիստ: Մինչդեռ, չենք կասկածում, որ իրականում այն եղել է հաճելի համաչափություններով մի կերտվածք:

Կալգինի վերակազմության գծագրերում, ինչպես տեսանք, անդրադարձել են տաճարի առավել վաղ շրջանի վերակառուցումները, այդ թվում բոլորակ սրահի ներսից, դրսի պատին հետագայում կցված մեծ հաստության կամարաշեն պատը, որով, ինչպես ասվեց վերևում, խիստ նեղացել է բոլորակ սրահը (գծ. 8, նկ. 44): Մինչդեռ բոլորովին չեն անդրադարձել համեմատաբար ուշ շրջանի վերակառուցումները, որոնց արդյունքն է եղել շրջանց սրահի երկրորդ հարկաբաժինը, այսինքն այն, ինչ ավելի վաղ իր վերակազմության մեջ ամբողջությամբ անդրադարձել է Ս. Կղիազվիլին (գծ. 7):

Այսպիսով, պարզ է դառնում, որ Բանակ տաճարի նախնական պատկերը (առանց հետագա հավելումների) վերակազմության ձևով՝ ցարդ գոյությունն չունի:

Մասնագիտական գրականության էջերում առկա նյութերի, ինչպես և տարբեր արխիվներում պահպանված բազմաթիվ լուսանկարների ուսումնասիրության հիման վրա Բանակ տաճարի համար ստեղծել ենք վերակազմության մի նոր նախագիծ (1963 թ.)<sup>1</sup>, որը նախորդներից՝ Ս.

<sup>1</sup> Բանակ տաճարի մեր վերակազմության նյութերը դեռևս 1970 թ. օգտագործման համար հանձնվել էին դոկ-

Կղիաշվիլու և Ա. Կալզինի նախագծերից, տարբերվում է նրանով, որ այդտեղ պատկերված է սկզբնապես կառուցված տաճարը իր սկզբնական տեսքով: Այս վերակազմության գծագրերում չեն անդրադարձել հուշարձանի երկարամյա կյանքում տեղի ունեցած բազմաթիվ վերակառուցումներն ու ձևափոխությունները: Նոր կազմված են տաճարի առաջին և երրորդ աստիճանների հատակագծերը, կտրվածքը տաճարի հյուսիս-հարավ առանցքով, արևմտյան ճակատը, գմբեթային մասի երկրորդ և երրորդ տարբերակները, առաջին աստիճանի թմբկապատի տարբեր հատվածների արտաքին հարթության ճարտարապետական մըշակման երկու դրվագները, կառուցվածքում համաչափություններ բացահայտող մի շարք այլ գծագրեր:

Տաճարի առաջին աստիճանի հատակագիծը Կալզինի վերակազմության հատակագծից տարբերվում է նրանով, որ այստեղ ցույց չեն տրված մեծ թմբկապատի հետագա հաստացումները շրջանց սրահի ներսում և, ապա ավելացվել է այդ թմբկապատի ներքին հարթության ղեկորատիվ սյունակամարաշարը, որը առաջին վերակառուցման ժամանակ ծածկվել է հիշյալ հաստացումներով:

Տաճարի երկրորդ աստիճանի իրավիճակը բավարար ձևով արտահայտված է Կալզինի կազմած համապատասխան հատակագծում:

Չվարթնոցի վերակազմության մեջ Թորամանյանը գմբեթաթմբուկը ցույց է տվել 16 նիստով, ըստ որում, նրանց՝ այդ նիստերի լայնքը նույնքան է, որքան տաճարի երկրորդ աստիճանի թմբուկի նիստերինը, իսկ պատուհանները՝ բոլոր թմբուկների բոլոր նիստերի վրա գրեթե միաչափ են (նկ. 52):

Թորամանյանի վերակազմությամբ Չվարթնոցի շինությունը թեթև է, լուսառատ, դեպի իրեն ձգող. իվուր չէ, որ մեր միջնադարի պատմիչները հիացմունքով են խոսում նրա մասին:

Դրանից ելնելով էլ տաճարի երրորդ աստիճանի համար կազմված հատակագծում գմբեթաթըմ-

բուկի նիստերի թիվը վերցրել ենք 16, որոնց լայնքը ստացվել է տաճարի երկրորդ աստիճանի թմբուկի նիստերի լայնքին հավասար:

Տաճարի արևմտյան ճակատի գծագրով շինության երկրորդ և երրորդ աստիճաններում միանըման համաչափություններ են ստացել ղեկորատիվ սյունակամարաշարը, պատուհանները, անտրիվոտի պատահատվածները և այլ դրվագներ:

Այս գծագրում տեղ չեն գտել Հռիփսիմեի գմբեթի շուրջը եղած փոքր աշտարականման ծավալների կրկնօրինակները, այստեղ դրանց կարիքը չկա: Գմբեթի շուրջ եղած սյունասրահը բարձրանալու համար այդտեղ առանց դժվարության տեղավորվում են այնպիսի աստիճաններ (գծ. 19), որպիսիք հայտնաբերվել են ավերակի եռահարկ աշտարականման ծավալների երրորդ հարկաբաժնում:

Դրանք սկսվում են դեռևս առաջին հարկում և վեր են բարձրանում արևելյան խորանի երկու կողմերի հոծ պալատների ներսում:

Կալզինի ստեղծած վերակազմության մեջ կատարված վերոհիշյալ փոփոխությունները ճակատը դարձնում են ավելի միասնական, նրա մասերը միանասշտաբ,- ապառ՝ ավելորդ և օտար ծավալներից:


Նոր կազմված կտրվածքի գծագրում իր նախնական չափերն է ստացել առաջին աստիճանի թաղակապ ծածկով բոլորակ սրահը: Այդտեղ բացակայում է X դարի վերակառուցմամբ առաջա-

<sup>1</sup> 1964 թվականի լրացուցիչ ուսումնասիրությունները Չվարթնոցի ավերակում ու մեր մի շարք հուշարձաններում և նոր պրպտումները Վվարթնոցատիպ Բանակ տաճարի նյութերում, հնարավոր դարձրին ենթադրելու, որ թերևս նաև Չվարթնոցում վերնահարկ տանող աստիճանները եղել են քարակերտ, տեղավորված հոծ պատերի ներսում: Եվ իսկապես, Չվարթնոցի արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքում դեռևս պահպանվում է արտասովոր չափերի՝ 190 սմ հաստության միջնապատի մնացորդը: Շատ հնարավոր է, որ հենց այդ պատի ներսում էլ ստեղծված են եղել Չվարթնոցի վերնահարկ տանող աստիճանները, որ սկսվել են կից սենյակների հատակի բարձրությունից և հասել են վերնահարկ (գծ. 29ա): Ստացվում է, որ վերնահարկ տանող սանդուղքները և Չվարթնոց, և Բանակ տաճարներում եղել են միանման (տե՛ս. T. A. Марутян, Звартноц, автореферат, 1967 г., ст. 7, 9, 13):


Չվարթնոցի քարե աստիճանների այս տարբերակը Ա. Մնացականյանի հետագա աշխատություններում ակներև կանխամտածված անտեսվում է:

տոր պրոֆեսոր Եվգենի Կայսբաուերին, որը դրանք հրատարակել է Նյու-Յորքում The ART BULLETIN հանդեսի 1972թ. սեպտեմբերի համարի 245—262 էջերում „Zvart’nots and the Origins of Christian Architecture in Armenia“ վերնագրի տակ:





13. Բանակ տաճարի հատակագիծը ըստ «Ճարտարապետության հանրնդհանուր պատմություն» դասագրքի



14. Բանակ տաճարի կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով ըստ հիշյալ դասագրքի

ցած կամարակապ պատը: Վերականգնված է արտաքին պատի ներքին հարթության վրայի դեկորատիվ սյունակամարաշարը: Նոր համաչափություններով է պատկերված գմբեթաթմբուկի ներքին սյունակամարաշարը, բոլորովին նոր են շինության այս դրվագի երկրորդ և երրորդ տարբերակները:

Ստեղծված պատկերը (գծ. 15, նկ. 49) օգնում է համոզվելու, որ իրոք գմբեթի շուրջ գոյություն է ունեցել բոլորակ սյունասրահ:


Գմբեթային մասի հատակագծի երկրորդ և, հատկապես, երրորդ տարբերակում սյունասրահը ցույց է տրված Եղեգնամորի օրինակով (գծ. 19ա և 19բ):

Ա. կալգինը և Ե. Թաղաիշվիլին Բանակ տաճարի գմբեթի կապնության վերաբերյալ իրենց թեզը կարող էին հիմնավորել նաև մի այլ հուշարձանի օգնությամբ:

Տասներկու և տասներեք դարերի սահմանագծում Քյոլնում (ԳՖՀ) կառուցվել է ռոմանական ճարտարապետության հանրահայտ հուշարձաններից մեկը՝ Առաքելոց տաճարը: Յարդ պահպանվող այդ հուշարձանում ակներև է հայ հին ճարտարապետության որոշակի դրոշմը, ինչպես հատակագծային ընդհանուր լուծման (հատկապես արևելյան եռախորան վերջավորությունում), այնպես էլ ներքին տարածության

կապակերպման սկզբունքի, մի շարք դրվագների, հանգույցների, ճարտարապետական առանձին ձևերի վրա: Այդ երևույթն առանձնապես ցայտուն է դրսևորվում, երբ համադրում ենք մի կողմից Առաքելոցի, մյուս կողմից ավելի վաղ կառուցված Չվարթնոցի, Բանակի, Եղեգնամորի առկա նյութերը: Ահավասիկ երկուստեք՝ և Բանակում, և Առաքելոցում գմբեթատակ քառակուսու հյուսիսարևելյան և հարավարևելյան անկյուններում քառանկյունի հիմքով աշտարականման ծավալներ կան, որոնց ներսում տեղավորված են մի քանի հարկ օթյակներ, որ կամարակապ բացվածքներով հաղորդակցվում են տաճարի կենտրոնում և խաչաթևերում տեղի ունեցող արարողությանը:

Վաղ միջնադարում գմբեթակիր մույթերի տաճարի կենտրոնին ուղղված անկյունները մշակվում էին որպես կիսակլոր, կամ 3/4 շրջագծի հիմքով որմնամույթեր, դրված գմբեթատակ քառակուսու անկյունագծի ուղղությամբ: Այդպես է Չվարթնոցում, Բանակում, Լյակիթում, Գառնիի 7-րդ դարի բոլորակ տաճարում, նաև այլ հուշարձաններում: Սակայն այդպես չէ համեմատաբար ուշ հուշարձաններում՝ Եղեգնամորում, Արգինայում, Մարմաշենում, ինչպես և Չաքարյանների շրջանում և նրանց կողմից կառուցված մի շարք տաճարներում: Սրանցում կիսաբոլորակ հիմքով որմնամույթերը դրված են ոչ թե անկյունագծի, այլ գմբե-



15. Բանակ տաճարի արևմտյան ճակատը (վերակազմություն Տ. Մարությանի)

թակիր կամարների ուղղությամբ (գծ. 21, նկ. 84) : Եվ ահա նույն եղանակով են ստեղծվել Քյոլնի Առաքելոց տաճարի խորանների ելրակամարները կրող որմնամույթերը : (նկ. 88) :

Չգալի յուրօրինակությամբ են օժտված Չվարթնոցի առաջին աստիճանի թմբկապատի արտաքին նիստերի անկյուններում կանգնած զույգ որմնամույթերի խոյակների պարագծերը : Ճշտորեն նույնպիսի պարագծեր ունեն Քյոլնի Առաքելոցի ներքին որմնամույթերի կիսապուլների խոյակները :

Որ Առաքելոցի կառուցողը ծանոթ է եղել Խորագույն Հայքի հուշարձանների, նաև Եղեգնաձորի նյութերին, մեզ համոզում է նաև այն, որ երկուստեք գմբեթային փոխանցման համակարգի որոշ մանրամասներ միանման են : Առաքելոցում փոխանցման տրոմպների պարագծերը ճշտորեն

կրկնում են Եղեգնաձորի (նաև Խորագույն Հայքի մի քանի կարևոր հուշարձանների) փոխանցման տրոմպների ձևերը : Բանն այն է, որ այս վերջիններս տալթյան ծագումն ունեն և խիստ յուրահատուկ են, դրանք զգալիորեն տարբերվում են ընդհանրապես հայտնի կիսակոնաձև տրոմպներից :

Առաքելոցի արևելյան խորանում, երկրորդ հարկի բարձրության վրա, նաև գմբեթի ներսում, նրա հիմքի բարձրության վրա շրջանց սրահներ կան, որոնք միմյանց հետ կապում են խաչաթեփերի միջև առկա վերոհիշյալ օթյակ-վերնահարկերը և այլ սենյակներ :

Հետազոտող Դ. Բաքրաձեն անցած դարի վերջերում գտնվելով Բանակում, դիտարկելով ավերակը, պահպանված հետքերի հիման վրա

գրում է՝ «Բուն գմբեթի շուրջը, նրա հիմքի բարձրության վրա, կամ եկեղեցու պատերի ավարտում վերևով անցնում էր հին գալերեան՝ կապը վերին սենյակների միջև»:

Գմբեթի հիմքի բարձրության վրա շրջանց սրահ ունի նաև Եղեգնամորի տաճարը: Հետաքրքիրն այն է, որ բոլորովին նույն կերպ են լուծվել այդ շրջանց սրահները թե Առաքելոցում (նկ. 88), թե Եղեգնամորում (նկ. 84):

Նկատի ունենալով Քյոլնի Առաքելոցի առանձնահատուկ կողմերը, որոնք այդ տաճարը տարբերում են Ռոմանական մյուս հուշարձաններից<sup>1</sup>, ապա նրա որոշակի ընդհանրությունները մեր միջնադարի մի շարք հուշարձանների, այդ թվում՝ Բանակի, նաև Եղեգնամորի հետ, հնարավոր է դառնում ենթադրել, որ, թերևս Բանակի այժմ անհետացած գմբեթի ձևերը պահպանվել են Եղեգնամորից բացի, նաև Առաքելոցում: Հետևում է, որ, մոտավորապես այդպիսին, կամ դրանց որևէ տարբերակի տեսք պիտի ունեցած լինի շրջանց սրահը Բանակի գմբեթում (գծ. 19, 19ա, 19բ)<sup>2</sup>:

1 Всеобщая история искусств, т. 2, кн. первая, Москва, 1960, էջ 319:

2 Մեր միջնադարյան տաճարների զգալի մասի գմբեթները կործանվել են: Այդ երևույթի խորակներն ուսումնասիրություն դեռևս չի ստեղծվել, սակայն անառարկելի է, որ շատ պատճառներից մեկը գմբեթային փոխանցման համակարգի ոչ ամրակուտ կառուցելակերպն է:

Գմբեթային փոխանցման ամենավարկոր տարրը տրոմպն է, կամ առագաստը: Դրանք, որ իրենց վրա կրում են ողջ գմբեթը, որ բուն հողի վրա անմիջական հիմքեր չունեն, հենված լինելով չորս մայր մույթերը (կամ որմնամույթերը) միացնող կամարներին, որոշ խնաստով կախված են օդում:

Առավել հմուտ կառուցողները խուսափելով տրոմպները կամ առագաստները խիստ ծանրաբեռնելուց, գմբեթի պատերը փոխանցման համակարգով ստեղծված բոլորակից ետ էին դնում:

Եղեգնամորում այդ խնդիրն ստացել է բավական սրամիտ լուծում: Նրա գմբեթային ներքին բոլորակի ելրագծով տեղադրվել է ընդամենը ութ սյուն, որոնք երկուական հենվում են գմբեթակիր կամարներից յուրաքանչյուրի վրա, մինչ գմբեթային բոլորակն ստեղծող տրոմպների՝ առագաստների վրա, փաստորեն: Բեռնավորում չկա՝ խորշերով պայմանավորված դատարկություն է (գծ. 21):

Տվյալ կառուցելակերպը սկներն դրական դեր է խաղացել Եղեգնամորի գմբեթի երկարակեցության համար:

Այս և այլ հանգամանքներ նկատի առնելով հնարավոր է ամենահավանականը համարել Բանակ տաճարի գմբեթային մասի վերակազմության մեր կողմից առաջարկվող եր-

\* \* \*

Բանակ տաճարի վերակազմության առաջարկով հանդես է եկել նաև Ս. Մնացականյանը: Նա հուշարձանում չի եղել, հետևաբար այն չի չափագրել, տեղում չի հետապնդել կամ լուսանկարել. բնականորեն իր ասելիքը հիմնել է մասնագիտական գրականության էջերում առկա նյութերի վրա: Իր նոր աշխատությունների<sup>3</sup> Բանակին վերաբերող բաժինների սկզբում հեղինակը վերաքննում է Ս. Կղիաշվիլու և Ա. Կալգինի հայտնի վերակազմությունները, ինչպես և Դ. Բաքրաձեի, Ե. Թաղաիշվիլու և Գ. Չուբինաշվիլու հայացքները այդ տաճարի վերաբերյալ, մեծ մասամբ մերժում այդպիսիք, զուգընթացաբար շարադրում իր կարծիքները, ապա ներկայացնում է վերակազմական նոր գծագրեր, համապատասխան մեկնաբանություններով:

Ստորև Ս. Մնացականյանի վերոհիշյալ աշխատություններից քաղվածաբար ներկայացնում ենք Ս. Կղիաշվիլու և Ա. Կալգինի վերակազմությունների, ինչպես և մյուս հետապնդողների կարծիքների նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքն ու գնահատումները:

Ս. Կղիաշվիլին իր վերակազմության կտրվածքի գծագրում բոլորակ սրահը տաճարի առաջին աստիճանի սահմաններում պատկերել է երկհարկ: Ս. Մնացականյանը երկրորդ հարկի՝ այդ վերնահարկի գոյությունը ժխտում և իր «Звартноц» աշխատության 67-րդ էջում գրում է. «Во время обмеров храмов ни Клдиашвили, ни Кальгин не нашли следов галереи»: Ստացվում է, որ իբր Կղիաշվիլին տեղում վերնահարկի հետքեր անգամ չի տեսել, սակայն գծագրում ցույց է տվել վերնահարկ: Նա նույն աշխատության հայերեն տարբերակի 194-րդ էջում շարունակում է.

բորոգ տարբերակը, որ ստեղծվել է անմիջականորեն Եղեգնամորի գմբեթի օրինակով (գծ. 19բ), այն ընդհանուր առմամբ հիշեցնում է Եղվարդի և Իրինդի ութ խորանով տաճարների հատակաձևը (գծ. 42ա, 42բ), կառուցված նույնպես VII դարում:

3 С. Х. Мнацаканян. Звартноц, Москва, 1971, էջ 65—70:

Նաև՝ Ս. Ս. Մնացականյան. Չվարթոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջեր 188—199:



«Ինչ վերաբերում է վերակազմության նախագծին, ապա կանգ չառնելով առանձին անճշտությունների վրա, նշենք առավել հիմնականը՝ հսկայածավալ վերնահարկի առկայությունը, որը շրջանցում է ամբողջ կառուցվածքը և իր մեջ պարփակում կենտրոնական տետրակոնխը», «...Ս. Կղիաշվիլու նախագծում,— շարունակում է Ս. Մնացականյանը,— վերնահարկի տեղավորումը օղակաձև սրահի վրա արմատապես հակասում է Դ. Բաքրաձեի հիշատակության և ոչ մի կերպ չի կարող հիմնավորված համարվել»:

Արդ տեսնենք, թե ինչ է ասում տաճարի անցած դարի 90-ական թվականների ակնատես Դ. Բաքրաձեն, և արդյոք նրա ասածը հակասում է Կղիաշվիլու նախագծին՝ «Баня в три яруса, в каждом ярусе галлереи кругом». Ինչպես տեսնում ենք Կղիաշվիլու նախագծի վերնահարկը ժխտելու համար Դ. Բաքրաձեի վկայակոչումը Ս. Մնացականյանի կողմից ապարդյուն է, ոչ մի հակասություն Կղիաշվիլու գծագրի և Բաքրաձեի ասածների միջև:

Տաճարի առաջին աստիճանի բոլորակ սրահի, Ս. Կղիաշվիլու պատկերած վերնահարկի գոյությունը ժխտելու համար Ս. Մնացականյանը անդրադառնում է «համապատասխան սանդուղքների հետքերի բացակայությանը», տաճարի ներսի «վատ լուսավորվածությանը» և այլ հարցերի. այդ նա անում է ճշտորեն նույն տեսանկյունով և, գրեթե նույն արտահայտություններով, որպիսին նրա կողմից մեջ էին բերվում Չվարթնոցի վերնահարկի գոյությունը ժխտելու համար:

Չարմանալին այն է, որ վերնահարկի հարցը Ս. Մնացականյանի կողմից այսպիսի խոսակցության մեջ է ներքաշվում արհեստականորեն, ստեղծելով կեղծ հիմք իր ժխտողական տեսությունը շարադրելու համար:

Բանն այն է, որ սկզբնապես կառուցված տաճարը առաջին աստիճանի սահմաններում բոլորակ վերնահարկ, իրոք որ, չի ունեցել, այդ վաղուց հայտնի բան է, իսկ Ս. Կղիաշվիլու ժամանակներում արդեն ունեցել է: Ճարտարապետը տեղում ինչ տեսել, այն էլ իր գծագրերում արտահայտել է: Ըստ որում, այդ վերնահարկը առաջացել է հենց այն պատերի ավելացումով, որոնց մասին ինքը՝ Ս. Մնացականյանը նույն տեղում (էջ 193) գրում է. «Ռուս-թուրքական պատերազմների ժամանակ տաճարը վեր է ածվում իսկական ամրոցի, և նրա

առաջին հարկաբաժնի օղակաձև պատի վրա, ամբողջ երրագծով մի նոր, ոչ բարձր պատ է ավելացվում, որի մեջ և բացվում են հրացան արձակելու համար համապատասխան անցքեր: Տաճարը այս տեսքով, սակայն, արդեն առանց գմբեթի տեսնում է Ե. Վեյդենբաումը 1879 թվականին, որի նկարագրությունից դարձյալ պարզ է դառնում, որ տաճարը հենց սկզբից վերնահարկ չի ունեցել»:

Նկատենք, հետագայում ավելացված վերոհիշյալ պատերը միայն ունենց կարծիքով է, որ ստեղծված են ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, ավելի հավանական է, որ դրանք արգասիք են տաճարի ուշ միջնադարում կրած վերակառուցումների: Այս վերջին կարծիքին են բոլոր նրանք, ովքեր իրական են համարում Կղիաշվիլու կապնած կտրվածքը (համապատասխան վերափոխումներով) և պարբերաբար հրատարակում այն:

Հաստատապես ճիշտ չէ Ս. Մնացականյանը, որ իբր դրանք «ոչ բարձր պատեր են»: Ճիշտ հակառակը: Դրանք շատ բարձր պատեր են. ինչպես տեսնում ենք այս դարակկերում արված լուսանկարներում, այդ ավելացված պատերն ունեն գրեթե նույնպիսի բարձրություն, ինչպիսին ունեն սկզբնապես կառուցված տաճարի առաջին աստիճանի պատերը, որոնց վրա և բարձրացվել են դրանք: Նրանք ունեն այնպիսի բարձրություն, ինչպիսին անհրաժեշտ է եղել առաջին աստիճանի բոլորակ սրահի վրա վերնահարկ ունենալու համար: Եվ Ս. Կղիաշվիլին այդ ամենը ճշտորեն անդրադարձրել է իր վերակազմության գծագրերում:

Նկատենք նաև, որ այդ պատերում չկան Ս. Մնացականյանի նշած «հրացան արձակելու համար համապատասխան անցքեր»: Եթե այդ պատերը իրոք «հրացան արձակելու համար» լինեին, հարմարավետությունից ելնելով այդքան (ավելի քան ութ մետր) չէին բարձրացվի:

Վերոհիշյալ մեջբերումը լրիվ ճշտելու համար նկատենք, որ Վեյդենբաումը տաճարի այնպիսի նկարագրություն չի թողել, որից պարզ դառնար, թե «... տաճարը հենց սկզբից վերնահարկ չի ունեցել»: Վեյդենբաումի վկայակոչումը այդ առումով ևս ապարդյուն է, չէ որ մինչև այսօր էլ, համաձայն 1970 թվականի լուսանկարների, այդ վերնահարկի պատերը կան. ուրեմն այդպիսիք

տեսել են և Վեյդենբաունը (1879 թ.), և Բաքրա-  
ձեն (1891 թ.), և Կղիաշվիլին ու Թաղաիշվիլին  
(1902 թ.), և Կալգինն ու Թաղաիշվիլին (1907 թ.),  
ինչպես և մենք՝ բոլորս, արդեն լուսանկարներում  
(1970 թ.):

Այս հարցում հարկ չկա հակասություն տեսնել  
Ս. Կղիաշվիլու և Ա. Կալգինի վերակազմություն-  
ների միջև և մեկով ժխտել մյուսը, ինչպես այդ  
անում է Ս. Մնացականյանը, քանի որ նրանք՝  
երկուսն էլ ճիշտ են, քանի որ այդ վերակազմու-  
թյունները ստեղծված են ոչ թե «կոպիտ սխալնե-  
րի» առկայությամբ, այլ տարբեր դարաշրջանների  
համար, չէ որ Կալգինը իր գծագրերում ձգտել է  
ցույց տալ տաճարի պատկերը X դարում, և ոչ  
այն, ինչ եղել է XIX դարում, որը և պատկերել է  
Ս. Կղիաշվիլին:

Նման դեպքերում համեմատություններ կա-  
տարելիս ավելի քան անհրաժեշտ է հարցին անդ-  
րադառնալ պատմականորեն, նախօրոք ընկալե-  
լով կատարված աշխատանքի նպատակադրումը:

Ուրեմն՝ այն վերնահարկը, որը կա Ս. Կղիաշ-  
վիլու գծագրերում, ժխտել չի լինի: Այլ քան է  
ասելը, թե դա սկզբնապես կառուցված տաճարի  
ժամանակակիցը չէ, հետագայի հավելում է, այն-  
պիսի հավելում, ինչպիսիք հուշարձանում, ընդ-  
հանրապես կան:

Երբ այսպիսին է իրավիճակը, էլ ինչպե՞ս կա-  
րելի է գրել, թե «վերնահարկի հետքեր չեն տե-  
սել», թե «Վեյդենբաունի նկարագրություններում  
ժխտվում է» և նման անձտություններ: Այս պայ-  
մաններում հարմա՞ր է ավելի քան 70 տարի  
առաջ գործող (այժմ հանգուցյալ) ճարտարապե-  
տի մասին գրել, թե «...реконструкция Климаш-  
вили... не отвечает современному уровню изу-  
чения истории грузинской архитектуры»:

Իր աշխատության հաջորդ էջերում Ս. Մնացա-  
կանյանը անդրադառնում է Ա. Կալգինի վերակազ-  
մությանը, նրանում տեղ գտած «արհեստական,  
չհիմնավորված ենթադրություններ»-ին, «բռնա-  
պրստիկ», «հիմքում իրական... փաստարկ չունե-  
ցող» երևույթների բացահայտմանը:

Ա. Կալգինը, որ հնարավորություն է ունեցել  
անհամեմատ շատ ժամանակ հատկացնել Բանակ  
տաճարի չափագրմանը, մեզ է թողել արդեն  
սկզբնաղբյուրի նշանակություն ստացած գծագրեր:  
Ամենահետաքրքիրն այն է, որ այդ գծագրերի

մանրապնին համեմատությունը, ինչպես 1902,  
1907, այնպես էլ 1970 թվականների ընթացքում  
կատարված լուսանկարների հետ, մեզ բերում է  
համոզման, որ Ա. Կալգինի չափագրումները կա-  
տարված են հնարավոր ճշգրտությամբ: Այժմ ար-  
դեն ամբողջությամբ ավերված հուշարձանի 1970  
թվականի լուսանկարներում երևան են եկել տա-  
ճարի ներքին մանրամասներ, որոնք դեռևս 1907  
թվականի չափագրություններում ճշտորեն պատ-  
կերվել են բարեխիղճ գիտնական-չափագրողի  
կողմից: Այս հանգամանքը հնարավոր է դարձ-  
նում վստահորեն օգտագործել Ա. Կալգինի չափա-  
գրական նյութերը, ըմբռնողությամբ նայել նրա  
որոշ առաջարկներին և, որ կարևորն է, վուսալ լի-  
նել ու վերծ մնալ նրա աշխատանքների նկատ-  
մամբ անհարկի որակումների գործադրումից:

Ա. Կալգինի ներկայացրած թվով երրորդ հա-  
տակագիծը կազմված է տաճարի երկրորդ աստի-  
ճանի համար:

Հանաձայն Ա. Կալգինի, Բանակ տաճարը իր  
երկրորդ աստիճանի տահմաններում նույնպես  
եղել է բոլորակ՝ առաջին աստիճանի համեմատու-  
թյամբ, ավելի փոքր շառավղով, 28 նիստեր ունե-  
ցող թմբուկ:

Ս. Մնացականյանը անուշադիր քննարկվող  
հատակագծի՝ եռանկյունաձև սենյակների, գրեթե  
անսովոր պարագծեր ունենալու պատճառներին,  
դրանց ստեղծման ընթացքին, բացառում է տա-  
ճարի երկրորդ աստիճանի արտաքին թմբկապա-  
տի գոյությունը:

«Ի հակադրություն առաջին հարկաբաժնի,—  
գրում է Մնացականյանը,— որտեղ Կալգինը լի-  
վին հավատարիմ է մնացել իրականում գոյություն  
ունեցող ձևերին, վերին հարկաբաժիններում ցայ-  
տուն դրսևորվում է վարթնացատիպ հորինվածք  
ստանալու նրա ձգտումը<sup>1</sup>. մի հանգամանք, որը

<sup>1</sup> Այստեղ Ս. Մնացականյանը Ա. Կալգինին մեղա-  
դրում է «վարթնացատիպ հորինվածք ստանալու նրա  
ձգտման» մեջ, իսկ Ս. Կղիաշվիլուն և Գ. Չուբինաշվիլուն՝  
վարթնացատիպ հորինվածքից խուսափելու մեջ: Ինքն  
իրեն ամբողջությամբ հակասելով, մի էջում ասածը, մյուս  
էջում ասածով բացասելով, իր «Звартноц»-ի 70-րդ էջում  
գրում է «Искусственный отрыв объемно-пространствен-  
ной композиции храма Бана от однотипных с ним ре-  
шений Звартноца и Гагикашена не мог привести к  
хорошим результатам»:

հանգեցնում է մի շարք արհեստական, չհիմնավորված ենթադրությունների»: «Այդ ամենից առաջ վերաբերում է երկրորդ հարկաբաժնի ռոտոնդաձև հորինվածքին, որը, ինչպես դժվար չէ տեսնել, ստացվել է բռնապոսիկ կերպով և իր հիմքում ոչ մի իրական փաստարկ չունի»<sup>1</sup>:

Ընթերցողին հավատացնելու համար Ս. Մնացականյանը Ա. Կալզինի վերակալությունը հակադրում է նույն Ա. Կալզինի չափագրությունների հետ, ապարդյուն փորձում հակասություններ ցույց տալ նրանց միջև՝ «վերակալության նախագծում իրերի իրական դրությունը պատկերելու փոխարեն ռոտոնդաձև ելրանկար ստանալու համար,— գրում է Ս. Մնացականյանը,— Կալզինը կանգ չի առնում մի նոր, համեմատաբար ավելի մեծ շառավիղ ունեցող պատի գոյությունը ենթադրելու առջև և ներքին, թեև թույլ դրսևորված խաչաձև հորինվածքը պարփակում է աբսիդների ելուստներին համապատասխանող ռոտոնդաձև մի նոր պատով»<sup>2</sup>:

Ըստ Ս. Մնացականյանի, տաճարի երկրորդ աստիճանի սահմաններում արտաքին թմբկապատի մնացորդներ կամ հետքեր չեն եղել, որ իբր այդպիսիք Կալզինի չափագրություններում չեն անդրադարձել, մինչ նույն Կալզինի վերակալության գծագրերում կան, և դա նա արել է հանուն այն բանի, որ Բանակ տաճարը նմանվի Չվարթնոցին:

Այստեղ անվստահությունը Կալզինի նկատմամբ որպես գիտնականի, ակներև անսքող է: Անսքող է և այն, որ Ս. Մնացականյանը ընդհանուր առմամբ վարթնոցատիպ տաճարների երկրորդ աստիճանի հորինվածքի հարցում ի հայտ է բերում հիվանդագին նախապաշարում: Նա փորձում է ինչ ձևով էլ լինի, առանց միջոցների խըտրության ժխտել տաճարների այդ դրվագների արտաքին ընդհանուր թմբկաձևությունը, ենթադրելով այդպիսիք խաչաձև: Նույնն էլ ահա, նա անում է Բանակ տաճարի նկատմամբ:

Հիշենք, որ նախորդ էջերում լուսանկարների ընձեռած փաստացի տվյալներով պարզվեց, որ տաճարի երկրորդ աստիճանում Ա. Կալզինի պատկերած արտաքին բոլորակ պատը իրականում

եղել է և այդ հարցում ակներև սխալվում է Ս. Մնացականյանը:

Գմբեթի շուրջ սյունասրահ ենթադրելու և ցույց տալու համար Կալզինը հիմնվել է Դ. Բաքրաձեի վրա, թե «... ամեն մի յարուսում կար բոլորակ սրահ». ավելի կոնկրետ՝ «բուն գմբեթի շուրջը, նրա հիմքի բարձրության վրա, կամ եկեղեցու պատերի ավարտում (խաչաթևերի գմբեթարդ ծածկերից բարձր—Տ. Մ.) վերևով անցնում էր հին գալերեան՝ կապը վերին սենյակների միջև»:

Բաքրաձեի այս շատ կարևոր տեղեկությունը մեջ է բերում նաև Ս. Մնացականյանը, սակայն... անդամահատված՝ ոչ լրիվ, աղավաղված, փոփոխված, որպեսզի հնարավորություն ստանա իր նույն աշխատության 194-րդ էջում գրելու. «Այս տեղեկությունը բնավ կոնկրետ չէ ու դժվար է այդ հիման վրա ճարտարապետական որևէ էլեմենտ պատկերել»: Ինչպես տեսնում ենք ճարտարապետ Կալզինը չի դժվարացել և այդ հիման վրա «ճարտարապետական կոնկրետ էլեմենտ»՝ սյունասրահ է պատկերել:

Ս. Մնացականյանը Բանակ տաճարի երրորդ աստիճանի կալզինյան վերակալությունը անվերապահորեն մերժում է, նույն աշխատության 197 էջում գրելով, թե «Ստացվում է խիստ անհարիր, ոչ մի բանով չհիմնավորված լուծում, որը ոչ միայն խորթ էր վրացական ճարտարապետությանը, այլև անասելի դժվարություններ պետք է առաջացնե՞ր կոնստրուկտիվ տեսակետից»:

«Պարզ է դառնում,— շարունակում է Մնացականյանը,— որ բնավ չի կարելի համաձայնել տաճարի վերին մասերի այսպիսի վերակալության հետ, և արհեստական էլեմենտների օգտագործման միջոցով ստեղծված վարթնոցային ելրանկարը բնավ չի կարող հանգիչ լինել»:

Մի բան պետք է պարզ լինի, որ ճարտարապետության մեջ եզակի չեն դեպքերը, երբ բարդ և ունիկալ կառուցվածքներում առաջանում են ոչ անհրաժեշտ տարածություններ, ծավալներ, լրիվությամբ չօգտագործված մակերեսներ, որոնք ստեղծվել են կերտվածքի ներքին ու արտաքին հորինվածքը ճարտարապետական-գեղարվեստական առումով կատարյալ դարձնելու անհրաժեշտությամբ:

Եթե Հռիփսիմի կամ Գառնահովտի խորանների վերններում, եռանկյունի ձևկտոնների բարձրության վրա առկա են անօգտագործելի տարա-

<sup>1</sup> Ս. Ս. Մնացականյան, Չվարթնոցը և... էջ 196:

<sup>2</sup> Նույն տեղում:



ծույթուններ, այդ դեռ չի նշանակում, որ այդպիսիք անհրաժեշտաբար ստեղծվել են թաքստոցներ ունենալու, այնտեղ մեծաքանակ մարդկանց տեղավորելու համար: Այդ արվել է նախ և առաջ ճարտարապետական-գեղարվեստական նկատառումներով՝ ամբողջական շինության և նրա առանձին մասերի միջև, առանձին կանգնած կերտվածքի և շրջապատի ու բնության միջև ներդաշնակ հարաբերակցությունն ստեղծելու պահանջով:

Որքանով ճիշտ կլինեին կառուցողները, եթե Հռիփսիմեն, նաև Գառնահովիտը ստեղծեին ցածր համաչափություններով, ավելի գետնամած:

Մի՞թե միայն մեծաքանակ մարդկանց տեղավորելու շահերով պիտի բացատրել Հռոմի ս. Պետրոս տաճարի աշխարհում ամենաբարձր գմբեթ ունենալը:

Մի՞թե միայն մեծաքանակ մարդկանց գմբեթի շուրջը կուտակելու համար պետք է վերնասրահ ստեղծվեր Բանակ տաճարում: Եվ մի՞թե առօրյա պահանջներով ու կարիքներով պետք է բացատրել Չվարթնոց տաճարի եռաստիճան հորինվածքի առաջանալը:

Այս ամենը գնահատելու, թեկուզև լոկ հասկանալու համար ամենևին էլ անհրաժեշտ չէ տվյալ գործի մասնագետ լինելը:

Ինչպես նախորդ էջերում պարզվեց, Բանակ տաճարի գմբեթի շուրջը Ա. Կալգինի կողմից ցույց տրված վերնասրահը հավանական է և ճշմարտանման:

Նախքան իր վերակազմական առաջարկը ներկայացնելը, Ս. Մնացականյանը եզրակացնում է. «Այսպիսով, կարող ենք ասել, որ ներկայացված նախագծերից և ոչ մեկը չի կարող քիչ թե շատ համոզիչ համարվել, հատկապես վերնահարկի ոչ տրամաբանական պատկերման հետևանքով՝ վերնահարկերի մտացածին, ոչ տեկտոնիկական լուծումները չեն համոզում, ուստի այդ վերակազմությունների հիման վրա պատկերված տաճարը խորթ է նույն շրջանի վրացական ճարտարապետության մեջ մշակված լուծումներին»:

Ս. Կողիաշվիլու և Ա. Կալգինի մշակած Բանակ տաճարի վերակազմությունների Ս. Մնացականյանի գնահատման մեջ հնարավոր չէ չտեսնել, երբեմն մոլուցքի փոխարկվող ժխտման անառողջ ձգտում:

Մեր համոզմամբ, նոր վերակազմություն առա-

ջարկելու ցանկությունը կարող է նման չխրախուսվող, անխորհուրդ երևույթների առիթ չդառնալ, ինչպես և չխանգարել մինչ այդ կատարված դրական աշխատանքը ըստ արժանվույն գնահատելու համար:

\* \* \*

Բանակ տաճարի իր վերակազմությունը Ս. Մնացականյանը հրատարակել է 1971 թ. լույս ընծայած «ЗВАРТНО» աշխատության 65—70 և «Չվարթնոցը և նույնատիպ հուշարձանները» աշխատության 188—199 էջերում:

Հեղինակի կողմից ներկայացված են երեք հատակագծեր տաճարի երեք աստիճանների համար, կտրվածք, ճակատ (անկյունագծային ուղղությամբ) և ընդհանուր աքսոնոմետրիկ տեսքը:

Նախքան վերակազմությանը՝ գծագրերից յուրաքանչյուրի քննությանն անցնելը, նկատենք, որ հեղինակը՝ Ս. Մնացականյանը, իրեն ամենևին չի կաշկանդում հուշարձանի գոյություն ունեցող լուսանկարներով, ինչպես և Ա. Կալգինի կողմից կատարված եզակի և շատ արժեքավոր չափագրության ռեալ և հավաստի տվյալներով, անհարկի ապատ է պզուս այդպիսիք մշակելիս, դրանց հետ վարվում է այնպես, ինչպես ցանկանում է, թերևս՝ ինչպես իրեն անհրաժեշտ է:

Ստացվում է այնպես, որ տաճարի որոշ հանգույցներ շուրջ 1300 տարիների ընթացքում գոյություն են ունեցել մի կերպ, մի չափի, այժմ Ս. Մնացականյանի վերակազմական գծագրերում պատկերվում են մի այլ կերպ, այլ չափի և, ապա մեկնաբանվում տաճարի ու նրա ավերակի հետ առնչություն չունեցող դրույթների, տեսությունների հիման վրա:

Նպատակահարմարությունից ելնելով կոնկրետ օրինակները ստորև կբերվեն իրենց տեղում, գծագրերից ամեն մեկն առանձին նայելիս:

Ս. Մնացականյանի առաջարկած վերակազմությամբ տաճարը ընդհանուր հորինվածքով, հակառակ հեղինակի ցանկության, չի հեռանում Չվարթնոցի եզրապատկերից, այն եռաստիճան է, առաջին և երրորդ աստիճանները հիմքում բոլորակ են (ավելի ճիշտ՝ բոլորակին մոտեցող բազմանիստ), երկրորդ աստիճանը՝ թույլ արտահայտված խաչա-

ձև (Զվարթնոցում այս դրվագը նույնպես բոլորակ է, ըստ Մնացականյանի՝ դարձյալ խաչաձև) :

### ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Այստեղ խաչաձև դասավորված են տաճարի կենտրոնը կապավորող չորս խորանները, ստեղծված սյունակամարաշարով, արևելյանը՝ վեց, մյուսները՝ չորսական սյուներով (համապատասխանաբար յոթ և հինգ կամարաթռիչքներով) :

Խաչաթևերի միջև առկա են քառակուսի հիմքով աշտարականման ծավալներ, որոնց առաջին հարկերում ավանդատներ են, երկրորդ և երրորդ հարկերում՝ օթյակներ: Տաճարի այս կենտրոնը շրջանցում է բոլորաձև սրահը:

Այս հատակագիծը կապելու տվյալները հեղինակը, բնականաբար, վերցրել է Ա. Կալգինի չափագրություններից և հատակագծից:

Այժմ թվարկենք չափագրության ստույգ տրվյալներից կատարված այն շեղումները, որոնք առկա են Ս. Մնացականյանի վերակապնության այս հատակագծում:

1. Թե Կալգինի և թե Թորամանյանի չափագրություններում տաճարի առաջին աստիճանի արտաքին մեծ թմբկապատի 28 նիստերից չորսը, որ ընկած են հիմնական առանցքների վրա, մյուս 24 նիստերի համեմատությամբ, մոտ մեկ քառորդի չափով լայն են: Այդ լայն նիստերից հյուսիսայինի, հարավայինի և արևմտյանի վրա տաճարի շքամուտքերն են, դուրս եկած ծավալներով, արևելյանի վրա՝ կիսաշրջան աղոթասեղանի ծավալը: Այդ ծավալը առկա է նաև Կղիաշվիլու կապնած հատակագծում:

Ս. Մնացականյանի վերակապնության այժմ դիտվող հատակագծում, հակառակ չափագրության ճշգրիտ տվյալների, բոլոր 28 նիստերը միաչափ են:

2. Արևելակողմի կիսաբոլոր աղոթասեղանը թմբկապատից դուրս եկած ծավալով այս հատակագծում բացակայում է: Սա հետևանք է Ս. Մնացականյանի այն մտայնության ու համոզման, որ իբր Զվարթնոցի, ինչպես և Գագկաշենի արևելակողմի ծավալները այդ տաճարների օրգանական մասը չեն կապում, ուրեմն, — կարծում է նա, — այստեղ ևս կարելի է վերացնել այն:

Անառարկելի է, որ մուտքերի և արևելակողմի թմբկապատի հարթությունից դուրս եկած ծավալները ինչպես Զվարթնոցում, այնպես էլ Բանակ

տաճարում ունեն նաև խիստ կարևոր՝ կոնստրուկտիվ նշանակություն: Դրանք զգալի բարձրության հասնող, արտաքին թմբկապատի համար կառուցում են կոնտրֆորսի դեր:






Արևելակողմի ծավալի վերացումը միաժամանակ թուլացնում է մեծ թմբկապատի արևելակողմի հատվածի կայունությունը:

3. Տաճարի մեծ թմբկապատի դրսի հարթությունը պատած է եղել դեկորատիվ սյունակամարաշարով, որտեղ սյուները եղել են փոյգ-փոյգ: Այդ նույն թմբկապատի ներքին հարթությունը, բոլորակ սրահի ներսում, նույնպես պատած է եղել սյունաշարով, որտեղ սյուները եղել են ոչ փոյգ-փոյգ, այլ՝ մեկական: Ըստ որում, այդ սյուները վերևում միմյանց կապվել են մեկընդմեջ՝ կամարաղեղով — որտեղ պատուհան է, և անկյուն կապնող ձևավոր քարերով, որտեղ միջպատուհանային պատն է, այնպես, ինչպես Զվարթնոցում է:

Մեծ թմբկապատի ներքին հարթության այս հարդարանքը որոշակիորեն երևում է միայն ու միայն Թ. Թորամանյանի կապնած հատակագծում: Դրա գոյությունը ավերակում հաստատում է նաև Ն. Մառը: Դրանց, այդ հարդարանքի առանձին դրվագները՝ սյունների, կամարների և այլ մասերի մնացորդներ պահպանվել են արտաքին թմբկապատի հետագա հաստացումներում և երևան են եկել սկզբնապես կառուցված թմբկապատի կործանումից հետո: Ահա այս ոչ անկարևոր դրվագը Ս. Մնացականյանի վերակապնության առաջին հատակագծում չկա:

4. Ինչպես Կալգինի չափագրական նյութերում ու կապնած առաջին հատակագծում, այնպես էլ ավերակի լուսանկարներում առկա են առանձին կանգնած սյուներ, տաճարի առաջին աստիճանի բոլորակ սրահի սահմաններում, թվով վեց հատ, չհաշված այն երկուսը, որոնք նույնպես դուրս են գալիս բոլորակ սրահի մեջ, սակայն գտնվում են ավանդատների վերնահարկ օթյակների բարձրության վրա: Դրանցից մեկի մասին Ե. Թաղաիշվիլին հանգամանորեն խոսում է, նկարագրում սյան ականթաքանդակ խոյակը, բունը և նույնիսկ այն քարի կարծրության և որտեղից բերված լինելու մասին, որից պատրաստված է եղել սյան միակտոր բունը մոտ 2,72 մետր երկարությամբ:

Ս. Մնացականյանը յխտում է առանձին կանգնած սյունների գոյությունը Բանակ տաճարում և այդպիսիք, որպես չեղած բաներ, իր հատակա-



15(ա) Բանակ տաճարի առաջին, երկրորդ, երրորդ աստիճանների հատակագծեր, կտրվածք և ձևկառ (վերակազմություն Ս. Մուսգակյանի)



գծում ցույց չի տալիս: Դեռ ավելին, մեկ անգամ ևս առիթ է գտնում վատաբանելու Չվարթնոց կառուցողին, առանձին կանգնած արծվախոյակ սյուներ ստեղծելու համար, որ իբր դրանց թուլության շնորհիվ էլ տաճարը կործանվել է: Նա իր աշխատության 192-րդ էջում գրում է. «Այսպիսի լուծումը միաժամանակ հնարավորություն է տվել հրաժարվելու վվարթնոցատիպ տաճարների կառուցվածքային ոչ ուժեղ հանգույցներից, ինչպիսիք են առանձին կանգնած սյուները, և փոխարինելով դրանք կորագիծ պատերի առանձին հատվածներով...» և այլն:

Ս. Մնացականյանին երևի հայտնի չէ, որ միակտոր քարից կերտված սյան բունը ավելի մեծ կրողունակություն ունի, քան առանձին քարերով և կրաշաղախով շարված պատի պատ կանգնած ծայրը, ինչպես պատկերում է ինքը:

5. Ս. Կրիշավիլու և Ա. Կալգինի կողմից հայտնաբերված, չափագրված և իրենց վերակազմությունների առաջին հատակագծերում որոշակի պատկերված են սանդուղքներ, որոնք տեղավորված են եղել տաճարի արևելյան խորանի աջ և ձախ կողմերի հոծ պատերի ներսում: Այդ, բավական կանոնավոր սանդուղքներով բարձրացել են աշտարակաձև ծավալներում ամփոփված վերնահարկերը, այնտեղից էլ վերնասարահ-գմբեթի շուրջը: Ահա այս սանդուղքները Ս. Մնացականյանի կողմից վերացվել են և նրա ներկայացրած վերակազմության առաջին հատակագծում չկան, բացակայում են:

Այս, իհարկե պատահական «բացթողում» չէ: Վերակազմության հեղինակը դրանց գոյությունը «մոռանում» է, որ անարգել ժխտի ամեն մի վերնահարկի գոյություն, որոնց և ծառայել են այդ սանդուղքները:

Ս. Մնացականյանը Չվարթնոցի վերնահարկի գոյությունը ժխտելու համար առաջ է քաշում մի ինքնահնար տեսություն, որ իբր քրիստոնեական տաճարները արևելակողմում սանդուղքներ չեն հանդուրժում: Ահա այդ «տեսությունն» էլ անմիջականորեն փվում է նաև Բանակ տաճարի փաստով:

6. Տաճարի ներսում ավանդատները լուսանուտներ ունեն բոլոր կողմերից, նույնիսկ իրենց մուտքի դռների կողմից՝ նրանց գլխավերևում՝ բոլորակ ելրագծով: Այս ավանդատները շինու-

թյան ներսում են, դրա համար էլ լուսանուտներ են ստացել նաև հյուսիսից:

Ս. Մնացականյանի կազմած հատակագծում չորս լուսանուտ ունի միայն հարավ-արևելյան ավանդատունը, հյուսիս-արևելյանն ունի միայն հարավից և արևմուտքից, չունի՝ հյուսիսից և նույնիսկ արևելքից: Եվ եթե նախորդ հետալուսողները արևելակողմի երկու ավանդատների օրինակով չորսական լուսանուտներ են ցույց տվել նաև արևմտակողմի ավանդատներում, ապա Մնացականյանն էլ, իր ցանկությամբ ցույց է տվել միայն երկուական լուսանուտ: Նրա մոտ պակասում են գլխավորապես բոլորակ սրահի կողմից լուսի աղբյուր հանդիսացող լուսանուտները: Այստեղ տրամաբանությունը, ակներև, կաղում է:

Ա. Կալգինը տաճարի առաջին աստիճանի համար ներկայացրել է երկու հատակագիծ: Երկրորդ հատակագծում անդրադարձել են երկրորդ հարկի օթյակները: Այդպիսի հատակագիծ Ս. Մնացականյանը իր վերակազմության մեջ չի ներկայացրել:

#### ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Այս տիպի բոլոր տաճարներում, շինության երկրորդ աստիճանը ըստ Ս. Մնացականյանի, կարող է լինել միայն ու միայն խաչաձև, ինչ փույթ, թե տվյալ հուշարձաններում պահպանված մնացորդներով այդ չի հաստատվում, լինի դա Չվարթնոցը, թե՛ Գագկաշենը, Լյակիթը, թե՛ Գառնին (բոլորակ տաճարը): Հավանական է, հերթը կհասներ Խծկոնքի Սարգսի և Անիի Փրկչի բոլորակ եկեղեցիներին, եթե վերջիններիս երկրորդ աստիճանի բոլորակ թմբկապատերը պահպանվելիս չլինեին կանգուն և կիսով չափ կանգուն տաճարներում: Այժմ էլ ահա նախորդների բախտին է արժանանում Բանակ տաճարը:

Որպեսզի տաճարի երկրորդ աստիճանը պատկերվի հիմքում խաչաձև և ոչ թե բոլորակ, ինչպես չափագրել և վերակազմել է Ա. Կալգինը, Ս. Մնացականյանը որոշում է անիրական համարել խաչաթևերի գագաթների միջև ընկած, այդ բոլորականությունն ստեղծող արտաքին թմբկապատը, ցույց չտալով իր վերակազմության երկրորդ աստիճանի հատակագծում:

Որպես արվածի հետևանք, տաճարի չորս խորանների վերջավորությունները երկուական մետրի

չափով մնում են եռանկյունի սենյակների բոլորանիստ պատերից դուրս ցցված:

Քհարկե, եղել են ու կան բալլիկ, խաչաձև կենտրոնագմբեթ և այլ կերտվածքի եկեղեցիներ, որոնց խորանները որոշակիորեն դրսևորվում են շինության արտաքին ընդհանուր հորինվածքում, սակայն այդպիսիք բոլոր դեպքերում ունեն բնականոն ելքագծեր, ինչպես որ տեսնում ենք թե կանգուն, թե գծագրերով հայտնի հուշարձաններում: Դրանք լինում են հիմքում կիսաբոլորակ, եռանիստ, հնգանիստ, երբեմն՝ բազմանիստ թմբկաձև, երբեմն էլ ուղղանկյուն ծավալներով: Սակայն այն ձևով, ինչպիսին բերում է Ս. Մնացականյանը, ոչ կա, ոչ լինելու բան է: «Ենց ինքը՝ հատակագծի պատկերը ցույց է տալիս, որ խորանների զագաթները եղել են միացված մի ընդհանուր պատով, որը, սակայն, հեղինակի կողմից վերացվել է անկոծկելի թողնելով մեքենայաբար կատարվածի տխուր հետևանքները:

Տաճարի երկրորդ աստիճանը այս կերպ մշակելու համար Ս. Մնացականյանը հիմնվում է Դ. Բաքրաձեի այն արտահայտության վրա, որ «Թըմբուկն ուներ ոչ թե բոլորակ, այլ խաչաձև տեսք, չէ որ խաչի կիսաբոլորակ ճյուղը թմբուկից դուրս էր գալիս կիսաբոլորակով»:

Այժմ պետք է ենթադրել, որ Բաքրաձեի Բանակ տաճարում գտնված ժամանակ արդեն կործանված են եղել արտաքին թմբկապատի, խորանների միջև գտնվող հատվածները, իսկ էքսեդրների (սյունաշար խաչաթևերի) վերնամասի պատերը երեքական լուսամուտներով մնացել են ներքին թմբկապատից դուրս ցցված: Պետք է մտածել, որ Բաքրաձեն չի փորձել տաճարի սկզբնական տեսքը նկարագրել, նա այդ անելու հնարավորություն չի ունեցել, իր նշումներում թողել է այն, ինչ այդ ժամանակ տեսել է: Թերևս հենց դրանով էլ արժեքավոր են նրա օրագրային գրառումները:

«Ետաքրքիր է, որ Բաքրաձեի օրագրություններին կից տաճարի երկրորդ աստիճանի հատակաձևը ճշտորեն նմանվում է Կալգինի կապնած հատակագծին՝ եռանկյունաձև սենյակներ, բոլորակ արտաքին թմբկապատ և դրանց միջև՝ նեղ միջանցք: Եթե այսպես չլիներ, Բաքրաձեն չէր գրի, թե «...ամեն մի յարոսում կար բոլորակ սրահ»:

Ս. Մնացականյանի վերակազմությանը տաճարի երկրորդ աստիճանի հատակագծի անբնա-

կան, անօրգանական պատկերը, իրոք որ, արգասիք է արտաքին թմբկապատի կանխակալ նպատակներով վերացման:

Ա. Կալգինի չափագրական տվյալներից կատարված շեղումները, որ առկա են տաճարի Ս. Մնացականյանի վերակազմության երկրորդ աստիճանի հատակագծում, հետևյալներն են՝

1. Երրորդ հարկի եռանկյունաձև սենյակների երբեմնի **ներքին** բոլորանիստ պատերը խորանների դուրս ցցված պատերի հետ համատեղ, հանդես են գալիս որպես տաճարի այդ հատվածի **ձակատներ** ներկայացնող **արտաքին** պատեր:

2. Եռանկյունաձև սենյակների բոլորանիստ պատերը Կալգինի չափագրությամբ, իրենց մի մասում ավելի հաստ են, մյուս մասում՝ բարակ: Հաստ ու բարակի սահմանագիծը արտահայտված է հիշյալ պատերի արտաքին ելքագծի միջնամասում:

Ս. Մնացականյանի նայվող այս հատակագծում հիշյալ բոլորանիստ պատերի հաստ ու բարակ հատվածների տարբերությունները վերացվել, պատկերվել են մի հաստությամբ:

3. Եռանկյունաձև սենյակների բոլորանիստ պատերի վրա առկա մեկական բացվածքները Կալգինի չափագրությամբ գտնվում են ոչ թե անկյունագծերի վրա, այլ տեղաշարժված են տաճարի արևելյան կեսում՝ դեպի արևելք, արևմտյան կեսում՝ դեպի արևմուտք: Վերոհիշյալը կառուցողի կողմից, ակներև, արվել է այդ սենյակներում առկա, գմբեթային վերնահարկ բարձրացող սանդուղքների նպատակահարմար տեղադրման նպատակով:

Ս. Մնացականյանի ներկայացրած հատակագծում, այդ, հավանաբար, դռներ հանդիսացող բացվածքները, բերվել դրվել են անկյունագծի վրա, նպատակ ունենալով ինչ-որ չափով «կանոնավորել» հապարանյա տաճարում գոյատևած «անկանոնությունը»:

4. Ա. Կալգինի չափագրությամբ, վերևում նըշված եռանկյունաձև սենյակներում եղել են դեպի վերնասրահ բարձրացող կանոնավոր սանդուղքների մնացորդներ: Այդպիսիք պատկերված են տաճարի երկրորդ աստիճանի հատակագծում:

Ս. Մնացականյանի վերակազմության այդ հատակագծի եռանկյունի սենյակներում սանդուղքներ ցույց չեն տրված: Այդ, անկասկած, մոռացության հետևանք չէ: Տվյալ սանդուղքների

առկայությունը ընդունելու դեպքում Ս. Մնացականյանը չպիտի կարողանար ծխտել գմբեթային վերնասարսի գոյությունը: Եվ քանի որ նա չի ընդունում վերնասարսի երբեմնի գոյությունը, ամեն կերպ քողարկում է այն հաստատող փաստերի մնացորդները դեռևս նախավերջին՝ տաճարի երկրորդ աստիճանի սահմաններում:

Վերևում դիտված հարցի վերաբերյալ Գ. Չուբինաշվիլու աշխատություններում հանդիպում են միմյանցից սկզբունքորեն տարբեր պատկերացումներ: Մի դեպքում տաճարի երկրորդ աստիճանը, որ անվանվում է «միջին օղակ», ներկայացվում է բոլորակ թմբկապատի ձևով, երկրորդ դեպքում՝ խաչաձև, ստեղծված խորաններով և քառանկյունի սենյակներով, երրորդ դեպքում տաճարի առաջին և երկրորդ աստիճանները առնված մի ընդհանուր թմբուկի մեջ, ինչպես Ս. Կղիաշվիլու մոտ է և այլն:

Ս. Մնացականյանը անընդունելի է համարում այդ բոլորը և, նույնիսկ այն խաչաձև տարբերակը, որը մոտավորապես համընկնում է իր ասածին, ասված սակայն ավելի վաղ, շուրջ երեք և կես տասնամյակ առաջ: Այդ խաչաձևությունը նա ժըխտում է, ասելով թե «... X դարում... տաճարները սովորաբար պարփակվում էին ամբողջական եզրանկարներ ունեցող ծավալների մեջ...», ի՞նչ փոյթ, թե ինքն էլ է տաճարի այդ դրվագը պատկերում խաչաձև, թողնելով վերոհիշյալ թեպը՝ տաճարների պարփակումը «ամբողջական եզրագծեր ունեցող ծավալների մեջ»՝ VII դարին:

Այս նույն հարցին է վերաբերում սույն աշխատություններում վարմանալի առատությամբ սփռված հեղինակի հակասական դրույթներից մեկը, ահավասիկ նա իր 1971 թ. լույս ընծայած «Звартноц» աշխատության 63—69 էջերում գրում է.

«Поэтому нам кажется что Г. Н. Чубинашвили был несомненно прав, когда в 1937 году представлял храм Бана как гармоничное сочетание динамичных объемов, структура которых полностью отвечала внутреннему тетраконху и угловым помещениям».

Իր համոզումը հաստատող այս նույն հատվածը նա բերում է նույնպես 1971 թ. լույս ընծայած «Չվարթնոցը և նույնատիպ հուշարձանները» աշխատության 197 էջում, որոշ կրճա-

տումով և ինքն իրեն հակասելով անմիջապես ավելացնում է «թեև Չուբինաշվիլին չի բերում իր մտահանգումները պարզաբանող և ոչ մի գծագիր, այնուամենայնիվ դժվար չէ նկատել որ այդքան շարժուն, դինամիկ ձևերի առկայությունը X դարում, երբ տաճարները սովորաբար պարփակվում էին ամբողջական եզրանկարներ ունեցող ծավալների մեջ, չի կարող համոզիչ լինել»:

#### ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ՝ ԳՄԲԵԹԱՅԻՆ ՄԱՍԻ ՀԱՏԱԿԳԻԾԸ

Բանակ տաճարի բոլոր հետապոտողները, այդ թվում և Ս. Մնացականյանը գտնում են, որ այստեղ կենտրոնական քառակուսով բնորոշվող գմբեթի լայնական չափերը լայնանիստ տաճարի ներքնամասի համեմատությամբ շատ փոքր են և որ իրականում այն պետք է առավել լայն եղած լինի, իսկ այդ հնարավոր կարող էր լինել գմբեթի պատերը գմբեթատակ բոլորակի եզրերից ետ դնելու միջոցով:

1902, 1907 թվականներին՝ հուշարձանի ավերակում գմբեթից իր տեղում հետք չէր մնացել. այդ իսկ պատճառով և Ս. Կղիաշվիլին, և՛ Ա. Կալգինը իրենց վերակազմություններում գմբեթային մասը ցույց էին տվել իրենց պատկերացումների ձևով, գոյությունը պահպանած այլ տաճարների գմբեթների նմանողությամբ: Այս ընդունված ձև է և մեր օրերում չի վիճարկվում:

Կարևորն այն էր, որ վերակազմությունների հեղինակները կարողանային առաջարկել տաճարի գմբեթային մասի այնպիսի նախագիծ, որը համապատասխաներ հուշարձանի պահպանված մասի չափագրական տվյալներին, ինչպես իր չափային, այնպես էլ ոճական, ճարտարապետական-գեղարվեստական մշակմամբ ու պատկերավորումով օրգանապես կապվեր տաճարի ներքնամասի հետ և, ինչպես լավագույն կենտրոնագմբեթ տաճարներում է, հանդիսանար ամբողջական, խերղաշնակ հորինվածքի գլխավորողը, համարժեք ներքնամասի վսեմ բարեմասնություններին:

Նման պահանջներ բավարարող առաջարկներ կարող էին մեկից ավելի լինել, սակայն արմատապես տարբերվել միմյանցից, չէին կարող:

Պարզվում է, որ Ա. Կալգինը տվյալ խնդիրը լուծելիս եղել է ավելի համարձակ, գտել է ինք-



նատիպ և, ինչ-որ չափով հավանական լուծում: Այդ ձևով, կամ դրան մոտեցող ձևով միայն հնարավոր է ստանալ ավելի լայն գմբեթ: Այդ ձևով միայն հնարավոր է «գմբեթի շուրջը» ունենալ սրահ, ինչպես հիշատակում է Դ. Բաքրաձեն:

Եթե Ա. Կալգինի գմբեթային մասի վերակազմությունը իր արտաքին պատկերով, մանրամասների մասշտաբայնությամբ հնարավոր չէ համարել հաջողված, ապա ընդհանուր չափերով, ներքին կազմության սրամիտ լուծմամբ հարապատ ու ճամառնչուն է տաճարի ներքնամասի ձևերին, արդարացվում է նպատակային և առօրեական պահանջների բավարարման առումով, և որ կարևորն է, հավատ է ներշնչում, որ թերևս այդպիսին, կամ մոտավորապես այդպիսին եղած լինի երբեմնի կանգուն տաճարի երրորդ աստիճանը՝ տաճարը պսակող գմբեթը:

Որ Ս. Կղիաշվիլու վերակազմությամբ տաճարի գմբեթը շատ փոքր է, և ավելի փոքր լինել չէր կարող, հասկանալի է, սակայն անհասկանալի է այն, որ Ս. Մնացականյանը Ս. Կղիաշվիլու վերակազմության անողոք քննադատությունից հետո, իր վերակազմությամբ տաճարին գմբեթ է վերագրում, որն իր լայնական չափերով Կղիաշվիլու գմբեթից չի տարբերվում: Որ, իրոք, այդ այդպես է, հնարավոր է լիովին համոզվել Ս. Մնացականյանի ներկայացրած գծագրերից տաճարի ձևկատի գծագիրը և աքսոնոմետրիկ տեսքը դիտելով:

Համաձայն Գ. Չուբինաշվիլու, Բանակ տաճարի գմբեթում եղել է չորս պատուհան, Ս. Կղիաշվիլու վերակազմությամբ պատուհանների թիվը հասել է ութի, Ս. Մնացականյանի վերակազմությամբ՝ տասներկուսի, Ա. Կալգինի վերակազմությամբ՝ քսանչորսի:

#### ԱՍՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔԸ

Կտրվածքը վերակազմության ամենակարևոր գծագրերից է: Նրանում միաժամանակ երևան են գալիս շինության ինչպես ներքին տարածության, այնպես էլ արտաքին ծավալային հորինվածքի ընդհանուր պարագծերը, և մեծ թվով մանրամասներ, հայտնի են դառնում ներքին կազմության և ողջ կառուցվածքի կոնստրուկտիվ ու տեկտոնիկ լուծումները, առանձին մասե-

րի չափային ու աշխատանքային փոխհարաբերությունները, այլ և այլ բավարարիչ հարցեր:

Տաճարի երրորդ աստիճանի հատակագիծը նայելիս պարզվում է, որ Ս. Մնացականյանը Կղիաշվիլու և Չուբինաշվիլու նման գմբեթը ենթադրում և պատկերում է շատ փոքր չափերի: Դեռ ավելին, ինչպես տեսնում ենք կտրվածքի գծագրում, նա գմբեթի ներսում, վերջինիս հիմքի բարձրության վրա ցույց է տալիս պատշգամբի տեսք ունեցող բոլորակ հարթակ, որով և ավելի է փոքրացնում գմբեթատակ բոլորակը: Այդ ամենով նա դիտողին վերջնականապես կրկում է մեծ բարձրության վրա գտնվող, առանց այն էլ խիստ փոքր գմբեթը իր ամբողջությամբ տեսելու հնարավորությունից:

Վերակազմության կտրվածքի հեղինակը այս ամենի հիմնավորման համար վկայակոչում է Դ. Բաքրաձեի հիշատակությունը «գմբեթի շուրջը» բոլորակ սրահ լինելու վերաբերյալ, փորձելով համոզել, որ իբր նրա խոսքը վերաբերում է «գմբեթի ներսում», Հռիփսիմեի օրինակով, երբեմնի գոյություն ունեցած ոչ լայն բոլորակ հարթակին:

Իր այդ ձևի վերակազմության համար Ս. Մնացականյանը չունի որևէ իրական հիմք և, որ ամենակարևորն է, գմբեթի ներսի ենթադրյալ բոլորակ հարթակից բավական հեռու գտնվող եռանկյունաձև սենյակներից բարձրանալով դուրս գալ հիշյալ հարթակը, ֆիզիկապես հնարավոր չէ:

Եվ վերջապես պետք է հավատալ, ավելի ճիշտ՝ համոզված լինել, որ Դ. Բաքրաձեն ի վիճակի էր միմյանցից տարբերել երկու պարզ հասկացողություն, թե, ի՞նչ է նշանակում «սրահ գմբեթի շուրջը» և ինչ՝ «հարթակ գմբեթի ներսում»:

Արդ, ինչպե՞ս կարելի է 70—80 տարի անց նոթագրությունների հեղինակին այլ բան վերագրել, նրա, առանց այն էլ որոշակի շարադրած մտքերը ցանկացած ձևով խմբագրել, մեկնաբանել ուլած ձևով:

Տաճարի առաջին և երկրորդ աստիճանների սահմաններում Ս. Մնացականյանի ներկայացրած կտրվածքը ընդհանուր առմամբ միայն համապատասխանում է Ա. Կալգինի վերակազմության կտրվածքի գծագրին: Նրանում եղած շեղումները չափագրական տվյալներից, որ կըթվարկվեն ստորև, վերաբերում են հենց առաջին և

երկրորդ աստիճաններին, քանի որ 1907 թվականին դեռևս կանգուն է եղել և չափագրվել է տաճարի արևելյան հատվածը առաջին և երկրորդ աստիճանների սահմաններում միայն:

Ահա այդ շեղումները և բացթողումները.

1. Կտրվածքում բացակայում են շքամուտքերի ծավալները, որպիսիք կան առաջին աստիճանի հատակագծում և ճակատի գծագրում:

2. Առաջին աստիճանի շրջանց սրահի ներսում ցույց չի տրված արտաքին թմբկապատի ներքին հարթության հարդարանքը դեկորատիվ սյունակամարաշարի ձևով: Այս հետևանք է այն բանի, որ կտրվածքի գծագիրը կապելիս հավաստի չի համարել դրանց անդրադարձումը Թորամանյանի ներկայացրած հատակագծում: Հետագայում, Ն. Մառի նյութերում հանդիպելով համապատասխան նկարագրությունների, իր վերակազմության տեքստային մասում հիշատակում է այդ հարդարանքի գոյության մասին, չլրացնելով սակայն կտրվածքի պակասը:

3. Կտրվածքի գծագրում մեծ քանակ են կապում թվային անհամապատասխանությունները, ահավասիկ՝

ա) Հանաձայն չափագրության գմբեթակիր մույթերն ունեն մեկ մետր տրամագիծ: Մնացականյանի մոտ այդ չափը հալիվ հասնում է կես մետրի:

բ) Առաջին թմբկապատի պատուհանները, հանաձայն չափագրության տրված են 3,7 մետր բարձրության վրա: Ս. Մնացականյանի կտրվածքում այդ չափը 3,5 մետր է (մոտ է չափագրության թվին), մինչդեռ ճակատի գծագրում դառնում է 2,7 մետր:

գ) Այդ պատուհանների բարձրությունը հանաձայն չափագրության 2,5 մետր է, հանաձայն Ս. Մնացականյանի կտրվածքի՝ 3,0 մետր, հանաձայն ճակատի գծագրի՝ 4,0 մետր:

դ) Տաճարի երկրորդ աստիճանի պատուհանների բարձրությունը կտրվածքում 1,9 մետր է, ճակատի գծագրում՝ 3,0 մետր:

ե) Գմբեթակիր կամարները չափագրության և լուսանկարների հանաձայն գմբեթակիր մույթերի խոյակների վրա նստում են մույթի ելրագծից կես տրամագծաչափով հետ. Ս. Մնացականյանի կտրվածքում կամարները մույթերի ելրագծերի շարունակությունն են:

Ա. Կալգինի հատակագծերում և կտրվածքում

առկա արտաքին թմբկապատի հաստացումները բոլորակ սրահի կողմից, որ բացակայում են Ս. Մնացականյանի գծագրերում, շեղում չի դիտվում, քանի որ դրանք արգասիք են հետագա վերակառուցումների:

## ՃԱԿԱՍԸ

Ս. Մնացականյանի վերակազմությանը տաճարի ճակատի գծագիրը ներկայացնում է հուշարձանի անկյունագծային տեսքը: Այս երևույթն ինքնին անսխաղեպ լինելով հանդերձ. պատահականության արդյունք չէ:

Բանն այն է, որ այդ վերակազմությանը գլխավոր առանցքների ուղղությամբ տաճարի արտաքին պատկերն ստացվում է անհրապույր, անսպասելի ու անբնական, դրա համար էլ վերակազմության հեղինակը բարվոք է համարել դրանք չպատկերել:

Այս իրավիճակի պատճառը Ս. Մնացականյանի վերակազմության բուն էության մեջ է. ըստ նրա իբր Չվարթնոցում և Վվարթնոցատիպ (և որոշ դեպքերում, նույնիսկ ոչ Վվարթնոցատիպ) տաճարներում, դրանց թվում և Բանակ տաճարում շինության երկրորդ աստիճանը կարող է լինել միայն և միայն խաչաձև, ինչպիսին մեր խաչաձև եկեղեցիներն են:

Այսպիսի համոզումն ինքնին ցույց է տալիս, որ Վվարթնոցատիպ տաճարների ինքնօրինակ լինելը, արմատական տարբերությունը աշխարհում գոյություն ունեցող այն տաճարներից, որ հաճախ վկայաբերում է սույն վերակազմության հեղինակը, որպես Վվարթնոցատիպ տաճարներ, կամ Չվարթնոցի նախօրինակ, Ս. Մնացականյանի համար, մնացել են չըմբռնված:


Տաճարի երկրորդ աստիճանի հատակագիծը նայելիս նշվեց, որ վերակազմության հեղինակի կողմից արտաքին թմբկապատի անիրական համարելը և գծագրում ցույց չտալը, հետևանք է խնդրի լուծման մեխանիկական մոտեցման: Արդ պարզենք, թե հուշարձանի այդ անբնական անդամահատումը ինչ ձևով է արտահայտվել ճակատի գծագրում:

Տաճարի երկրորդ աստիճանի սահմաններում ճակատը կազմավորում են չորս եռանկյունաձև սենյակների բոլորանիստ պատերը և նրանցից դուրս ցցված չորս խորանների վերջավորու-

22. Իշխան տաճարի հարավ-արևմտակողմի  
գմբեթակիր մույթի խոյակ




23. Իշխան տաճարի հյուսիս-արևմտակողմի  
գմբեթակիր մույթի խոյակ









24. Իշխան տաճարի արևմտյան թևի հարավային պատի ներքին տեսքը:



25. Իշխանի փոքր եկեղեցին հյուսիս-արևմտակողմից



26. Բանակ տաճարի ավերակը հյուսիս-արևելակողմից



27. Բանակ տաճարի աշտման տեսքը  
(1970 թ.) արևելակողմից




28. Բանակ տաճարի աշտման տեսքը  
հյուսիս արևմտակողմից (1970 թ.)






29. Բանակ տաճարի արևմտյան ճակատ (վերակազմություն Ա. Կալցինի)

30. Բանակ տաճարի ավերակի հյուսիս-արևելյան հատվածի ընդհանուր տեսքը





31. Բանակ տաճարի առաջին աստիճանի դրվագ ավերակ վիճակում




32. Բանակ տաճարի առաջին աստիճանի թմբկապատի արտաքին քանդակագոտու դրվագ ղեկորատիվ կամարաշարի անտրիվոլում



33. Բանակ տաճարի ավերակի հարավ-արևելյան հատվածի ընդհանուր տեսքը (1970 թ.)






34. Բանակ տաճարի ավերակի հարավ-արևմտյան հատվածի ընդհանուր տեսքը



35. Բանակ տաճարի արևմտակողմի ճակտոնով մուտքի հետքեր քանդակազարդ կամարի ներսում



36. Բանակ տաճարի արևելյան խորանի ներքին տեսքը



37. Բանակ տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը



38. Բանակ տաճարի արևելյան խորանի ձախ վերնամասը






39. Բանակ տաճարի արևելյան խորանի գմբեթարդ վերնամասի ներքին տեսքը




49. Բանակ տաճարի ներքին վերնահարկ օթյակը հյուսիս-արևելյան աշտարականման ծավալի երկրորդ հարկաբաժնում




41. Բանակ տաճարի ներքին վերահարկ օթյակ հարավ-արևելյան աշտարականման ծավալի երկրորդ հարկաբաժնում







42. Բանակ տաճարի արևելյան խորանի սյունակամարաշար



43. Բանակ տաճարի բոլորակ սրահի հյուսիս-արևելյան հատվածի ներքին տեսքը



44. Բանակ տաճարի առաջին աստիճանի թմբկաշարի հետագա հաստացումը կամարափակ պատի ձևով, տեսքը բոլորակ սրահի ներսից



45. Բանակ տաճարի հյուսիս-արևելյան կողմի առանձին կանգնած աղանթախոյակ մույթի վրա բարձրացած կամարները և կամարաթռիչքներից մեկի գոցվելը խուլ պատով



թյունները երեքական պատուհանների բացվածքներով:

Հիմնական առանցքների ուղղությամբ նայելիս, ճակատի կենտրոնում պատկերվում է խորաններից որևէ մեկի երեք պատուհաններով պատը, նրա երկու կողմերում՝ եռանկյունի սենյակների, գրեթե խուլ ու անձևակերպ պատերը, երկու ծայրերում՝ երկու խորանների երկուական մետր դուրս ցցված ծավալների նույնպես խուլ կողային պատերը: Ըստ որում, տանիքի թեքության հետևանքով ճակատի կենտրոնական մասն ու երկու ծայրերը ցածր են, հիշյալ խուլ պատերը՝ բարձր:

Տաճարի այդ դրվագը անկյունային ուղղությամբ նայելիս, ճակատի կենտրոնում պատկերվում է եռանկյունաձև սենյակներից որևէ մեկի բոլորանիստ խուլ պատը, երկու կողմերում՝ խորաններից երկուսի դուրս ցցված վերջավորությունները երեքական պատուհաններով: Այս դեպքում էլ խորանների վերջավորությունը հանդիսացող պատերը ստացվում են ցածր, կենտրոնում գտնվող խուլ պատը՝ բարձր: Ահա այս վերջին ձևով է ներկայացված ճակատի գծագիրը Ս. Մնացականյանի վերակազմության նախագծում:

Եռանկյունի սենյակների մեր կողմից «խուլ» անվանված պատերի վրա առկա է մեկական պատուհան, որ չափագրության համաձայն առանցքային գծից շեղված է, սակայն Մնացականյանը բերել է առանցքային դիրքի: Այդ նույն «խուլ» պատի երկու կեսերը տարբեր հաստությունների պատճառով իրենց սահմանագծում, որտեղ Մնացականյանը տեղադրել է միակ պատուհանը, ունեն բեկվածք, որը, սակայն, վերակազմության հեղինակը ճակատի գծագրի վրա ցույց չի տվել:

Լուսանկարների օգնությամբ հնարավոր է դառնում պարզել, որ այդ «խուլ» պատերը խորանների վերջավորությունների համեմատությամբ անմշակ են:

Ճակատային պատը տաճարի երկրորդ աստիճանի սահմաններում իր ճարտարապետական պլաստիկ մշակմամբ ընդհանուր ոչինչ չունի տաճարի առաջին աստիճանի թմբկապատի հետ: Դրանք բոլորովին տարբեր բաներ են և համեմատվելու ենթակա չեն:

Այս ամենը բերում է մեկ եզրակացության, որ վերակազմության հեղինակը արմատական սխալ

է գործում տաճարի երկրորդ աստիճանում այնտաքին բոլորակ թմբկապատը անիրական համարելով և այդպիսին փոխարինելով եռանկյունաձև սենյակների բոլորանիստ պատերով, որոնց մշակվածությունը բավարար լինելով տաճարի ներսում, ինչ-որ երկրորդական միջանցքում, ակներև անբավարար, նույնիսկ անըմբռնելի է այսպիսի տաճարում, արտաքին պատին փոխարինելու համար:

Ս. Մնացականյանի վերակազմությամբ տաճարի երրորդ աստիճանի՝ գմբեթային մասի ճակատը պատկերված է թմբկաձև, տասներկու նիստերով: Այստեղ նիստերի ձգվածությունը գմբեթաթմբուկին դուրս է դնում տաճարի ներքնամասում առկա մասշտաբից: Այդ արդյունք է այն բանի, որ հեղինակը նախորդ վերակազմություններից տարբերվելու ձգտումով, նույնը թողնելով գմբեթի տրամագծաչափը, ավելացրել է պատուհանների, իմա, նիստերի թիվը՝ չորսի և ութի փոխարեն, ընդունել՝ տասներկուսը: Տվյալ տրամագծով գմբեթաթմբուկի համար ավելի նախընտրելի է չորս կամ ութ պատուհան, այսինքն՝ ութ նիստ, ինչպիսիք առկա են Ս. Կղիաշվիլու և Գ. Չուբինաշվիլու առաջարկներում:

Այս վերակազմությամբ գմբեթաթմբուկի նիստերի բարձրությունը լայնքից մեծ է 2,5 անգամ: Տաճարի առաջին թմբկապատում նիստերի բարձրությունը լայնքից մեծ է 2 անգամ: Այդ նիստերի ձգվածությունը մեղմելու հոգսը վերակազմողին ստիպել է պատուհանների բացվածքները աննախադեպ բարձրացնել, որի հետևանքով էլ դրանց տեղը, բարձրության առումով, մնացել է անորոշ: Դեռ ավելին, նա զրկվել է տաճարի գմբեթաթմբուկը դեկորատիվ այունականարաշարով պատելու հնարավորությունից, թեպետ և տեքստում այդպիսի հարդարանքի հնարավորությունը այստեղ, ինչպես և տաճարի երկրորդ աստիճանում համարում է հավանական: Եթե այնուամենայնիվ նա փորձեր այդ անել, գմբեթաթմբուկի և նրա հարդարանքի անմասշտաբայնությունը, առավել ևս մի այլ քայլով մշակված առաջին թմբկապատի հարևանությամբ, կլիներ առավել ակներև: Դրանով միայն պետք է բացատրել, որ նա այդպիսի քայլ անել չի հանդուրժել:

Ս. Մնացականյանի վերակազմության ճակատը ներկայացնող պատկերում ոչ մի միասնություն, մասերի ոչ մի ընդհանրություն չկա: Իրա-

բամբերժ դրվագներ են տաճարի երեք աստիճաններից յուրաքանչյուրը: Եվ եթե տաճարի առաջին աստիճանը, որ իրական է, ինչպես տեսնում ենք, բազմաթիվ լուսանկարներում, օժտված է յուրօրինակ արժանիքներով, առատորեն շնորհված մեծատաղանդ ճարտարապետի կողմից, ապա այս վերակազմությամբ տաճարի վերին երկու աստիճանները պուրկ են ամենաչնչին բարեմասնություններից: Դրանով էլ դրանք անհամատեղելի են տաճարի գոյությանը, դեռևս թեկուզև ավերակ վիճակում պահպանված ներքնամասի հետ:

Անկախ նրանից, որ Ա. Կալզինի չափագրությունները հատկապես տաճարի առաջին աստիճանի սահմաններում ստույգ են, այդ են հավաստում նաև լուսանկարները, այնուամենայնիվ, նոր վերակազմության հեղինակը անհրաժեշտ է համարել շեղվել այդ տվյալներից, տաճարի նաև այդ աստիճանը իրականի համեմատությամբ պատկերել աղավաղելու աստիճան տարբեր: Ահավասիկ՝ լուսանկարի համաձայն մեծ թմբկապատի դեկորատիվ սյունակամարաշարի վերևում առկա պատը, մինչև պասկագոտին, ստեղծված է չորս-չորսուկես շարքից, ավելի քան երկու մետր բարձրությամբ: Այդ չափը Ս. Մնացականյանի վերակազմության ճակատի գծագրում ցույց է տրված 0,8 մետր:

Բանն այն է, որ իր պլաստիկ մշակմամբ այդ պատը, ինչպես և Չվարթնոցում, ըստ բարձրության մի նեղ գոտով բաժանվում է երկուսի. պատի ստորին, ավելի բարձր մասը պատած է դեկորատիվ սյունակամարաշարով, իսկ վերին մասը հարթ պատ է. այդ պատի վրա Չվարթնոցում տեղադրված են վերնահարկի բոլորակ լուսամուտները, Բանակ տաճարում, այդ նույն տեղում նման լուսամուտներ չկան, այդտեղ հիմքում բոլորաձև վերնահարկ չլինելու պատճառով:

Ս. Մնացականյանի մշակած ճակատում սյունակամարաշարը բարձրացվել, հարթ պատը գրեթե վերացվել՝ վեր է ածվել պասկագոտուն (քիվին) ենթակա ժապավենի, դրանով իսկ պրկել ճարտարապետի իմաստուն մտահղացումը տվյալ, ոչ անկարևոր դրվագի գեղարվեստական մշակման բովանդակությունից:

Տաճարի առաջին թմբկապատի չորս լայն նիստերից արևմտյանի լուսանկարում պարզ երևում է, թե ինչպես է ջքամուտքի ծավալը հպվել նիստին և ինչ չափեր է ունեցել: Ս. Մնացականյանը,

անուշադիր այդ պատկերին, յոթ մետր բարձրության ծավալով ամբողջությամբ ծածկել է միջկամարային տարածությունը:

#### ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ե. Թաղաիշվիլին և էլի ոմանք անվերապահորեն ընդունելով պատմաբան Դավթի որդի Սումբաթի տեղեկությունը, որ «... այդ Ադրնեքսեից... Բանան կառուցեց Կյուրիկե Բանելու ձեռքով, որը եղավ Բանայի առաջին եպիսկոպոսը», ելրակացնում են, որ տաճարը կառուցվել է 888—923 թվականների միջև՝ Ադրնեքսեի թագավորության տարիներին:

Գ. Չուբինաշվիլու կարծիքով Սումբաթի տեղեկությունները պետք է վերագրել տաճարի ոչ թե կառուցմանը, այլ վերակառուցմանը՝ «երկրորդ կառուցմանը», իսկ տաճարը սկզբնապես կառուցվել է VII դարում:

Ս. Մնացականյանը այս հարցում ընդունում է Ե. Թաղաիշվիլու կարծիքը, մերժում Չուբինաշվիլուն, գրելով, թե նա «...Դժբախտաբար չի փորձում նույնիսկ հիմնավորել իր դրույթները, մինչդեռ մեկ հետաքրքրող տաճարի ճարտարապետական ձևերը անվերապահորեն վկայում են, որ այն կառուցվել է X դարում»<sup>1</sup>:

Բանն այն է, որ Բանակ տաճարը հետապոտոդներից, հատկապես նրա կառուցման ժամանակը որոշելիս միայն և միայն Գ. Չուբինաշվիլին է, որ իր ելրակացությունները հիմնում է բուն տաճարի ընդհանուր հորինվածքի և ճարտարապետական ձևերի ուսումնասիրության վրա: Հետաքրքիր է, որ Հ. Ստրժիգովսկին նույնպես այդ տաճարը հին է համարում, նա գրում է. «... կարելի է մտածել, որ այդ բոլոր խոյակները 900-ական թվականներից անհամեմատ հին են»:

Գ. Չուբինաշվիլին հանգամանորեն ծանոթանալով տաճարի մանրամասներին, ժամանակի առումով անմիջական, և հավաստի հարևանություն է տեսնում սրա և Չվարթնոցի միջև: Մինչ Ս. Մնացականյանը առաջնորդվում է լոկ հայտաբարություններով, հիմնված իր իսկ կողմից կողք-կողքի բերված անվերջ, վարմանք շարժող հակասությունների, ինքնահնար, ինքնաստեղծ, անհիմն տեսությունների և «կանոնական բանաձևերի» վրա:

Ահավասիկ ստորև նկարագրվող մի իրավիճակ,

<sup>1</sup> Ս. Խ. Մնացականյան, Չվարթնոցը և... էջ 189:

նիի պարզ վերլուծությամբ Բանակ տաճարի սկզբնական կառուցման ժամանակը անհերքելիորեն գնում է VII դար:

Հրապարակի վրա եղած մի շարք լուսանկարներով պարզվում է, որ տաճարի մեծ թմբկապատի հյուսիս-արևելյան հատվածը չորս նիստերի սահմանում, նույն թմբկապատի հարավ-արևելյան հատվածի համեմատությամբ մշակման ընթացքում գործադրած ճարտարապետական ձևերով այլ է, և նույնիսկ ոճական այլ արտահայտություն ունի, և որ կարևորն է, անվրեպ հնից է գալիս՝ կրկնում է Չվարթնոցի ձևերը, հատկապես՝ մանրամասները:

Արդ, եթե տաճարում իրագործված բավական մեծ չափերի վերակառուցումները տաճարի հարավ-արևելյան և հարավ-արևմտյան մասերում իրավացիորեն վերագրում են Ադրնեբսեհի ժամանակներին, նրա օրոք (888—923) կառուցող Կյուրիկեին, ապա տաճարի հյուսիս-արևելյան հատվածը պետք է ժամանակով նախորդած լինի նրան: Հայտնի է, որ Խորագույն Հայքը VIII—IX դարերում ենթակա էր արաբների տիրապետությանը, ավերվածություններին: Հետևում է, որ բավական մեծ չափեր ունեցող տաճարը չէր կարող կառուցվել այդ դարերում, նա պետք է որ կառուցված լիներ նախքան արաբների ներխուժումը՝ VII դարում:

Բոլորովին անհիմն է Ս. Մնացականյանի այն կարծիքը «...որ հապիվ թե շատ ժամանակ էր անցել տաճարի ավարտումից, երբ անհրաժեշտություն պահանջվեց... վերակառուցման»: Այսպես լինելու դեպքում վերակառուցումը կկրեր նույնի վերականգնման բնույթ՝ կպաշտպանվեր թմբկապատի արտաքին պլաստիկ մշակումը, իրենց ուժը կպաշտպանեին ճարտարապետական ձևերը, գոտիների և կամարների կողադեմը կմնար նույնը, քանդակագոտին չէր վերանա և այլն: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք լուսանկարներում, նույն թմբկապատի տարբեր հատվածների մշակումը տարբեր է. դրանք տարբեր ժամանակներ և հայացքներ են բնորոշում: Դրանց միջև ոչ թե տասնամյակների, այլ հարյուրամյակների տարածություն է տեղավորված:

Ճշմարիտ են և Թաղաիշվիլին, և Չուբինաշվիլին, երբ անմիջական կապ, նույնություն, հարևանություն են տեսնում Բանակի և Չվարթնոցի, նրանց մանրամասների միջև, կրկնություն կառու-

ցելակերպում, քանդակագործական տեխնիկայում, թեմատիկայում, կոմպոզիցիոն հորինվածքում: Ըստ որում, այդ ամենը գերապանցապես վերաբերում է մեծ թմբկապատի հյուսիս-արևելյան հատվածին, որն, իրոք դեռևս VII դարում սկզբնապես կառուցված տաճարի մնացորդն է:

Բանակ տաճարը կառուցվել է VII դարի հիսունական թվականներին, վերակառուցվել՝ IX—X դարերի սահմանագծում:

\* \* \*

Որևէ հուշարձանի վերակազմության ստեղծման նպատակներից մեկն այն է, որ եթե երբևէ նրա վերականգնման առիթ ներկայանա, կարելի լինի ունենալ ստույգ և հավաստի նախագիծ, գիտենալով, որ նրանով անաղարտությամբ վերստեղծվում է սկզբնապես կառուցվածը:

Ներկա դեպքում մենք ականատես եղանք վերակազմության հեղինակ Ս. Մնացականյանի կողմից հավաստի չափագրության տվյալների արժեքապրկման շատ օրինակների, որոնք միանգամայն բավարար են ամենապի իրավամբ եպրակացնելու, որ այդպիսի վերակազմությունը ոչ մի կերպ չի կարող հավատ ներշնչել և երբեք չի կարող ընդունելի համարվել ռեալ հուշարձանի համար: Այն իրականում վերացական է, անհրաժեշտ հիմքից զուրկ, աննպատակ, սկզբունքորեն նույնիսկ վնասակար, անհամատեղելի ժամանակակից գիտության նպատակների և ոգու հետ:

Մինչ այժմ ճարտարապետության պատմությանը նվիրված աշխատություններում Բանակ տաճարը ներկայացվում է կամ մեկ հատակագծով և ավերակի պահպանված դրվագների լուսանկարներով, կամ՝ հատակագծով, կտրվածքի գծագրով<sup>1</sup> և դարձյալ ավերակի դրվագների լուսանկարներով: Ըստ որում, հատակագիծը առնվում է Կալգինի<sup>2</sup> վերակազմությունից, իսկ կտրվածքի գծա-

<sup>1</sup> Երբ կա շինության հատակագիծը և չկա ճակատի (ֆասադ) գծագիր, ապա տվյալ շինության ծավալային տարածական ուրվագծերի մասին հնարավոր է գաղափար կազմել կտրվածքի գծագրի օգնությամբ:

<sup>2</sup> Կալգինի կազմած և պարբերաբար հրատարակված հատակագիծը (գծ. 8) բնորոշում է տաճարի իրավիճակը X դարի վերակառուցումներից հետո, Կղիաշվիլու կազմածը (հետագա փոփոխումներով) և պարբերաբար հրատարակ-



գիրը՝ Կղիաշվիլու վերակազմությունից, այդ երկու, խիստ տարբեր վերակազմություններից վերցված երկու գծագրերը միմյանց համապատասխանեցնելու համար կատարված որոշակի փոփոխություններով:

«Ճարտարապետության հանրնդհանուր պատմության» դասընթացում<sup>1</sup> (էջ 452), «Ճարտարապետության հանրնդհանուր պատմության» 3-րդ հատորում (էջ 320)<sup>2</sup>, «Գեղարվեստի համառոտ հանրագիտարան»-ում<sup>3</sup> (էջ 602), ինչպես և այլ հրատարակություններում ներկայացված է հատակագիծ և կտրվածք (գծ. 13, 14): Համաձայն այդ կտրվածքի, տաճարը կազմված է եղել առաջին աստիճանի (ярус) մեծ տրամագծի (մոտ 37 մետր) երկհարկ թմբուկից և բավական փոքր տրամագծի (մոտ 7—8 մետր) գմբեթից:

Բանն այն է, որ տաճարն այդպիսի տեսք է ստացել ոչ թե սկզբնապես, ինչպես ենթադրում են կտրվածքի գծագրի մշակողներն ու հրատարակողները, այլ ավելի ուշ դարերում, մի շարք, այդ թվում նաև գմբեթի վերականգնումներից և վերակառուցումներից հետո:

Ընդունելով տաճարի կտրվածքի այդպիսի եզրագծեր, նշանակում է համաձայն չլինել Ե. Թաղաիշվիլու հետ, որը փորձում է համոզել, որ իբր այդ «...այլանդակ վերակառուցքները» (հետագա անարվեստ փոփոխությունները, որոնցով տաճարը ստացել է այդ տեսքը), ստեղծվել են

փոքր կտրվածքը (գծ. 7)՝ XV—XVI դարերում կատարված մեծ վերակառուցումներից հետո: Հետևաբար, ակներև սխալ է, որ մինչև այսօր եղած հրատարակություններում, որտեղ տաճարը թվագրված է VII դարով, տեղադրվում են այդ հատակագիծն ու կտրվածքը, ինչպես և տաճարի ուշ վերակառուցումները պատկերող լուսանկարները (նկ. 27, 28, 34):

Յոթերորդ դարում եկեղեցու արտաքին պատերը ներսի կողմից այդպես հաստացված (ավելի քան 3 մետր) չեն եղել: Այդ ժամանակվա եկեղեցու հատակագիծը եղել է այնպես, ինչպես ցույց է տրված այս աշխատության առիթով կազմված հատակագծում (գծ. 18), եկեղեցին VII դարում եղել է ոչ թե երկաստիճան, ինչպես հրատարակվող կտրվածքում է, այլ եռաստիճան, ինչպես ցույց է տրված այս աշխատության կապակցությամբ կազմված կտրվածքում (գծ. 20):

<sup>1</sup> Всеобщая история архитектуры, I, Москва, 1958 г.

<sup>2</sup> Всеобщая история архитектуры, III, Москва, 1966 г.

<sup>3</sup> Краткая художественная энциклопедия (Искусство стран и народов мира), I, Москва, 1962 г.

թուրքերի կողմից անցյալ դարի հիսնական թվականների ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, եկեղեցին ամրոցի փոխարկելու առիթով:

Սխալ համարելով Թաղաիշվիլուն և ճիշտ՝ գրականության մեջ ընդունված հիշյալ կտրվածքը<sup>4</sup>, նշանակում է համաձայնել, որ տաճարն ունեցել է խիստ անհրապույր տեսք (նկ. 27, 28): Բնականորեն հարց է առաջանում՝ այդ կարգի տաճարի ի՞նչ բարեմասնությունները նկատի ունեն ոմանք, երբ Բանակը համարում են արդյունք Չվարթնոցի հանձարեղ վերանշակման:


Իսկ եթե, այնուամենայնիվ, ճիշտ է Թաղաիշվիլին, ապա սխալ պետք է համարել գրականության մեջ ընդունված հիշյալ կտրվածքի գծագիրը ու ճիշտ համարել Կալգինի վերակազմության կտրվածքի գծագիրը (նույնպես որոշակի վերապահությամբ), որով բնորոշվում է Բանակ տաճարի արտաքին եռաստիճան զվարթնոցանման կերտվածքը:

#### ՏԱՃԱՐԻ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Ճարտարապետական հուշարձաններ հետազոտողներից նրանք, ովքեր այս կամ այն առիթով անդրադարձել են Բանակ տաճարին, գրեթե առանց բացառության՝ ուշադրության են առել նրա երկարակեցությունը, սակայն չփորձելով զրտնել հավանական բացատրություն, բաժանել են Ե. Թաղաիշվիլու կարծիքը, վերագրելով այդ շինությանը, ի տարբերություն և ի հակադրություն Իշխանի, Չվարթնոցի և Գազկաշենի, կառուցվածքային յուրահատուկ՝ բարձր արժանիքներ:

Այս հարցում որոշակի պարզություն ստեղծելու համար նախ և առաջ անհրաժեշտ է մեկ հասած հուշարձանը մաքրել այն բոլոր փոփոխություններից, որպիսիք ի կատար են ածվել տաճարի երկարատև գոյության ընթացքում: Այդ դեպքում միայն հնարավոր կլինի որոշակիորեն վերականգնել սկզբնապես կառուցված տաճարի երբեմնի պատկերը և, ապա, որոշել նրա կառուցվածքային բարեմասնությունները, ճշգրտել կան-

<sup>4</sup> Այս կտրվածքի համաձայն տաճարի առաջին աստիճանում շրջանց սրահն ունեցել է վերնահարկ (2-րդ հարկ), իսկ այս վերնահարկն իրականում ստեղծվել է Թաղաիշվիլու խոսքերով ասած՝ «այլանդակ վերակառուցքներով»:



16. Բանակ տաճարի առաջին աստիճանի թմբկապատի արտաքին կամարաշարի և քանդակազարդ գոտու դրվագ (գծ. Տ. Մարությանի)


գուն գոյության ժամանակամիջոցը, ինչպես և պարզել կրած հետագա փոփոխությունների՝ փուլումների ու վերականգնումների ժամանակը, բնույթն ու ծավալը: Ահա այս նպատակով դիմում ենք Բանակ տաճարի ավերակին՝ նրա այն բազմաթիվ լուսանկարներին, որոնք հրատարակված են Հ. Ստրժիգովսկու, Թ. Թորանայանի, Ե. Թադաիշվիլու, Գ. Չուբինաշվիլու, Ն. Սևերովի, Ռ. Աղաբաբյանի, Շ. Ամիրանաշվիլու, Ն. Տոկարսկու, Վ. Բերիձեի և այլ հետապոտողների աշխատություններում: Այդ լուսանկարների ուշադիր կննտմով պարզվում է, որ շինությունը իր երկարատև գոյության ընթացքում ենթարկվել է բազմաթիվ ընթացիկ և խոշոր նորոգումների ու վերականգնումների, այդ թվում՝ նաև ծավալային ու տարածական ձևափոխությունների: Այս իրավիճակը շատ հեղինակների գործերում անհրաժեշտ անդրադարձում չի գտել, չի գնահատվել ըստ արժանվույն և հիմք չի դարձել առավել ճշմարիտ եպրահանգումների համար:

Այս եկեղեցին, ըստ երևույթին, անընդհատ գործել է և, հետևաբար, պահպանվել, ընդհուպ մինչև անցյալ դարի կեսերը, մինչև վերջնականապես կործանվելը:

Արդ, որո՞նք են լուսանկարների ընձեռած

տվյալները, որոնց օգնությամբ հնարավոր է դառնում հանգել վերը ընդգծված եպրակացությանը: Որքան էլ ավեր, այնուամենայնիվ կանգուն է (համաձայն հին լուսանկարների) տաճարի առաջին աստիճանի թմբկապատի գրեթե երեք քառորդը բոլորակ պարագծով, իսկ բարձրությամբ՝ գրեթե լրիվ (նկ. 26, 27, 31): Երբեմնի հոյակապ տաճարի այս մնացորդի հյուսիս-արևելյան մասը՝ թմբկապատի չորս նիստերի սահմանում (նկ. 26, 31) աներկբա պատկանում է սկզբնապես կառուցված տաճարին (VII դ.), իսկ հարավ-արևելյան և հարավ-արևմտյան մասը՝ (նկ. 27, 29)՝ հետագայում մեծ չափով վերակառուցված տաճարին: Ավելի ուշ վերակառուցումներն ու ձևափոխությունները երևում են մի շարք լուսանկարներում, հատկապես ավերակի ընդհանուր տեսքը պատկերող լուսանկարում (նկ. 26):

Սկզբնապես կառուցված տաճարից պահպանված հատվածում (նկ. 26, 31) երևում է, որ առաջին աստիճանի թմբկապատի վրայով անցել է դեկորատիվ պունակամարաշար, այդ կամարների վերևով ընդամիջելով քարի մեկ շարք՝ մի բարակ գոտի: Կամարների և այդ գոտու միջև ընկած պատի հարթությունը (անտրիվոլտ) եղել է քանդակված (նկ. 26, 31, 32), հիշյալ գոտու վերևից շա-



17. Բանակ տաճարի առաջին աստիճանի թմբկապատի արտաքին կամարաշարի դրվագ, առանց քանդակազարդ գոտու (գծ. Տ. Մարությանի)

րունակվել է հարթ՝ քարի չորս շարք ունեցող, մոտ 2 մետր բարձրության պատ, որը և ավարտվել է թմբկապատը պսակող քիվով:

Այստեղ կամարաշար կազմող կամարաքարի կտրվածքի եզրագիծը (կողադեմը) յուրահատուկ է՝ ո՛չ այնքան ցցուն (ռեյեֆ): Կամարադեղի առաջին քարահատվածի վրա կիսագլան է, ապա աստիճանաձև դուրս եկող ժապավենային երկու նեղ շերտեր, սրանց հաջորդում է ավելի լայն շերտը (երկրորդ քարահատվածի վրա)՝ ավարտված նեղ եզրաշերտով (նկ. 32, գծ. 16):


Թմբկապատի, լուսանկարում առավել լավ երևացող մյուս՝ հարավ-արևելյան և հարավ-արևմտյան պատահատվածների (նկ. 27, 33) արտաքին հարթության մշակումը արդեն այնպես չէ, ինչպես վերը նշված հյուսիս-արևելյան հատվածում: Այստեղ բացակայում է կամարաշարի վերևով անցնող գոտին, չկա այդ գոտու և կամարների միջև լինելիք քանդակաշերտը, իսկ հարթ թմբկապատը բարձրանում է՝ սկսելով անտրիվոլտի ներքնամասից (գծ. 17): Այդ պատի շարքը, հյուսիս-արևելյանի համեմատությամբ պակաս կանոնավոր է. շարքերի հորիզոնական կարերը բեկվելով մերթ վեր են բարձրանում, մերթ իջնում են ցած: Այստեղ, կամարաշարից վերև թմբկա-

պատը շարունակվում է ընդամենը երեք շարք, հյուսիս-արևելյանի չորսի փոխարեն: Կամարադեղը ևս այլ է. նրա կտրվածքը բոլորովին ուրիշ եկրագիծ (կողադեմ) ունի: Ներթևույթ, առաջին քարահատվածը Կուրկ է կողադեմից, մի հարթ ժապավեն է դուրս եկած միջկամարային պատի հարթությունից: Երկրորդ քարահատվածը, իրենից վերև գտնվող պատի հարթությունից դուրս կարկառված լինելու հետևանքով, քայքայվել, հավասարվել է պատի հարթությանը, այնպես որ այժմ հնարավոր չէ որոշակի ասել, թե ինչ կողադեմ է ունեցել:

Այս ամենով պարզ է դառնում, որ XIX դարում դեռևս կանգուն տաճարի առաջին աստիճանի թմբկապատը իր փոքր՝ հյուսիս-արևելյան հատվածով է միայն պատկանում նախապես կառուցված տաճարին: Ուրեմն, թմբկապատի մեծ մասը կառուցվել է հետագայում, մինչ այդ կործանված թմբկապատի փոխարեն:

Ուշադրության արժանի է, որ արևմտակողմի առանցքային նիստը, որի զգալի մասը ծածկված է եղել պատի հարթությունից դուրս կարկառված մուտքի ծավալով, եվերված է քանդակաշար ժապավենով, որի կողադեմը բոլորովին նույնը չլինելով, ինչպիսին արևելակողմի կամարներին է.





18. Բանակ տաճարի առաջին աստիճանի հատակագիծը (վերակազմություն Տ. Մարությանի)

այնուամենայնիվ, նրանց հետ նույն բնույթն ունի և, հավանական է, պատկանում է սկզբնական կառուցվածքին (նկ. 35):

Հատկանշական է, որ այստեղ առկա է նաև կամարի վերևով անցնող այն նեղ գոտին, որ կար հյուսիս-արևելյան պատահատվածում և չկար հարավ-արևելյան ու հարավ-արևմտյան պատահատվածներում:


Այստեղ, հապիվ նկատելի առկա է նաև անտրիվոլտի քանդակի հետք՝ քայքայված վիճակում, քարի հարթ մակերևույթից բարձրացած ուռուցիկի ձևով:

Թմբկապատի այս նիստի, մյուս՝ շարքային նիստերի համեմատությամբ լայն լինելը, ցույց է տալիս, որ մուտքի դուրս կարկառած ծավալը եղել է ի սկզբանե: Չէ որ լոկ դռան բացվածքը այնքան մեծ չէր, և կարող էր ապատորեն տեղավորվել, եթե այդ նիստը ևս ունենար մյուսների լայնքը:

Նիստը ավելի լայն լինելու պատճառով՝ ձևավորող կամարը բարձրացել, կտրել է կամարների վերևով անցնող գոտին, չնայած կամարի հենարանները, որ դարձյալ խոյակներ են, դրված են ավելի ցածր, քան երկու կողմից նույն սյուների վրա՝ հարևան կամարները կրող խոյակները:

Կամարների համաչափ շարքը խախտել և այսպիսի «անկանոնություններ» են կատարել հանուն այն բանի, որ մուտքերի ծավալները ապատորեն տեղավորվեն նիստի հարթության վրա: Մի այլ սովորական առիթ կառուցողին չէր բերի նման «վոհողության»:

Բոլորակ տաճարի արտաքին, դեկորատիվ սյունակամարաշարի կանոնավոր քայլը խախտելը՝ մուտքի ձևավորված ծավալը տեղավորելու նպատակով համապատասխան նիստը լայնացնելը՝ սովորական երևույթ է և հանդիպում է հաճախ: Ճիշտ այդպիսին է նաև Անիի Փրկչի եկեղեցու



19. Բանակ տաճարի երրորդ աստիճանի (գմբեթա-  
թմբուկի) հատակագիծ (վերակազմություն Տ. Մարությանի)

բոլորակ թմբկապատի հարավային մուտքն իր վրա կրող նիստը:

Բանակ տաճարի արևմտակողմի լայն նիստի հարթության վրա որոշակիորեն երևում է մուտքի ճակտոնի (ֆրոնտոնի) հետքը, ըստ որում նրանից վերև, ինչպես և տիմպանի տեղում<sup>1</sup> պատը երեսպատված է ավելի կանոնավոր և մեծաչափ քարերով, մինչ մուտքի կառուցվածքի ներքին հոծ մասը, նիստին հավելու տեղում, կամ չի երեսպատված, կամ մասամբ երեսպատված է պակաս ուշադրությամբ:

Այս ամենը անվրեպ ապացույց է այն բանի, որ, իսկապես, արևմտակողմի մուտքի դուրս եկած ծավալը եղել է սկզբնապես կառուցված, և իվուր Կալգինը իր կազմած հատակագծում այն ցույց է տալիս բարակ գծերով, իբրև ուշ ժամանակի հավելվածք:

Տաճարի առաջին աստիճանի արտաքին թմբկապատը նախապես կառուցվել է մոտ 1.40 մետր հաստությամբ: Հետագայում այդ պատը ներսի կողմից, ի հաշիվ բոլորակ սրահի լայնության, ամրացվել է կից կառուցելով 1,9 մետր հաստության կամարաշար պատ: Այս բանը ամենից ճիշտ ցույց

<sup>1</sup> Տիմպանը երեսպատող քարերը չկան, սակայն շաղախում պահպանված նրանց տեղը բնորոշում է երբեմնի այդտեղ եղած քարի խոշորությունը:

է տրված Թորամանյանի (գծ. 5) և մասամբ Կալգինի կազմած հատակագծերում (գծ. 8, 9), որտեղ տարբեր մթության գույները բնորոշում են այդ պատերի երկու շերտերի տարբեր ժամանակներում կառուցված լինելը: Ավելի արտահայտիչ է լուսանկարում (նկ. 50) երևացող պատկերը, ուր թմբկապատի սկզբնապես կառուցված արտաքին շերտը չկա, կործանվել է, գրեթե անվնաս կանգուն է մնացել հետագայում կառուցված կամարակապ պատի մի հատվածը:



Այսպիսով, արտաքին թմբկապատի ընդհանուր հաստությունը հասել է մոտ 3,3—3,4 մետրի: Այս փաստը հաստատում է ավերակի 1907 թ. ականատես Ե. Թաղաիշվիլին. նա գրում է. «Փլված պատը ցույց է տալիս, թե ինչպես է կառուցվել գալերեան (բոլորակ սրահը—Տ. Մ.), և ավելի ուշ ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել այն: Սկզբից, ինչպես երևում է, կառուցվել են գալերեայի արտաքին պատերը, որին, հետո ներսի կողմից, կից կառուցվել են խիստ (0,9 սաժեն) առաջացած որմնամույթեր»<sup>2</sup>:

Բոլորակ սրահը, որ սկզբնապես ունեցել է մոտ հինգ մետր լայնություն, նեղանալով հասել է մոտ երեք մետրի, իսկ սրահը ծածկող նախկին թաղը, որ փլվել էր արտաքին պատերի հետ միաժամանակ, փոխարինվել է նոր թաղով, որն ունի անհամեմատ փոքր թռիչք (գծ. 12):

Ինչպես երևում է XIX դարում դեռևս կանգուն տաճարի բոլորակ սրահի թաղը քանդվել ու վերականգնվել է առնվազն երկու անգամ: Մեկ անգամ քանդված արտաքին թմբկապատի վերականգնման և հաստացման ընթացքում և մեկ էլ նրանից հետո:

Առաջին վերականգնման ժամանակ թաղի քարերը եղել են հաստացվող պատերի քարերից, գրեթե նույն մեծությամբ: Այդ բանը երևում է սրահի ներքին կամարաշարի լուսանկարից (նկ. 44), որտեղ անտրիվոլը շարված է մաքուր տաշված մեծաչափ քարերով. ուշադիր մշակվածության նշան է նրանց վրա բացված երկուական կամ երեքական բոլորաձև խորշերի (փակ անցքերի) առկայությունը: Ավելի վեր, թաղի շարունակությունը, որ շարված է փոքրագույն չափի բարակ (փոքր բարձրության) քարերով, հետևվանք է արդեն երկրորդ վերականգնման:

<sup>2</sup> Ե. Թաղաիշվիլի, Բանա... էջ 106;



19(ա). Բանակ տաճարի գմբեթային մասի վերակազմության տարբերակ (զծ. Տ. Մարուքյանի)



Մի այլ լուսանկարում (նկ. 43) բոլորակ սրահը ծածկող թաղի ներքնամասը անտրիվոլտի սահմաններում, սկսած ներքին դեկորատիվ կիսասյուների խոյակներից, ստեղծված է մանր, անձև քարերով, կառուցողական անկանոն, ցածր արվեստով, որ տարբերվում է մնացած շարաձևերից: Այս ևս երկրորդ անգամ թաղը վերակառուցելու անվրեպ ապացույց է:

Տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը պատկերող լուսանկարում (նկ. 36) երևում է, որ գլխավոր խորանի կոնխի չորրորդ շարքից վերև քանդվելուց հետո ծածկը վերականգնվել է այլ որակի շարքով, այլ չափի քարերով: Լուսանկարից երևում է նաև, որ արևելակողմի գմբեթակիր կամարի քարերը հին են:

Ինչ վերաբերում է հյուսիսային խաչաթևին, ապա լուսանկարները (նկ. 36, 37, 50) ցույց են տալիս, որ թե՛ կիսագմբեթը, թե՛ միջանկյալ թաղը և թե՛ գմբեթակիր կամարը քանդվելուց հետո վերականգնվել են առավել բարակ (պտռկած) քարերով, որոնք իրենց չափով խիստ տարբերվում են սկզբնական շարվածքից: Անենաակնբախն այն է, որ հյուսիսակողմի գմբեթակիր կամարը, որ պիտի շարված լիներ արևելակողմի գմբեթակիր կամարի ձևով, որտեղ քարերը մեծ են և ձգված կամարի ուղղությամբ, շարված է դարձյալ նեղ քարերով, խորթ՝ ընդունված սովորույթին:

Հյուսիսային խորանի գմբեթաբող ծածկի և զբմբեթակիր կամարի առնվազն մեկ անգամ փլվելն ու վերականգնվելը ապացույց է այն բանի, որ Բա-





19 (բ) Բանակ տաճարի գմբեթային մասի վերակառուցության տարբերակ (զծ. Ս. Մարությանի)

**նակ տաճարի կենտրոնական գմբեթը, նախքան տաճարի վերջնական կործանվելը, սկզբնական կառուցումից հետո առնվազն մեկ անգամ փլվել և վերականգնվել է:**

Բանակ տաճարը վերջնական կործանման նախօրյակին եղել է խիստ ձևափոխված: Արտաքին բոլորակ թմբկապատի վրա կառուցված է եղել մեծ բարձրության պատ, պակաս կանոնավորության և համեմատաբար մանր քարերով: Եվ այդ պատն էլ տարբեր մասերում ունեցել է շարվածքի տարբեր

կատարելություն, ընդհանրապես ոչ բարձր մակարդակի: Բացի այդ, բոլորակ տաճարի մի քանի մասերում արտաքինից կցվել են աշտարականման ծավալներ:


Այս ձևափոխություններին է վերաբերում Ե. Թաղախիշվիլու դիտողությունը, թե «Ինչպես երևում է, այդ ավերակների (մինչ այդ կործանված մյուս եկեղեցիների—Տ. Մ.) քարերն են գործադրվել բոլորակ սրահի վրայի այլանդակ վերակառուցքի և արևելակողմի ու հարավակողմի վատ շարվածքով երկու բարձր աշտարակների կառուցման համար»: Նա շարունակում է. «1843 թվականին, երբ հայտնի բուսաբան և արևելքի ճանապարհորդ Կարլ Կոխը եղել է Բանայում, այդ վերակառուցքը և կցվածքները (աշտարակները—Տ. Մ.), ըստ երևույթին, չեն եղել, տաճարը կանգուն էր... Պետք է ենթադրել, որ Կոխի այդտեղ լինելուց հետո, հավանական է, Սևաստոպոլյան սպաներազմի ժամանակ, թուրքերը տաճարը դարձրել էին ամրոց, նոր պատեր կուտակելով նրա բոլորակ սրահի վրա և կցելով վերջինիս վերոհիշյալ աշտարակները»:

Որոշ հանգամանքներ մեզ ենթադրել են տալիս, որ Թաղախիշվիլու նշած բոլորակ սրահի վրա բարձրացված պատերն ու կցված երկու աշտարակները տաճարի համեմատաբար վաղ ժամանակներում կատարված հերթական վերակառուցումներ են: Այստեղ պատի շարվածքը նման է բոլորակ սրահի թաղերի վերջին վերակառուցման շարվածքին, ինչպես և նույն բոլորակ սրահի ներքին մեծ խորության կանարաշարի բացվածքների հետագա լիցքերին, կառուցումներ, որոնք կատարվել են, Թաղախիշվիլու պնդմամբ, քրիստոնյաների կողմից դեռևս 16-րդ դարում (նկ. 26, 27, 33, 43, 44):

Պետք է նկատել, որ այդ վերակառուցքները բերդապատերի բնույթ չունեն, չեն հարմարեցված պատերազմական նպատակների, անհրաժեշտ տեղերում չեն թողնված հրակնատաձև անցքեր՝ հրապետների համար և այլն:

«Նագետ Դ. Բաքրաձեն, որ ուսումնասիրել է Բանակ տաճարը դեռևս 1881 թվականին, վերոհիշյալ վերակառուցքները, ինչպես երևում է, համարում է տաճարի օրգանական մասը. նա գրում է: «Ամեն մի յարուսում կար բոլորակ սրահ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Е. Такайшвили, База, т. 2: 93:



20. Բանակ տաճարի կտրվածք հյուսիս-հարավ առանցքով (վերակազմություն Տ. Մարությանի)



Բաքրաձեն բոլորովին չի ակնարկում, թե վերնակառուցքներով ստեղծված սրահը արդյունք է տաճարը ամրոցի վերափոխելու գործողության:

Ե. Թաղախշվիլու ղեկավարած 1902 թ. արշավախմբի մասնակից և Բանակ տաճարի առաջին վերակազմության հեղինակ ճարտարապետ Ս. Կրիաշվիլին ևս, փաստորեն, նույն կարծիքին է: Նրա նախագիծը նկատի ունի, որ վերոհիշյալ, հետագայում ավելացված վերնապատերը կազմում են տաճարի օրգանական մասը (գծ. 6, 7): Ինչ որ մի զգալի ժամանակահատվածում տաճարը եղել է այնպիսին, ուր այդ պատերը ամփոփել են իրենց ներսում նրա ներքին բովանդակությունը, այդ թվում՝ երկրորդ հարկաբաժնի սրահը: Ահա

այդ սրահը իր վերակազմության նախագծում անդրադարձել է Ս. Կրիաշվիլին:

Պետք է կարծել, որ բոլորաձև վերնահարկի (սրահի) պատերն ու թաղը, ինչպես և երկու աշտարակները, ստեղծվել են տաճարի երկրորդ աստիճանի արդեն խախտման նշաններ ցույց տվող պատերի հետագա կայունությունն ապահովելու համար: Հենց այդպիսի նպատակ է հետապնդել նաև առաջին սրահի ներսի կողմից դրսի թմբկապատի խիստ հաստացումը կամարակապ պատի ձևով, որի մասին մանրամասն ասվեց վերևում:

Կարելի է համոզված ասել, որ Կարլ Կոխը Բանակ տաճարը տեսել է հենց այնպես, ինչպես




21. Եղեգևանոր (Չանգլի—Կաղզվան) եկեղեցու և գմբեթաթմբուկի հատակագծեր (չափագրություն՝ Ա. Կալզինի, կատարում՝ Բ. Րյաբովի)

ցույց է տրված Կղիաշվիլու վերակազմության մեջ: Միմիայն այդ տեսքին է համապատասխանում Կարլ Կոխի պատկերավոր, բնորոշող խոսքը, թե «կառուցվածքն արտաքինից նմանվում էր մի ահագին գմբեթի, որի ընդլայնական տրամագիծը մոտավորապես հավասար էր բարձրությանը»: Եթե Կարլ Կոխը Բանակ տաճարը տեսած լիներ Ա. Կալզինի վերակազմության ձևով՝ եռաստիճան, ապա նա այլ կերպ կընկալեր և այլ կերպ էլ կզրբեր իր ճանապարհորդական նոթերում: Ինչ վերաբերում է նրա նախորդ խոսքերին, թե «Այս եկեղեցին ողջ Արևելքում իմ բոլոր տեսածներից, բացառությամբ Կոստանդնուպոլսի, ամենագեղեցիկ և ամենահոյակապ կառուցվածքն էր», ըստ


երևույթին վերաբերում է տաճարի ներքին շքեղություններին և ո՛չ արտաքին, մի խոսքով բնորոշած «գմբեթակերպ» ծավալին: Ի միջի այլոց պետք է նկատի ունենալ, որ սբ. Սոֆիայի համբավը վերաբերում է ավելի նրա ներքին հոյակապությանը, քան արտաքին պատկերին:

Ավերակի լուսանկարներից պարզորոշ հասկացվում է, որ տաճարի արտաքին տեսքը ավելի կատարյալ է եղել շատ հնում՝ նախքան առաջին վնասվածքների ենթարկվելը և վերակառուցումներով եղծվելը: Հասկանալի է, Կարլ Կոխը, արտաքինում շքեղություններ չտեսնելով, բավարարվել է հուշարձանը «մի ահագին գմբեթի (կիսազնդաձևի—S. Մ.)» նմանեցնելով: Իսկ եթե փորձեր





22. Եղեգնամոր (Չանգիի). եկեղեցու արևմտյան ճակատը (չափագրություն Ա. Կալգինի, կատարում Բ. Րյաբովի)



23. Եղեգնամոր (Չանգիի) եկեղեցու կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (չափագրություն Ա. Կալգինի, կատարում Բ. Րյաբովի)

խոսքը շարունակել, աչքի առաջ ունենալով առաջին թմբկապատի հատկապես հյուսիս-արևելյան հատվածը, նա ավելի ճշմարտացի և հասկանալի կլինե՞ր՝ գրելով, թե «Բանակ տաճարը իր ներկա վիճակով ցույց է տալիս, որ երբեմնի եղել է ամենագեղեցիկ և ամենահոյակապ կառուցվածքը ողջ արևելքում...»: Միայն ու միայն, այսպես կարող էր գրվել, չէ որ Կարլ Կոխի ժամանակներում (XIX դարի 40-ական թվականներին) ամբողջական տաճարը, իր բավամյա գոյության ընթացքում պարբերաբար ենթարկվելով փոփոխությունների, չէր պահպանել իր նախկին հմայքը նաև արտաքին տեսքում:

Ուրեմն, Կարլ Կոխի հիացական խոսքերը դեռևս բավարար հիմք չեն տալիս պնդելու, թե 1843 թվին տաճարը եղել է կատարելապես կանգուն իր նախկին տեսքով: Նույնպիսի հիացական խոսքերի, որ բերված են վերևում, շատ

հաճախ արժանանում են նաև ավերակ վիճակում գտնվող, սակայն երբեմնի հոյակապությունն բնորոշող բարձրարվեստ կոթողների լոկ դրվագներ ու բեկորներ պահպանած նաև այլ հուշարձաններ, ինչպես օրինակ Գառնու և Չվարթնոցի առկա ավերակները:

Ճիշտ այդպիսի իրավիճակում, լիակատար ավերակի վերածված հուշարձանը տեսնելով, Ե. Թադախչվիլին համարձակորեն գրում է, թե «Բանա տաճարը կարող էր հանդիսանալ եվրոպական ցանկացած մայրաքաղաքի պարողը: Հոյակապության, գեղեցկության, նրբագեղության կնիքը Բանան չի կորցրել նույնիսկ ավերակ վիճակում»:

Այսպիսով պարզ է դառնում, որ Բանակ տաճարը հասել է մինչև XIX դարի կեսերը, մինչև լիակատար ավերակի վերածվելը, կրելով բավաթիվ ձևափոխություններ, նորոգումներ և վերականգնումներ: Ուրեմն, սկզբնապես կառուցված

տաճարը հասել է XIX դարը մասամբ միայն, և ոչ լիակատար կանգուն վիճակում, այսինքն՝ ո՛չ այնպես, ինչպես մինչ այժմ ընդունել ու հաղորդել են վերջին տասնամյակների ուսումնասիրողները:

Այսպիսով եզրակացվում է, որ ամենայն տաճար Բանակի նմանողությամբ կարող էր լինել երկարակյաց, եթե նա ամեն մի ավերմունքից հետո վերականգնվեր, նորոգվեր, պահպանվեր, անկախ իր սկզբնական կառուցվածքային կառարելության: Բանակ տաճարի կրող մասերի վերլուծությունը ցույց է տալիս, որ խաչաթևերի միջև ստեղծված ուղղանկյուն եռահարկ աշտարականման ծավալները ճարտարապետի կողմից չեն նախատեսվել որպես մույթեր՝ այդ ոչ մեծ (7—8 մետր ներքին տրամագծով) գմբեթի դեպի դուրս հրող, նույնպես ոչ մեծ ուժերը դիմագրավելու համար: Ճարտարապետն այստեղ ի կատար է ածել պատվիրատուի պարզ գաղափարը՝ կառուցել շրջանց սրահի մեջ առնված, կենտրոնում քառակոնի տաճար՝ տրադիցիոն չորս ավանդատներով: Հայտնի է, որ կառուցվելիք տաճարի տիպը որոշելը հիմնականում պատվիրատուի, և ոչ ճարտարապետի իրավասության հարց է:


Տեղին է հիշեցնել Թորամանյանի նկատողությունը, թե «եկեղեցիներու հատակագծերը բնավ պետք չէ, որ կապվեն շինարարական կամ գեղարվեստական ոճերու հետ, կրոնական վարդապետությունները և ծեսերը ավելի դեր կկատարեն

հատակագծերու համաչափությանց և դասավորությանց մեջ, քան արվեստն ու ճաշակը»<sup>1</sup>:

Բանն այն է, որ մույթերի ինժեներական լուծումը տաճարներից և՛ մեկում, և՛ մյուսում իրականացված է բավարար չափով, որ Բանակում Չվարթնոցի համեմատությամբ չկա ոչ մի բարելավում: Կառուցվածքի կայունությունը արդյունք է ո՛չ միայն հատակագծային հաջողակ սխեմայի ստեղծման. այլ նաև բոլոր մասերի ամրակուռ կառուցման: Ճարտարապետը Չվարթնոցում մույթը ուժեղացրել է գործող ուժերի համազորի՝ անկյունագծային ուղղությամբ, իսկ Բանակում՝ համազորի երկու բաղադրիչների (գծ. 24): Ըստ որում, երկու բաղադրիչներից յուրաքանչյուրի ճնշումը դիմագրավելու համար անհրաժեշտ է ո՛չ թե 0,5-ի, այլ 0,75-ի չափով միջոցներ գործադրել: Դրա համար էլ Բանակի կառուցողը քառակուսի հիմքով եռահարկ ծավալի պատերից երկուսը, որ ուղղված են կից խորաններին, վերցրել է բավարար հաստությամբ:

Չվարթնոցի մեծ գմբեթի տրամագիծը իր մույթի կտրվածքի մակերեսին հարաբերում է մոտավորապես այնպես, ինչպես Բանակի փոքր գմբեթի տրամագիծը վերոհիշյալ պատերի կտրվածքի մա-

<sup>1</sup> Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, 1942 թ., էջ 65:



24. Չվարթնոցի և Բանակի գմբեթակիր մույթերի հատակագծեր

կերեսին, բազմապատկած 0,75 գործակցով: Պետք է նկատել, որ այժմ էլ մասամբ կանգուն են Չվարթնոցի բոլոր մայր մույթերը (4-րդը որոշակի նպատակներով հիմնահատակ է արել Խաչիկ Գադյանը), մինչ նույն վիճակում այս դարասկզբում մասամբ կանգուն էին Բանակ տաճարի մայր մույթերից արևելակողմի երկուսը միայն: Արդ, համաձայն նոր լուսանկարների, կործանված են բոլորը:

Հայտնի է նաև, որ երկարած խորաններով ստեղծվող ներքին տարածության կազմակերպման սկզբունքը մեկ մոտ ի հայտ է եկել արդեն VII դարում և ավելի վաղ, ի դեմս Էջմիածնի, Բագարանի և այլ տաճարների:

Մի բան պարզ է, որ այս երեք՝ Իշխան, Չվարթնոց, Բանակ տաճարները, կառուցվելով մոտավորապես նույն ժամանակներում, քանդվել են, անպայման, տարբեր պատճառներով՝ 200—350 տարի կանգուն մնալուց հետո: Ավելի կոնկրետ՝ Բանակը մեծ չափով փլուզվել է 888 թվականից առաջ, կառուցումից մոտ 225 տարի հետո, Չվարթնոցը կործանվել է 989—1000 թվականների միջև, այսինքն՝ կառուցումից մոտ 350 տարի հետո: Ապա, առաջինն ու երրորդը՝ Իշխանն ու Բանակը նորոգվել, վերականգնվել են, երկրորդը՝ Չվարթնոցը՝ ոչ: Հետևում է, որ Բանակը սկզբնապես ունեցել է մոտավորապես նույն բախտը, ինչ որ Իշխանն ու Չվարթնոցը: Ինչ վերաբերում է կոնստրուկտիվ և հատակագծային «կատարելագործումներին», «ներքին տարածության կազմակերպման նոր սկզբունքներին ու այլ բարեմանություններին, ապա այդպիսիք տասնամյակներ առաջ արդեն կային, իրագործված էին Բանակից առաջ կառուցված և նրա համար նախօրինակներ հանդիսացող Էջմիածնում, Բագարանում, Գառնիի բոլորակ տաճարում, Չվարթնոցում և այլուր: Այս բանը ավելի տեսանելի դարձնելու նպատակով, ստորև տեղադրվում են գծագրեր, որոնք ներկայացնում են վերը նշված տաճարները<sup>1</sup> պայմանականորեն բոլորված շրջանց սրահով: Այդ ձևով ստացված նոր հատակագծերի ընդհանուր ուրվագծերը գրե-

թե ոչնչով չեն տարբերվում նույն շարքում դրված Բանակ տաճարի հատակագծային ուրվանկարից (գծ. 25, Ա, Բ, Գ, Դ, Ե, Ձ):

Այս ամենը ցույց է տալիս, թե ինչպես որոշ ուսումնասիրողներ Բանակ տաճարի երկարակեցության իրենց տեսությունները ստեղծել են հակառակ իրերի ռեալ վիճակի և պարզ տրամաբանության:

Ոմանք ճիշտ չըմբռնելով Բանակ տաճարի հատակագծի յուրահատուկ կողմերը, մոռացության տալով նրանում տեղ գտած հետագա հավելումներն ու ձևափոխությունները, կարծում են, թե Բանակ տաճարի Չվարթնոցի համեմատությամբ ունեցած փոքր ու մեծ այլաձևությունները նրա կառուցողի կանխամտածված միջոցառումներն են, ուղղված տաճարի առավել կայուն ու դիմացկուն օրգանիզմի ստեղծման, հենց դրանով էլ բացատրելով Բանակ տաճարի, ըստ էության «պայմանական», երկարակեցությունը, որն, ինչպես տեսանք, արդյունք էր շարունակական նորոգումների:

#### ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉՎԱՐԹՆՈՑԱՍԻՊ ՏԱՃԱՐՆԵՐՈՒՄ

Բանակ տաճարը բնորոշող յուրահատկությունները ավելի տեսանելի դարձնելու նպատակով, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ստորև բերվող վարթնոցատիպ երեք տաճարների՝ Չվարթնոցի, Բանակի և Գազկաշենի համեմատությունը:

Ընդունված է ասել, թե Գազկաշենը Չվարթնոցի կրկնօրինակն է, որ նրանք միմյանցից տարբերվում են լոկ իրենց մանրամասներով, իսկ Բանակը վարթնոցատիպ տաճար է և ուրիշ ոչինչ:







Պետք է նկատել, սակայն, որ Գազկաշենը Չվարթնոցից տարբերող գծերը դարաշրջան են բնորոշում, իսկ Բանակն ու Չվարթնոցը միմյանց կապող հանգամանքները առիթ՝ կարևոր եզրակացությունների:

պես և Բանակից հետո, սովորական է եղել հատկապես, և ըստ երևույթին, միայն Հայաստանում:

Հետաքրքիր է, որ այդ եկեղեցիների հատակագծերում մասերի հարաբերակցությունը ճիշտ և ճիշտ այնպես է, ինչպես Բանակ տաճարի կեստորնը կազմող մասում, նրանցում մեծ տրամագիծը վերցված է գմբեթի ներքին տրամագծի եռակի չափով:

<sup>1</sup> Խժկոնքի կոմպլեքսից 1027 թ. կառուցված Սարգսի եկեղեցու, ինչպես և Մարմաշենի բոլորակ եկեղեցու հատակագծերը մեր կողմից դրվում են վերոհիշյալ տաճարների հատակագծերի շարքում, ցույց տալու համար, որ այդ տիպի եկեղեցիների գոյությունը, նախքան Բանակը, նույն-





25. Հայկական տաճարների հատակագծեր, Բանակ տաճարի կոմպոզիցիայով (պայմանականորեն առնված շրջանց պահի մեջ (գծ. Տ. Մարությանի)  
 ա. Էջմիածին, բ. Բագարան, գ. Գառնի (բոլորակ տաճար), դ. Մարմաշեն (բոլորակ տաճար), ե. Խժկուք (Սարգսի եկեղեցի), զ. Բանակ.

Ավերակներում առկա փաստական տվյալները հնարավոր են դարձնում հանգել այն եպրակացության, որ **Չվարթնոցն ու Գազկաշենը նման են իրենց կարևոր կողմերով և տարբեր են մանրամասներում, մինչ Չվարթնոցն ու Բանակը տարբեր են կարևոր կողմերով և նման են մանրամասներում:** Գ. Չուբինաշվիլին հաստատում է, որ «Դեկորատիվ դրվագները (խոյակներ, քանդակներ և մյուսներ) Իջխանում և Չվարթնոցում մերձավորագույն ձևով հանրնկնում են Բանայի մանրամասների հետ»<sup>1</sup>:

**Չվարթնոցում և Գազկաշենում գրեթե նույնն են՝** հատակագծաձևն<sup>2</sup> ու չափերը, գլխավոր մույթերի պարագծերը, սյուների քանակը խաչաքների սյունաշարերում, մույթերի թիկունքակողում կանգնած առանձին սյուներն իրենց դիրքով ու նշանակությամբ, արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքներն իրենց առկայությամբ (գծ. 29, 31), տաճարների առաջին աստիճանի շրջանց սրահներն իրենց երկհարկայնությամբ (համաձայն Թորամանյանի վերակազմության), ներքին կառուցվածքային խնդիրների միաձև լուծմամբ, արտաքին ծավալներն իրենց եռաստիճան կառուցվածքով, արտաքին պատուհի մշակման մեջ գործադրված միանման միջոցներով (դեկորատիվ սյունակամարաշար, ստիլբադ (եռաստիճան որմնախարխախ), ձգված և կոր պատուհաններ, գմբեթի կոնաձև տանիք և այլն:

Ահա այս ամենով պարզ է դառնում, որ **Չվարթնոցն ու Գազկաշենը արմատական հարցերում միմյանց նման են, գրեթե նույնություն<sup>3</sup>:**

<sup>1</sup> Г. Н. Чубинашвили и Н. П. Северов, Пути Грузинской архитектуры (Проблемы архитектуры, т. II, кн. I, Москва, 1937, стр. 72).

<sup>2</sup> Շ. Ամիրանաշվիլին իր «Վրացական արվեստի պատմության» մեջ (էջ 150) այս մասին գրում է. «Գազկի տաճարը Անիում կառուցվել է 1001 թվականին, Չվարթնոցի հատակագծի ձևով, բայց վերջինից գլխավորապես տարբերվում է գմբեթատակի հիմնական մույթերի կոնստրուկցիայով, վերին հարկի հատակագծով և մի քանի մանր դետալներով»: Այդ տաճարների հատակագծերից մեկ քաջ հայտնի է, որ նրանց մայր մույթերը միմյանցից ոչնչով չեն տարբերվում: Թորամանյանի կազմած ցարդ ճանաչված վերակազմությամբ վերին հարկերի հատակագծերը ևս միմյանցից տարբեր չեն:

<sup>3</sup> Որ Գազկաշենը Չվարթնոցի կրկնօրինակն է (մանրամասների տարբերությամբ), անժխտելի փաստ է, ըստ որում, այն իրականացվել է նախամտածված, այդ ժամա-

**Չվարթնոցն ու Գազկաշենը տարբերվում են** նրանով, որ առաջինում գլխավոր խորանը խուլ պատ է, երկրորդում՝ սյունակամարաշար, առաջինում արտաքին թմբկաձև պատի նիստերի քանակը 32 է, երկրորդում՝ 36, առաջինում բուն տաճարի մուտքերի քանակը հինգ է, երկրորդում՝ երեք. հիշյալ դռները Չվարթնոցում թմբկապատի հարթությունից պզպի չափով դուրս են գալիս (հատկապես արևմտյանը և հարավայինը), Գազկաշենում մնում են թմբկապատի հարթությանը հավասար: Արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքը Չվարթնոցում ունի անհամեմատ մեծ չափեր, Գազկաշենում՝ փոքր: Բոլորովին տարբեր են քանդակատեսակները շինության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մասերի վրա. եթե Չվարթնոցում այն գերազանցապես պատկերում է մրգեր, նուռ ու խաղող, նրանց թփերով, տերևի ու ճյուղերի ոլորմունքներով, ինչպես և մարդկային կերպարանքներ բարձրաքանդակների ձևով, կատարված բարձր վարպետությամբ, կենդանի շնչով. ապա Գազկաշենում, թեպետև կատարված մեծ վարպետությամբ, մանվածո հյուսվածքներ են, երկրաչափական գծերի կոմպինացիաներով ստեղծված պատկերներ:

Այս երկու տաճարներում ըստ երևույթին տարբեր է եղել հատկապես կոնստրուկտիվ մասերի շինելակերպը, կառուցողական արվեստի կատարելության իմաստով:

Ինչպես տեսնում ենք՝ Չվարթնոցի և Գազկաշենի միջև տարբերություններ ստեղծում են գլխավորապես մանրամասները:

Խորանալով Չվարթնոց և Բանակ տաճարների նյութերում, աստիճանաբար պարզվում են առաջին հայացքից չնկատվող երևույթներ, որոնք բնորոշում են տաճարներից յուրաքանչյուրին առանձին-առանձին, նրանցում առկա բավապիսի ընդհանրություններ, անգամ ընդօրինակումների աստիճանի հասնող կրկնություններ, և ապա՝ նրանց միջև եղած շատ կարևոր տարբերություններ: Ահավասիկ. **Չվարթնոցում և Բանակում տարբեր են**

նակ ավերակի վերածված հայ ճարտարապետական արվեստի փառքը կազմող Չվարթնոցի կերպարը հետագա դարերում կենդանի պահելու նպատակով (կրանք երկուսն էլ կրում են սուրբ Գրիգոր անունը: Ճիշտ չէ, որ իբր Գազկաշենը կառուցվել է 1000 թվականին Քրիստոսի աշխարհ գալուն նվիրված, ինչպես կարծում են հետապտողներից ոմանք):

հատակագծածնն ու չափերը: Եթե Չվարթնոցի հատակագծային կոմպլեքսի կենտրոնը չորս կիսաշրջաններով ու չորս մույթերով ստեղծված պարզ խաչաձև է, այս Բանակի կենտրոնը իրենից ներկայացնում է լիակատարությամբ ավարտված խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցի, որի չորս բավական երկարած խաչաթևերի միջև տեղավորված են չորս ավանդատներ, և այս վերջիններիս առկայությամբ պայմանավորված այլ կարգի կառուցվածքային հարմասեր (գծ. 18, 29):

Բանակում, չնայած առաջին աստիճանի թմբուկի տրամագիծը մեծ է Չվարթնոցի համապատասխան թմբուկի տրամագծից, սակայն գմբեթակիր մույթերով ստեղծված քառակուսին բավական փոքր է:

Չվարթնոցում բոլորակ սրահը կազմում է տաճարի ներքին տարածության օրգանական մասը, նա անքակտելիորեն, հարմարագույն ձևով կապված է կենտրոնական մասի հետ և նրա լրացումն է: Մաքսիմում հնարավոր չափով փոքրացվել են բոլորակ սրահի և կենտրոնական մասի միջև գոյություն ունեցող կոնստրուկտիվ մասերը՝ մայր մույթերը, սյուները և այլն: Խաչաթևերի սյունաշարերը առավելապես թափանցիկ են, դրա շնորհիվ բոլորակ սրահում գտնվողները անմիջականորեն հաղորդակից են եղել տաճարի կենտրոնում և բեմում տարվող արարողությանը: Բոլորակ սրահում գտնվողները մի հայացքով ընդգրկել են տաճարի ներքին խաչաձև տարածությունը՝ պասկված գմբեթով:

Այս իմաստով Բանակը պզալապես պիշում է Չվարթնոցին: Բանակում գմբեթակիր մույթերի տեղում ստեղծված լայնամիտ քառակուսի հատակագծով աշտարականման եռահարկ կառուցվածքները բոլորակ սրահի ուղիղ կեսը ծածկում են տաճարի կենտրոնական տարածությունից: Իրավիճակն առավել տխուր է ներկայանում, երբ նկատի ենք առնում Բանակի գմբեթատակ քառակուսու փոքր չափերը և խաչաթևերի նեղ ու երկար համաչափությունները: Դեռ ավելին, որոշ լուսանկարներ հուշում են, որ շինության կայունությունը մեծացնելու նպատակով էքստերիորի հինգական կամարաթռիչքներից երկու եզրայինները սկզբից ևեթ հոծ պատերով լցվել ու այդ չափով էլ միայնացից մեկուսացվել են տաճարի կենտրոնն ու բոլորակ սրահը:

Այստեղ բոլորակ սրահը գրեթե մեխանիկորեն

է կցված կենտրոնական մասին, նրանց միջև բացակայում է այն ներդաշնակ, փոխադարձ կապը, որ այնպես հաշտությանը ստեղծված էր Չվարթնոցում:

Այս ամենը հետևանք է այն բանի, որ Բանակում, ինչպես ասվեց վերևում, տաճարի կենտրոնական մասը ոչ թե պարզ խաչաձև է, այլ ամբողջական, ավարտված եկեղեցի: Կառուցողը արդեն, որպես հավելված, այդ եկեղեցին փաթաթում է բոլորակ սրահով, դրանով իսկ Բանակը դնում վարթնոցառիպ տաճարների շարքը:

Իրենց հորինվածքով և գեղարվեստական մշակմամբ Չվարթնոցի համապատասխան դրվագներին պիշում են Բանակի նաև կենտրոնն ստեղծող կամարաշարերն ու նրանց առանձին մասերը:

Բանակում արևելյան խորանը ստեղծված է սյունականարաշարով<sup>1</sup>, Չվարթնոցում ավանդա-

<sup>1</sup> Ե. Թաղաիշվիլին համոզված է, որ Չվարթնոցում ևս արևելակողմի խորանը եղել է սյունաշար: Նա սխալ է համարում բոլոր նրանց կարծիքը, ովքեր պնդում են հակառակը: Այս խնդրում ևս նա նույնություն է տեսնում երկուստեք՝ Չվարթնոցում և Բանակում: Ինչպես հայտնի է, Չվարթնոցի վերջին ուսումնասիրությունները ճիշտ են համարում Թորամանյանի ելրակացությունը, որ Չվարթնոցի արևելակողմի խորանը եղել է խուլ պատ: Հայտնի է, որ Բանակ տաճարում բոլորակ սրահի արևելյան հատվածը խուլ պատերով անջատված է եղել մնացած մասից: Պետք է ենթադրել, որ այդ միջոցառումը, թեև ևս հետագա փոփոխությունը, նպատակ է ունեցել եկեղեցական արարողության ընթացքում բեմական մասի համար ապահովել լիակատար հարմարավետություն, մի վիճակ, որը չէր ստեղծվի, եթե գլխավոր խորանի հետնամասում ևս հավաքվելու հնարավորություն տրվեր հավատացյալներին: Այս հանգամանքը ավելի վաղ գիտակցել է Չվարթնոցը կառուցողը, և արևելյան խորանը ստեղծել է խուլ պատով: Հետագայում, թեև սուրբ տալով գեղեցիկին՝ գլխավոր խորանը ևս սկսել են ստեղծել սյունականարաշարով, ինչպես օրինակ Բանակում, Լյակիթում, Գազկաշենում:

Սակայն, պետք է նկատել, որ Բանակում արևելյան խորանի սյունականարաշարը դրվել է այնքան բարձր (ավելի քան 2 մետր), որ այն ավելի ջուտ կատարել է պատուհանի դեր, և որ շրջանց սրահից հնարավոր չէր թափանցել խորան, այս կամ այն չափով անհարմարություն ստեղծել տեղի ունեցող արարողության համար (գծ. 20):

Գազկաշենում արևելյան սյունականարաշարի դիրքը շատ ավելի բարձր է Բանակից, այստեղ (համաձայն Թորամանյանի վերակազմության) սյունականարաշարը դրված է 3,5 մետր բարձրության վրա, իսկ բեմահարթակը՝ ընդամենը 1,5: Ուրեմն, այս տաճարում բեմահարթակի թիկունքակողմում փաստորեն եղել է երկու մետր բարձրության խուլ պատ և վերնամասում միայն կամարաշար: Ինչպես



կան ձևով՝ խոլ պատով: Բանակում մյուս երեք խաչաթևերում սյունակամարաշարի սյուների թիվը չորս է, Չվարթնոցում՝ վեց: Մուտքի դռները՝ Բանակում երեքն են, Չվարթնոցում՝ հինգ: Բոլորովին տարբեր ձևեր ունեն գմբեթակիր մայր մույթերը:

Այս տաճարներում տարբեր եղանակներով են ստեղծվել վերնահարկերը:

Չվարթնոցում, տաճարի առաջին աստիճանի սահմաններում եղել է երկու շրջանց սրահ (առաջին հարկ և վերնահարկ (զծ. 29, 29ա), երկրորդ աստիճանի սահմաններում՝ չորս առանձին-առանձին խորշեր, որ ստացվել են ներքին խաչաձևի և արտաքին թմբկապատի համադրումից: Այդ բոլոր վերնահարկերը կամարակապ բացվածքներով հաղորդակից են եղել տաճարի ներքին տարածությանը:

Այդ բանին Բանակ տաճարում հասել են այլ ձևով. չորս խաչաթևերի միջև ստեղծված քառակուսի հիմքով (եռահարկ) աշտարականման ծավալների միջոցով: Նրանցում եղել են փոքր սեն-

հայտնի է, Չվարթնոցում հնարավոր չի եղել այդքան բարձր սյունակամարաշար ստեղծել (մյուս խաչաթևերի սյուների որոշակի բարձրության հետ կապված լինելու պատճառով), և կառուցողը հրաժարվել է նրանից:

Չվարթնոցի ճարտարապետը եթե ցանկանար արևելյան խորանում ևս ստեղծել սյունակամարաշար, այն չպետք է կապեր մյուս խաչաթևերի համապատասխան դրվագների հետ. պիտի դներ բարձր, այդ դեպքում կամարները կգտնվեին նույնպես բարձր, ավելի քան մյուս խաչաթևերի կամարները: Կառուցողը այդպես չի վարվել, որովհետև այդ կամարների վրա պետք է հենվեր երկկոր թաղը և շրջանց սրահի առաջին հարկաբաժնի ծածկը, այդ նույն է, թե՛ երկրորդ հարկաբաժնի հատակը: Այս իրավիճակը մի լրացուցիչ անգամ ամրացնում է այն թեզը, թե՛ **Չվարթնոցում շրջանց սրահը ունեցել է վերնահարկ:** Գազկաշենում ճարտարապետը այդ հարցը լուծել է խաչաթևերի կամարաշարում սյուներին տալով անհամեմատ մեծ բարձրություն:

Արևելյան խորանի կամարաշարը, որ առաջինը գործարկվեց Իշխանում, իր յուրահատուկ անդրադարձումը գտավ նույն Իշխանի օրինակով կառուցված Խախու տաճարում, ապա միջնադարի մեծ ճարտարապետ Տրդատի գործերում՝ Անիի Մայր տաճարում ու Մարմաշենում, Մակարավանքում, ավելի ուշ՝ Մցխեթի Սվետի Ցխովելի մեծ եկեղեցում: Սակայն հիշյալ եկեղեցիներում ստեղծվեց ոչ թե թափանցիկ, այլ խոլ կամարաշար, Խախու տաճարում խորշերի ձևով, դարձյալ արարողության հարմարավետությունը եղևելով:

Այսպիսով պարզվում է, որ Չվարթնոցի խորանի կառուցվածքի խնդրում ճիշտ է Թորամանյանը:

1 Ե. Թաղաիշվիլին համոզված էր, որ Չվարթնոցում արտաքին մուտքերի քանակը եղել է ոչ թե հինգ, այլ երեք.

յակներ, որոնք նույնպես կամարակապ բացվածքներով հաղորդակից են եղել տաճարի ներքին տարածությանը (զծ. 8—12, 18—20, նկ. 36, 37, 40, 41)<sup>2</sup>: Համաձայն Կալգինի վերակազմության, կամարակապ սյունասրահի ձևով վերնահարկ է գոյություն ունեցել նաև գմբեթաթմբուկի ներսում, նրա բարձրության վրա (զծ. 11, 12, 19, 20):

Սրանք էին ահա Չվարթնոցի և Բանակի հատակագծային ու ներքին տարածական լուծումներում գոյություն ունեցող կարևոր տարբերությունները:

**Չվարթնոց և Բանակ տաճարներն իրար կապող կողմերը հեռկայներն են՝** ընդհանուր հատակագծային և արտաքին ծավալային ու ներքին տարածական կոմպոզիցիոն միանման լուծումը<sup>3</sup>: Երկուստեք խաչաձև կենտրոնը տաճարի առաջին աստիճանի սահմաններում բոլորում է արտաքին թմբկաձև պատով ստեղծված շրջանց սրահ: Տաճարի երկրորդ աստիճանի սահմաններում կենտրոնի խաչաձևը նույնպես անփոփոխ է բոլորաձև թմբկապատով, որին որպես հիմք ծառայում են երկկոր կամարաթաղերը: Տաճարի երրորդ աստիճանը՝ գմբեթաթմբուկը, պսակում է գմբեթի կոնա-

նա կարծում էր, որ անկյունագծային դռները ուսումնասիրողների սխալի արգասիք են և կամ հետագայում են բացվել, մինչդեռ իրականում Չվարթնոցն ունեցել է մուտքի հինգ դուռ, որոնց մնացորդները մինչև օրս էլ առկա են: Չվարթնոց կառուցողը անկյունագծային դռները բացել է նաև արծվախոյակ սյուների ստեղծած գեղեցկությունը այցելուին առավել լիարժեք ձևով ներկայացնելու համար, մի հույժ կարևոր հանգամանք, որը մինչև այսօր էլ չեն ընկալում ոմանք:

<sup>2</sup> Թորամանյանը Բանակի վերնահարկի մասին գրում է. «Նույնպես տարբեր կերևի Բանայի մեջ վերնահարկ գալերան, որը տրամագծորեն բաժանված է, կարծես քանի մը մասերու, ամբողջ շուրջանակի, փոխանակ Չվարթնոցի և Ս. Գրիգորի նման բաց ըլլալու...»: Նյութեր..., 1942 թ., էջ 279:

<sup>3</sup> Թորամանյանը ամեն առիթով, գրեթե կրկնելով՝ հիշեցնում է, որ Բանակը կառուցված է Չվարթնոցի օրինակով, այսպես. «Հայաստանի մեջ երեք միանման օրինակներ միանգամայն գտնվեցան՝ Չվարթնոց, Անիի Գազկաշեն և Գրիգոր և Բանակի եկեղեցին»: Նյութեր..., 1942 թ., էջ 64:

«Չվարթնոցը մենակ չէ Հայաստանի մեջ, մինչև 11-րդ դարու վերջը մի քանի հատ են կանգնվել Չվարթնոցի օրինակով, ինչպես Թավուքչարում, Բանայում, Անիում և այլն, և այլն»: Նյութեր..., 1942 թ., էջ 90:

«...[Օրթի] կողմերը թրջաբնակ Փենեկ կամ Բանակ գյուղի մեջ գտնվող նախքան Անիի և Գրիգորը, Չվարթնոցի նմանությամբ շինված հնագույն եկեղեցին...»: Նյութեր...,

ձև տանիքը<sup>1</sup> (համաձայն Թորամանյանի և Կազի-  
նի վերակազմությունների) :

Բանակ տաճարի գլխավոր՝ արևելակողմի խո-  
րանում, կոնիսի ներքնամասում՝ սյունակամարա-  
շար է, ստեղծված վեց սյուներով (յոթ կամարով),  
այնպես, ինչպես Չվարթնոցի որևէ սյունակամա-  
րաշարը: Ընդհանրապես նրանք միմյանց բավա-  
կան նման են, թողնում են նույն տպավորությունը,  
չնայած Բանակում սյունների քայլը կամարաշա-  
րում, Չվարթնոցի կամարաշարի սյունաքայլի հա-  
մեմատությամբ՝ փոքր է, որ բխում է խաչաթևերի  
տարբեր լայնքերից:

Առանձին սյունների հաստության (տրամագծի)  
և բարձրության հարաբերությունը մոտավորապես  
նույնն է, բացարձակ չափերով՝ Բանակի խորանի

1942 թ., էջ 275: «Առայժմ բովանդակ արվեստի պատմու-  
թյան մեջ նույն ոճը չկրկնելն աստ, Հայաստանում շինվել  
են նույնօրինակ ճարտարապետությամբ Ասիում և Բանա-  
յում...»: Նյութեր... 1948 թ., էջ 81:

«...Ասիի Գազկաշեն և Գրիգոր և Չվարթնոցի իսկա-  
կան պատկեր Բանայի եկեղեցին...»: Նյութեր..., 1948 թ.,  
էջ 28 և այլն:

<sup>1</sup> Եկեղեցիների ճարտարապետության ոճային առանձ-  
նահատկությունները բնորոշելիս, կարևոր տեղ է գրավում  
ևս նրանց զմբեթների ծածկաձևը:

Բյուզանդիայում զմբեթը ներսից եղել է կիսագնդաձև:  
Այդ նույն ձևն է ունեցել նաև դրսից: Մինչ հայերի մոտ  
ներսի կիսագնդաձևը դրսից ծածկելու համար ստեղծել են  
նոր ձև, այդ կոնաձևն է, որը երբեմն կողավոր լինելով,  
ստացել է բուրգի ձև: Բանն այն է, որ քարե զմբեթները  
ավանդաբար կրկնել են նախորդ շրջանի փայտաշեն  
զմբեթների ձևերը, իսկ այս վերջիններս շինակյութի յուրա-  
հատկությամբ պայմանավորված, եղել են կոնաձև կամ  
բրգաձև: Սիրված է եղել նաև հովանոցաձև ծածկը իր  
տարբերակներով (այստեղ չենք խոսում Տեկոթի և գավթի-  
ների ծածկաձևերի մասին):

Մեր հին, գերազանցապես փոքր եկեղեցիների թվում,  
որպես բացառություն, հանդիպում են զմբեթների ծածկեր,  
որոնք դրսից կոնաձև չեն, սակայն և գնդաձև չեն, ինչպես  
բյուզանդականը: Քիվի վրայից տանիքը սկսելով կոնաձևով,  
բարձրանալով, թեթևակի աղեղվում է դեպի ներս և խաչի  
տակ վերջանում անկյունով (օրինակ՝ Կարմրավորը Աշտա-  
րակում):

Անպայման սխալվում են մեր այն հետազոտողները,  
որոնք չունենալով որևէ նյութական հիմք և պատմագրական  
տեղեկություն, VII դարի հայկական բոլոր եկեղեցիների  
զմբեթների ծածկերը ցույց են տալիս կիսագնդաձևին մոտե-  
ցող եկրագծով, ինչպես Կարմրավորում է: Ի՞նչ ապացույց  
կա, որ Թայինի կաթողիկեն, Ալամանը, Մահմուշուկը, Սի-  
սիանը, Թարգմանչացը, Հոփիսիմեն և մյուսները ունեցել  
են զմբեթածածկեր Կարմրավորի ձևով. ոչ մի հիմք, բացի  
ենթադրությունից:

սյուները, անկասկած, փոքր են: Ընդհանուր նմա-  
նություն կա նաև այդ սյունների խարիսխների  
եկրագծերի միջև:

Քննարկվող հարցում հատուկ նշանակություն  
են ստանում խոյակները: Իշխանի ներսեսաշեն  
եկեղեցում խորանի սյունների խոյակները երեք-  
չորս տեսակի են. նրանց ծավալները ծածկված են  
ականթի շքեղ տերևներով, ծաղկաքանդակ մեղա-  
լիոններով, ինչպես և խոյողներով (նկ. 8, 11, 12,  
14—17):

Երբ կառուցվում էր Չվարթնոցը, Հայաստա-  
նում, մինչ այդ, խոյակների վրա սպիրալաձև խո-  
յողը հասել էր մեծ մշակվածության (Գառնի, I-ին  
դար և այլն): Ինչ վերաբերում է փամբյուղափուս  
բանվածքին, ապա նրա հիմնալի օրինակները  
կային դեռևս վաղ ժամանակներից (Երեբունք—V  
դար, Ավան, Դվին և այլն): Եվ ահա ներսեսաշեն  
Չվարթնոցում չկրկնվեցին նույնպես ներսեսաշեն  
Իշխանի խոյակները: Տեղի վարպետները այդտեղ  
անդրադարձրին իրենց նախասիրությունները և  
ստեղծեցին Չվարթնոցի հայտնի կողովափուս  
(նկ. 54), ինչպես և անկրկնելի արծվաքանդակ  
(նկ. 51) խոյակները: Հատկանշական է, որ Բա-  
նակ տաճարում ևս ամբողջովին չկրկնվեցին Իշ-  
խանի խոյակները: Այստեղ այդպիսիք ավելի մոտ  
են Չվարթնոցի և Դվինի խոյակներին, նրանց հետ  
ունեն ընդհանուր շատ բան, եկրագծերի որոշ  
մանրամասների տարբերությամբ հանդերձ: Եր-  
կուստեք խոյակներն օժտված են խոյողներով:  
Չվարթնոցում, խոյակի վերնասալի ներքևում, եր-  
կու խոյողները իրար կապողը ոլորված գան է,  
որի բարակող ծայրերը դրսից իջնում, դեպի ներս  
պտտվում են, կապելով 4—5 շրջան, վերջանում  
են կենտրոնում: Այդ ձևով ստեղծված խոյողների  
ոլորվածքը մնում է մի հարթության մեջ: Բանա-  
կում վերնասալի (աբակա) տակ իոնիկներ են.  
երկու խոյողներ միմյանցից անկախ ոլորվում են  
սովորականի հակառակ ուղղությամբ և կապելով  
3—4 շրջան, վերջանում են կենտրոնում: Ոլոր-  
վածքը մոտենալով կենտրոնին, աստիճանաբար  
դուրս է գալիս ընդհանուր հարթությունից (այդ-  
պես է նաև Գառնիում):

Խոյակների վրա ամեն զույգ խոյողների միջև  
Բանակում կախված գդալաձև կարդեր են, Չվարթ-  
նոցում՝ մեղալիոն, վրան փորագրված խաչ,  
որի հորիզոնական թևի երկու ծայրերում «Ներսես  
կաթողիկոս» բառերի առաջին տառերն են (հու-

նարեն) : Երկուստեք խոյակներն ունեն կողովահյուս վարդաքանդակ<sup>1</sup>, որ միմյանցից տարբերվում են միայն իրենց գտնվելու տեղով. Չվարթնոցում այն գտնվում է անմիջապես խոյողների տակ, հատած գնդաձևի վրա, մինչ Բանակում այդ քանդակը ծածկվում է խոյողներից բավական ցածր գտնվող սյան փաթաթված գլանը: Այդ խոյակների կողովահյուս բանվածքով գլանաձև մասերը անմիջապես հիշեցնում են ավելի վաղ կառուցված շինության պատկանող Դվինի հայտնի խոյակի նույն դրվագը (նկ. 57) :

Բանակի էքսեդրներում սյուները միացնող կամարները, Չվարթնոցի համապատասխան կամարների նման, ստեղծվել են կրկնակի ժապավենով, աստիճանաբար անցում կապակերպելով բարակ սյունից դեպի վերևում գտնվող հաստ պատը:

Եղել են ենթադրողներ, որ թերևս սկզբնապես կառուցված Բանակ տաճարում խաչաթևերը ելքափակող բոլոր կիսաբոլորակներում եղել է միանման սյունակամարաշար, այսինքն՝ գլխավոր խորանի կամարաշարի նման՝ վեց սյունով (յոթ կամարով), այնպես, ինչպես այդ եղել է նման դրվագներ ունեցող այլ տաճարներում, այն է՝ Չվարթնոցում և Գագկաշենում: Բայց, ըստ երեվոյթին, այստեղ՝ Բանակում, հենց սկզբից արևելյան խորանում եղել է վեց սյուն (յոթ կամարով), մյուս խորաններում չորս սյուն (հինգ կամարով): Բանն այն է, որ որոշակի կանոնով սյուների քայլը (հեռավորությունը միմյանցից) այս կամ այն չափով պայմանավորված է կամարաշարի բարձրությամբ<sup>2</sup>: Բանակում գլխավոր խորանի սյունակամարաշարը դրված է տաճարի հատակից մոտ 2,14 մետր բարձրության վրա, իսկ մյուս երեք խորաններում՝ հատակի վրա, մինչ խոյակները ամենուրեք գտնվում են նույն բարձրության վրա, ուրեմն սյունակամարաշարը խորանում ունի փոքր, մյուս խաչաթևերում՝ մեծ բարձրություն: Այս պայմաններում անհնար է կամարների բացվածքները վերցնել միանման, այսինքն՝ գլխավոր խորանի նման, որտեղ սյուների քայլաչափը փոքր է, կա-

մարների բացվածքը՝ մոտ 90—100 սանտիմետր: Մյուս խաչաթևերում այդ չափը անհրաժեշտաբար պետք է մեծացվեր: Եվ կառուցող ճարտարապետը այդպես էլ արել է, մյուս խաչաթևերում, որոնց լայնքը հավասար է գլխավոր խորանի լայնքին, վեց սյան փոխարեն տեղադրել է չորս սյուն, որով և միջսյունային տարածությունը մոտ 95 սանտիմետրից հասցրել է մոտ 155 սանտիմետրի: Այս չափը բավական մոտ է Չվարթնոցի համապատասխան դրվագի չափին<sup>3</sup>:


Իսկ եթե, այնուամենայնիվ, ունանց կողմից ընդունելի համարվի այն երբեմնի գոյություն ունեցող կարծիքը, թե սկզբնապես, տաճարի առաջին կառուցողը հնարը գտել և պարզության համար բոլոր խաչաթևերում, այդ թվում և գլխավոր խորանում, ստեղծել է միանման կամարաշար, որ ներկա կամարաշարերի միջև եղած տարբերությունը հետագա փոփոխությունների արգասիք է, ապա կարելի կլինի ենթադրել, որ մյուս երեք խաչաթևերում խոյակները ևս պիտի ցածր դրվեին ամենուրեք՝ սյուների միաչափ բների վրա: Հուշարձանի լուսանկարներին (նկ. 37, 50) նայելով պարզ երևում է, որ հյուսիսային և հարավային խաչաթևերի սյունակամարաշարերի առաջին կամարաթիչքների պահպանված մասերը շարված են եղել արևելյան աշտարականման ծավալների հետ և որ այդ դրվագներում խոյակները դրված են գլխավոր խորանի խոյակների բարձրության վրա: Եվ քանի որ այդ դրվագները, ինչպես հաստատապես համոզվում ենք, հետագա փոփոխության չեն ենթարկվել, մեր կարծիքով՝ ստեղծվել են տաճարի արևելակողմի գոյությունը պահպանած ողջ հատվածի հետ միաժամանակ՝ նախապես, հետևաբար գլխավոր խորանում վեց, մյուս խաչաթևերում չորսական սյուների առկայության հանգամանքը չի խանգարում համոզվելու, որ նման իրավիճակ ստեղծվել է տաճարի հենց սկզբնական կառուցման ժամանակ: Մնան բարդություններից ճարտարապետը չի խուսափել, որովհետև նախապես որոշված է եղել արևելյան սյունակամարաշարը դնել բարձր: Այս առիթով Սործիգովսկին գրում է.

<sup>1</sup> Բանակում ավագ խորանի բոլոր խոյակները Չվարթնոցի նման միօրինակ են և ոչ Իշխանի նման միմյանցից տարբեր՝ 4—5 տեսակ:

<sup>2</sup> Այս կանոն, իհարկե, մեր ճարտարապետական արվեստում հունա-հռոմեականի համեմատությամբ նույն ուժը չունի, սակայն բարձրավեստ կոթողներում արժանանում է որոշակի ուշադրության:

<sup>3</sup> Գագկաշենում, անկախ այն բանից, որ արևելակողմի և մյուս երեք խաչաթևերի սյունակամարաշարերի բարձրությունները տարբեր են, սյուների հեռավորությունը վերցված է հավասար: Կառուցողը այս հնարավոր է համարել՝ նկատի ունենալով, որ սյուների քայլը ընդհանուր առմամբ եղել է ոչ փոքր՝ բավարար՝ թե՛ բարձր, թե՛ ցածր սյուների համար:





26. Համաչափություններ Բանակ տաճարի հատակագծում (ըստ Տ. Մարությանի)

«Դրանով ուժեղանում է փամարձակ սլացքի տպավորությունը դեպի վեր...»<sup>1</sup>:

Երբ կամարաջարը բարձր է լինում, սյունաքաղը՝ մեծ, ապա սյան բունն էլ ստանում է ավելի մեծ հաստություն: Հենց այդպես էլ վարվել է կառուցողը, այդ սյունների բները վերցրել է հաստ, ամրակուռ քարերից, ճիշտ այնպես, ինչպես Չվարթնոցում: Երբ Ե. Թաղաիշվիլու ղեկավարած արշավախումբը 1907 թ. գտնվում էր Բանակում, դեռ կանգուն էր հյուսիս-արևելակողմի եռահարկ աշտարականման ծավալի և հյուսիսային խորանով բոլորակ սրահի կողմից ստեղծված եռանկյունաձև խորշի առանցքի սյունը և ահա այդ սյան բունը, գլխավոր խորանի սյան բնի համեմատությամբ, ավելի հաստ էր: Թաղաիշվիլին հաստատում է


նաև, որ սյունների քարերը բոլորովին նման չէին տաճարի պատերի երեսապատման քարերին, նրանք շատ ամուր տեսակի էին և, ըստ երևույթին, բերված էին հեռվից: Թաղաիշվիլին տեսել է մի այդպիսի սյան միակտոր բուն մոտ 2,72 մետր երկարությամբ<sup>2</sup>:

Ինչպես հայտնի է, Չվարթնոցը կառուցողը ևս սյունների համար ընտրել էր ամրակուռ միակտոր քարեր, այդպիսիք բերելով հեռու քարհանքից:

Վերոհիշյալ միայնակ սյան խոյակը քանդակավարդված էր Բանակ տաճարի համար անսպասելի թվացող, ականթի տերևապատկերով (նկ. 47): Եվ քանի որ արշավախումբը հուշարձանի ավերակում չկատարելով պեղումներ, ուրիշ սյունների բեկորներ չի հայտնաբերում, Թաղաիշվիլին եզրակացնում է, որ, թերևս, տաճարի մյուս երեք խաչա-

<sup>1</sup> Josef Strzygowski— Die Baukunst der Armenier und Europa. Wien. 1918.

<sup>2</sup> Е. Такайшвили, Бана... էջ 107:



27. Համաչափություններ Բանակ տաճարի կտրվածքում (ըստ Տ. Մարությանի)

թևերում սյուները եղած լինեն վերը նկարագրված ականթաքանդակ խոյակով սյան նման:

Գիտնականի այս եզրակացությունը հնարավոր չէ բաժանել, նկատի ունենալով, որ բոլոր խաչաթևերում սյուները ոճային առումով պետք է եղած լինեին միանման. այսինքն՝ մյուս երեք խաչաթևերում այնպես, ինչպես արևելյան խորանում է: Եվ եթե ականթատերև խոյակով սյունը պատկաներ խաչաթևերից որևէ մեկի սյունակամարաշարին, նոր ուսումնասիրողը առանց վարանելու կենթադրեր, որ այդ արգասիք է հետագա վերակառուցման: Բանն այն է, որ այդ սյունը կանգնած է այնտեղ և կատարում է մոտավորապես այնպիսի դեր, որտեղ կանգնած է և ինչպիսի դեր կատարում է արժվախոյակ սյունը Չվարթնոցում:

Ինչպես հայտնի է, արժվաքանդակ խոյակը ևս

Չվարթնոցում բացառիկ երևույթ է և նման չէ մյուս շարքային սյուներից և ոչ մեկի խոյակին, և, այնուամենայնիվ, այն չի համարվում խորթ Չվարթնոցի ընդհանուր ոճին, ընդհակառակը, մյուս յուրօրինակ խոյակների թվում նաև իրենով բնորոշում է Չվարթնոցի ոճը: Այդ նույն ձևով, Բանակում հայտնաբերված ականթաքանդակ խոյակով սյունը, ըստ երևույթին, հանդիսանում է սկզբնապես կառուցված տաճարի շքեղություններից մեկը և չէր կարող նման լինել խաչաթևերի սյուների խոյակներին:

Չվարթնոցի արժվախոյակ և Բանակի ականթախոյակ սյուների կատարած դերի միջև կա մի այն մի տարբերություն, այդ այն է, որ արժվախոյակ սյունը Չվարթնոցում կանգնած է անկյունագծով, մայր մույթի հետնամասում, հեռացած հարե-

վան խաչաթների գագաթներից, յուրաքանչյուրից տասը մետր (գծ. 29), մինչդեռ Բանակում միևնույն քսան մետրի վրա այդ նույն դերը կատարում են երեքը՝ եռահարկ աշտարականման ծավալի դրսի անկյունային մասը՝ աջ ու ձախ երկարած պատերով<sup>1</sup> և, ապա, վերջիններիս շարունակության վրա կանգնած ականթատերև խոյակով երկու սյուները (գծ. 18): Այս միջոցառումը հնարավոր է դարձրել կանարթադի թռիչքը Չվարթնոցի համեմատությամբ խիստ փոքրացնել:

Չվարթնոցում մայր մույթի տաճարի կենտրոնին ուղղված մասը մշակված է բոլորակ հատակագծով որմնասյան ձևով, որն ունի մեկ մետր տրամագիծ և պատից առաջանում է իր տրամագծի երեք-քառորդի չափով: Ճիշտ և ճիշտ նույն չափն ու պարագիծն ունի և նույն ձևով է պատի հարթությունից առաջացել գմբեթակիր կենտրոնահայաց որմնասյունը Բանակ տաճարում:

Առանձնապես նշանակալից երևույթներ են նկատվում այս երկու տաճարների հատակագծերի համաչափություններում<sup>2</sup>, օրինակ՝ միջին օղակը՝ տաճարի երկրորդ աստիճանը, երկուստեք, թե՛ Չվարթնոցում, թե՛ Բանակում, ունեն նույն տրամագծաչափը, մոտ 26 մետր: Պարզվում է, որ Բանակում գմբեթատակ տարածության փոքրացման հաշվին է, որ երկարացվել են խաչաթները, իսկ մեծ թմբուկների տրամագծերի տարբերությունը արդյունք է շրջանց սրահների տարբեր լայնությունների:

Շատ ուշագրավ է նաև, որ Բանակում ևս Չվարթնոցի նման տաճարի կարևոր մասերի չափերը որոշվել են, հիմք ունենալով **գմբեթի ներքին տրամագիծը կամ նրա բաղկացուցիչները** (գծ. 26)<sup>3</sup>:

<sup>1</sup> Այդ երկարած պատերի սկզբնապես կառուցված լինելու վերաբերյալ տարակարծություն կա: Համաձայն լուսանկարների և չափագրական նյութերի (հատակագծեր), դրանք իրոք որ ստեղծվել են ականթաքանդակ սյուները և նրանց վրա հենվող կամարները կառուցվելուց հետո, սակայն ավելի վաղ, քան աշտարականման ծավալների այդ պատերով ծածկվող անկյունները, կամ վերջինիս հետ միաժամանակ:

<sup>2</sup> Բանակ տաճարում առկա համաչափությունները բացահայտելիս ձեռքի տակ ունեցել ենք վերակապությունների լուսանկարները միայն:

<sup>3</sup> Այս եզրահանգումը արդյունք է Չվարթնոցի ավերակի, նրա առանձին դրվագների մեր նոր չափագրման, Չվարթնոցի և Բանակի հայտնի, ինչպես և նոր գծագրերի համարման, նրանցում պահպան համաչափություններ

Եթե Չվարթնոցում մեծ թմբուկի տրամագիծն է վերցվել գմբեթի ներքին տրամագծի եռակի չափով, ապա Բանակում գմբեթի ներքին տրամագծի<sup>4</sup> եռակի չափն ունի միջին թմբուկը (տաճարի երկրորդ աստիճանը): Երկուստեք, թե՛ Չվարթնոցում, թե՛ Բանակում, տաճարի կենտրոնը կապող քառակոնիսը ներգծված է այն քառակուսուն, որն իր հերթին ներգծված է մեծ թմբուկին: Չվարթնոցում էքստերնների գագաթները միացնող քառակուսու էջերը անցնում են գմբեթակիր  $\frac{3}{4}$  սյուների առանցքներով, իսկ Բանակում այդ նույն սյուների առանցքներով են անցնում կիսաշրջանաձև էքստերնների կենտրոնները միացնող քառակուսու էջերը: Ե՛վ Չվարթնոցի, և՛ Բանակի հատակագծերում բոլոր կարևոր հանգուցային կետերը ընկնում են գմբեթի ներքին տրամագծի չափից բխող, որոշակի քայլ ունեցող քառակուսիներով ստեղծված ուղիղ և թեք ցանցերի հանգույցների վրա:

Բանակում, ներքին աշտարականման ծավալների, ինչպես և գլխավոր մուտքերի հատակագծային չափերը ևս առնչվում են գմբեթի ներքին շրջագծի շառավղի հետ:


Ինչպես հայտնի է, Բանակում, երբ Կալգինը չափագրում էր այն, դեռևս կանգուն էր տաճարի ներքին կապության արևելակողմի հատվածը առաջին և երկրորդ աստիճանների սահմաններում, հետևաբար, նրա չափերը պետք է որ բավարար ճշտությամբ անդրադարձած լինեն վերակապության գծագրերում, այդ թվում և կտրվածքում:

Նշմարելու նպատակին ուղղված պրպտումների ընթացքում: Այս կարգի ուսումնասիրություններ տարբեր ժամանակներում կատարել են նաև ուրիշները: Սփյուռքահայ ճարտարապետ Ա. Օրագեանը 1958 թվականին Կահիրեում լույս ընծայած իր «Չվարթնոց» աշխատության մեջ (էջ 76) հայտնում է. «Մոս (C. Mauss) գտած է, որ Օմարի (Երուսաղեմ) նշանավոր մկկիթին հատակագիծը արդյունք է **գմբեթի** կամ **կենտրոնական բոլորակին** մեջ գծված քառակուսիներու, որոնք հետքեն ութանկյունի կիոխվին»: Ա. Սահինյանը դեռևս 1955 թ. գրում է, որ Ավանում, Հռիփսիմում, Թալինի փոքր եկեղեցում և Չվարթնոցում «մոդուլ է հանդիսանում գմբեթի հիմքի շառավիղը» (Քասաղի բալիլիայի ճարտարապետությունը, Երևան, 1955 թ.):


<sup>4</sup> Բանակում գմբեթի ներքին տրամագիծը ավելի մեծ է, քան գմբեթակիր մայր մույթերով ստեղծված քառակուսու էջը: Այստեղ գմբեթակիր կամարները երեք-քառորդ որմնասյան եզրերից որոշ չափով հետ են դրված, մի բան, որ լավ երևում է համապատասխան լուսանկարում (նկ. 36):

Բանակ տաճարում համաչափություններ ուսումնասիրելիս այս հանգամանքը պետք է նկատի ունենալ:






28. Բանակ տաճարի հատակագծի ստեղծման ընթացքը (ըստ Տ. Մարությանի)



29. Չվարթնոցի առաջին աստիճանի հատակագիծը (վերակապություն Թ. Թորամանյանի, Ս. Մարությանի փոքր հավելումներով)



29ա. Չվարթնոցի առաջին աստիճանի վերնահարկի հատակագիծը (վերակապություն Ս. Մարությանի)

Պարզվում է, որ տաճարի ծավալային տարածական օրգանիզմը ևս ստեղծվել է գմբեթի ներքին տրամագծաչափի հիման վրա (գծ. 27): Եվ եթե գծագրերում այդ ընդհանուր սկզբունքից նկատվում են փոքր շեղումներ, ապա այդ, թերևս վերագրվի գծագրական նյութերի թերություններին: Ինչպես երևում է, տաճարի ծավալա-տարածական համաչափությունների մշակման ընթացքում տեղ են գտել նաև այլ օրինաչափություններ, որայսիք մասամբ պատկերված են վերոհիշյալ գծագրում:


Չվարթնոցն ու Բանակը իրար կապող զգալի երևույթներ կան այս տաճարների նաև, ու հատկապես, արտաքին դրվագներում: Այն ժամանակ, երբ Չվարթնոցի կրկնօրինակ Գագկաշենում մուտքի դռները հավասարեցված են թմբկապատի հարթությանը, Բանակում մուտքերը եղել են թմբկապատի հարթությունից դուրս եկած ծավալներով, վերևից ունենալով ճակտոն, ճիշտ և ճիշտ Չվարթնոցի ձևով:

Բանակում, տաճարի արտաքին թմբկապատի

արևելակողմի մի հատվածում, որտեղ բոլորակ պատը հանդիպում է աշտարականման ուղղանկյուն կառուցվածքին, նշմարվում է (նկ. 30), որ թմբուկը պսակող քիվն ունի Չվարթնոցի թմբուկը պսակող քիվի ելրագիծ:

Չվարթնոցի առաջին աստիճանի թմբուկը ստեղծված է 32 նիստերով, Չվարթնոցի կրկնօրինակ Գագկաշենում՝ 36, իսկ Բանակում այդ նույն թմբկապատը, համաձայն Դ. Բաքրաձեի, որը տաճարը տեսել է համեմատաբար կանգուն վիճակում (1881 թ.), ունի 32 նիստ, այսինքն այնքան, որքան Չվարթնոցում, համաձայն Կոլիաշվիլու՝ 24 և համաձայն Կալգինի՝ 28:

Պետք է չմոռանալ, որ վերջին երկուսը տաճարը տեսել են արդեն ավերակ (1902 թ.) և կատարյալ ավերակ (1907 թ.) վիճակում, մեծ մասամբ ծածկված սեփական փուլքերով: Ըստ երեկույթին, Կոլիաշվիլին և Կալգինը չեն նկատել, որ մուտքերով (նկ. 35) և, հավանական է, արևելակողմի ծավալով թմբկապատի ծածկված նիստերը



30. Բանակ տաճարի արևմտյան ճակատի վերակազմության տարբերակ (գծ. Տ. Մարությանի)

իրենց միջին մասում բեկում ունեն, հետևաբար նիստերի թիվը Դ. Բաքրաձեն կարող էր հաշվել  $32 (28 + 4)$ :

Համաձայն Թ. Թորամանյանի վերակազմության, Չվարթնոց տաճարի բոլոր աստիճաններում թմբուկները ծածկված են դեկորատիվ սյունակամարաշարով, Բանակում, համաձայն Ա. Կալզինի վերակազմության, այդպես է առաջին և երկրորդ աստիճաններում (նկ. 29)<sup>1</sup>: Հնարավոր է, որ այդ-

պես եղած լինի նաև երրորդ աստիճանում, ինչպես որ ցույց է տրված մեր կողմից կազմված ճակատի գծագրում (նկ. 49):

Խիստ նշանակալից է, որ երկուստեք՝ և՛

կամարաշարով կամ քանդակածածկ շրջանակներով, իսկ ներքնամասը՝ հարթ, գույք պատեր են:

Տաճարների կառուցման դարերով ձևավորված այդ սովորույթի, կանգուն եկեղեցիների օրինակի և ավերակի տվյալների հիման վրա էլ Թ. Թորամանյանը Չվարթնոցը վերակազմելիս դեկորատիվ սյունակամարաշարով է ծածկել եռաստիճան տաճարի բոլոր թմբկապատերը:

Մենք չենք կասկածում, որ դեռևս 1907 թվականին, երբ հուշարձանը անհամեմատ լավ պահպանված էր, Ա. Կալզինը տեսել է սկզբնապես կառուցված տաճարի երկրորդ աստիճանի թմբկապատի դրվագ դեկորատիվ սյունակամարաշարի մնացորդներով: Նա չունենալով տվյալներ երրորդ աստիճանի վերաբերյալ, վերակազմության մեջ գմբեթաթմբուկը թողել է առանց դեկորատիվ սյունակամարաշարի:

Մեր այս եզրակացությունը ամենին չի հակասում


<sup>1</sup> Համաձայն 33-րդ լուսանկարի տաճարի երկրորդ աստիճանի թմբկապատի մասամբ պահպանված դրվագի վրա, որպես անակնկալ՝ բացակայում է դեկորատիվ սյունակամարաշարի որևէ մնացորդ կամ հետք:

Բանն այն է, որ թե՛ հայ, թե՛ վրաց ճարտարապետության շրջանակներում հազվագյուտ բացառություններ են կազմում այն հուշարձանները, որոնց վերնամասը չունենա դեկորատիվ սյունակամարաշար, եթե ունի ներքնամասը: Ընդհակառակը՝ մեծ թիվ են կազմում այն եկեղեցիները, որոնց գմբեթաթմբուկներն օժտված են դեկորատիվ սյունա-



**Չվարթնոցում, և՛ Բանակում, բոլորովին նույն ձևով է մշակված առաջին աստիճանի թմբկապատի արտաքին հարթությունը:**

Բանակում այդ թմբուկը Չվարթնոցի ձևով իր ներքնամասում ունեցել է եռաստիճան որմնախարիսխ: Բանակում ևս, ինչպես Չվարթնոցում, որմնախարիսխից վերև այդ թմբկապատի հարթությունը բաժանված է երկուսի (գծ. 15, նկ. 26, 49, 52): Առաջին՝ բարձր մասի վրայով անցնում է դեկորատիվ սյունակամարաշար. սյուները կոյգ-կոյգ տեղադրված են կից նիստերի հանդիպման անկյուններում, ամեն նիստի վրա մեկ երկարաձիգ պատուհան է՝ կոր վերնամասով<sup>1</sup>: Հիշյալ կամարաշարի վերևով անցնում է մի գոտի. կամարաշարի և այդ գոտու միջև եղած տարածությունը (անտրի-վոլտ) քանդակապարզված է: Այդ գոտուց վերև բազմանկյունաձև թմբուկը շարունակում է բարձրանալ մինչև պսակագոտին՝ քիվը: Չվարթնոցի այդ նույն մասում՝ գոտու և պսակող քիվի միջև, թմբուկի յուրաքանչյուր նիստի վրա եղել է կոր պատուհան, որ լուսավորել է առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժինը՝ վերնահարկը (տե՛ս նկ. 52): Բանակում այդ նույն տեղում նման կոր պատուհաններ չկան: Թաղափշվիլին Բանակի ավերակները հետապոտելիս որոնել և չի գտել կոր պատուհանների դրվագներ, որից ելնելով էլ բոլորակ սրահի վերնահարկի խնդիրը թողնում է բաց: Պետք է նկատել, որ վերնահարկի գոյության հարցի որոշման համար կոր պատուհանների բեկորների օգնությանը դիմելը անտեղի է: Ըստ



31. Գազկաշենի հատակագիծը (վերակազմություն Թ. Թորամանյանի)

որում, պարտադիր չէ, որ կոր պատուհաններին պատկանող քարերը լինեն Չվարթնոցի կոր պատուհանների քարերի նման, նրանք կարող են լինել անվարդ, այնպես, ինչպես մյուս ձգված պատուհանների կոր վերնամասերի՝ բարավորների քարերը, իսկ այդպիսիները, անկասկած, ավերակում կգտնվեին, բայց այդ չէր հաստատի վերնահարկի երբեմնի գոյությունը Բանակում:

Վերևում ամվեց, որ Բանակում վերնահարկի խնդիրը լուծվել է այլ ձևով, ոչ թե Չվարթնոցի նման հորիզոնական բոլորակ սրահների, այլ ուղղաձիգ եռահարկ<sup>2</sup> աշտարակների ձևով, հետևաբար արտաքին կոր պատուհանների որոնումը, պարզ է, արդյունք չէր տա:

Սակայն կոր պատուհանների հետքեր պետք էր որոնել ոչ թե թափված քարակույտերի, այլ այն կանգուն պատերի վրա, որտեղ նրանք կարող էին լինել: Տաճարի առաջին աստիճանի թմբկապատի ամբողջական հատվածներ են պաշտպանվել հյուսիս-արևելյան (սկզբնապես կառուցված), ինչպես

<sup>2</sup> Եվ ոչ եռաստիճան (трехъярусный), ինչպես հաճախ գրում են. ярус խոսքի մեջ ավելի աստիճանի գաղափարը կա, քան հարկի, իսկ Բանակում այդ ներքին աշտարականման ծավալում սենյակները կազմում են հարկեր և ոչ աստիճաններ:

վերոհիշյալ նոր լուսանկարի տվյալներին: Ավելի ուշադիր նայելով, համեմատելով մյուս՝ կանգուն պատահատվածների հետ պարզվում է, որ այդ դրվագի այժմ մեծ չափով թափված երեսպատման քարերը ինչ որ ժամանակ վերաշարվել են: Ըստ երևույթին հենց այդ ժամանակ էլ դեկորատիվ մասերի քարերի տեղադրումը համարվել է ավելորդ:

30-րդ գծագիրը, որ Բանակ տաճարի արևմտյան ճակատի տարբերակ է, չի կարող ընդունելի համարվել: Ամբողջովին անհավանական է, որ վվարթնոցատիպ եռաստիճան որևէ շինության առաջին աստիճանը մշակվի նուրբ, ճարտարապետական հարուստ միջոցներով, ինչպես Բանակում է, իսկ երկրորդ և երրորդ աստիճանները թողնվեն հարթ պատերով: Այդ ձևով չէր կարող ստեղծվել ամբողջական, բոլոր մասերի համահնչուն փոխհարաբերությամբ, բարձր կարգի ճարտարապետական երկ:

<sup>1</sup> Կազմինի կատարած չափագրման համաձայն Բանակի երկրորդ աստիճանի պատուհանները ունեն մոտ 90—100 սմ լայնություն, նույնպիսի լայնություն են ունեցել լուսամուտները նաև Չվարթնոցում:

և հարավ-արևելյան և հարավ-արևմտյան (հետագայում վերականգնված) մասերում: Եվ ահա այդ կանգուն պատերի վրա, հատկապես անտրիվոտից վերև և թմբկապատը պասկող քիվից ներքև, որտեղ պիտի գտնվեին կոր պատուհաններ (Չվարթնոցի ձևով), այդպիսիք չկան: Ինչպես պարզվում է այդտեղ՝ առաջին թմբկապատի վերնաստում, նրանք չպիտի լինեին, քանի որ դրա կարիքը չկար, այդտեղ չի եղել վերնահարկ, որը պիտի լուսավորեին այդ կոր պատուհանները: Լուսանկարում (նկ. 14) պարզ երևում է, որ առաջին հարկի բոլորակ սրահը ներսից գրավում է այնպիսի բարձրություն, ինչպիսին ունի առաջին թմբկապատը որմնախարսխից մինչև պակող քիվը: Ուրեմն, դրսից երկուսի բաժանված առաջին թմբկապատին ներսից համապատասխանում է մի միակտուր տարածություն:

Չվարթնոցում դրսի պատի բարձրությամբ երկուսի բաժանումը համապատասխանում էր ներսի երկհարկ սրահների առկայությանը: Բանակում դրսի պատի բարձրությամբ երկուսի բաժանված լինելը դեռևս չի հուշում, թե ներսում պետք է երկհարկ տարածություն լինի: Որպեսզի նման կեղծ տպավորություն չստեղծվի, ճարտարապետը տվյալ տեղում պատուհաններ չի տեղադրել: Դեռ ավելին, պատի բաժանումը նա այնպես է կատարել, որ այնտեղ, որտեղ ենթադրվում են այդ կոր պատուհանները, թմբկապատը մեծ բարձրություն չստանա: Շատ հետաքրքիր է, որ Չվարթնոցում երկուսի բաժանված թմբկապատի վերին՝ փոքր հատվածը, կապում է ամբողջի մոտ 0,4 մասը (այս համընկնում է «տակե բաժանման» հարաբերությանը), մինչև Բանակում համապատասխան պատահատվածը կապում է ամբողջի լոկ 0,22 մասը: Պետք է նկատել, որ ճարտարապետը մտածված ձևով չի հրաժարվել արտաքին պատի այդպիսի մշակումից, չէ որ այն թելադրված է նիստերի վրա եղած պատուհանների տեղադրումով, իսկ այդ պատուհանները, ինչպես և նրանց հետ կապակցված նիստերը ձևավորող կամարները, ավելի վերև չեն տարվել, որովհետև նրանք՝ այդ պատուհանները, տաճարի ներսը լուսավորելու համար են, իսկ այդ լուսամուտներից լույսը կարող է թափանցել խաչաթևը սահմանափակող կամարաշարով միայն, որի չափով և թելադրված է այդ պատուհանների տեղը ըստ բարձրության արտաքին պատի վրա:

նակում նույնն է, նույն տրամաբանական մտքի

Այս պատի սշապուսը և՛ Չվարթնոցում, և՛ Բարդուղյունքը: Այդ պատը շքեղացնող քանդակաչափերով, որ ընկած է կամարաշարի և նրա վերևով անցնող գոտու միջև, թե՛ բովանդակության, թե՛ հարթության մեջ նրա կոմպոզիցիոն տեղադրման և թե՛ կատարման տեխնիկայով ու արվեստով, երկուստեք նույնն է<sup>1</sup>: Այս երևույթի կողքով անուշադիր չի անցել Ե. Թադաիշվիլին. գրքի 107-րդ էջում նա գրում է. «Տեղ-տեղ, գլխավորապես<sup>2</sup> արևելակողմից պահպանվել են արտաքին կամարների վարդեր: Նրանք կապված են հրաշալի քանդակներից, ներկայացված բավական ռելիեֆ, սակայն որոշ չափազանցումով, տերևներով և պտուղով, գլխավորապես նոներ, խաղողի վազեր և այլ պտուղներ»: Այդ նույն էջի տողատակում նա ծանոթագրում է. «Նոների քանդակային պատկերները, որոնք մեծ քանակությամբ թափված են արևելակողմի բոլորակ սրահի մոտ, շատ խոշոր են և ծանր»<sup>3</sup>:

Այս նոները ընկած են եղել արևելակողմում, որովհետև, ինչպես ասվեց, տաճարի արևելակողմի պատերն են, որ սկզբնապես կառուցված տաճարից պահպանվել և հասել են մեր օրերը, որոնց վրա և եղել են այդ քանդակված նոները: Առաջին թմբկապատի հարավային և հարավ-արևմտյան հետագայում վերականգնված պատերի վրա նման քանդակներ չեն եղել և, այդ պատճառով էլ, այդ պատերի մոտերքում Թադաիշվիլին քարակերտ նուան մեծ և ծանր բեկորներ չի տեսել:



Ուշագրավ է, որ Չվարթնոցի նույն դրվագում քանդակված նոները ևս շատ խոշոր են (մինչև 35—40 սմ տրամագծով) և, ըստ երևույթին, իրենց տեղում՝ պատի վրա կախված, նրանք երկվացել են (և փաստորեն եղել) շատ ծանր:

Չվարթնոցի, Բանակի և Գազկաշենի առաջներում իր կատարած համեմատության ընթացքում



<sup>1</sup> Անտրիվոտի այդ ձևի քանդակապարզումը հայճարտարապետության բնորոշ կողմերից է: Այն սկսվելով Չվարթնոցում, կիրառվեց Բանակում և իր հիանալի օրինակներն ունեցավ հետագայում կառուցված տաճարներում, օրինակ, Անիի Տիգրան Հոնենցի Լուսավորիչ եկեղեցին իր կենդանաքանդակ գոտիով, Անիի մի քանի այլ եկեղեցիներ և այլն:

<sup>2</sup> Որովհետև արտաքին կամարները վարդեր ունեցել են սկզբնապես կառուցված տաճարից արևելակողմում պահպանված մասում միայն:

<sup>3</sup> E. Такайшвили, Бана... էջ 107:




11



բ

32. Բանակ տաճարի վերակառուցումները  
(գծ. Տ. Մարությանի)

- ա) սկսբնապես՝ հայոց կաթողիկոս Ներսես Գ. Շինողի կառուցած տաճարի հատակագիծը և կտրվածքը (652—658 թթ.)
- բ) Տաճարի հատակագիծը և կտրվածքը Ադրներսեհի (888—923 թթ.) վերակառուցումներով
- գ) Տաճարի կտրվածքը վերջին վերակառուցումներով



գ



որոշակիորեն երևում է Ե. Թաղաիշվիլու հետապնդած նպատակը, այն է՝ ցույց տալ Բանակ տաճարի ճարտարապետության արժանիքները:

Այդ ժամանակներում Չվարթնոցն արդեն հռոջակվել էր որպես բարձր կարգի ճարտարապետական կոթող և, ահա, Թաղաիշվիլին որոնում և տեսնում է տնորեր, որոնք Բանակը կապում են Չվարթնոցի հետ: Որպեսզի իր ասածները այդ խնդրի վերաբերյալ լինեն կոնկրետ և համոզիչ, նա պարզապես թվարկում է այդ երկու՝ Բանակ և Չվարթնոց տաճարներում գրեթե նույնությունն հանդիսացող և բարձր կատարելության հասած ճարտարապետական ձևերն ու դրվագները:

Թաղաիշվիլին գրում է. «**Ճաշիկ Դադյանի** ալբոմում դրված է [Չվարթնոցի] բոլորակ սրահի արտաքին ու ներքին պատերի վերակազմությունը՝ վրաները խաղողի վազերի, ծաղկի և պտուղներով նռան թիփի վարդաքանդակներ: Այդ վարդաքանդակները գրեթե նույնն են նրանց հետ, որոնց մենք նշեցինք վերևում Բանայի բոլորակ սրահի արտաքին կամարների վերաբերյալ... առհասարակ Բանայի և Ներսեսի տաճարի (Չվարթնոցի—Տ. Մ.) պրոֆիլները գրեթե նույնն են: Նույնիսկ անտրիվոլտների և պատի վրայի գուռիների պրոֆիլները ամբողջովին միատեսակ են! ... Ընդհանրապես պետք է նկատել, որ Բանայում դեռավները կատարված են նրբորեն և իրենց բնույթով մոտ են Ներսեսի տաճարի դեռավներին...»:

Դեռ ավելին, քանդակների որոշ մանրամասներ այնքան մոտ են միմյանց, որ կասկած չեն թողնում, թե դրանք բնորոշում են միևնույն «ձեռագիրը»: Ահավասիկ, Չվարթնոց տաճարի առաջին աստիճանի թմբկապատի վրայով անցնող սյունաշարի կամարների հանդիպումներում տեղ են գտել մարդկային դեմքերի ռելիեֆ քանդակներ. նրանցից մեկի ներքնամասում ոտքերի շարունակությունը պարանի կերպարանքով խաչավորվում, սրվելով խրվում է հիշյալ կամարների նեղված արանքը՝ անտրիվոլտի ծայրագույն ներքնամասում: Պարանով հանգուցված այդ պատկերը մենք տեսնում ենք նաև Բանակ տաճարի նույն տեղում՝ առաջին աստիճանի թմբկապատի սյունաշարի կամարների հանդիպումներում (մի քիչ ավելի բարձր դիրքում, քան Չվարթնոցում է), ստեղծ-

ված խաղողի ու նռան ճյուղերի ոլորումից (նկ. 31, 32, գծ. 16): Ավելի խիստ լինելով, կարելի է նույնիսկ պնդել, որ Բանակում անտրիվոլտի քանդակների ներքնամասը (սրածայր ծաղկաքաճակի տեսքով) նման վերջավորություն կարող էր չունենալ, քանի որ նա կամարների հանդիպումից առաջացող սուր նեղվածքից բավական բարձր է, ապառ հարթության մեջ, մինչդեռ քանդակող վարպետը Չվարթնոցի այդ փոքր դրվագը տեղափոխելով այստեղ, դարձրել է լեյտմոտիվ, կրկնելով բոլոր կամարների հանդիպումներում:

«Էտաքրքիր է, որ այդ հանգուցները, մեր բազմաթիվ տաճարներում և նույնիսկ Գագկաշենում, լուծված են այլ ձևով, որ նման չեն ո՛չ Չվարթնոցի և ո՛չ էլ Բանակի վերոհիշյալ դրվագներին: Նման են միմիայն այս երկուսում:

#### ԲԱՆԱԿ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՅՈՂԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Հիրավի, տարակուսից վեր է, որ Բանակ տաճարում գործադրված ճարտարապետական ձևերը խիստ հին են և առնչվում են հատկապես VII դարում կառուցված այլ տաճարներում տեղ գտած ձևերին: Օրինակ, վաղ միջնադարին հատուկ են արևելյան խորանի սյունակամարաշարի բոլոր մասերն իրենց ձևերով ու համաչափությամբ, այդ թվում կամարները խիստ պայտաձև են, խոյակները արդյունք երկու ոճերի համադրման (կողովահյուս ուռուցիկ մասը տեղական է, հատուկ V—VII դարերին, հարթությունից դուրս եկող սպիրալաձև խոյողները՝ վաղ հոնիականին), սյուների բները կարճ են ու հաստ, քանդակները՝ թե՛ բովանդակությամբ, թե՛ մշակման ձևով, բնորոշ միայն և միայն VII դարի համար:

Ոչ հայ, ոչ վրաց ճարտարապետության շրջանակներում IX—X դարերում Բանակի կարևոր դրվագների ճարտարապետությունը հիշեցնող ոչ մի այլ տաճար չի կառուցվել: Նույնիսկ X—XI դարերի սահմանագլխում կառուցված Չվարթնոցի կրկնօրինակը հանդիսացող Գագկաշենում, տաճարի ճարտարապետությունը բնորոշելու խնդրում կարևոր մանրամասն հանդիսացող խոյակները բոլորովին նման չեն ո՛չ Բանակի և ո՛չ էլ Չվարթնոցի խոյակներին: Ե. Թաղաիշվիլու նախորդ էջերում բերված կարևոր տեղեկությունները Բանակ և Չվարթնոց տաճարների մանրամասների և ընդ-

<sup>1</sup> Ե. Թաղաիշվիլի, Բանա, 1909, էջ 110:

հանրությունների վերաբերյալ, որ նա քաղել է ոչ թե գրքերից, այլ բազմիցս տեսել իր աչքերով, Կննել ու շոշափել է նշանավոր հուշարձանի քարերն ու բեկորները, ճոխ քանդակապարո, աչք շոյող խոյակներն ու քիվերը, բարձրացրել, ծանրությունն զգացել հսկայաչափ քարե նմների, ահա այս բոլորը, որպես լրացուցիչ փաստեր, ինչպես և պահպանված լուսանկարների ու չափագրությունների ուսումնասիրությունը մեզ բերում են այն խոր համոզման, որ **այդ երկու, ինչպես վերեվում տեսանք, ընդհանուր շատ բան ունեցող հուշարձանները՝ Չվարթնոցն ու Բանակը, իրականացվել են նույն ժամանակներում, նույն ստեղծագործ ձեռքերով:**

Պատմության մեջ քիչ չեն օրինակները, երբ որոշ տաճարներ կրկնվում, ընդօրինակվում են կամ նույն ժամանակ, նույն կառուցողի կողմից, կամ այլ ժամանակներում, այլոց կողմից: Այս երկու դեպքերում ընդօրինակումները լինում են **խիստ տարբեր** ձևով: Օրինակ, կաթողիկոս Ներսեսից 350 տարի հետո Գագիկը կրկնեց Չվարթնոցը՝ Անիում կառուցելով ս. Գրիգոր եկեղեցին՝ Գագկաշենը: Այդ տաճարը կառուցող ճարտարապետը իրականացնելով թագավորից ստացած առաջադրանքը, հիմնականում կրկնում է Չվարթնոցը, տալով հատակագծային և տարածական միանման լուծումներ, սակայն մանրամասներում (խոյակներ, քանդակներ, մուտքեր և այլն), չի կրկնում, քանի որ այդ **մանրամասները ավելի կապված են նախասիրության, ժամանակի, ոճի հետ:** Եվ, ապա, **ամենայն մանրուք ճորտաբար կրկնելը թերևս վիրավորական է կրկնօրինակը կառուցողի համար:** Մանրամասնություններում թույլ տված տարբերությունները, վերջին հաշվով, չեն խանգարում, որ առաջադրանքը համարվի կատարված, այդ տաճարները համարվեն միանման:

Հենց այն հանգամանքը, որ Բանակ տաճարը մնալով զվարթնոցատիպ տաճարների շրջանակներում, սակայն չի կրկնվում, կարևոր, հանգուցային դրվագների լուծմամբ մնում է նախորդից տարբեր, մինչև մանրամասներում կրկնվում է, ամեն քայլափոխում նմանվում, հիշեցնում նախորդը (թմբկապատի արտաքին հարթության կոմպոզիցիոն մշակում, քանդակներ, պրոֆիլներ, պատի հարթությունից դուրս կարկառված ձակտոնով մուտքեր, քիվեր, խոյակների վարդարանք և այլն)


նշան է այն բանի, որ այդ տաճարները արգասիք են մոտավորապես նույն ժամանակամիջոցի և նույն հեղինակի ստեղծագործական գործունեության: Պարզապես աներևակայելի և անհնար է պատկերացնել, որ բարձր մակարդակի մի այլ ստեղծագործող վարպետ-ճարտարապետ, որ Բանակ տաճարի հեղինակն է, այդպես ճորտաբար կրկնի գրեթե նույն ժամանակաշրջանում գործող ստեղծագործողին, ասենք՝ Չվարթնոցի հեղինակին: Այն, որ, ինչպես վերևում ասվեց, Բանակում շատ բան կա, որը Չվարթնոցում եղածի ուղղակի ընդօրինակությունն է, կրկնում ենք, անառարկելի ապացույց է, որ այդ երկու տաճարներն էլ կառուցել են նույն մարդիկ:

Ահա այսպիսի պարագաներում միայն կարող էին կրկնվել մանրամասները, չէ որ այս դեպքում միայն այդ քայլը առիթ չէր տա վիրավորանքի, ստեղծողը նույնն է, թե՛ առաջինի՝ բնագրի, թե՛ կրկնության, ինչպես և ոչ մի պայմանով առիթ չէր տա այդ երկու տաճարները համարել նույնություն:

Երբ երկրորդի կառուցողը նույն հեղինակն է, ապա նա երբեք առիթը չի կորցնի մի նոր, նախորդից անհրաժեշտ չափով տարբեր կոթող ստեղծելու համար: Նույնությունը կլինեք անհետաքրքիր, միջոցների և նորը ստեղծելու հնարավորության կորուստ:

Այս հոգեբանական մոմենտը ևս, որ անտարակույս բնական է և շատ հավանական, ամրացնում է այն ենթադրությունը, թե Բանակ տաճարը դեռևս VII դարում կառուցել է Ներսեսը, տաճարների այդ տիպի ստեղծողը, իր ճարտարապետ-վարպետների ձեռքով: Ըստ որում, **Բանակ տաճարի կոմպոզիցիայի հիմքում ընկած է հայկականին յուրահատուկ այն կողմը, որ կառուցվածքի ներքինը իր արտահայտությունն է գտնում արտաքինում, որոշակի ամփոփ ընդհանրացումով:** Կոնկրետ դեպքում, այստեղ ևս Չվարթնոցի նմանողությամբ, կոմպոզիցիայի միջուկը ներկայացնող խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցին բոլորված է արտաքին թմբկապատով:

Արդ, քանի որ մենք ենթադրում և համոզվում ենք, որ Բանակ տաճարը կառուցել են Ներսեսը և իր վարպետները, ըստ որում, Չվարթնոցից անմիջապես հետո, այդ դեպքում պետք էր սպասել, որ այստեղ, Չվարթնոցի համեմատությամբ, տաճարի ընդհանուր հատակագծային և տարածական պատկերը, ինչպես և առանձին դրվագներն ու մասերը



46. Բանակ տաճարի առաջին աստիճանի մեծ և երկրորդ աստիճանի փոքր սրահները բացված հյուսիսային խորանի և արտաքին թմբկապատի կործանումով






47. Բանակ տաճարի հյուսիս-արևելյան հատվածում առանձին կանգնած սկանթաքանդակ խոյակով սյուն



48. Բանակ տաճարի արևելյան խորանի ձախից երրորդ սյան խոյակը (1970 թ.)



49. Բանակ տաճարի արևմտյան ճակատը (վերակազմություն Տ. Մարտիրոսի)


50. Բանակ տաճարի հյուսիսային խորանի սկիզբը, երկրորդ պլանում՝ արտաքին թմբկապատի հետագայում հաստացված կամարակապ պատի մնացորդը. տեսքը բոլորակ սրանի կողմից →







51. Չվարթնոց տաճարի արձվաքանդակ խոյակ



52. Չվարթոնց տաճարի արևմտյան ճակատ (վերակազմություն Թ. Թորամանյանի)





53. Չվարթնոց տաճարի քանդակվարդ գառու  
դրվագ

54. Չվարթնոց տաճարի սյունակամարաշարի սյան  
կողովանկյուն խոյակ






55. Գագկաշեն տաճարի քարե մանրակերտը Գագիկ թագավորի արձանի ձեռքերի վրա




56. Սեն-Շապել (Փարիզ) եկեղեցու երկու հարթաքանդակ Չվարթեոցի պատկերով

57. Դվինի հնագույն շինության կողովակիտուս խոյակ







58. Օշկ վանք տաճարը հյուսիս-արևմուտքից




59. Օշկ վանք տաճարը հյուսիս-արևելքից

60. Օշկ վանք տաճարը հարավից




61. Օշկ վանք տաճարը հարավ-արև-  
մուտքից




62. Օշկ վանք տաճարի կառուցողների  
հարթաքանդակները








63. Օշկ վանք տաճարի արևմտյան թևի  
հարավային պատի ներքին տեսքը





64. Օշկ վանք տաճարի գմբեթատակ տարածության տեսքը առևանտյան թևից

65. Օշկ վանք տաճարի արևմտյան ճակատի պատուհանը



66. Օշկ վանք տաճարի լայնական կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (չափագրություն Ա. Կալգինի, կատարումը՝ Մ. Կերնի)





67. Օշկ վանք տաճարի հարավային ճակատի դրվագ



ստեղծված լինելն ավելի բարձր մակարդակով: Այդ բանը, սակայն տեղի չունի: Նախ, շենքի ընդհանուր բարձրությունը մեծ թմբուկի տրամագծի համեմատությամբ բավական փոքր է (այդ հարաբերությունը կապում է ընդամենը 0,95, Չվարթնոցում 1,25 է, Հոփսիսիումում՝ 1,11—1,41): Նույնպիսի վիճակում են մանրամասները. օրինակ, գլխավոր խորանի սյունակամարաշարում խոյակների բավական լայն կողովահյուս քանդակով գլանի տեղը, տեկտոնիկ տեսակետից, չի գտնված և կոնստրուկտիվ դերը ի չիք է դարձված: Այսպիսի գլան կա Իշխանի խոյակներից երկուսում (արևելյան խորանի երկրորդ և յոթերորդ խոյակներում) և ավելի փոքր տրամագծով՝ մյուս խոյակներում: Այնտեղ այդ գլանները, իրենց դերի համաձայն, տեղը գտել են. թվում է, թե վերևից եկող ծանրությունը մեծածավալ խոյակի միջոցով անցնում է այդ գլաններին և նրանք լարված աշխատում, կրում են վերևից եկող բեռը, դիմագրավում այդ ուժերի ճնշմանը: Այդ գլանները նաև հարմար ձևով կազմակերպում են անցումը ծավալուն խոյակից սյան ավելի փոքր տրամագծով բնին: Այսպիսի գլան ունեն նաև Դվինի խոյակները, նրանք գտնվում են անմիջապես խոյողների տակ և հանդիսանում են խոյակի կրող օղակը:

Գլանների փոխարեն, Երեբուքի և Չվարթնոցի խոյակները՝ անմիջապես խոյողների տակ, ունեն կողովահյուս քանդակով պատած ծավալուն գլնդեր: Այս գնդերը սյան ձողից ծել և աստիճանաբար լայնացել ու բարձրացել են, ստեղծելով հարմարագույն անցում, միաժամանակ մնալով կրող, աշխատող, լարված էլեմենտ:

Վերևում թվարկված՝ Երեբուքի, Չվարթնոցի, Իշխանի խոյակների տրամաբանական, տեկտոնիկ լուծումներին հակառակ, Բանակի խոյակներում այդ օղակաձև գլանները խոյողներից անջատվել, իջեցվել են ցած, դրանով իսկ նպատակապրկելով նրանց գոյությունը թե՛ որպես կրող էլեմենտ, թե՛ սյունից անցումն ստեղծող օղակ:

Չվարթնոցի մայր մույթի թիկունքակողմում առանձին կանգնած սյուների արծվաքանդակ խոյակները չկան Բանակում: Այստեղ նրանց փոխարինում են ականթաքանդակ խոյակները, որոնք իրենց արվեստով ու շքեղությամբ, անկասկած, պիչում են արծվաքանդակ խոյակին:

Բանակում չկան նաև վերևում հիշված դիմաքանդակները, որպիսիք կան Չվարթնոցում, ջուրջ

28 հատ: Մեծ թմբկապատի արտաքին երեսով անցնող սյունակամարաշարը, իր հարամասերի փոխադարձ հարաբերակցության մեջ, ակներևաբար պակաս արվեստով է կերտված, քան այդ նույն դրվագը Չվարթնոցում: Բանակում չկա ներքին տարածության կազմակերպման այն միասնական ամբողջությունը, հանգույցների և դրվագների մշակման հստակությունը, որ կա Չվարթնոցում: Կոնստրուկտիվ խնդիրների առաջադրման և լուծման խիպախությունն ու վարպետությունը այստեղ պիչում է Չվարթնոցին:

\* \* \*

Հավաստի աղբյուրներից՝ Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես Կաթողիկոսի և այլ պատմաբանների գործերից հայտնի է, որ Չվարթնոցի օժման արարողությունից հետո հայոց կաթողիկոս Ներսես 3-րդը խուսափելով Թեոդորոս Ռշտունու հետապնդումներից, Բյուզանդիոնի Կոստանդ կայսեր հետ 652 թվականին հեռացավ Վաղարշապատից, գնաց Կոստանդնուպոլիս, այնտեղից «կամավոր աքսորի» բնույթով մեկնեց հայրենի Տայք և միայն վեց տարի անց, Թեոդորոս Ռշտունու մահից հետո՝ 658 թ. վերադարձավ Վաղարշապատ, գրավեց իր գահը, սբաղվեց Չվարթնոց տաճարին կից պալատական շենքերի մինչ այդ անավարտ մնացած մասերի շինարարությամբ, շրջակա հողերի ոռոգման սիստեմի կառուցմամբ և մահացավ 661 թվականին:

Ներսեսը Հայաստանի Մայր աթոռի հայրապետ ընտրվելու առաջին 10—11 տարիների ընթացքում, իր անմիջական պարտականությունների կատարմանը պուզընթաց, այնպիսի մեծ շինարարական գործունեություն ծավալեց, որ արժանացավ «Շինող» պատվավոր հորջորջման: Դեռ ավելին, Ե. Թաղախչվիլին, հիմնվելով վրաց աղբյուրների վրա, այն համոզումն է հայտնում, որ Ներսես Տայեցու բուն շինարարական գործունեությունը իր հայրենիքում եպիսկոպոս եղած ժամանակ բավական էր, որ «Շինողի» պատվավոր կոչում վաստակեր: Իսկ եթե իսկապես այդ հենց այդպես եղած լինի, ապա կարելի է նույնիսկ մտածել, որ թերևս այդ համբավը իր ժամանակին օգնած լինի Ներսեսին մի ամբողջ ժողովրդի կաթողիկոսի աստիճանի բարձրանալուն:

Մեզ համար այժմ կարևորն այն է, թե շատ հավանական է, որ Ներսես Գ. Շինողը, ջուրջ

ոհնգ-վեց տարի գտնվելով Խորագույն Հայքում, չէր կարող պարապ ժամանակ վատնել, և շատ հասկանալի է՝ նա պետք է շարունակեր իր շինարարական գործունեությունը:

Հետազոտող Ս. Մնացականյանի այն թեզը, թե հավանական է, որ Ներսեսը Իշխանի տաճարը կառուցել է ո՛չ թե Չվարթնոցից առաջ, այլ Չվարթնոցից հետո, այսինքն՝ այն ժամանակ, երբ նա գտնվում էր Խորագույն Հայքում «Կամավոր աքսորի» բնույթով<sup>1</sup>, ցուրկ է բավարար հիմքից:

Այն, որ Իշխանի մասին խոսելիս պատմաբան Մերչուկի մոտ կարդում ենք. «...կառուցված երանելի Ներսես կաթողիկոսի կողմից, ...», այդ դեռ չի նշանակում, թե Իշխանը կառուցվել է այն ժամանակ, երբ Ներսեսը կաթողիկոս էր: Այդ լուրջույց է տալիս, որ Խանձթեցու կենսագիր Մերչուկը ավելի ուշ է գրել իր գործը, քան Ներսեսի եպիսկոպոսությունից կաթողիկոս դառնալը և բնականաբար, Մերչուկը չէր գրելու «երանելի եպիսկոպոս Ներսեսը», չէ որ «երանելի Ներսեսը» պատմության մեջ մնացել է իր վերջին՝ կաթողիկոս տիտղոսով: Ճշմարտությանը ավելի մոտ լինելու համար անհրաժեշտաբար պետք է կատարվեր քննարկվող տաճարների ճարտարապետական-ոճական վերլուծություն և այդ հիման վրա բացահայտվեր նրանցում գործադրված միջոցների ժամանակ բնորոշող հատկանիշները:

Հիշյալ թեզի անընդունելի լինելը հատկապես պարզ է դառնում, երբ անդրադառնում ենք վերոհիշյալ խնդիրներին՝ այդ տաճարներում ճարտարապետական յուրօրինակ միջոցների գործադրման տրամաբանությանը՝ հերթականության իմաստով:

Անհնար է, որ Իշխանի ինքնատիպ խոյակները ստեղծվելին Չվարթնոցից հետո և Բանակից առաջ: Բանակի կառուցման ժամանակ Իշխանում գործադրված տեղական դպրոցին հատուկ ոճական առանձնահատկությունները եղել են որոշ չափով անցած էտապ, արդեն տիրապետող է դարձել Չվարթնոցի ոճական առանձնահատկությունների ամբողջությունը<sup>2</sup>, հենց այս ապրիցու-

թյան տակ էլ ստեղծվել է Բանակը ճիշտ այն ժամանակ, երբ Ներսեսը գտնվում էր Խորագույն Հայքում՝ 652—658 թվերի ընթացքում:

Մովսես Կաղանկատվացին հաղորդում է, թե երբ Կոստանդ կայսրը վերադարձավ Հայաստանից, իր հետ տարավ Չվարթնոցի ճարտարապետին, որ իր մայրաքաղաքը վարդարի պալատական նոր եկեղեցով, կառուցելով մի նոր Չվարթնոց: Այնուհետև հաղորդվում է, թե ճարտարապետը մահացավ ճանապարհին: Հենց այն փաստը, որ կայսեր մտադրությունը մնում է անկատար և Կոստանդնուպոլսում մի նոր Չվարթնոց չի կառուցվում, հավանական է դարձնում և հաստատում է Կաղանկատվացու թողած ճարտարապետի մահվան վերսիան<sup>3</sup> Բյուզանդիոնի ճանապարհին:

Անկասկած է, որ Կոստանդի և Ներսեսի հետ Բուզանդիոն մեկնողների մեջ ճարտարապետից

---

տեսակ, հիմնականում կողովակիցու, սիրված և տարածված մոտիվ Արարատյան դաշտում և Շիրակում, սկսած դեռևս 5-րդ դարից (Երերուք):

Հատկանշական է նաև պատերի շարձը. Իշխանում համեմատաբար փոքր քարերն են, մի քիչ անկանոն, ըստ երևույթին հաշված կառուցումից անմիջապես հետո սվաղելու համար. այդպես է նաև Օշկում: Մինչդեռ այլ տրադիցիա է եղել Արարատյան դաշտում և Շիրակում, որտեղ տաճարները ներսից նույնպես շարվում էին խոշոր չափի սրբատաշ տուֆաքարերով: Այդպես է Չվարթնոցում, և այլ տրադիցիան Չվարթնոցի ճարտարապետական ձևերի հետ միասին չվեց ու կիրառվեց Բանակում, ինչպես և Խախու տաճարում:

<sup>3</sup> Մովսես Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից, Մոսկվա, 1860, էջ 255:

«Սա (Ներսես Գ) էր հայրագիր նորին Կոստանդնի և գանձիւք նորա շինեաց վրապմապայծառ փարախն բանաւոր Հօտից ի քաղաքադաշտի ի սուրբն Գրիգոր և ի նաւակատիս կոչեաց վրազատրն Հոռոմոց, որ յաւերժ հիացեալ ընդ շինուածն ետ հրաման շինողացն գնալ վկնի իւր վի վնոյնաձնն յարմարեցէ ի պալատանն: Եւ ոչ ժամանեալ գնալ ի տունն իւր ի ճանապարհին վախճաներ»:

Մեր հետազոտողներից ոմանք վերոհիշյալ մեջբերումը հասկանում են այնպես, որ իբր ճանապարհին մահանում է ոչ թե ճարտարապետը, ինչպես ասվում է այս աշխատության մեջ, այլ կայսրը: Այս ճիշտ չէ, քանի որ Կոստանդ II-ը, որ ծնվել է մոտավորապես 630 թվականին և բյուզանդական կայսեր գահն է բարձրացել 641 թվականին, սպանվել է Սիրակուզայում 668 թվականին, այսինքն՝ 16 տարի անց այն օրերից, երբ Հայաստանից իր հետ տանում էր Չվարթնոցի ճարտարապետին (652 թ.): Տե՛ս ԵՏՁ, հ. 22, էջ 416, 1954, ինչպես և История Византии, т. 3, Москва, 1967, էջ 399:

<sup>1</sup> Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 163:

<sup>2</sup> Անկարևոր չէ այն, որ ինչպես նշվեց վերևում, Իշխանի խորանի կամարաշարի սյուների խոյակները մոտ 4—5 տեսակի են, իսկ Չվարթնոցում և Բանակում միա-

բացի եղել են նաև անվանի վարպետներ: Եվ, ահա, այդ վարպետները որոշ ժամանակ մնալով Կոստանդնուպոլսում, թերևս որոշակի կառուցումներ կատարելուց հետո, որոնց վերաբերյալ չունենք տեղեկություններ (ոչ հին, ոչ նոր), Ներսեսի հետ գնացել են Խորազույն Հայք և գործակցել իրենց առաջնորդին՝ կառուցելով Բանակ տաճարը:

Այժմ ի՞նչ իմանանք, թե ի՞նչ ծրագրերով Ներսեսը մեկնեց Կոստանդնուպոլիս և, ապա, այնտեղից՝ իր ծննդավայրը: Այդ ճարտարապետ-վարպետներին կա՞յսրն էր տանողը, թե՞ Ներսեսը, նախօրոք որոշած լինելով իր հետագա անելիքները: Նա լուրջ նախապատրաստվել, իր հետ վերցրել էր իր գործակիցներին ու, թերևս դիտավորությամբ, դժվարություններից խուսափելու նպատակով, այն տպավորությունն ստեղծել, թե կայսրն է կարգադրել ճարտարապետին մեկնել իր հետ, ինչպես հաղորդում է պատմագիրը:

Իհարկե, ամենահավանականն այն է, որ կայսրն ու Ներսեսը միասին են ծրագրել այդ ամենը ու, թերևս, ծրագրել են նաև Բանակ տաճարի կառուցումը, ո՞վ գիտի, գուցե դարձյալ Կոստանդինի միջոցներով՝ նրա ազդեցությունը այդ երկրամասում ավելի ամրապնդելու ակնկալությամբ:

Բանակ տաճարի կառուցման պատմագրական տեղեկությունները վերաբերում են ուշ դարերին, և այն էլ IX—X դարերում կառուցված լինելուն: Այդ տեղեկությունների սկզբնաղբյուրները մեզ հայտնի չեն: Իսկ VII դարում կառուցված լինելու վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել: Տաճարի ճարտարապետական-գեղարվեստական վերլուծությունը մեզ թույլ է տալիս լրացնել պատմագրության բացը:

Համաձայն սույն աշխատության էջերում բերված նկարագրության, № № 16 և 17 գծագրերի ու մի շարք լուսանկարների, Բանակ տաճարի արտաքին թմբկապատի տարբեր հատվածներ միմյանցից ակներև տարբերվում են: Դրանով եզրակացվում է, որ այդ թմբկապատի հիշյալ հատվածները կառուցվել են տարբեր ժամանակներում. ըստ որում, հյուսիս-արևելյան հատվածը ավելի հին է, հարավ-արևմտյան և հարավ-արևելյան հատվածները՝ համեմատաբար նոր:

Մտունագիրները նաև տեղեկացնում են, որ Բանակ տաճարը կառուցվել է Ադրնեբսեիի օրոք (888—923), հետագայում այդ եկեղեցուն եպիսկո-

պոս ձեռնադրված Կվիրիկեի (Կյուրիկեի) ձեռքով:

Նկատի ունենալով, որ Ադրնեբսեիից հետո՝ ավելի ուշ դարերում Բանակը մեծ չափով վերականգնելու, վերակառուցելու վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չկան և ոչ էլ տղնտեսական ու քաղաքական պայմաններ են եղել այդ կարգի շինարարական գործեր իրականացնելու համար, իրավամբ կարող ենք եզրակացնել, որ IX—X դարերի սահմանագծում տաճարը ոչ թե կառուցվել, այլ մինչ այդ մեծ չափով վնասված շինությունը վերակառուցվել է: Ահա այդ ժամանակներին պետք է վերագրել տաճարի արտաքին թմբկապատի հարավ-արևմտյան և հարավ-արևելյան հատվածների շինարարությունը:

Իսկ ե՞րբ է սկզբնապես կառուցվել տաճարը, որից կանգուն է մնացել մեծ թմբկապատի հյուսիս-արևելյան հատվածը: Ինչ խոսք, ո՞չ արաբների 150—200 տարի տևող ծանր տիրապետության ժամանակամիջոցում, ո՞չ VIII—IX դարերում, այլ ավելի վաղ՝ VII դարում, այդ նահանգի ժառանգական տերեր Մամիկոնյան նախարարների օրոք:

Բանակ տաճարի VII դարում կառուցված և IX—X դարերի սահմանագծում վերակառուցված լինելը այժմ իրապես համարվում է ընդունված:

Այս պայմաններում տրամաբանական և հավանական պետք է համարել, որ Բանակ տաճարը սկզբնապես կառուցված լինի հրաշակերտ Չվարթնուցը կառուցող, համբավավոր շինարար Ներսես կաթողիկոսի անմիջական մասնակցությամբ, մանավանդ, որ տաճարների այդ նոր տիպի ըստեղծողը, ինչպես ասվեց վերևում, եղել է ինքը՝ Ներսեսը, հետևաբար նա ինքն էլ պետք է լիներ նրա ափաջին տարածողը:

Ե. Թաղաիշվիլին, հիմնվելով Գրիգոր Խանձթեցու կենսագիր Մերչուլի տվյալներին, հաստատում է, որ Ներսեսը իր հայրենիքում իրականացրել է ոչ միայն մեկ, այլ շատ կառուցումներ: Ուրեմն, ինչու՞ չի կարելի դրանց թվում նկատի ունենալ նաև Բանակը:

Բանակ տաճարի ստեղծման ընթացքում, անկասկած, պացվում է մտահոգման հեղինակի, տվյալ դեպքում, մեր համոզմամբ՝ Ներսես Շինողի ներկայությունը, առկա են նաև առանձին դրվագների և մասերի վարպետ կերտողները, և եթե ըստ պացվում է մեկի բացակայությունը, ապա այդ գործում բացակա է ճարտարապետը, որի ներկայությունը միայն կկարողանար այս կառուցվածքը



բարձրացնել Չվարթնոցի մակարդակին: Եվ, թերևս, այս կապակցությամբ առիթ է ստեղծվում մի անգամ ևս ուշադրությամբ ունկնդրել Մովսես Կաղանկատվացուն, համաձայն որի ճարտարապետը Կոստանդնուպոլիս մեկնելիս իր մահկանացուն կնքեց դեռևս ճանապարհին:

Նկատի առնելով այն, որ Բանակ տաճարի կենտրոնը կապնող եկեղեցին հիմնականում կըրկնում է այդ ժամանակ հռչակված Բագարանի և Թեոդորոս և Գառնիի<sup>1</sup> բոլորակ եկեղեցիների կոմպոզիցիան, մենք հակված ենք բացատրել նախ՝ այն բանով, որ Ներսեսը հնայված, դեռևս Չվարթնոցից առաջ կառուցված Բագարանով, որի հիմքում ընկած է ս. Էջմիածնի հատակագիծը, ցանկացել է այն ընդգրկել իր հռչակած նոր չվարթնոցատիպ կոմպոզիցիայի մեջ: Եվ ապա, մտածում ենք, որ թերևս հենց Բագարանը կառուցող ճարտարապետն էր Ներսեսի կողմից հրավիրված Բանակ տաճարը կառուցելու: Նա էլ հասցրել է միայն կապնել «նախագիծը», իր մահկանացուն գտնելով Կոստանդնուպոլիս ճանապարհին:

Պատմությունը չի պահպանել Բագարանի ճարտարապետի անունը, պահպանել է Իշխան Բուտի անունը, որի մահից երեք տարի անց (631 թ.) ավարտվել է տաճարի կառուցումը, իհարկե, ճարտարապետի հսկողությամբ, որը եթե այդ ժամանակ լիներ 30—35 տարեկան, ապա Բանակի կառուցման նախօրյակին, մինչև 652 թ., նա պետք է լիներ մոտավորապես 60 տարեկան, արդեն վարպետացած մի արվեստագետ: Այն թեպև, որ նա էլ պետք է եղած լինի նաև Չվարթնոցի կառուցողը մնում է որպես կարծիք, կարոտ լրացուցիչ տրվելու:

Հայտնի չէ, թե ի՞նչ սկզբնաղբյուրներից են օգտվել այն ուշուրուսիները, որոնք Բանակ տաճարի կառուցումը վերագրում են Կյուրապաղատ Ադրնեբսեհին: Ավերակում չեն հայտնաբերվել Բանակը Ադրնեբսեհի կողմից կառուցված լինելը հաստատող արձանագրություններ և այլ աղբյուրներ:

<sup>1</sup> Б. Аракелян. Гарни, 1, Ереван, 1952, էջ 71 «...церковь в крепости Гарни построена... в VII в.», «...четыреабсидная церковь в крепости Гарни занимает важное место в цепи развития армянской архитектуры V—VII вв...»:

Այժմ հավանականը պետք է համարել այն, որ VII դարում Բանակը կառուցել է Ներսեսը, IX—X դարերում վերակառուցել<sup>2</sup> Ադրնեբսեհը, և որ այդ երկու անունների նմանության պատահական համընկնումը չի ծխտում հավանականության այս տարբերակը:

Այն հանգամանքը, որ Ադրնեբսեհի կատարած վերակառուցումը պատմաբանների կողմից արձանագրվել է որպես կառուցում, պետք է բացատրել նաև նրանով, որ սկզբնական հայ լուսավորչական համայնքի՝ հայադավան եկեղեցին այդ վերակառուցումով «նորանում», դառնում է քաղկեդոնական համայնքի եկեղեցի:

Այսպիսով, բծախնդիր չգտնվելով, հնարավոր է դառնում տարեգրություններում «երկրորդ անգամ կառուցեց»-ի փոխարեն գրել ուղղակի «կառուցեց» ձևով, դրանով իսկ պատվի արժանացնել եկեղեցու վերաշինությամբ կրթվողին:

Այժմ հնարավոր է ենթադրել, որ VII դարի ներսեսաշեն Բանակ տաճարը եղել է կանգուն մինչև IX դարի յոթանասունական-ութունական թվականները, մոտ 250 տարի, երբ նրա որոշ մասեր փլվել են և վերակառուցել, վերականգնել է Ադրնեբսեհը: Ուրեմն՝ Ադրնեբսեհի ժամանակներին պետք է վերագրել առաջին վերակառուցումը, այն է՝ տաճարի առաջին աստիճանի մեծ թմբկապատի այն հատվածները, որոնց վրայով անցնող դեկորատիվ կամարաշարի վերևում չկա քանդակաշերտ, ինչպես և բոլորակ սրահի նեղացումը՝ ներսից ուժեղացված կամարաշարի կառուցման հետևանքով: Եվ եթե այդ ժամանակ կործանված է եղել գմբեթը, ուրեմն վերականգնվել է նաև այն:

Տաճարի հետագա ընթացիկ, երբեմն անար-

<sup>2</sup> Ե. Թադաիշվիլին նկատում է, որ Վրաստանում հին սրբավայրերի տեղում նոր եկեղեցի կառուցելիս՝ հնից մնացած ամբողջովին չէին ոչնչացնում, այլ լավ պահպանված որոշ դրվագներ ներառում էին նոր շինության կապի մեջ: Նա շարունակում է՝ «Եթե ցանկանային Բանայի ավերակների տեղում այժմ կառուցել եկեղեցի Իշխանի կանգուն եկեղեցու նմանությամբ, ապա հեշտությամբ կարող էին նույն նպատակով պահպանել, օգտագործել Բանա եկեղեցու գլխավոր խորանը»: Հենց այսպես էլ եղել է իրականում, միայն այն տարբերությամբ, որ Բանակ տաճարի, ասենք, IX—X դարերի սահմանագլխին վերականգնման ժամանակ, ոչ թե ներառվել է լոկ մի խորան, այլ կիսականգուն մի ամբողջական եկեղեցի՝ կառուցված դեռևս VII դարում: Ըստ որում, այդ կիսականգուն եկեղեցին վերականգնվել է «նախկինի ձևով»:

վեստ վերակառուցումները կատարել են անձինք, որոնց անունները պատմությունը չի պահպանել: Բանակ տաճարում պատերի վրա արձանագրություններ, իհարկե, եղել են, այդ մասին տեղեկություններ կան: Որոշ արձանագրություններ, թերևս, բեկորների վերածված պահպանվելիս լինեն նաև ավերակի փուլքերի տակ: Հավանական է, որ եղած արձանագրությունները իրականացված լինեն տարբեր ժամանակներում՝ սկզբնական կառուցման, ապա հետագա վերանորոգումների ընթացքում և այլ առիթներով:

Բանակ տաճարի 1843 թ. ականատես Կարլ Կոխը հաղորդում է. «Արձանագրություններ եղել են, սակայն մուսուլմանները նրանց այնպես են փչացրել, որ ոչինչ մանրամասնությամբ հնարավոր չէ հասկանալ»: 1878 թ. գտնվելով Բանակ տաճարում, Ե. Գ. Վեյդենբաումը իր օրագրում (գրված 1878 թ. հունիսի 23-ին) թողել է հետևյալը. «Ահմեդ բեգը ասում է, որ մուսքի վրա կար արձանագրություն, սակայն բնակիչները քարը վերցրել են շինարարության համար... արձանագրությունը գտնվում էր եկեղեցու ներսում, հարավային դռան վերևում»:

Ե. Թաղաիշվիլին հաղորդում է, որ տեղի բնակիչների պատմածով 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ, երբ ռուսները գտնվում էին Փենյակում, Բանակ տաճարի մոտ, ռուսական ծառայության ինչ-որ զեներալ եկեղեցուց վերցրել է արձանագրված մի քար:

Ե. Թաղաիշվիլին հայտնում է նաև, որ Բանակ տաճարում թափված սվադի տակ նկատել է խուցուրի տառերով երկու տող, ամեն տողում՝ չորս տառ, նա արձանագրությանը միտք վերագրելով, իր խոսքերով ասած՝ սկիպը լրացնում և, որոշ հավանականությամբ կարդում է. «Христе, помилуй Феодора Великого»: Իհարկե, դժվար է երկու տողում ցրված ութ տառով այսպիսի լիակատար միտք ստանալ, սակայն հետապոտողը այդ արել է: Նա ենթադրում է, որ այդ գիրը ժամանակակից է տաճարի կառուցմանը (X դար):

Մի այլ արձանագրություն, որը նկատած է եղել դեռևս 1881 թ. Բաքրաձեն. Թաղաիշվիլին կարդում է. «Христе, помилуй Георгия»: Նա սլովեոգրաֆիկ նշաններով գտնում է, որ դա չի կարելի համարել տաճարին ժամանակակից:

Արձանագրություններից մնացած վերոհիշյալ պատառիկները պատահական բնույթի են և ոչինչ

չեն պարունակում ո՛չ տաճարի կառուցման ժամանակի և ո՛չ էլ կառուցողի մասին, իսկ լիակատար արձանագրությունները անհայտ, չարագործ անձանց կողմից հափշտակվել, անհայտացել և փչացվել են, տաճարը կրկելով հավաստի և իրական պատմությունից:

Ի վերջո, օրինական հարց է ծագում, թե որքանո՞վ են հիմնավորված Բանակ տաճարի VII դարում կառուցված լինելու փաստարկները:

Եթե այս խնդրում բացակայում են պատմագրական, առայժմ նաև վիմագրական աղբյուրները, ապա ավերակի դրվագների բազմաթիվ լուսանկարները առատ նյութ են տալիս ճարտարապետական-գեղարվեստական ոճական վերլուծության համար: Այս մեթոդով<sup>1</sup> ստացած տվյալների հիման վրա հնարավոր է դառնում լրացնել պատմագրության պակասը տաճարի կառուցման ժամանակի վերաբերյալ:

Իսկ որքանո՞վ հավաստի են այն տվյալները, որոնք Բանակ տաճարի կառուցման ժամանակը համարում են IX—X դարերի սահմանագիծը:

Նախորդ էջերում հնարավոր եղավ մի շարք փաստերի հիման վրա եզրակացնել, որ միջին դարերում վերակառուցելու գաղափարը երբեմն արտահայտվել է «կառուցել» բառով: Այդ երկու բառերի միջև այն ժամանակներում մեծ տարբերություն չեն տեսել և խնդրին բժախնդրորեն չեն մոտեցել, աշխատել են վերակառուցողին արժանին հատուցել՝ լավ գործի համար:

Ուրեմն, հնարավոր է, որ այդպես եղած լինի նաև պատմաբան Դավթի որդի Սոււմբաթի մոտ, որ Բանակ տաճարը Ադրնեստեի կողմից լինի վերակառուցված, իսկ պատմաբանի մոտ լինի արձանագրված «կառուցել» բառով:

Բանակ տաճարը IX—X դարերում կառուցված լինելու թեզը խիստ հակասում է ավերակի առկա տվյալներին, ինչպես և իր հավաստիության աստիճանով՝ ամենաչնչին չափով անգամ չի գերազանցում տաճարի ճարտարապետական-գեղարվեստական վերլուծությամբ հիմնավորված այն թեզին, թե այն կառուցվել է դեռևս VII դարում:

<sup>1</sup> Նյութական կուլտուրայի հուշարձանների ժամանակագրության ճշտման համար ճարտարապետական-ոճական վերլուծական մեթոդը պատմագրությանը և վիմագրությանը հավասար միջոց է և նրանց հետ միասին վերոհիշյալ խնդրի լուծման ընթացքում բերում է առավել ճշարիտ եզրահանգումների:

Անդրադառնալով Դավթի որդի Սոււբաթի ժամանակագրությանը, որտեղ ասվում է, թե «Այդ Աղբներսեհը (881—923)՝ սպանված Դավթի որդին, Բանան կառուցեց Կվիրիկե Բանելու ձեռքով, որը Բանայի առաջին եպիսկոպոսն էր», Գ. Չուբինաշվիլին ասում է. «Այդ տեղեկությունը կարծես թե որոշակիորեն ցույց է տալիս, որ Բանան կառուցվել է IX—X դարում, մինչդեռ Կաթողիկե եկեղեցու ամբողջական կոմպոզիցիան և գեղարվեստական վարդերի էլեմենտների ընտրությունը չի կայում: ...Բանայի կոմպոզիցիան անմիջականորեն նմանվում է Չվարթնոցի կոմպոզիցիային... Եթե սրան ավելացնենք դեկորատիվ մոմենտները, ապա հարկավոր է ընդգծել, որ Բանայի խորանի սյուների խոյակների քանդակները և նրանց ձևը Չվարթնոցի և Իշխանի խորանների սյուների անմիջական անալոգիան է: Տաճարի կորպուսի արտաքին դեկորատիվ կամարաշարի վերևում գտնվող նոնների եռանկյունաձև վարդաքանդակի մոտիվն ու կոմպոզիցիան, ինչպես և կատարման որակըն ու տեխնիկան, բոլորովին նման է Չվարթնոցի նույն ֆրագմենտին: Նույն նմանությունն ենք տեսնում բոլորաձև անցնող գոտիների միջև, նույն ձևով մինչև գմբեթակիր կամարներն են բարձրանում կենտրոնական քառակուսին կապնող մույթերի անկյունային կլորացումները, նույն ձևով խաչաթևերի գմբեթարդ վերնամասերը, հենվում են գմբեթակիր կամարներին: Այստեղից հետևում է, որ Սոււբաթի թողած տեղեկությունը պետք է հասկանալ որպես մայր եկեղեցու «ԵՐԿՐՈՐԴ ԿԱՌՈՒՅՈՒՄ», այսինքն՝ վերականգնում, կապված նոր եպիսկոպոսի նշանակման հետ»: Չուբինաշվիլին շարունակում է՝

«Այսպիսով ես հնարավոր և անհրաժեշտ եմ համարում, որ շինարարությունը պայմանականորեն չվերագրել IX—X դարերին: Այն ժամանակ այդ տիպի շենք և այն էլ այդպիսի դեկորատիվ վարդաքանդակների մոտիվով անծանոթ է ո՛չ միայն Վրաստանում, այլև նրանց գոյությունը այդ ժամանակներում անհնար էր, քանի որ այդպիսին չի համապատասխանում վարգացման օրինաչափությանը: Այդ բոլոր էլեմենտները, ընդհակառակը, Բանային որոշակիորեն ձգում են դեպի VII դարը, Չվարթնոցի և Իշխանի անմիջական հարևանությանը: Այս կոմպոզիցիայում փորձեր են արվել

[տարածական] ձևի և հատակագծի նոր հարաբերակցություն ստեղծելու համար»<sup>1</sup>:

Մենք բաժանում ենք Գ. Չուբինաշվիլու այս կարծիքը, որ հիմնված է ավերակի շնորհած փաստերի վրա:

Այս կապակցությամբ Ե. Թաղաիշվիլին գրում է. «Եթե Բանան VII դարին է պատկանում, այն... պիտի համարվի... նույն Ներսեսի կառուցածը: Ուրիշ որևէ մեկը այդ ժամանակ Տայքում այդպիսի հուշարձան չէր կարող կառուցել»<sup>2</sup>:

Ե. Թաղաիշվիլու սույն եկրակացության տրամաբանությունը լիակատար է և ենթակա չէ վիճարկման:

652—658 թվականներին Ներսես Գ. Շինողի կառուցած Բանակ տաճարը տեղի հայ համայնքի եկեղեցին է: Նրա հատակագծային և ծավալային տարածական կոմպոզիցիան, ողջ լիակատարությամբ, մինչ այդ մշակված էր՝ հանձին Չվարթնոց տաճարի, կենտրոնական մասի հիմքում դրված է Բագարանի հատակաձևը:

Այդ տաճարից (համաձայն 1902—1907 թթ. լուսանկարների) պահպանվում են՝ արևելյան խորանը ամբողջությամբ, նրա երկու կողմերում բարձրացած աշտարականման եռահարկ ծավալները, տաճարի առաջին աստիճանի բոլորակ սըրահի արտաքին պատի հյուսիս-արևելյան հատվածը:

Տաճարի նշված դրվագներում տեղ գտած ճարտարապետական ձևերն ու քանդակավարդումները հարավատ են և, շատ դեպքերում կրկնում են ժամանակի հայկական ճարտարապետական արվեստի հանրահայտ օրինակները, նրանց միջև չկա էական տարբերություն և որևէ հակասություն:

Աղբներսեհի վերակառուցումներն իրենց պարզ արտահայտությունն են գտել Ա. Կալգինի վերակապված հատակագծում և որոշ չափով՝ կտրվածքում: Տասներորդ դարի վերակառուցումից հետո Բանակ տաճարի արտաքին պատկերն ընդհանուր գծերով տրված է Ա. Կալգինի ստեղ-

<sup>1</sup> Գ. Ն. Չուբինաշվիլի, Վրաց արվեստի պատմություն, հ. 1, Թբիլիսի, 1936 թ. (վրացերեն), էջ 175—176:

<sup>2</sup> Ե. Ս. Թաղաիշվիլի, 1907 թվականի հնագիտական արշավախումբը Կոլա-Օլթիսիում, Չանգիում, Փարիզ, 1938 թ. (վրացերեն), էջ 24—28:



ծած ճակատի գծագրում՝ մանրամասների որոշակի վերապահումներով:

Բանակ տաճարի հետագա վերակառուցումները պատկերվել են Ս. Կղիաշվիլու կապած կըտորվածքում, այդ գծագիրը փոփոխվել, համապատասխանեցվել է տաճարի Ա. Կազինի կապած առաջին աստիճանի հատակագծի տվյալներին:

Նախապես՝ VII դարում հայոց կաթողիկոս Ներսես Գ. Շինողի կառուցած Բանակ տաճարի համար մեր առաջարկած սույն վերակապությունը ստեղծվել է ձեռքի տակ ունեցած նախորդ վերակապությունների և ավերակի բազմաթիվ լուսանկարների համեմատա՛յան ուսումնասիրության հիման վրա:

Օշկ վանքը գտնվում է Խորազույն Հայքի Ապորդացիոր (այժմ Թորթում) գավառի Օշկ վանք գյուղում, որն ընկած է Թորթում գետի միջին հոսանքում, նույնանուն լճի հարավային վերջավորության վրա: Օշկ վանքի մոտ կիսվում է այդ տեղով անցնող Արդվին—Կարին (երպերում) խճուղին: Վանքը կառուցված է գետի ձախ ափին, հատկապես այդ նպատակի համար հարթեցված բարձրադիր տեղում, որտեղից դիտվում է լճի և շրջակա հովտի համայնապատկերը:

Օշկը<sup>1</sup>, որ վանքի գլխավոր տաճարն է, եղել է Խորազույն Հայքի հայ քաղկեդոնական համայնքի հիմնական եկեղեցին, կառուցված Կյուրապաղատ Ադրներսես Գ-ի որդիներ՝ իշխանաց իշխան Բագրատի և մագիստրոս, հետագայում Մեծ կյուրապաղատ Դավթի կողմից X դարի երկրորդ կեսի սկզբներում:

Օշկը հատակագծային, ծավալա-տարածական հորինվածքով անմիջականորեն հարում է Իշխանին՝ կենտրոնագմբեթ, հիմքում խաչաձև, արևմտյան երկարած թևով (գծ. 33):

Օշկը ևս իրենով բնորոշում է Խորազույն Հայքի X դարի ճարտարապետական դպրոցի դեմքը:

Օշկում հյուսիսային և հարավային խաչաթևերը, գրեթե ամբողջությամբ, կրկնում են տաճարի արևելակողմի խորանն ու երկու կողմերի ավան-

<sup>1</sup> Այս տաճարի մասին Ատրախտը գրում է. «Վանքը Օշկին է պատկանում, գեղից երկու կիլոմետր հեռու է և իր ճարտարապետությամբ առաջին տեղն է բռնում ամբողջ Տայոց աշխարհում, որը յոթը հրաշալիքներից մեկն է և ամենանշանավորը»: Եվ ապա՝ «Յոթը հրաշալիքն սկսվում է Խախով և վերջանում է Իշխանով, որոնց մեջ տեղ են գրավում Օշկ, Օշնակ, Օթխա, Բանա տաճարները և Աբեր-նիսի դուռը: Սակայն Իշխանի տաճարը իր նկարագրով կա և մնում է, որպես անկործան հրաշալիք Տայոց աշխարհի...»:

դատները: Կան, իհարկե, ոչ քիչ եկեղեցիներ, որոնց հյուսիսային և հարավային խորանաձև խաչաթևերը կրկնում են արևելյան խորանի պարագծերը, սակայն առանց կրկնելու նաև արևելակողմի ավանդատները: Օշկ տաճարի հատակագծի այս յուրօրինակությունը աննախադեպ է և նմանը չունի ողջ քրիստոնեական ճարտարապետության մեջ: Ներքին տարածության ձևավորման առումով լինելով հետաքրքիր, առավել հարստացնող հանգամանք, այն տաճար մուտք գործողի համար ապակողմնորոշող է: Այստեղ առկա է արևելակողմի՝ գլխավոր խորանի առաջնության վիճարկելիության ակներև մոմենտը: Այս, ըստ էության, մի զգալի շեղում է մեր եկեղեցաշինության ընդհանուր տրադիցիոն ճանապարհին:

Շատ հնարավոր է, որ իրականում հիմնական ուշադրությունը ուղղվել է դեպի արևելյան խորանը կողային երկու մուտքերի ստեղծումով, ներքին տարածության ձևավորման և խորանների կահավորման զգալի դիֆերենցացումով:

Արտաքին հետաքրքիր ծավալներով, ճարտարապետական հարուստ միջոցներով ստեղծված Օշկ տաճարի կառուցողը միաժամանակ փորձեր է արել խաչաձև եկեղեցու պարագծերում ստեղծել ներքին շրջանց սրահի պատրանք, որպիսին կա զվարթնցատիպ տաճարներում: Պետք է նկատել, սակայն, որ նույնիսկ բոլորակ, երկու առանցքներով սիմետրիկ տաճարներում, այսինքն՝ Բանակում (գծ. 18), ինչպես և Խժկոնքում (գծ. 25) ու նման այլ տաճարներում, ավանդատները խորանանման կտրագումներ են ունենում բացառապես արևելակողմից: Օշկում առկա, սովորույթին հակառակ այս երևույթը, ինչ խոսք, ընդհանուր ոչինչ չունի բազմախորան եկեղեցիների հետ, որտեղ գործադրվում են ներքին տարածության

կապմակերպման իրենց միայն հատուկ միջոցները: Նշենք, որ հատակագծային կոմպոզիցիան Օշկում ստեղծվել է նախօրինակ ունենալով Իշխանը: Տաճարը հետապոտող Ե. Թաղաիշվիլին Օշկ տաճարի հատակագիծը, որոշ տարբերություններով հանդերձ, համարում է Իշխան տաճարի հատակագծի կրկնությունը<sup>1</sup>:

Օշակում ևս, ինչպես Իշխանում, գմբեթը բարձրանում է առանձին կանգնած չորս հաստահեղույս մույթերն իրար կապող գմբեթակիր կամարների վրա: Արևելակողմի երկու մույթերը հիմքում բալամանիստ են, արևմտակողմի մույթերը՝ խաչաձև՝ չորս մեծ, չորս փոքր թևերով (նկ. 64):

Գմբեթային քառակուսուց անցումը գմբեթի բոլորակ հիմքին ստեղծված է տրոմպի և առագաստի համադրությամբ:

Ակներև սխավում են ումանք, այդ թվում հատկապես Ն. Տոկարսկին և ուրիշներ այստեղ փոխանցման համակարգը լոկ առագաստային համարելով: Այդ սխալն առկա է նաև Կալզինի վերակապմության գծագրում (կատարված Սևերովի կողմից):

Տաճարի արևմտյան թևի ողջ երկարությամբ հյուսիսից կից է նեղ ու երկար մի սենյակ արևելյան ծայրում կիսակլոր խորշով, հարավից՝ ճակտոններով կամարակապ բաց սյունասրահ<sup>2</sup>, որ կիսակլոր խորշեր ունի ոչ միայն արևելյան ծայրում, այլև երկար պատի վրա, թվով երեք հատ: Հետագայում տարբեր չափի և ձևի սենյակներ են կցվել տաճարին արևմտյան կողմից: Մուտքի դռներից մեկը հարավային խաչաթևի վրա է, մյուսը՝ հյուսիսային, մեկական դռներ կան սյունասրահում և արևմտյան թևի ծայրում (գծ. 33):

Օշկի երեք՝ արևելյան, հյուսիսային և հարավային խաչաթևերի դրսի պատերի վրայով անցնում է դեկորատիվ սյունակամարաշար: Ամեն թևի վրա հինգ կամար է, կենտրոնականը բարձրանում է, հասնելով ճակտոնի քիվերին, միջին բարձրության երկուսը շրջանակում են խորանի և ավանդատների միջև խորացած եռանկյունի հիմքով խորշե-

րը, երկու եզրայինները, որ ավելի ցածր են, համապատասխանում են ավանդատներին:

Կոնաձև տանիքով բարձր գմբեթաթմբուկը նույնպես պատած է դեկորատիվ սյունակամարաշարով: Նրա 24 նիստերից 12-ի վրա բացվում են ձգված համաչափության կամարաձև վերնամասով լուսամուտներ (նկ. 58):

Տաճարի հարավ-արևմտակողմի բաց սյունասրահի վերջին հաստաբետ սյան ութ քանդակավարդ<sup>3</sup> նիստերից մեկի վրա, մի ծնկաչոք, աղոթողի դիրք ընդունած մարդու քանդակի մոտ կարմիր ներկով «Բրիստոս օգնիր քո ճորտ Գրիգորին»<sup>4</sup> գրվածքի, ինչպես և այլ արձանագրությունների հիման վրա, Ե. Թաղաիշվիլին տաճարի կառուցման ղեկավար է համարում հիշյալ «Գրիգորին» և նրա օգնականներ՝ վանականներ «Միքելին» ու «Հովհաննիս»: Մ. Բրոսսեն այդ «Գրիգորին» համարում է տաճարը կառուցող ճարտարապետ: Ե. Թաղաիշվիլին ճարտարապետ է համարում տաճարի արևելյան ճակատի միջին՝ ամենաբարձր կամարի վերնամասում գտնվող (տեղից արդեն ընկած) քանդակը ներկայացնող անձնավորությանը, որի անունը կորսվել է քանդակի կորսված և կորսված գլխի հետ միասին: Հիշյալ քանդակի ներքնամասի վրա կան գրեր, որոնց վերծանմամբ էլ հետապոտողը տաճարի կառուցման տևողությունը համարում է տասը տարի (951—961):

Բոլորովին չի համոզում, որ ճարտարապետի քանդակը տեղավորվեր տաճարի արևելյան ճակատում, նրա ամենաբարձր մասում, որտեղ միայն սրբեր և սրբերի շարքն անցած մեծավորների պատկերներ են տեղավորվում, կամ այնտեղ ուղղակի խաչ է քանդակվում: Նման տեղ հատկացնել ճարտարապետի քանդակին, այն էլ այն դեպքում, երբ շատ ավելի համեստ տեղ է հատկացված Բագրատին ու Դավթին ու նրանց միջև՝ աստվածամոր և երկու այլ սրբերի պատկերներին, հեռու է հավանականությունից: Մնում է ենթադրել, որ Թաղաիշվիլու արևելակողմի անշաղախ ցանկապատի շարքում գտած քանդակաբեկորը


<sup>1</sup> Е. Такайшвили, Археологическая экспедиция, 1917 г. էջ 3:

<sup>2</sup> Ե. Թաղաիշվիլին Օշկի արևմտյան նավի հարավակողմում գտնվող բաց սյունասրահի գոյությամբ ենթադրում է, որ նման սյունասրահ ունեցել է նաև Իշխանը: Այդպիսին, եթե ունի կրկնօրինակը, հետևաբար պետք է ունենար նաև սկպեօրինակը, տրամաբանում է հեղինակը:

<sup>3</sup> Օշկ տաճարի ամբողջովին քանդակված այդ սյունը բացառություն չէ, այդպիսին Օշկում երկուսն են, մեկ հատ էլ պաշտպանվում է Արգինա եկեղեցում (Շիրակ):

<sup>4</sup> Ե. Թաղաիշվիլին իր աշխատության մեջ չի բերում «Գրիգոր» անվան որոշակի լուսանկար, ներկայացնում է այդ անվան լոկ ֆակսիմիլեն:





33. Օշկ վանք տաճարի հատակագիծը  
(չափագրություն Ա. Կալգինի, կատարումը՝ Մ. Կերնի)

չի ներկայացնում կառուցող ճարտարապետին և կամ չի պատկանում տաճարի արևելյան ճակատի վերնամասին:

Օշկ տաճարի պատերը ծածկված են եղել բազմաթիվ արձանագրություններով, կատարված երկաթագիր («Աստվաբույի») կամ բոլորագիր («Մրգովանի») և գերապանցապես կարմիր ներ-

կով: «Քարին փորագրված արձանագրությունները միայն երեքն են» — գրում է Թաղաիշվիլին:

Քանդակների մասին խոսելիս, Ե. Թաղաիշվիլին հատկապես նշում է «իր ռեալիզմով առանձնապես ուշագրավ է էգ եղնիկին հալածող արու եղջերուի քանդակը», որ գտնվում է տաճարի զմբեթաթմբուկի ներքնամասում, և ապա էջի տողա-

տակում ծանոթագրում է՝ «ճիշտ այդպիսի քանդակ է նշում անժամանակ վախճանված երիտասարդ ճարտարապետ Լ. Մուսխելիշվիլին Դմանիսի մոտ գտնվող հայկական սովորական տիպի մի եկեղեցու վրա», որ պիտի պատկանի Կյուրիկյանների թագավորության ժամանակաշրջանին:

Օշկ տաճարի պատերը դրսից երեսպատած են դեղնակարմիր գույնի սրբատաշ քարով, կանոնավոր շարքերով, ներսից՝ համեմատաբար փոքրաչափ քարերով ու շաղախի լայն կարերով, հենց սկզբից էլ ենթակա սվաղվելու:

Համաձայն Ե. Թաղաիշվիլու, վրացական պատմական փաստաթղթերում միայն մեկ անգամ է հիշվում Օշկը, այն էլ XVI դարի մի Գուշարում, ուր Օշկ տաճարը անվանվում է վանք:

Օշկը, ինչպես ասվեց վերևում, Խորագույն Հայքի հայ քաղկեդոնական համայնքի գլխավոր եկեղեցին է: Նրանում պաշտոնական արարողությունը կատարվում էր ոչ հայերեն, դրանով էլ բացատրվում է պատերի վրա գերազանցապես ներկով գրված արձանագրությունների ոչ հայերեն լինելը:

Այս հուշարձանը միշտ էլ ունեցել է Օշկվանք կամ Օշք, Էօշքվանք<sup>1</sup> կամ ուղղակի «Վանք» հայկական անվանումը, թե՛ այն ժամանակ, երբ կառուցվում էր և շրջապատված էր արմատական հայ բնակչությամբ, թե՛ XIX դարի կեսերին, երբ Ն. Սարգսյանը հետապոտում էր եկեղեցին, արտագրում արձանագրությունները և թե՛ XX դարի երկրորդ տասնամյակին, ինչպես այդ հաստատում են Ն. Օկունեն ու Ե. Թաղաիշվիլին: Վերջինս գրում է.

«Գյուղը, որ տեղավորված է Օշկի գետի երկու կողմերում, հարավակողմում ունի Օշկի (թուրքե-

<sup>1</sup> Н. Л. Окунев. Отчет о командировке летом 1917 г... (Известия Российской АН, № 17, 1917 г., СПб).

Հ. Ներսիսի Սարգսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 86: Ալիշան, Նշմարք, գ. էջ 85, Էփրիկյան, Բնաշխարհի բառարան, Ա, Հատոր Բ, էջ 838—840: Համապատասխանաբար, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951:

Е. Такайшвили, Археологическая экспедиция 1917 года в южные провинции Грузии, Тбилиси, 1952, էջ 45:

Վերջին հարյուրամյակի մեր մատենագիրները Օշկ անվան «կ» տառի փոխարեն գրում են «ք» տառը՝ Օշք: Նկատի ունենալով, որ «Օշկը» ուրարտական խոսք է, կապված «ոսկի, օսկի» անվան հետ, հարմար համարվեց պահպանել անվան նախնական ձևը՝ Օշկ, Օշկ վանք:

րեն «Եօշք») անունը, իսկ հյուսիսակողմում, վանքի շրջապատում, Օշկիս-Էկլեսիա (թուրքերեն «Եօշք-վանք») անունը: Հեղինակը սխալվում է, երբ «Եօշք-վանք»-ը անվանում է թուրքերեն: Հանրահայտ է, որ «վանք» է անվանվում միայն և միայն հայկական եկեղեցախումբը կամ նրա գլխավոր տաճարը: Ուրիշ ոչ մի ժողովրդի մոտ այդ «վանք»-ը չկա:

Այն, որ այլապզի՝ թուրք բնակչության մեջ մինչև օրս պահպանվում է «Եօշք-վանք» կամ ուղղակի «Վանք» անունը, հաստատապես նշանակում է, որ մի ժամանակ այդտեղ ապրել ու այն կառուցել է հայախոս ազգաբնակչությունը:

Ատրպետը նշում է, որ Խորագույն Հայքում «...շատ լեռների, ջրերի, գեղերի և դաշտերի անունները եղծվել փոփոխվել են, սակայն 80 տոկոսը մեծ մասամբ պահպանել են իրենց նախնական անունները»:

Երբ Ե. Թաղաիշվիլին գտնվում էր Օշկում, այնտեղ, սենյակներից մեկում բնակվում և եկեղեցին պահպանում էր մի հայ կին<sup>2</sup>:

Այժմ Օշկ-վանք գյուղում բնակվում են թուրքեր, կամ ավելի ճիշտ՝ երբեմնի հայեր, որոնք հետևում էին քաղկեդոնական (հունական) կրոնին, ապա դարձան վրացադավան, հետագայում հալածանքների ու ճնշման տակ ընդունելով մահմեդականություն՝ թուրքացան<sup>3</sup>: Նրանք էլ անադարտ պահպանել են եկեղեցու վաղեմի անվա-

<sup>2</sup> Е. Такайшвили, Археологическая экспедиция 1917 года... էջ 45:

<sup>3</sup> Ճորոխի ավազանի բնակիչները, որ այժմ թուրքախոս են, արմատական թուրքեր չեն, նրանք բռնի թուրքացածներ են, որ խուսափելով կոտորածներից, ընդունել են իսլամն ու գոյատևել: Աջարիայի և Իմերիսի թուրքացածները մինչև վերջ մնացել են կապված մայրենի՝ վիրական գավառաբարբառի հետ: «Այս երկու գավառներից բացի,— գրում է Ատրպետը,— Ճորոխի ավազանի մնացած գավառների ներկա բնակիչները իսլամն ընդունած նախկին հայերի ժառանգներն են և այս բանը իրենց՝ այդ թուրքախոս բնակիչներին, լավ հայտնի է: Նրանց առօրյա կյանքն ու կենցաղը իրն հայկական է»: Ատրպետը հայտնում է նաև, որ «...ամեն մի ընտանիքի մականունը տոհմական-ժառանգական էր,— Մուխստնց Օսման, Տերտերանց Ալի, Քավորանց Հուսեյն, Սահահորանց Մահմետ, Փաղկանանց Դուրսուն և ուրիշներ: 1879 թ. մինևույն բանը մեզ պատմեց Տեր-Անտոնը Կողայի Հոգամ գյուղում, ուր բնիկները խոստովանեցին ճշմարտությունը, երբ Կ. Պոլսից տուն էի վերադառնում»:

Ճորոխի ավազանի իսլամացած բնակիչներն իրենց ապ-

նումը, իրենց այն ժամանակվա բարբառով կոչում են «վանք»: Խորագույն Հայքի Ազորաց Փոր (այժմ Թորթում) գավառում գտնվող, մինչ այժմ

գանվան հայկական մականուններից բացի, խոսակցական լեզվում պահպանել են հայերենի մեծաքանակ բառեր:

Ատրպետը այդ վայրերը հետազոտելիս գրի է առել տեղի բնակիչների գործածած հայերեն բառերից հետևյալները.

ա. Ագրակ, Ագատ, ակ, ակիշ, ակոս, ախոռ, աղբին, աղբնոց, աղբյուր, ամբար, աչար, արոր, անաճ, ավելուկ:

բ. Բաթաթ, բակ, բակլա, բահ, բաճ, բերդ, բանջար, բլուր, բողկ, բուրջ, բրոտ, բազուկ:

գ. Գերանդի, գոմ, գողնակ, գաթա:

դ. Դարակ, դեղ:

ե. Եգ, եզնոց, եղ, եղինճ:

զ. Չանկ, վանգ:

է. Էրան:

թ. Թաթ, թաթակիշ, թաթան, թնդիր, թել, թթխմոր, թելիկ, թափան:

ի. Իլիկ:

լ. Լավաշ, լոշ-հաց:

խ. Խավիճ, խմոր, խոպ, խոտ, խոտանոց, խոփ, խախուտ:

ծ. Ծաղիկ:

կանգուն Օշկ վանքը նահանգի ճարտարապետության X դարի ամենաարժեքավոր հուշարձաններից է:

կ. Կամ, կապան, կարագ, կարաս, կալ, կավ, կաբա, կավատ, կիսակ, կարմուկ:

հ. Համեմ, հարոց, հետիկ (ձյունի քոշ), հերկ, հորսելի, հիմ, հոտաղ:

ձ. Չմեռնակախ, ձիթանք, ձոր:

ճ. Ճրագ:

մ. Մաճ, մաճկալ, մանգաղ, մաքի, մսուրք, մարագ, մատակ, մառան, մարխ, մազման:

ն. Նշան, նշանլի, նազուկ, նազլի:

շ. Շեն:

չ. Չվան, չեչ, չիրիշ, (շրեշ), չիր:

պ. Պանիր, պաստեղ, պոչուկ (պոչ):

ջ. Ջերմուկ:

ս. Սամի, սամոտեն, սրոց, սոխ, սոխարաց, սխտոր:

վ. Վանք, վերան, ավերան (ավերակ):

տ. Տաշտ:

գ. Յախավել:

փ. Փագ, փոցիս, փարախ, փեթեք (փեթակ):

ք. Քերծ:

օ. Օրենք (օրինակ):

(Ատրպետ, ձորոյի Ավազանը, Վիեննա, 1929, էջ 198):



Խախու վանքը գտնվում է Խորագույն Հայքի Ապրողացփոր (այժմ՝ Թորթում) գավառի Խախու գյուղում, որը Օշկ վանքից ընդամենը հինգ կիլոմետրի վրա է, նրա հյուսիսակողմում: Տաճարը կառուցված է հատած-հարթեցված սարավանջին: Խախու գյուղի բնակիչների մոտ գործածական է եղել «Վանք» անվանումը: Խախու վանքը՝ Խորագույն Հայքի հայ-լուսավորչական համայնքի գլխավոր եկեղեցին է եղել:

Խախուն մեկն է այն հուշարձաններից, որոնք իրենց բնորոշ կողմերով հավաստում են Խորագույն Հայքի X դարի ճարտարապետական ուրույն դպրոցի գոյությունը: Նրա հատակագծային, ծավալային-տարածական հորինվածքը խարսխված է նույն կոնստրուկցիոն սկզբունքի վրա, որպիսին առկա է Իշխանում և Օշկում: Խախուն նույնպես կենտրոնագմբեթ կառուցվածք է, հիմքում խաչաձև, արևմտյան երկարած թևով (գծ. 34):

Խաչաթևերից արևելյան խորանը կիսաշրջանաձև է, գմբեթարդ ծածկով, հյուսիսային և հարավային թևերը՝ հատակագծում ուղղանկյունի, թաղա-

<sup>1</sup> Քարտեկներում Խախուն ցույց է տրված Օշկից մերթ հյուսիս, մերթ հարավ:

Այս տաճարի մասին Ատրպետը գրում է. «Խախու վանքի անունն ու հռչակավոր Մեծամոր տաճարը հիշեցնում է պատմական Խախ գեղը—լուսավորչի կայվածքը. այս գեղի իսկական անունը նույնպես Խախ է, բայց կոչվում է Խախու-վանք՝ սեռական հոլովով:

Այս տաճարը ոչ միայն մեծությամբ, գմբեթով և գեղեցկությամբ անհամեմատ բարձր է Երվնկայի Խախ-ից, այլ սրա մոտ գտնված լճակներն ու վիշապական արձանները կանկած են բարձրացնում, թե արդյոք այս չէ՞ իսկական Խախը»:

«Խախու տակավին մեծավատամբ հայ է... մինչև Ապու-նիս...», ասում է Հ. Յակոբոս Վ. Տաշեանը (տե՛ս Հայ բնակչութիւնը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921):

ծածկ: Արևմտյան թևը եռանավ սրահ է, միջինը՝ լայն, երկու կողայինները՝ նեղ, երեքն էլ՝ թաղածածկ: Ըստ որում, միջին նավի թաղը հենվում է նավերն իրարից բաժանող եռակամար ներքնամասով պատերի վրա, կողային նավերի թաղերը՝ այդ և երկու արտաքին պատերի վրա:

Արևմտյան թևի հյուսիսակողմից կից է երկայնական թաղածածկ մի սրահ, հարավակողմից՝ կամարակապ թաղածածկ բաց պուստարահ, որտեղ և գտնվում է եկեղեցու հիմնական մուտքը:


Խախուի արտաքին պատերը ձևավորում են՝ քիվերը, շքեղ կամարաղեղները և հովհարաձև երկգույն քարերով ստեղծված պատուհանների վերնամասերը:

Տասնվեց նիստեր ունեցող գմբեթաթմբուկը ծածկված է դեկորատիվ պուստակամարաշարով. նիստերից ութի վրա կամարակապ բարավորներով, ձգված համաչափությամբ լուսամուտներ կան: Գմբեթի վրա բարձրանում է կոմինդրածածկ կոնաձև տանիքը (նկ. 68, 69):

Խախու տաճարի կառուցման ժամանակի հարցում կարծիքները բաժանվում են: Վրացական տարեգրքում՝ «Քարթլիս ցխովրեբայի» Մարիամ թագուհու տարբերակում գրված է, որ տաճարը կառուցել է Դավիթ կյուրապաղատը (X դար):

Վախուշտին գրում է՝ «Թորթումի ձորում, Շիֆակու սարի լանջին է գտնվում Խախուլի վանքի սուրբ Աստվածածնի տաճարը, որը մեծ է, ունի գմբեթ, հիանալի կառուցված է, տեղը լավն է, այն կառուցել է կյուրապաղատ Դավիթը, թագավոր Դավթի խորթ հայրը»<sup>2</sup>:

<sup>2</sup> E. Такайшвили. Археологическая экспедиция 1917 года... էջ 45:



34. Խախու վանք տաճարի հատակագիծը  
(չափագրություն Ա. Կալցինի, կառարունը՝ Բ. Ուարովի)

«Այստեղ էլ,— շարունակում է Վախուշտին,— կա շատ գեղեցիկ եկեղեցի, ջանասիրությամբ կառուցված, որը կերտել է 48-րդ թագավոր Դավիթը, բայց այժմ այդ եկեղեցիները ամայի են»: Վրաստանի 48-րդ թագավոր հանարվում է Դավիթ Ա կյուրապաղատը (876—881), որը Խորագույն Հայքի Բագրատունիներից էր, Բագրատ Ա կյու-

րապաղատի որդին, Աշոտ Ա կյուրապաղատի թոռը (IX դար):

Բրոսսեն Խախու մեծ տաճարի կառուցումը վերագրում է այդ Դավթին, իսկ Թաղաիշվիլին Դավիթ Մեծ կյուրապաղատին, որ ապրել ու իշխել է մինչև 1000 թվականը:

Մխիթարյան Ներսես Սարգսյանը արևելյան

խորանի պատից մի արձանագրություն է արտագրել, որտեղ տառերը մեկ ընդ մեջ եղել են հայկական և վրացական: Նա հնարավոր է համարել ենթադրաբար ընթերցել «Սուրբ Գևորգ... հայկական թվականության 317 թվին (868)»:

Ընդհանրապես ճարտարապետական ձևերի պարզության և հատակագծային անպաճուճ կազմության շնորհիվ այն անմիջական տպավորությունն է ստեղծվում, որ Խախուն, թերևս, նախորդած լինի Օշկին:

Գմբեթային փոխանցման համակարգն այստեղ տրոմպային է, այն էլ երկաստիճան: Մեծ տրոմպների երակամարները հենված են գմբեթակիր կամարներին, փոքր տրոմպները՝ մեծ տրոմպներին և գմբեթակիր կամարներին: Այս վերջիններիս երկու կողմերում մեկական թեքադիր քարեր կան, որոնց դժվար է առագաստ անվանել:

Խախու տաճարում գործադրված փոխանցման համակարգը պահպանում է գմբեթակիր կամարների հանդիպման հանգույցի և գմբեթի հիմքով անցնող գոտու միջև առկա եռանկյունի տարածությունը:

Ալբոնում ներկայացվող տաճարի կտրվածքում (նկ. 72) տրոմպները ճիշտ չեն պատկերված (վերակազմություն Ա. Կալգինի, կատարումը Ն. Սևերովի) և չեն համապատասխանում լուսանկարի (նկ. 71) տվյալներին: Այստեղ մեծ և փոքր տրոմպների գագաթները բերվել են մի գծի, հասցրվել գմբեթի հիմքով անցնող գոտուն:

Իրականում մեծ տրոմպի երակամարը փոքր տրոմպների գագաթներից, առավել ևս՝ հիշյալ գոտուց բավական ցածր է:

Սակայն գծագրի գլխավոր թերին այն է, որ այդ տրոմպների կամարները պատկերված են պառկած առագաստային հարթության վրա՝ ակներև անբնական դիրքով, հակառակ քարակերտ կառուցվածքի ճարտարապետական տեկտոնիկայի բուն սկզբունքին:

Ն. Տոկարսկին հանգամանորեն անդրադառնալով Խորագույն Հայքի կարևոր հուշարձանների, այդ թվում և Խախու տաճարի գմբեթային փոխանցման համակարգի վերլուծությանը, հանգում է երակացությունների, որոնք չեն համապատասխանում այդ հուշարձանում առկա իրական տվյալներին:

Իր «ճարտարապետության եպակի հուշարձան Անիի 1911 թվականի պեղումներից» աշխատու-

թյան<sup>1</sup> մեջ նա գրում է. «Во всех этих памятниках [Ошк, Хаху, Ишхан, Тбет—Т. М] интересующий нас парус представлен в двух вариантах», а именно «Пологая кривая гурта располагается в средней части паруса, а арочка, не выходя из поверхности паруса, поднимается почти до самого карниза под барабаном».

Այստեղ ասված է այն, ինչ պատկերել են վերոհիշյալ կտրվածքի գծագրում նրա հեղինակները: Իսկ գծագրում առկա սխալների մասին ասվեց վերևում: Արդ, չխոսելով Տբեթի մասին, հնարավոր չէ բաժանել հետապոստողի՝ Ն. Տոկարսկու կարծիքը մյուս երեք տաճարներում կիրառություն գտած գմբեթային փոխանցման համակարգը առագաստային համարելու վերաբերյալ:

Ն. Տոկարսկու կողմից լուսանկարների ոչ ճիշտ ընկալման արդյունք պիտի համարել նաև տրոմպների երակամարները առագաստի հարթության վրա պառկած համարելը, ինչպես և դրանց մինչև գմբեթատակ գոտին բարձրացած տեսնելը, մանավանդ Իշխանում և Խախու տաճարում (բացառությամբ Օշկի):

Թյուրիմացության արդյունք է նաև գմբեթային փոխանցումը Գագկաշենում «Նոր տեսակի առագաստային» համարելը, և այդ այն հիման վրա, որ հուշարձանի ավերակի լուսանկարում երևացող տրոմպի քարը մշակված է ակոսներով: Իրականում Գագկաշենի այդ քարը լիակատար կիսակոնաձև տրոմպի մի բեկոր է, որում ակոսները ուղղագիծ են և ընդհանուր ոչինչ չունեն Խորագույն Հայքի վերոհիշյալ հուշարձաններից որևէ մեկի գոգավորությամբ բնորոշ նույն դրվագի հետ:

Տաճարի հարավային բաց սյունասարահի արևելակողմի ճակատի պատի վրա (որ միաժամանակ հիմնական տաճարի հարավային խաչաթևի արևմտակողմի պատն է), կա Աստվածամոր քանդակը մինչև ծնկները, մանուկը ձեռքերի վրա, նրա երկու կողմերում հրեշտակներ են իրենց ողջ հասակով: Աստվածամոր դեմքը եղծվել է այս դարասկզբում:

1916 թվականին Խախու տաճարի մոտ կանգնած ռուսական վորքի սպա (поручик) Ն. Շուգուրովը գրում է, որ Աստվածամոր այդ պատկերը շատ հարգի էր տեղի թրքուհիների մոտ, նրան պաշտում էին, չբերության և այլ դժբախտ դեպ-

<sup>1</sup> Н. М. Токарский. По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973, էջ 12—13:



քերի ժամանակ գալիս, նրանից օգնություն էին հայցում, կոհ մատուցում և այլն<sup>1</sup>:

Իր «Հին Հայաստանի ճարտարապետությունը» աշխատության 212-րդ էջում Ն. Տոկարսկին այն միտքն է հայտնում, որ թերևս Խախու տաճարը կառուցված լինի Խորագույն Հայքի հակաքաղկեդոնական հայերի համար: Այս միտքը նա հիմնավորում է նրանով, որ Խախու տաճարում պատերը ներսի կողմից նույնպես սրբատաշ են (նկ. 72), որ սկզբնապես նկատի չի ունեցվել այդ պատերը սվաղով ծածկել, նրանց վրա սրբապատկերներ նկարել, մի բան, որ չէր ընդունվում այդ շրջանում հայ լուսավորչականների կողմից:

Չէ որ Իշխանում և Օշկում այդպես չէ: Այնտեղ պատերը ներսի կողմից այնպես են, որ կառուցումից անմիջապես հետո պետք է սվաղվեին և ծածկվեին որմնանկարներով, համաձայն քաղկեդոնական եկեղեցու կանոնների (նկ. 12, 13, 46):

Տաճարի հարավային դռան (այունասրահի ներսում) աշակողմում անվնաս պահպանվել է մի սրբի բարձրաքանդակ (նկ. 76), որի ձախ թևից կախված է մի մեծ բանալի: Սուրբը աջ ձեռքով բռնած ունի չափազանց մեծ, գրեթե մարդահասակ հայերեն «Գ» տառը: Այս տառանշանը հայկականից բացի, ոչ մի այլ այբուբենում չկա: Այս բարձրաքանդակի մասին Թադաիշվիլին գրում է «Այս կողմից, վերևում ներկայացված է Պետրոս առաքյալի ֆիգուրը, վիթխարի բանալիով», սակայն «Գ» տառի մասին ոչինչ չի նշում:

Արդ, ոչինչ չի խանգարում ենթադրելու, որ Պետրոս առաքյալի աջ ձեռքով ի ցույց դրված «Գ» տառը քրիստոնեությունը հայերի մեջ տարածող Լուսավորչի՝ «Գրիգոր» անվան սկզբնատառն է:

Հայտնի է, որ տաճարի հարավային բաց այունասրահը հետագայում է ստեղծվել և նրա որոշ որմնասյուներ իրենցով ծածկել են տաճարի հարավային դռան աջ և ձախ կողմերում սկզբնապես բաց վիճակում գոյություն ունեցող քանդակներ: Բարեբախտաբար Պետրոս առաքյալը իր ցուցադրած «Գ» տառով չի ծածկվել, մնացել է բաց: Հնարավոր չէ՞ կարծել, որ վերոհիշյալ որմնասյուներով ծածկված քանդակների մեջ կարող է լինել մի այլ առաքյալի պատկերաքանդակ, նույնպես

ցուցադրած ունենալով մի այլ տառ, ասենք «Լ», որ կնշանակեր «Լուսավորիչ», կամ «Տ», որ կնշանակեր «Տրդատ» (հայերի մեջ քրիստոնեությունը, որպես պետական կրոն ընդունող թագավոր):

Տաճարի, հատկապես արևելյան խորանի հատակաձևում նկատվող կրոնական արարողության առանձնահատկություններով պայմանավորված որոշ ձևերի առկայությամբ պարզ է դառնում, որ Խախու վանքը, իրոք որ սկզբնապես եղել է հայ հակաքաղկեդոնականների՝ լուսավորչականների եկեղեցին: Չէ որ Խորագույն Հայքում ապրող լուսավորչական ազգաբնակչությունը ունեցել է իր եկեղեցին:

Խորագույն Հայքի Ապրդաց Փոք (այժմ Թորթում) գավառում գտնվող, մինչև այժմ կանգուն Խախու վանքը, որ կենտրոնագմբեթ է, հիմքում խաչաձև, արևմտյան երկարած թևով, միջնադարյան ճարտարապետության կարևորագույն հուշարձաններից է:



Խորագույն Հայքի այս երեք՝ Իշխան, Օշկ և Խախու տաճարների վերաբերյալ վերը բերված համառոտ շարադրանքից հնարավոր է դառնում նկատել, որ նրանց՝ այդ տաճարների կոմպոզիցիոն հորինվածքում ընդհանրություններն այնքան բնորոշ են, որ ինչպես տեղի անցյալ ու ներկա բնակչության, այնպես էլ որոշ ճանապարհորդների մոտ ստեղծվել է տպավորություն, թե նրանք կառուցվել են միաժամանակ, միևնույն վարպետ-ճարտարապետների կողմից: Այդ տաճարները շարունակ համեմատվել են միմյանց հետ, մեկի մասին խոսելիս անպայման հիշվել են մյուսները, առանձին-առանձին գնահատվել ամեն մեկում առկա բարձր բարեմասնությունները՝ «Իշխանը հռչակված է իր որմնանկարներով, Օշկը՝ իր գեղեցկությամբ, Խախու տաճարը՝ իր դիրքով»:

Այս երեք տաճարներում հատակագծային ընդհանուր կոմպոզիցիան, մասնակի տարբերություններով հանդերձ, նույնն է: Արևելքից տաճարների երեք խաչաթևերն են գմբեթատակ քառակուսու երեք կողմերում, արևմտակողմում՝ երկարած չորրորդ խաչաթևը: Արևելյան խորանը երեքում էլ կիսաշրջանաձև է, ըստ որում, Իշխանում այդ կիսաշրջանը ստեղծվել է այունականարաշարով, Խախու տաճարում կամարաշար հիշեցնող խորշերի շարքով, ինչպես որ այդ Անիի մայր տաճա-

<sup>1</sup> Ն. Շուգրուովի ակնարկած «թրքոսիները» ակներև անհիման սպառնալիքի տակ երբեմնի թրքացած հայերի ժառանգներն են, որ դեռ մնացել են հին հավատին:

րի, Մակարավանքի և Մարմաշենի խորաններում է, սակայն ավելի նախնական բնույթով, քան վերջիններում է:

Իշխան և Խախու տաճարներում հյուսիսային և հարավային խաչաթևերը ուղղանկյունի են, Օշկում՝ կիսաշրջանաձև: Իշխանում և Օշկում արևմտյան երկարած թևերը միանավ սրահներ են, Խախու տաճարում՝ եռանավ: Իշխանում և Օշկում գմբեթատակ քառակուսին ստեղծվել է չորս հաստահեղույս մույթերով, Խախու տաճարում՝ խաչաթևերի պատերի անկյունային մասերով: Օշկն ու Խախուն հարավակողմից ունեն բաց սյունասրահ, Իշխանը չունի: Ե. Թաղաիշվիլին ենթադրում է, որ այդպիսի սյունասրահ ունեցել է նաև Իշխանը, սակայն հետագա վերակառուցումների ընթացքում այն վերացել է: Եթե Օշկի կառուցողը կրկնել է Իշխանի հատակագիծը, ապա սյունասրահը ևս իր նախօրինակը պիտի ունենար Իշխանում, տրամաբանում է Թաղաիշվիլին: Հետապոտողի այս ենթադրությունը առայժմ մնում է իբրև լույ ենթադրություն, քանի դեռ նոր ուսումնասիրություններով տեղում չեն հայտնաբերվել նյութական ապացույցներ:

Այս երեք՝ Իշխան, Օշկ և Խախու տաճարների ներքին տարածության կավանկերայման որոշակի ընդհանրության պայմաններում, շատ զգալի տարբերող կողմերից է այն, որ, օրինակ. Իշխան և Խախու տաճարներում մուտքի դռները գտնվում են արևմտյան թևի որևէ մասում, հետևաբար այցելուները գմբեթատակ են հասնում, կամ խորանին մոտենում արևմտակողմից՝ անցնելով ըզգալի տարածություն. մինչդեռ Օշկում դռներ կան նաև հյուսիսային ու հարավային թևերում և, հետևաբար, տաճար մտնողների մի մասը գրեթե միանգամից ընկնում է գմբեթատակ տարածություն: Որոշ առումով նշանակալից է, որ Իշխանում ևս հետագայում հարավային խաչաթևի վրա բացվել է դուռ՝ շքամուտքի տեսքով:

Արտաքին ծավալային կոմպոզիցիոն առումով ևս այս երեք տաճարները, ունենալով ընդհանուր շատ բան, այնուամենայնիվ, միմյանցից տարբեր են:

Իշխան և Օշկ տաճարների պատերը, այդ թվում և գմբեթաթմբուկները, դրսից ծածկված են դեկորատիվ սյունակամարաշարով, մինչ Խախու տաճարում միայն գմբեթն է, որ օժտված է նման ձևավորմամբ:

Իշխանում հարթ պատի վրայով անցնող դեկորատիվ սյունակամարաշարից բացի, նույնպիսի սլացիկ սյուներ և նրանց վրա հենվող կանոնավոր կամարներ զգալի խորանում են պատի հարթության մեջ և պատերի ընդհանուր հարթության համեմատությամբ ետ տանում միջկամարային հարթությունները: Այս դեպքում անտրիվոտի պատերը հենվում են կամարաշարի վրա, ինչպես որ է դասական ճարտարապետության օրինակներում՝ Չվարթնոցում, Անիի մայր տաճարում, Մարմաշենում և այլ հուշարձաններում: Իշխանի ճակատներով անցնող սյուների փնջերով ու ստվերաշատ կամարներով ստեղծված շարքը օրգանական է և տպավորիչ:

Օշկում նման պատկեր, իհարկե, չկա: Այստեղ պատերի մշակումը իրոք դեկորատիվ է: Կիսագլանով ստեղծված սյունակամարաշարը բոլորում է շենքի խաչաթևերի ճակատները՝ առանց խորանալու պատի արտաքին հարթությունից ներս: Ինչ խոսք, որ այս դեպքում լույս ու ստվերը ճակատների վրա նույն ակտիվությունը չունեն, ինչ որ Իշխանում:

Խախու տաճարում ճակատները, բացառությամբ գմբեթաթմբուկի, նույն դեկորատիվ մշակումն չունեն, ինչպիսին կար նախորդ տաճարներում, հարթ ու հանգիստ պատեր են, պատուհանի բացվածքների վերնավարդեր, քիվեր և այլն: Այստեղ ևս հարավակողմի բաց սյունասրահն է արտահայտված ռելիեֆ, ակտիվ լույս ու ստվերով:

Իշխան և Խախու տաճարների գմբեթները ըստեղծված են 16 նիստերով, իսկ Օշկ տաճարի գմբեթը՝ 24: Իր մասերի համաչափ փոխհարաբերությամբ, բարձրաճաշակ, բարձրարվեստ մշակվածությամբ Իշխանի գմբեթը եպակիներից է: Այդ առումով նախընտրելի է նաև Խախու տաճարինը: Օշկում գմբեթի մասերը զգալի մանրացվել են, թվում է, թե մասշտաբը գտնված չէ:

Այս տաճարներից Իշխանը, որ կառուցվել է դեռևս VII դարի երեսնական թվականներին, հետագայում կառուցված Խախու և Օշկ, ինչպես և այլ տաճարների համար հանդիսացել է նախօրինակ: Նրանում գործադրված վանապան ձևեր և եղանակներ այս վերջիններում դարձել են լեյտմոտիվ՝ հիմք ու սկզբունք Խորագույն Հայքի յուրահատուկ կողմերով բնորոշ ճարտարապետական դպրոցի համար:

Կենտրոնագմբեթ տաճարների առաջացման ու վարձացման ճանապարհին առաջին էտապը քառակուսի հիմքի վրա բարձրացած գմբեթով շինություններն են (Ողջաբերդ—IV դար, գծ. 35-ա):

Հաջորդ էտապում գմբեթատակ տարածության չորս կողմերին հպվում են չորս թևեր (հենաթեվեր), որոնցից արևելյանը կիսաշրջան, գմբեթարդ ծածկով խորան է, մյուս երեքը՝ թաղածածկ ուղղանկյունիներ: Այս ձևով կազմավորված շինությունները ունեն «պարզ խաչաձև» անվանումը (գծ. 35-բ—զ): Այն խաչաձև եկեղեցիները, որոնց բոլոր՝ չորս թևերն էլ խորաններ են (հենախորշեր), ունեն «քառախորան», կամ «տետրակոնխ, քառակոնխ» անվանումը (գծ. 39 ա-զ և գծ. 40 ա-զ):

Նկատի ունենալով, որ ուղղանկյուն թևերի կառուցումը այն ժամանակներում անհամեմատ դյուրին պիտի լիներ, հնարավոր է ենթադրել, որ պարզ խաչաձևը նախորդած լինի քառակոնխին:

Պարզ խաչաձև հուշարձաններից այստեղ ներկայացվում են Բջինի, Սպիտակի շրջանի Ղուրսալու գյուղի սուրբ Գևորգը (VI դ.), Կարմրավորը, Լմբառը, Մապարջուկը:

Պարզ խաչաձև եկեղեցիների թվում կան նաև պնպիսիները, որոնք արևելյան խորանի երկու կողմերում ունեն ավանդատներ (գծ. 36 ա-դ): Այսպիսի հուշարձաններից են Էգրեկը՝ Խորագույն Հայքում, VII դարում կառուցված Կոշի սուրբ Ստեփանոս և Բյուրականի Արտավազիկ եկեղեցիները Աշտարակի շրջանում, Եղեգնամոր եկեղեցին, որ գտնվում է Կաղզվանից ոչ հեռու՝ Չանգի գյուղում և Աստվածածին եկեղեցին Ախուրյանի շրջանում: Այս վերջինում ավանդատուն կա հյուսիս-արևելակողմում միայն: Կոշի եկեղեցում ավանդատները քառակուսուն մոտ ուղղանկյուն

նիներ են, մյուսներում արևելակողմից առկա են խորանանման կլորացումներ:

Հետաքրքիր է, որ Աստվածածին եկեղեցին, որ հատակագծային չափերով մոտավորապես հավասար է Թալինի եռախորան փոքր եկեղեցուն, նրա նման արևմտակողմից բացի, մուտք ունի նաև արևմտյան թևի հարավային պատի վրա, նրա արևելյան ծայրում, ինչպես որ է Օրթուլու եկեղեցում:

Այս պարզ, խաչաձև եկեղեցիներից հնագույնները Կոշի սուրբ Ստեփանոսն է և Արտավազիկը (ուշ դարերի վերակառուցումներով), հաջորդը Էգրեկն է, ապա Աստվածածինն ու Եղեգնամորը:

Կոշ, Արտավազիկ, Եղեգնամոր, Աստվածածին, ինչպես և Մապարջուկ եկեղեցիներում խաչաթևերից արևմտակողմինը մյուսներից ակներև երկար է: Դրանով ևս սրանք առնչվում են Խորագույն Հայքի ճարտարապետական հուշարձաններին:


ԷԳՐԵԿ

Էգրեկ տաճարը գտնվում է Խորագույն Հայքի հարավում, Օշկից մոտ 25 կիլոմետր հեռավորության վրա, ձորահովտի վերևներում, որտեղ Թորթումի բերդն է:

Այս տաճարը Մ. Բրոսսեի մոտ անվանվում է Էգրեկ, մինչ Թաղաիշվիլին «ուղղում է» նրան՝ դարձնելով «Էկեկի»<sup>1</sup>: Թե ինչու, չի բացատրում: Իրականում այդ տաճարը գտնվում է Էգրեկ հայկական բնակավայրում, հետևաբար ճիշտ պետք

<sup>1</sup> Ն. Ս ա ռ գ ի ս ե ա ն ի «Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս» աշխատության 82—83 էջերի միջև ներդրված «Տեղագիծ Թորթումայ» քարտեզում այս Էգրեկից (Էքրեկ) բացի, ցույց է տրված նաև մի այլ բնակավայր «Էքրեկ» անունով:





35. ա. Ողջաբերդ, բ. Սուրբ Գևորգ (Ղուրսալու), գ. Կարմրավոր, դ. Բջնի, ե. Լմբատ, զ. Մալարձուք:

է համարել անվան հայկական ձևը, ինչպես և համարում է Մ. Բրուսեն:

Էգրեկը իր հատակագծաձևով առանձնակի տեղ է գրավում խորագույն Հայքի հուշարձանների շարքում (գծ. 36-գ.): Ի տարբերություն Իջիան, Օշկ և Խախու տաճարների, Էգրեկի արևմտյան թևը կարճ է, նույնքան է, որքան հյուսիսային և հարավային խաչաթևերն են: Արևելյան թևը գլխավոր խորանն է, այն կիսաբլուրի ձևով է՝ գմբեթարդ ծածկով. մյուս երեք թևերն ուղղանկյունի են՝ թաղածածկ: Խորանի երկու կողմերում ավանդատներ են, որոնք արևելակողմից կիսակլոր են՝ խորանաձև: Այս վերջիններիս կողային պատերը հյուսիսային և հարավային խաչաթևերի պատերից մի քիչ ետ են ընկած, ճիշտ այն ձևով,

ինչպես Իջիան և, հատկապես՝ Խախու տաճարներում է:

Էգրեկում գմբեթը բարձրանում է խաչաթևերի ներքին անկյունները կապող գմբեթակիր կամարների վրա: Այս առումով ևս Էգրեկն ու Խախուն նման են:

Գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթի բլուրակին, ուրույն լինելով հանդերձ, փաստորեն տրոնպային է, թեպետև երազները առագաստային փոխանցման ուղվանկարն ունեն:


Մուտքերը երկուսն են, մեկը՝ հարավային խաչաթևի կենտրոնում, մյուսը՝ արևմտյան խաչաթևի հյուսիսային պատի վրա:

Տաճարի պատերը ներսից և դրսից երեսպատված են սև գույնի խոշոր սրբատաշ քարերով: Եռանկյունի խորշերը, պատուհաններն ու մուտքերը իրենց վերևում ունեն ձևավորված կամարաղեղներ, որոնց շարվածքը հովհարաձև է, ստեղծված տարբեր գույնի քարերով:

Բլուր պատերն ու ձակտոններն ավարտվում են քիվերով: Ութ նիստեր ունեցող գմբեթաթմբուկի վրայով անցնում է դեկորատիվ սյունակամարաշար. սյուների բները ոչ թե հարթ, այլ պտուտակաձև ոլորվածք ունեն: Նույնպիսի ոլորվածքով մասեր ունեն գմբեթաթմբուկի խարսխագոտին և պսակող քիվը: Գմբեթն ունեցել է կոնաձև տանիք (նկ. 77):

Էգրեկ տաճարի արևմտակողմում Ն. Սարգսյանը հայտնաբերել է հունարեն արձանագրություն, որի մեջ հիշատակված «Գրիգոր»-ը, Ն. Աղոնցի մեկնաբանմամբ, հայազգի Գրիգոր Տարոնացին է, նա իր ժամանակ Թեսսաղոնիկեում հասած է եղել բարձր դիրքի, հանդիսացել է Լարիսայի և Մակեդոնիայի պորավարը (ստրատեգը): Սրան հաջորդող Ռուբենը եղել է Կիլիկիայի Ռուբինյանների տոհմապետ-նախահայրը:

Ն. Սարգսյանը դեռևս անցյալ դարի հիսունական թվականներին գրում է. «Էգրեկու եկեղեցին—երրորդ եկեղեցին է ի գյուղն Էգրեկ շինված քառակուսի համակ ի կոփածո, սեւով քարանց, ... արձանագիրք եկեղեցվոյս հույն են և վրացի խառն ընդ նմա. առաջինս հարևտից կա մնացեալ ի մեջ գոմո, որ կից է նմին»: Այնուհետև Ն. Սարգսյանը բերում է հունական արձանագրության թարգմանությունը. «Ամենաարքոյ Աստուածածանի, ի ձեռն իմ Գրիգորի պատրկի և պորավարի Լարիսայ և Մակեդոնիոյ, առ Սմբատաւ



36. ա. Կոշ, բ. Արուսիակի, գ. Էգրեկ (Տայք), դ. Եղեգնամոր (Չանգլի—Կարս):

պատրիարք Կիսկացեա- շինեցաւ, եւ (ի ժամանակս) փառաւորելոց Վասիլի և Կոստանդեա, մեծաց թագաւորաց եւ ինքնակալաց Ծիրանածնայ.—Յամի ՅՇԺԵ (1007 ամ Քրիստոսի):»:

Էգրեկի գլխավոր տաճարի կառուցումը Ե. Թադաիշվիլին տանում է IX դարի վերջերը, կամ 10-րդ դարի սկիզբը, այսինքն՝ Օշկի և Խախու տաճարների կառուցմանը նախորդող շրջանը, երբ Խորագույն Հայքում և Կղարջքում բուն վերելք էր ապրում տաճարաշինությունը: Հիշենք, որ Ն. Մառի ուսումնասիրությունների համաձայն, այդ ժամանակների տաճարաշինությունը Խորագույն Հայքում և Կղարջքում, փաստորեն, հայկական կիսավեր և այրիացած եկեղեցիների վերականգնումն էր և վերափոխումը քաղկեդոնական համայնքի եկեղեցու:

Տաճարի պատերի վրա այս ու այնտեղ ընկած պանապան տառանիշեր և գրեր էլ կան, որոնք մեծ մասամբ անընթեռնելի կամ անհասկանալի

են ոչ միայն իրենց գրելաձևով, այլև բովանդակությամբ: Համաձայն Ե. Թադաիշվիլու. «Այս բոլորը ցույց են տալիս, որ գրերի հեղինակը վատ է իմացել ինչպես հունարենը, այնպես էլ վրացերենը»:

Այդ նույն ճակատի պատուհանի գույնզգույն քարերով ստեղծված հովհարաձև բարավորը ճըշտորեն Խախու տաճարի նույնպիսի դրվագի նման է, մինչ Օշկում և Պարխարում այդ արված է ներկով: Ե. Թադաիշվիլին այս նկատի առնելով, Խախու տաճարի կառուցման ժամանակը տանում է Օշկի տաճարի կառուցման հաջորդող շրջանը. այս դեպքում ինչպե՞ս հասկանալ Էգրեկի կառուցման ժամանակը Օշկին նախորդող շրջանում թողնելը, ինչպե՞ս է, որ Խախուի օրինակով չի տարվում Օշկին հաջորդող շրջանը:

Էգրեկ տաճարը ժամանակակից թուրք բնակիչների կողմից փոխարկվել է սկիթի:

Խորագույն Հայքի հարավում, Թորթում բեր-

դից ոչ հեռու, հազար թվականներին Լարիսայի և Մակեդոնիայի չորավար Գրիգոր Տարոնացու կողմից կառուցված հիմքում խաչաձև կենտրոնագմբեթ տաճարը հանդիսացել է տեղի, հունական կրոնի ազդեցության ոլորտում գտնվող հայ քաղկեդոնական համայնքի եկեղեցին: Այն միջնադարի բարձր արվեստով կերտված հուշարձաններից է, որ ցարդ կանգուն է և լավ պահպանված:

#### ԵՂԵՂՆԱՄՈՐ (ՉԱՆԳԼԻ)

Կաղզվանից (Կարսի մարզ) ոչ հեռու Չանգլի հայկական մեծ գյուղի բարձրադիր տեղում կանգնած է այդ բնակավայրի պատմական անունը կրող Եղեգնամոր (Լենախշորի, ըստ Ե. Թաղաիշվիլու) գմբեթավոր եկեղեցին: Այն նոր ժամանակներում անվանվում է Չանգլի (Չանկլի, ըստ Ն. Սարգսյանի):

Քսան մետր երկարություն, 15 մետր լայնություն և մոտ 27 մետր բարձրություն ունեցող այս հուշարձանը հիմքում խաչաձև է, ըստ որում արևելյան խաչաթևը, որ մայր խորանն է, կիսաբոլորակ է, գմբեթարդ ծածկով, ունի նաև թույլ արտահայտված նախախորան, որ քառանկյունի է, թաղածածկ: Մյուս խաչաթևերը նույնպես քառանկյունի են և թաղածածկ. հյուսիսայինն ու հարավայինը ունեն փոքր, արևմտյանը՝ համեմատաբար մեծ խորություն: Այն որմնամույթերով և թաղակիր կամարով ըստ երկարության բաժանվում է երկուսի, որոնցից ներսինը իր չափերով համապատասխանում է երկու կողային խաչաթևերին (գծ. 21, 22, 23, 36 դ):

Արևելյան խորանի երկու կողմերում առկա են քառանկյունի ավանդատներ արևելակողմի խորանանման կիսաբոլորակներով: Ավանդատների արտաքին պատերը հետ են կանգնած ինչպես խորանի արևելյան ճակատային պատից, այնպես էլ հյուսիսային ու հարավային ճակատային պատերից, նրանք փոքր են նաև բարձրությամբ:

Խաչաթևերի կողային պատերի հանդիպման անկյունները, որ կապվում են կենտրոնական քառակուսին, իրենց պարագծերով բավական յուրօրինակ են: Հիշյալ անկյունները, որ ավելի լայնացած են, ունեն երկուական կիսակլոր հիմքով որմնամույթեր, առաջացած գմբեթակիր կամարների ուղղությամբ: Այդ որմնամույթերի խոյակ-

ները նույնպես յուրօրինակ են: Դրանք իրենց միջին մասում ունեն հինգական բոլորակներ:

Գմբեթակիր կամարներից ամեն չուլցի միջև տեղավորված է գմբեթային փոխանցման կոմբինացված համակարգը: Սրա կենտրոնում տրոմպային կամարն է իր ծալքավոր ներքնամասով, կամարի երկու կողմերում՝ մոտավորապես եռանկյունաձև առագաստային հարթությունները:

Գմբեթային փոխանցման համակարգի և գմբեթակիր կամարների վերևով անցնում է դրանք միավորող պատի մի շարք, որի վրա և գմբեթաթմբուկի հիմքում առկա բոլորակ գոտին: Հիշյալ գոտուց վերև բոլոր առումներով յուրահատուկ գմբեթն է, մի բացառիկ երևույթ մեր և հարևան ճարտարապետական շրջանակներում:

Մինչ այժմ կանգուն, արտաքուստ 16 նիստ ունեցող այդ գմբեթաթմբուկը պատած է դեկորատիվ սյունակամարաշարով: Նիստերից ութի վրա ձգված համաչափությամբ և կոր բարավորով պատուհաններ են, մյուս ութի վրա խորանում են եռանկյունի հիմքով և կիսակոն վերնամասով խորշեր:

Գմբեթի պատերն ունեն անսովոր՝ մոտ 2,7 մետր հաստություն, սակայն դրանք թեթևացված են կիսաբոլորակ հիմքով երկու կարգի խորշերով: Ավելի լայն և բարձր խորշերում բացվում են պատուհանները, լայնությամբ և բարձրությամբ փոքր խորշերում, կամ դրանց դիմաց կանգնած են ցածր համաչափության բոլորակ սյուներ: Ահա այդ սյուների քառանկյունի խոյակների վրա էլ բարձրանում են չորսական կիսակլոր դեկորատիվ սյուներով ստեղծված որմնամույթերը, որ իրենց խոյակների վրա կրում են մեծ խորշերի գմբեթարդ ծածկերի երակամարները: Այս վերջիններիս վրա էլ նստած է գմբեթի բուն՝ կիսագնդաձև ծածկը իր արտաքին կոնաձև տանիքով:

Այստեղ՝ գմբեթատակ գոտու բարձրության վրա առկա է շրջանց անցում գմբեթային բոլորակի պարագծով կանգնած ութ սյուների և 16 մեծ ու փոքր խորշերի միջև:

Եղեգնամորը իր աշխարհագրական տեղով դուրս է մնում Խորագույն Հայքի շրջանակներից, սակայն հիշվում է այստեղ, նկատի ունենալով նրանում տեղ գտած ճարտարապետական որոշ ձևեր, որոնք սերտորեն առնչվում են Խորագույն Հայքի հուշարձանների հետ:

Ինչպես նախորդ՝ «Բանակ» բաժնում ասվեց,



Եղեգնամորի գմբեթի կազմությունը իր շրջանց անցումով օգնում է վերակազմել Բանակ տաճարի գմբեթային մասի բոլորակ սյունասրահը: Այստեղ տեղ գտած ճարտարապետական ձևերը իրենց մի մասով հարում են Խորագույն Հայքի, մյուս մասով՝ Շիրակի հուշարձաններում կիրառված ձևերին: Այդ երևույթը, որ միանգամայն բնական է, բացատրվում է նրա աշխարհագրական դիրքով, չէ որ այն գտնվում է միմյանց հետ օրգանապես կապված երկու հարևան գավառների միջև: Ահավասիկ, տաճարի արևելյան ճակատի դեկորատիվ սյունակամարաշարը իր համաչափություններով և պատի հարթության վրա զբաղեցրած դիրքով ակներև նույնական է շիրակյան հուշարձանների հետ: Հատկանշական է գմբեթակիր սույթերի, ինչպես և գմբեթասրահի սյուների խոյակների կտր բիթածև կարդաքանդակների մեծ նմանությունը ոչ միայն Գագկաշենի, Մարմաշենի, այլև Ամբերդի եկեղեցու շքամուտքի սյուների խոյակների նույն դրվագների հետ:

Այս տաճարի գմբեթային մասի որոշ ձևեր, մանրամասներ ու համաչափություններ անմիջականորեն կապվում են Խորագույն Հայքի Էգրեկ, Իշխան, Օշկ ու Խախու տաճարների համապատասխան դրվագներին: Օրինակ, գմբեթը պսակող քիվի և գլխավոր սուտքի կամարաղեղի հարդարանքը Եղեգնամորում և Իշխանում նույնն է, դեկորատիվ սյունակամարաշարի մանրամասները, պատուհանների դիրքը նիստերի վրա, գմբեթի հիմքով անցնող արտաքին ու ներքին գոտիները Եղեգնամորում և Խախու տաճարում, որոշ կողմերով նաև Օշկում հար և նման են միմյանց: Միաձև են մշակված Էգրեկի արևելյան ճակատի և Եղեգնամորի գմբեթաթմբուկի եռանկյունի խորշերի կիսակոն վերնամասերը իրենց ակոսիկներով: Գմբեթային փոխանցման համակարգի որոշակի դրվագներ ամբողջությամբ տայքյան ծագումն ունեն:

Եղեգնամորում, ինչպես և Խորագույն Հայքի վերևում հիշատակված հայտնի հուշարձաններում, հատկապես գմբեթներում և մյուս մանրամասներում բացակայում է բովանդակությանը ոչինչ չբերող, երբեմն անպուսպ պճնազարդումը, որ հատկանշական է դասականությունից հեռու որոշ հուշարձաններին:

Տաճարի կառուցման ժամանակի հարցում կարծիքները բաժանվում են: Դեռևս 1966 թվա-

կանին Թուրքիա այցելած Թիերի ամուսինները ուսումնասիրել և եկել են համոզման, որ Եղեգնամորը (Չանգլին) պետք է կառուցված լինի X դարում, վերանորոգված 1032 թ. (երբ վերանորոգվել է նաև Իշխանը):

1878 թ. Եղեգնամոր այցելած Կյուրեղ Վ. Սրապյանը հաղորդում է, որ «Եկեղեցվո սեղանի վիմաքարի վրա տնկված իաչքարի վրա կգտնվի 418 թվական»: (418 + 551 = 969 թ.):

Եղեգնամորում տեղ գտած ճարտարապետական ձևերը, դրանց կիրառման եղանակները, որոշ դրվագներ և մանրամասներ իրենց զուգահեռներն ունեն ինչպես Շիրակում, այնպես էլ Խորագույն Հայքում, առավելապես տասներորդ դարում կառուցված, երբեմն տասնմեկերորդի սկզբներում վերանորոգված կարևորագույն հուշարձաններում: Վերոհիշյալը նկատի առնելով հնարավոր է դառնում համոզվել, որ Եղեգնամորը նույնպես կառուցվել է տասներորդ դարի երկրորդ կեսի ընթացքում, գուցե նաև տարիներին, երբ Դավիթ Մեծ կյուրապաղատը իր Վորքով այրվում, տաճիկներից մաքրում է Մանազկետը, ապա Խլաթը (997, 998) և հայկական այլ շրջաններ<sup>1</sup>: Ավելի ուշ կառուցված տաճարներում Եղեգնամորում օգտագործված ձևերի մենք չենք հանդիպում: Եղեգնամորի կառուցման ընթացքում տեղացի վարպետներին հնարավոր է որ գործակցել են Մեծ Դավիթ կողմից իր Վորքերի հետ բերված, տաճարաշինության մեջ հմտացած քարգործ վարպետներ:

Վրաց աշխարհագրագետ Վախուշտին հայտնում է, որ համաձայն 1030 թվականի պահպանված վրացերեն արձանագրության, Եղեգնամորը (Չանգլին) եղել է վանք: Ե. Թաղաիշվիլին այդ արձանագրությունը համարում է XIV դարի (1362 թ.) գործ:

Համաձայն Ե. Թաղաիշվիլու, Եղեգնամորը հայ քաղկեդոնական համայնքի վանք պետք է դարձած լինի և եկեղեցու վրայի վրացերեն արձանագրությունը գրված պիտի լինի այն բանից հետո միայն, երբ նրանք անցան վրաց թագավորի հովանավորության տակ. հակառակ դեպքում, լուսա-

<sup>1</sup> Պ. Մ. Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները Հայաստանում (Չանգլի): (Տե՛ս հայագիտական Կետավորություններ, պրակ. Ա, Երևան, 1974, էջ 73):

վորչականների կողմից հալածվող քաղկեդոնականները չէին համարձակվի եկեղեցու պատերին գրել վրացերեն արձանագրություններ: Չանգլիի արձանագրության գոյությունը,— շարունակում է Ե. Թաղաիշվիլին,— ցույց է տալիս, որ այս տեղերում եղել են ուղղափառ հայեր, որ նրանք աղոթում էին վրացերեն, արձանագրություններն էլ

գրել են վրացերեն: Հայաստանի եկեղեցիների վրայի վրացերեն արձանագրությունները նույնպես ստեղծվել են նույնօրինակ պարագաներում:

---

1 Ե. Թաղաիշվիլի, 1907 թ. հնագիտական արշավախումբը Կոլա-Օլթիսիում, Չանգլիում (վրացերեն), 1938 թ., Փարիզ, էջ 87:

## ԲԱԶՄԱԽՈՐԱՆ ՏԱՃԱՐՆԵՐ

Մեր միջնադարի ճարտարապետությունը հարուստ է բազմախորան հուշարձանների շատ տարատեսակներով, դրանք բնորոշվում են գլխավորապես խորանների քանակով՝ եռախորան, քառախորան, վեցխորան, ութխորան և այլն:

Հուշարձանների տարբեր հորինվածքներում այդ խորանները ունենում են տարբեր դիրքեր, տարբեր ձևերով են արտահայտվում շինության արտաքին պատկերում: Այդ տաճարներից շատերը իրենց բնորոշ կողմերով եզակի են ու իրենց նմանը չունեն, ճարտարապետության այլ շրջանակներում:

Ստորև նայվում են Խորագույն Հայքի հուշարձաններից մի քանիսը և գուգահեռաբար հիշվում պատմական Հայաստանի ինչպես կենտրոնական, այնպես էլ մյուս ծայր գավառներում գոյություն ունեցող նույնատիպ հուշարձաններ, հանգամանք, որը ակներև է դարձնում նրանց սկզբնավորման և վարզացման ճանապարհի ընդհանրությունը:

Այդ հուշարձաններից մի մասի կառուցման ժամանակը հայտնի է, մյուսներինը՝ ոչ, նույնպես ոչ բոլոր հուշարձաններում են հայտնաբերվել արձանագրություններ և ոչ բոլորի վերաբերյալ կան մատենագրական տեղեկություններ:

## ԵՌԱՆՈՐԱՆ ՏԱՃԱՐՆԵՐ

### ՕՐԹՈՒԼՈՒ

Բանակ տաճարից հարավ, մոտ 18 կիլոմետրի վրա, դեռևս գոյատևում է երբեմնի հայկական գյուղի Օրթուլու եկեղեցու ավերակը. նրանից էլ 10 կիլոմետր արևելք՝ Օրթուլու վանքը:

Շատ յուրօրինակ հատակագիծ ունի այս եկեղեցին (գծ. 37ա): Ներսից եռախորան է, արևմտյան, մի քիչ երկարած քառանկյուն թևով: Դրսից՝ արևելյան խորանը կրկնում է ներսի բոլորածնությունը, ինչպես Ծովիցում է կամ Սբխեցում. մյուս երեք թևերը քառանկյունիներ են, ինչպես Թալինի փոքր եկեղեցում է: Միակ մուտքը Արևմտյան թևի հարավային պատի արևելյան ծայրում է: Խորաններից յուրաքանչյուրում կա մեկ պատուհան:

Խաչաթևերի ներքին անկյուններում բեկվածքներ չկան: Ցավոք չունենք այս, հիմքում խաչաձև, կենտրոնագմբեթ հորինվածքով հուշարձանի լու-


սանկարը, որով հնարավոր կլիներ որոշել նրա կառուցման մոտավոր ժամանակը: Հատակագծային ձևերում խոր հնության արտահայտություններ կան: Այն գտնվում է Ծովիցի և Մանկանոցի, կամ Թալինի փոքր եկեղեցու միջև: Արևելք-արևմուտք առանցքով ունի 12 մետր երկարություն, հյուսիս-հարավ առանցքով՝ 10 մետր լայնություն, գմբեթի ներքին տրամագիծը երեք և կես մետր է:

### ԻՍ ՏԱՃԱՐԸ

Այս տաճարը գտնվում է համանուն գյուղում, որտեղ սկիզբ է առնում Թորթում լճակը, նրա աջ վտակներից մեկի վրա, ոչ հեռու Օշկից:

Եկեղեցու հատակագիծը խիստ բնորոշ է Խորագույն Հայքի ուրույն ճարտարապետության համար (գծ. 38ա): Թվում է, թե նա նախորդել է Օշկին, նրա համար հանդիսացել նախօրինակ: Իս տաճարի արևելյան երեք խաչաթևերը կի-





37. ա. Օրթուլու (Կարս) բ. Դորթբիլիսա (Կող-Նորագույն Հայք), գ. Պարտեզ (Կարս), դ. Ալաման (Կարս), ե. Հացառատ, Վ. Թալին:

աաշրջան խորաններ են՝ գմբեթարդ ծածկով, արևմտյան թևը՝ երկարած ուղղանկյուն-քառանկյունի, թաղածածկ՝ երկու թաղակիր կամարներով բաժանված երեքի: Արևելյան խորանի երկու կողմե-

րում ավանդատներ են, որոնց արևելակողմում առկա են կիսաշրջան կլորացումներ:

Լուսանկարից երևում է, որ գմբեթն ունեցել է ութ նիստ՝ մեկական պատուհանով: Գմբեթի պատերը եղել են երեսապատված մեծ չափերի սրբատաշ սալերով:

Տաճարն ունի մուտքի մեկ դուռ արևմտյան պատի վրա:

Թալինի փոքր եկեղեցու հյուսիսային թևի արտաքին պատի վրայի կիսաբլոդրակ հատակագծով խորշը հիշեցնող չորս խորշեր կան այս եկեղեցու հյուսիսային և հարավային թևերի արտաքին պատերի վրա, որոնցից երկուսը ճիշտ այն դասավորությամբ, ինչպես Թալինի եկեղեցում է:

Հատակաձևով Իս տաճարին ամենամոտը Շապին Գարահիսարի Սիս գյուղի մոտ գտնվող Ս. Առաքելոց եկեղեցին է<sup>1</sup>, որը սակայն ընդհանուր չափերով գերազանցում է Իսին: Իսում տաճարի երկարությունը 16, Սիսում՝ 19.50 մետր է, լայնությունը՝ համապատասխանաբար 10,5 և 13,20 մետր. գմբեթի ներքին տրամագիծը Իսում՝ 4.20, Սիսում՝ 5.00 մետր և այլն: Սրանց միջև եղած մյուս տարբերությունները, որ բոլորովին երկրորդական նշանակություն ունեն, վերաբերում են ավանդատների պարագծերին և այլ մանրամասների (գծ. 38գ):


Սկզբունքորեն այս նույն հորինվածքն ունեն դեռևս VII դարում կառուցված Մահմուդուկի (Արթիկի շրջան), ինչպես և Սևանի ու Հնեվանքի (Գուգարքի շրջան) արևելակողմից ավանդատներ ունեցող եռախորան գմբեթավոր եկեղեցիների հատակագծերը:

#### ԴՈՐԹԲԻԼԻՍԱ


Այս անունով շատ եկեղեցիներ կան:

Կողի Դորթբիլիսայում, իրոք, եղել են չորս եկեղեցիներ, որոնցից երկուսի ավերակները կան: Համեմատաբար լավ է պահպանված գյուղամիջի եկեղեցին: Պատերը եկեղեցու թե՛ ներսից, թե՛ դրսից երեսապատված են կանոնավոր քարերով: Ոչ բարձր թմբուկը, գմբեթն ու կոնաձև ծածկը այժմ կործանված են:


<sup>1</sup> Տե՛ս Թորոս Թորամանյան, Նամակներ, կապեց և ծանոթագրեց Նապիկ Թորամանյանը, Էրևան, 1968, էջ 180—181, ներդիր):



ա



բ



38. ա. Իս (Խորագույն Հայք), բ. Մահմուդնոբ, գ. Սիս (Շապին Գարահիսար) :

Եկեղեցու ներսում պատերի վրա նշմարվում են երբեմնի պատկերապարզման նշաններ:

Այս եկեղեցին կենտրոնագմբեթ է, հիմքում խաչաձև, արևմտյան երկարած թևով: Արևելակողմի երեք թևերը կիսակլոր խորաններ են— գմբեթարդ ծածկով, արևմտյան թևը՝ քառանկյուն, թաղածածկ սրահ. խորաններից յուրաքանչյուրը լուսավորվում է մեկ լուսամուտով, մուտքը արևմտակողմից է (գծ. 37բ):

Դորթքիլիսա եկեղեցու հատակագիծը VII դարում կառուցված Ալաման (գծ. 37դ) եկեղեցու անվրեպ կրկնօրինակն է. հատակագծային չափերն էլ գրեթե նույնն են և եթե կան տարբերություններ, ապա այդպիսիք նշանակությամբ երկրորդական են:

Ալամանն ու Դորթքիլիսան միմյանցից տարբերվում են նրանով, որ Ալամանի խորաններն արտաքուստ ունեն հինգական նիստ, Դորթքիլիսայի խորանները՝ երեքական, ինչպես Հացառատի եռախորան տաճարում է (գծ. 37ե): Դորթ-

քիլիսա եկեղեցին ունի նախագավիթ (հավանական է՝ ուշ կառուցված), Ալամանը չունի այդպիսին: Ալամանում եկեղեցին հարավակողմից ունի ձևավորված մուտք, Դորթքիլիսան չունի:

Իս և Սիս տաճարներից Դորթքիլիսան տարբերվում է հիմնականում նրանով, որ արևելյան խորանի երկու կողմերում չունի ավանդատներ: Այս տիպի մի քանի եկեղեցիներ կառուցվել են նաև հետագայում:

Պարզ հատակագիծ, մասերի հաճելի հարաբերություն ունեցող այս եկեղեցին պետք է որ կառուցված լինի վաղ միջնադարում, Խորագույն Հայքի ճարտարապետական կարևոր հուշարձաններից շատերի համար դարձած իրական նախօրինակ:

Ե. Թաղաիշվիլին ենթադրում է, որ այս, ինչպես և մոտը գտնվող, այժմ լրիվ ավերակ, բազիլիկ եկեղեցին կառուցված պիտի լինեն 9-րդ դարում:

(Բերդուս, Բախչալի) կենտրոնագմբեթ, հիմքում խաչաձև, արևմտյան երկարած քառանկյունի թևով այս եկեղեցին (գծ. 37գ) գտնվում է նույնանուն գյուղի բերդի ձախակողմում, սարերով սեղանված գետակի ափին:

Եկեղեցու գմբեթն ու թաղերը կործանված են, պատերը, որ լավ են պահպանված, տաճարի ներսից ու դրսից եղել են երեսապատված, կանոնավոր մշակված սուգ գույնի քարով:

Եկեղեցու մոտի հին գերեզմանոցի շիրմաքարերի վրա քանդակված են խոյեր, ձիեր և այլ կենդանիներ:

Մեր դարասկզբում, համաձայն Ե. Թաղաչվիլու հաղորդման, այս գյուղի բնակիչները եղել են մահմեդականներ, իսկ հարևան Ուռուք գյուղի բնակիչները՝ հայեր:

Պարտեզ եկեղեցու առկայությունը նշան է այն բանի, որ գյուղը հնում եղել է հայկական, իսկ նրա ներկա բնակիչները թերևս իսլամն ընդունած քաղկեդոնական հայեր:

Այս եկեղեցին Դորթքիլիսայից և Ալամանից (Կարսի մարզ) տարբերվում է միայն նրանով, որ սրանում արևելակողմի երեք կիսաշրջան խորանները տաճարի արտաքին հորինվածքում արտահայտվում են ոչ թե բազմանիստ թմբուկի, այլ ուղղանկյուն ծավալներով. ճիշտ այդպիսի պարագծեր ունի նաև Թալինի Կամսարականների փոքր եռախորան եկեղեցին: Հետաքրքիր է, որ Պարտեզ եկեղեցու մուտքը արևմտյան թևի հարավային պատի վրա գրավում է այնպիսի դիրք, որպիսի դիրք ունեն Թալինի վերոհիշյալ, ինչպես և Ախուրյանի Աստվածածին եկեղեցիների երկրորդ մուտքերը:








Սրանք հավասար թևեր ունեցող, հիմքում խաչաձև քառակոնխ եկեղեցիներ են (զծ. 39ա-զ, 40ա-զ): Ամենամասնական քառախորաններում (տետրակոնխներում) խորանները շինության արտաքին ծավալային հորինվածքում ևս ստանում են կիսաբոլորակ կամ բազմանիստ թմբուկի ձև (Սբխեչ-Խորագույն-Հայք, V—VI դար, Ծովիկ—V—VI դար, Ագարակ VI—VII դար): Պատահում են քառակոնխեր, որոնք արտաքուստ անփոփոխ են տարբեր քանակի (8, 6) նիստեր ունեցող ընդհանուր թմբուկի մեջ (Արվնի—V—VI դար, Բանակ-Խորագույն Հայք, VII դար): Կան նաև քառակոնխեր, որոնց ներքին խաչաթևերից յուրաքանչյուրին արտաքուստ համապատասխանում է խաչաձև դասավորության քառանկյուն ծավալ՝ գմբեթատակ խորանարդի չորս կողմերում (Մանկանոց—VI—VII դար): Պատահում է նույնպես, որ այս վերջիններիս արևելակողմում, խորանի մեկ կամ երկու կողմերում առկա են ավանդատուներ (Մուհլաչիքիլիսա-Խորագույն Հայք, հավանական է VII դար, Վանեվան—IX դար): Կան նաև մեծ չափերի քառակոնխեր, առնված շրջանց սրահի մեջ (Զվարթնոց—VII դար) և այլն:

Ճարտարապետության համընդհանուր պատմությունը այդպիսի տաճարների շատ օրինակներ չի կարող հիշատակել: Այս ֆոնի վրա ակներև է, որ մեր ճարտարապետությունը անհամեմատ հարուստ է դրանցով, թեպետև կան հետազոտողներ, որոնք հնարավոր են համարում սևով սպիտակի վրա գրել, թե հայ ճարտարապետությունը վաղ միջնադարին պատկանող քառակոնխեր չի ունեցել, իսկ հետագայում կառուցվածներն ընդօրինակված են դրսի նախօրինակներից:


Նշենք, որ ողջ Կովկասում ցարդ հայտնի ավելի քան 30 տետրակոնխներից 27-ը հայ ճարտարա-

պետության հուշարձաններ են, դրանցից են՝ Ծովիկ, Սբխեչ, Արվնի, Մանկանոց, Մուհլաչիքիլիսա (Ծեփագործի եկեղեցի), Փարբի, Ագարակ, Զվարթնոց, Բանակ, Գառնի (բոլորակ տաճար), Մարմաշեն (բոլորակ տաճար), Հայրավանք, Վանեվան, Չարնջա, Գազկաշեն, Փենիկ (Բանակի շրջան), Խցկոնք (Սարգսի եկեղեցի), Շողագավանք (երրորդ եկեղեցի), Գնդեվանք, Սանահինի նշխարատունը, Ցաղացքար, Առաքելոց (Անիում) և այլն: Դեռ ավելին, եթե Բանակը մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել «տետրակոնխ, առնված շրջանց սրահի մեջ», ապա մենք հնարավորություն ունենք մեր քառակոնխերի ցանկը շարունակել, նշելով VII դարի քառախորան հուշարձաններից նաև Մաստարան, Արթիկը, Բագարանը, Ոսկեպարը, Հառիճը, նաև Բոթոսգերը: Թերևս այստեղ չթվարկենք Ավան-Հռիփսիմեի տիպի շուրջ տասը հուշարձանները, որոնք նույնպես քառախորան են, սակայն ներքին անկյունային մասերի յուրօրինակ ձևերով ու հավելումներով, ինչպես և արևելք-արևմուտք առանցքով մեծ ձգվածություն ունենալով, մի կողմ են կանգնում վերոհիշյալ քառակոնխների շարքից: Քառակոնխերի այս թվից առաջին չորսը V—VI և VI, մնացածներից չորսը՝ VI—VII, ինը՝ VII, ութը՝ IX—XI դարերի հուշարձաններ են:



Քառակոնխներից այստեղ չթվարկված երեքը հետևյալներն են՝ Լյակիթ-վվարթնոցատիպ տաճար՝ կառուցված VII դարի երկրորդ կեսում, այն գտնվում է Աղբբեջանական ՍՍՀ-ում, մյուսը՝ Մանգլիս, Վրացական ՍՍՀ-ում, սա արևմտակողմի հոծ պատերի ներսում ունի երկու ավանդատուն: Տաճարի կառուցումը հնարավոր է ենթադրել ոչ վաղ, քան VII դարի երկրորդ տասնամյակը. «Գիրք թղթոց»-ում (VII դարի առաջին



39. ա. Սրխեչ (Խորագույն Հայք), բ. Փենիկ (Խորագույն Հայք), գ. Մուխաջիբիլիսա (Խորագույն Հայք), զ. Ծովիկ, ե. Արվնի, զ. Վանեվան:



39 (է) Հողաւանք



40. ա. Փարթի, բ. Մանկանոց, գ. Հողազավանք:

տասնամյակ) խոսվում է Մանգլիսի «խաչի» և ոչ «Սաչի եկեղեցու» մասին<sup>1</sup>:

Այս տետրակոնխերից երրորդը Չվեյի Գավալին է, որի կառուցման ժամանակը բավմաթիվ վերակառուցումների պատճառով այժմ հնարավոր չէ պարզել. VI դարի երկրորդ կեսին Գ. Չուբինաշվիլու վերագրելը ենթադրական է:

### ՄԲԽԵՉ

Սա լիակատար տետրակոնխ է (գծ. 39ա), այսինքն՝ խաչաձևի չորս թևերն էլ խորաններ են՝ կիսաբոլորակներ թե ներսից, թե դրսից: Համաձայն ականատես Ե. Թաղաիշվիլու, արևմտակողմի քառանկյունի կառուցվածքը հետո է կցվել եկեղեցուն, որով և սրա հատակագիծը կոմպոզիցիոն ընդհանուր գծերով նմանվել է Իս տաճարի հատակագծին: Սա, առանց այդ քառանկյունի կառուցվածքի գրեթե Ծովիկ (գծ. 39—դ) եկեղեցու կրկնօրինակն է, չափերն էլ նույնն են, Ծովիկը, առանցքների ուղղությամբ երկու թևերի ծայրից-ծայր ինը մետր է, Սբխեչը՝ ութ և կես: Գմբեթը ենթադրվում է ութ նիստերով:

Սբխեչը, որ գտնվում է Իշխանից ոչ հեռու, նրա հյուսիսակողմում, պահպանված ավանդությամբ, կառուցվել է Իշխանի հետ միաժամանակ, որ, իբր, սրանց շաղախը հոսնցվել է կաթով:

Ե. Թաղաիշվիլին Սբխեչի կառուցումը թվագրում է ոչ ուշ V—VI դարերը:

### ՄՈՒՀԱՆՁԻՔԻՆԻՍԱ (ԾԵՓԱԳՈՐԾԻ ԵԿԵՂԵՑԻ)

Չորդվան (Դորթբիլիսա) եկեղեցուց մեկ ու կես կիլոմետրի վրա է գտնվում այս պզալի հնության քառախորան եկեղեցու ավերակը (գծ. 39գ):

Սրա հատակագծի հարավային կեսը նման է Մանկանոցի հատակագծին, հյուսիսային կեսը՝ Վանեվանի հատակագծին: Երկու կեսերի տարբերությունն արտահայտվում է հյուսիս-արևելակողմի ավանդատան առկայությամբ: Սակայն հյուսիսային խորանից բացվող ավանդատան մուտքի կրկնօրինակը կա նաև հարավային խորանում, բոլորովին նույն չափերի և նույն դիրքով: Սրանով հնարավոր է դառնում ենթադրել, ինչպես և են-

<sup>1</sup> Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 194:



թաղրել է Ե. Թաղաիշվիլին, որ, թերևս, երբեմնի գոյություն է ունեցել նաև հարավ-արևելյան ավանդատուն:

Այդպես լինելու դեպքում, վերանում է ամեն տարբերություն այս եկեղեցու և Վանեվանի (գծ. 39դ) միջև, մանավանդ, որ նրանց հատակագծաչափերը ևս նույնն են:

Ասել է, թե՛ այս եկեղեցիները ճարտարապետության նույն շրջանակների հուշարձաններ են:

#### ՓԵՆԻԿ ԵՎ ԿԻՆԵՊՈՍ

Օլթիի շրջանում (Կարսի մարզ) կան ոչ մեծ չափի քառախորան եկեղեցիներ: Դրանցից Փենեկը ամբողջությամբ ընդգրկված է վեցնիստ ծավալի մեջ, ինչպես Արզնին, որն ընդգրկված է ութնիստ ծավալի մեջ: Փենեկի խորանների և Գմբեթատակ քառակուսու միջև կան թաղածածկ տարածություններ (բեմ): Խաչաթևերի ներքին անկյունները մշակված են պուլսանման կլորացուճներով (գծ. 39բ):

Տեսրակոնիսերից մյուսը Կինեպոսն է, որը Փենիկից տարբերվում է, ինչպես արտաքին ուրվագծով, այնպես էլ արևելակողմի քառակուսի ավանդատների առկայությամբ:


Կինեպոսում արևելյան խորանը ճակատային պատից դուրս է գալիս հնգանիստ ծավալով, արևմուտյան խորանը՝ ուղղանկյուն-քառանկյան ձևով: Հյուսիսային և հարավային խորանները արևելյան ավանդատների հետ ծածկված են ընդհանուր ճակատային պատով:

Կալգինի կապված հատակագծում մուտքի դուռը ցույց է տրված հյուսիս-արևելյան ավանդատան հյուսիսային պատի վրա: Խորաններն ու ավանդատներն ունեն մեկական պատուհան: Արևելյան խորանի առջևում առկա է զգալի չափերի բեմ:

Ներքին խաչաձևի համաչափություններով Կինեպոսն ու Ցախացքարը միմյանց շատ նման են՝ այստեղ երկու կողային և արևմտյան թևերն ունեն հավասար խորություն, մինչ արևելյանը խիստ ձգված է:

Կինեպոսում գմբեթատակ քառակուսու անկյունները մշակված են կիսաբլուրակ որմնապուլների ձևով:

Ոմանք նույն տեղանքում գտնվող Փարսադան եկեղեցին համարում են տեսրակոնիս և դնում Կինեպոսի շարքում, որն ակներև սխալ է: Վերջի-



39(ը) Բոբոսգեր եկեղեցու հատակագիծը

նիս երեք թևերը քառանկյունի են, բոլորածև է միայն արևելյանը:

Կինեպոսի ութնիստ գմբեթաթմբուկի պատուհաններից չորսը բոլորածև են, մյուս չորսն ունեն երկայնական համաչափություններ:

Հուշարձանի ծավալատարածական հորինվածքում և հարթությունների ճարտարապետական մշակման մեջ չկան հունական արվեստին բնորոշ ձևեր, հետևաբար «Կինեպոս» անվան հունականին մոտ բնույթը բավարար չէ այն հունական եկեղեցի համարելու համար: Հավանական է, որ Կինեպոսը եղած լինի հայ քաղկեդոնական համայնքի եկեղեցի:

#### ԲՈԲՈՍԳԵՐ

Բանակից մոտ 18 կիլոմետր հարավ, Բոբոսգեր հայկական գյուղի դաշտում դեռևս կանգուն գոյատևում է նույնպես քառախորան Բագարանի հայտնի տաճարի հատակագիծը կրկնող Բոբոսգեր եկեղեցին: Սա Բագարանից, ինչ խոսք, զգալի՝ գրեթե կրկնակի փոքր է (գծ. 39ը):

Սրա հատակագծում, ի տարբերություն Բագարանի, արևելյան խաչաթևը մյուս երեքի համեմատությամբ երկար է: Արևելյան կիսաշրջան խորանի և գմբեթատակ քառակուսու միջև եղած թաղածածկ

տարածությունը մյուս խաչաթևերի նույն դրվագի կրկնակի մեծությունն ունի:

Ինչպես հայտնի է, Բագարանի երկու ավանդատները տաճարին արևելակողմից կցվել են հետագայում: Այդպիսի ավանդատներ Բոբոսգերում, ընդհանրապես չկան:

Այստեղ ևս, ինչպես Բագարանում, գմբեթը բարձրանում է առանձին կանգնած չորս սյուները իրար կապող գմբեթակիր կամարների վրա: Սրա սյուները հիմքում կտոր են (Բագարանում՝ քառակուսի):

Բոբոսգեր եկեղեցու գմբեթը (որի ներքին տրամագիծը ընդամենը 2,6 մետր է) ունի շատ գեղեցիկ, աչք շոյող համաչափություններ: Տանիքը, որ ծածկված է լավ մշակված քարե սալերով, կոնաձև է:

Եկեղեցին մուտքեր ունի արևմուտքից և հարավից: Պատերը շինության թե՛ ներսից, թե՛ դրսից երեսապատված են սրբատաշ քարով:

1907 թվականին գտնվելով Բոբոսգերում, Ե. Թաղաիշվիլին եկեղեցու ներսում տեսել է քանդակված մի քար՝ սուրբ Հովհաննի պատկերով: Նա քարի վրա նաև նկատել է մաշված Աստվածամոր կրի հետքեր:

Հետազոտողը հայտնում է, որ ինչպես Բոբոսգերի, այնպես էլ մոտիկ գտնվող գյուղերի բնակիչների՝ հայերի, նույնպես և հույների համար, այդ սուրբը շատ հարգի էր՝ նրան աղոթում էին, վրան մոմեր վառում:

Ինչպես տեսնում ենք, եկեղեցին սկզբնապես կառուցվել է հայ լուսավորչական համայնքի համար, հետագայում օգտագործվել՝ քաղկեդոնական հայերի և տեղի հույների կողմից:

Հուշարձանի ականատես Ե. Թաղաիշվիլին ենթադրում է, որ այն կառուցված պիտի լինի IX դարում:

Բոբոսգերին անմիջապես մոտ կա Պերտուն անունով հայկական մի գյուղ, Ե. Թաղաիշվիլու հաղորդման համաձայն, բնակիչները, մոտ 50 հայ ընտանիք, 1893 թվականին նորոգել էին գյուղի հին եկեղեցին<sup>1</sup>:

Այդ ժամանակ քաղկեդոնական հայերը գաղթած են եղել, գյուղում մնացել էր լուսավորչական համայնքը:

#### ՉԱՓԱՐԼԻ ԿԻՐԱՆ ԵԿԵՂԵՑԻ

15 հայ ընտանիք ունեցող այս գյուղի բնակարանները ցրված են այգիների մեջ: Գյուղի հին խաչաձև եկեղեցին քանդել և կառուցել են նոր եկեղեցի, որի պատերում նշմարվում են հին եկեղեցու քարերը:


#### ՓԱՆԱՍԿԵՐՏԻ ՀԱՅԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Փանասկերտում կան շատ եկեղեցիների ավերակներ: Նրանցից ամենալավ պահպանվածը, համաձայն Ե. Թաղաիշվիլու, **հայկական եկեղեցին է**: Նրա արևմտակողմում կա գավիթ: Հին եկեղեցուց մնացել են արևմտյան և հյուսիսային պատերը: Պատերի շարքը ստեղծված է ոչ մեծ քարերով: Կանոնավոր մշակված քարերով են շարված որմնասյուները, կամարներն ու դռների ելքերը:

Արևելակողմի պատի մի քարի վրա կա չորս տողից հայերեն արձանագրություն, արևմտակողմի պատի վրա՝ խաչքար, հայերեն գրերով:

Այս երեք եկեղեցիների ճարտարապետական ձևերի վերաբերյալ տվյալներ չունենք:


<sup>1</sup> Ե. Թաղաիշվիլի 1907 թ. Հնագիտական արշավախումբը Կոլա-Օլթխում, Չանգիում (վրացերեն), 1938 թ., Փարիս, էջ 43—45:



68. Խախու վանք տաճարը հարավ-արևելքից



69. Խախու վանք տաճարը հարավակողմից





70. Խախու վանք տաճարը հյուսիս-արևելքից

71. Խախու վանք տաճարի հյուսիս-արևելյան հատվածի ներքին տեսքը




72. Խախու վանք տաճարի երկայնական կտրվածքը արևելք-արևմուտք առանցքով. (չափագրություն Ա. Կալգինի, կատարումը Բ. Ռյաբովի)






73. Խախու վանք տաճարի արևելյան  
խորանի ձախակողմյան չորս  
խորշերը



74. Խախու վանք տաճարի հարավա-  
յին ձակասը (չափագրությունը Ա.  
Կալգինի, կատարումը Ե. Րյաբովի)






75. Խախու վանք տաճարի արևմտյան թևի սյունակամարաշարի ներքնամասը



75. ա Խախու վանք տաճարի սյան խաչա՛լ



76. Խախու վանք տաճարի հարավակողմի սյունասրահում պահպանված սրբի քանդակագատեր







77. Էգրեկ տաճարի արևելյան ճակատը

78. Տայոց Քար (Թավուլքիար) տաճարը ավերակ վիճակում

79. Տայոց Քար տաճարի ներքին տեսքը ավերակ վիճակում

80. Օլթիի վեց խորանով տաճարը ավերակ վիճակում







81. Գոգյուբա տաճարի ընդհանուր տեսքը

82. Կիագմիս-ալթի տաճարի ընդհանուր տեսքը

82. ա Ս. Շուշանիկ (Թալին) տաճարի գմբեթափն փոխանցման համակարգը









83. Եղեգնամոր տաճարը հարավ-արևելակողմից


85. Եղեգնամոր տաճարի գմբեթային մասի ներքին տեսքը



84. Եղեգնամոր տաճարի գմբեթակիր մույթի և կամարների դրվագ




86. Չորդվան տաճարի արևելյան ճակատը



87. Չորդվան (Վորքիլիսա) տաճարը արևելակողմից







88. Քյոլնի (ԳՖՀ) Առաքելոց տաճարի արևելյան խորանի ներքին տեսքը




89. Պարխար լաճարի վերնամասի ընդհանուր տեսքը (1970 թ.)

90. Պարխար տաճարի արևելյան ճակատը




91. Պարխար տաճարի արևելյան ճակատի հյուսիսակողմից երկրորդ լուսամտի քանդակազարդ կամարաղեղը






92. Չորղվան տաճարի ներքին տեսքը




93. Պարխար տաճարի ներքին տեսքը



94. 95. Պարխար, ներկով գրված ուշ արձանագրություններ տաճարի միջին նավի վերնամասի պատերի վրա





96. Կենտրոնագմբեթ տաճարի ավերակ խորագույն Հայքում (1970 թ.)



Վեց խորան ունեցող տաճարները մեր ճարտարապետության սիրված ձևերից են: Առկա օրինակներից դատելով, դրանք միջին չափի, անպահույժ, գողտրիկ, ճաշակով նկարված, բնությանը ձուլված ու այն իրենցով հարստացրած հուշարձաններ են, որ դիտվում են բոլոր կողմերից:

Հայտնի է, որ VII դարում հայ ճարտարապետները ստեղծել էին Եղվարդի Չորավար (կամ Չորավոր) և Իրինդ գյուղի ութ խորանով եկեղեցիները: Հետագայում այդ հիմքի վրա մշակվում են, ինչպես ութ (Անիի Փրկչի եկեղեցի), այնպես էլ վեց խորանով եկեղեցիներ, որոնք իրենց մասնակի տարբերություններով հանդերձ, ընդհանուր հորինվածքով միմյանց բավական նման են:

Այդ կենտրոնագմբեթ հուշարձան-կոթողներին յուրահատուկ են ընդհանուրի և առանձին մասերի ներդաշնակ ու սլացիկ համաչափությունները, ծավալների ամփոփ միասնությունը ուղղաձիգ առանցքի շուրջը, աշտաքին հարթությունների պլաստիկ, հարուստ լույս ու ստվեր առաջացնող ճարտարապետական հարամասերի առկայությունը, և անկախ իրենց համեստ չափերի ու պարզ, տրամաբանական ծավալատարածական հորինվածքի, օժտված են գեղագիտական ներգործող հնարավորություններով ու միջոցներով:

Վեց խորանով տաճարների թվում են Անիի միջնաբերդի և նրանից ոչ հեռու ս. Գրիգոր եկեղեցիները, հայտնի Աբուհամրենց ս. Գրիգոր, Աղջըկա վանքի ս. Հռիփսիմե և Հովհի եկեղեցիները, Խորագույն Հայքի Օլթի բերդի ս. Գևորգ, Բանակից ոչ հեռու Կիզմիս-Ալթի և Արդահանի Գոգյուրա (Գեորգոբա) ս. Գևորգ եկեղեցիները:

Մեր օրերի անակնկալներից է Սովետական Հայաստանի տարածքում երկու շատ արժեքավոր


ճարտարապետական հուշարձանների նոր միայն ի հայտ գալը:

Բանն այն է, որ Թալինի սահմանամերձ շրջանում, որտեղով անցնում է Ախուրյանը, երվանդունիների թագավորության կրոնական կենտրոն Բագարանի հապարամյա ավերակների մեջ և շրջակայքում պահպանվել և կանգուն վիճակում գոյատևում են վեց խորանով երկու տաճարներ, որոնց մասին մասնագիտական գրականության մեջ ոչինչ չի ասվում և պահպանության համար համապատասխան մարմիններում ցարդ գրանցված չեն: Դրանցից առաջինը պայմանականորեն կոչում ենք կառուցող ճարտարապետի անունով՝ «Գրիգորաշեն», երկրորդը՝ համաձայն բառավոր ավանդության, նվիրված է ս. Շուշանիկին:

Վերևում թվարկված Խորագույն Հայքի վեց խորանով երեք եկեղեցիների շարքում համառոտ ակնարկների ձևով ներկայացվում են նաև Անիի նույնատիպ հինգ և Թալինի երկու հուշարձաններ, փորձելով ընդգծել մեր ճարտարապետության համար բնորոշ այն յուրահատկությունները, որոնք մի կողմից ի հայտ են բերում նրանցում առկա իրար կապող ոճական առումով ընդհանրականը, մյուս կողմից՝ տարբերող գծերը:

Օգտակար զուգահեռներ ստեղծելու նպատակով, նույն շարքում նկարագրվում են Իմերեթիայի Կածխի և Կախեթիայի Բոչորմա (երկուսն էլ Վրաստան) վեց խորանով եկեղեցիները:


Ահալքալակից և Կածխիից ոչ հեռու գտնվող համապատասխանաբար՝ Կումուրդո և Միկործմինդա նույնպես վեց խորան ունեցող եկեղեցիները իրենց արտաքին ծավալատարածական հորինվածքով վերոհիշյալներից խիստ տարբերվելու կապակցությամբ, նրանց շարքը չենք դասում:



41. (ա.) Անիի միջնաբերդի վեց խորանով եկեղեցու հատակագիծ (չափագրություն Թ. Թորամանյանի)

**ԱՆԻԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՎԵՅ ԽՈՐԱՆՈՎ ԵԿԵՂԵՑԻ**

Սա ընդհանուր կողմերով չի տարբերվում համանման եկեղեցիներից, սակայն իր մանրամասներով ուրույն է: Այստեղ գմբեթատակ ներքին բոլորակին հարում են վեց միաչափ, միանման խորաններ, որոնք հիմքում ունեն երկու-երրորդ շրջանի մակերես: Արևելյան խորանը, որ մյուսներից չի տարբերվում, իր երկու կողմերում ունի ավանդատներ: Վերջիններս փոքր ուղղանկյունիներ են, արևելակողմի կիսակլոր խորշերով: Դրանք տաճարի կենտրոնական տարածությանը հաղորդակցվում են հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան խորաններում բացվող դռներով: Հուշարձանի միակ մուտքը հարավ-արևմտյան կողմից է: Եկեղեցին արտաքուստ հիմքում ինչ-որ չափով անկանոն բազմանկյունի է, որ արգասիք է ավանդատների առկայության: Արտաքին բազմանիստ և ներքին պայտաձև խորանների համադրությամբ առաջացած հոծ պատահատվածները թեթևացվել են եռանկյունի հիմքով խորշերով, այնպես որ հուշարձանի արտաքին թմբկապատի վրա միմյանց հաջորդում են խորանների մեկական պատուհանները և նրանց միջև՝ եռանկյունի խորշերը (գծ. 41ա):



41. (բ.) Անիի միջնաբերդից ոչ հեռու ս. Գրիգոր եկեղեցու հատակագիծ (չափագրություն Թ. Թորամանյանի)

Եկեղեցու գմբեթն իր գմբեթաթմբուկով բարձրացել է խորանների հանդիպումով առաջացած պատահատվածները միացնող կամարների վրա: Ըստ որում, այս դրվագը այն բացառիկներից է, երբ խորանների հանդիպումներում բացակայում են գմբեթակիր սյուները կամ կիսասյուները: Այս եկեղեցին պետք է կառուցված լինի X դարի երկրորդ կեսի սկզբներում, երբ ձևավորվում էր քաղաքի բուն միջնաբերդը:

**ԱՆԻԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻՑ ՈՉ ՀԵՌՈՒ Ս. ԳՐԻԳՈՐ**

Այս հուշարձանը, որ նույնպես վեց խորան ունի և նախորդից համեմատաբար փոքր է, օժտված է եզակի կողմերով: Սրա կենտրոնը կազմավորում են բոլորակ դասավորության երկու-երրորդ շրջանի հիմքով հինգ հավասարաչափ ու միաձև խորանները՝ և արևմտակողմի ուղղանկյունաձև մուտքի խորշը: Ավանդատների բացակայությունը հնարավոր է դարձրել, որ եկեղեցին և ներսից, և դրսից ամեն առումով լինի կանոնավոր: Բացառիկ երևույթներից է, որ սրա խորաններից յուրաքանչյուրը արտաքինում արտահայտվում է ուղղանկյուն ծավալով. պետք է ենթադրել, որ այդ ծավալ-

ների ճակատային պատերը վերևից ավարտվել են ճակտոններով (զծ. 41բ) :

Այս հուշարձանի գմբեթը բարձրացել է կիսակլոր հիմքով որմնամույթերը իրար կապող գմբեթակիր կամարների վրա :

Մուտքի հատակագծային լուծումը, որ հիշեցնում է Իրինդի նույն դրվագը, ենթադրել է տալիս, թե այս եկեղեցին նախորդած լինի միջնաբերդի իր նմանակին :

#### ԱՔՈՒՀԱՄՐԵՆՑ Ս. ԳՐԻԳՈՐ


Ավելի քան մեկ տասնյակ վեց խորաններով եկեղեցիների շարքում առանձնակի արժեքավոր է Անիի Աբուհամրենց ս. Գրիգորը : Կարևորն այն է, որ նա կանգուն է և ոչ հեռու անցյալում մատչելի է եղել բոլոր հետապտողներին, բնականաբար, եղած նյութերը հրատարակվել են, նրա շուրջը, ըստ արժանվույն, ստեղծել որոշակի նպաստավոր կարծիք :

Այս եկեղեցին պատկանել է Անիում հայտնի Աբուհամրենց տոհմին : Հետապտողների կարծիքով այն կառուցվել է X դարի 80-ական թվականներին :

Հուշարձանը բոլորակ (բազմանիստ) հիմքով երկաստիճան հորինվածք է : Եռաստիճան որմախարիսխին բարձրացած առաջին աստիճանի տասներկու նիստերով 12 մետր տրամագծով թմբուկը իր վերևում կրում է նույնքան նիստերով, սակայն ավելի փոքր (մոտ 6,5 մետր տրամագծով) գմբեթաթմբուկը :

Գմբեթատակ բոլորակը շրջանցում են վեց միանման և միաչափ պայտածև հիմքով խորանները, այդ թվում և մայր խորանը, որի երկու կողմերում կան ուղղանկյուն, արևելյան կիսաբոլորակ խորշով ավանդատներ : Նրանց մուտքերը գտնվում են հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան խորաններում : Տաճարի միակ մուտքը բացվում է հարավ-արևմտյան խորանի վրա :

Խորանների միջև առաջացած պատի հոծ վանգվածները բեռնաթափված են կիսակոնաձև վերնամաս ունեցող արտաքին եռանկյունի խորշերի վարպետ գործադրմամբ : Ավանդատների առկայությամբ պայմանավորված արևելակողմի երկու խորշերը չկան : Դրանց տեղում երկու նիստեր հատակագծի բոլորակից փոքր-ինչ առաջացել և հնարա-



41. (գ.) Աբուհամրենց ս. Գրիգոր եկեղեցու հատակագիծը (չափագրություն Թ. Թորամանյանի)

վոր են դարձրել նույն մոտիվի՝ ավելի փոքր չափեր ունեցող եռանկյունի խորշերի գործադրությունը :

Տաճարի առաջին աստիճանը կապող մեծ թմբկապատի 12 նիստերից 6-ի վրա խորանների ձգված համաչափության պատուհաններն են, որոնցից արևելյանը կոր վերնամասով, մյուսները հորիզոնական բարավորներով : Տաճարի հյուսիս-արևելյան կեսի պատուհանները շրջանակված են քանդակավարդ ժապավենով, հարավ-արևմտյան կեսի երեք պատուհանների երկու կողմերում կիսակլոր սյուներ են, իրենց գնդաձև խարիսխով ու խոյակով, ըստ որում, հարավ-արևմտյան նիստի լուսամուտի երկու կողմերի սյուները երեքական հատ են և փունջ են կապում, հարավ-արևելյան և արևմտյան լուսամուտների սյուները՝ երկուական հատ (լույգ-լույգ) : Նրբանկատ կառուցողը արևով լուսավորվող հարավ-արևելյան, հարավ-արևմտյան և արևմտյան լուսամուտների երկու կողմերում բոլորակ սյուներ է դրել նրանց հետաքրքրազույն լույս ու ստվերի հարստությունը ստանալու համար, առավելագույնը՝ սյուների փունջը տեղադրել է շքամուտքը իր վրա կողո նիստի վրա : Նիստերից մյուս վեցի վրա եռանկյունի խորշեր են, որոնցից չորսը, որ մեծ են և հաճելի համաչափություն ունեն, լցված են լույս և ստվերով (զծ. 41գ) :

Հարուստ լուծում է ստացել նաև շքամուտքը :



Ուղղանկյուն եկրագծով դռան վերևում դրված է վիմակաճարձանագրությամբ պատած, բարձր, գեղեցիկ համաչափությամբ տիմպանի քարը, որը երկված է պարզ կողադեմ ունեցող, զգալի առաջացած կամարադեղով, այն երկու ծայրերով հենված է երկուական սյուները վերևում միացնող բարձաքարի վրա:

Ինչպես պատուհանների, այնպես էլ եռանկյունի խորշերի պարզ կողադեմով կամարադեղները, որ միանում են հորիզոնական հատվածներով, նրբորեն շրջանցում են ողջ տաճարը, միասնական, միահնչուն դարձնում մեծ թմբկապատի տարբեր մանրամասներով մշակված 12 նիստերը:

Առաջին թմբկապատը ավարտվում է իր թեք հարթության վրա կողովահյուս բանվածքով, շինության բարձրությանը և մասերին համաչափ, ավանդական կողադեմ ունեցող քիվով:

Բոլորակ հիմքով միաթեք տանիքի կենտրոնում բարձրանում է մեր ճարտարապետության եզակի գմբեթներից մեկը:

Գմբեթաթմբուկի վրա բացվում են ձգված համաչափության, կոր վերնամասով 12 լուսամուտներ, որոնք շրջանակված են կիսակլոր եկրագծով, պարանի ոլորվածք ունեցող զույգ ժապավենով: Պատուհաններից մինչև գմբեթաթմբուկը վերևից պակող քիվը զգալի բարձրության պատի ճնշող տպավորությունը վերացնելու նպատակով նրբանկատ ճարտարապետը ստեղծել է 12 թռիչքներով երկրորդ կամարաշարը, որի կամարներն իրենց հանդիպման տեղերում խոյակներ չունեն: Կամարաշարի տվյալ մոտիվը առավել միասնական է դարձնում գմբեթաթմբուկի բոլորակ պատը: Այն ավարտվում է հաճելի կողադեմ և պատշաճ բարձրություն ունեցող քիվով, որից վերև տաճարի սլացիկ կոնաձև վեղարն է, ծածկված քարակերտ սալերով:

Եկեղեցու շինությունը արտաքուստ ձևավորող ճարտարապետական ձևերը որմնախարսխից սկսում և աստիճան առ աստիճան, անկաշկանդ սահանքով բարձրանում, ստանում են իրենց բնական ավարտը վեղարի գագաթում:

Ինչպես ցույց են տալիս չափագրության տվյալներով ստեղծված կտրվածքն ու մյուս մանրամասները<sup>1</sup>, տաճարը ներսից, առավել քան դրսից, համիշտակող պատկեր է ունեցել. նրբագեղության,

սլացիկության, մանրամասների գեղաքանդակ իրականացումով այն եղել է Անիի ամենահաջողված հուշարձաններից մեկը: Հետաքրքիր է նկատել, որ այդտեղ կյանք առած ճարտարապետական որոշ ձևեր լայն կիրառություն են գտել թե նույնաձև և թե այլ բնույթի հետագայում կառուցված շատ հուշարձաններում:

Այս տաճարի հապարամյա կանգուն գոյության համար մենք պարտական ենք կառուցող ճարտարապետի հմուտ, հակաերկրաշարժային գիտելիքների վարպետ կիրառմանը, ինչպես հատակաձևի, այնպես էլ ծավալա-տարածական հորինվածքի մտահղացման և իրականացման ընթացքում:

#### ԿՈՒՍԱՆԱՅ ՎԱՆՔԻ Ս. ՀՈՒՓՈՒՄԵ ԵԿԵՂԵՑԻ


Հայ ճարտարապետության վաղ շրջանի քառախորան հուշարձանների շարքում կան այնպիսիները, որոնց արտաքին պարագծերը ներքին պարագծերի կրկնությունն են: Այդպիսիք են Սբխեչը Խորագույն Հայքում և Ծովիվը՝ Սովետական Հայաստանում: Եվ ինչպես X, XI դարերում կառուցված վեց և ութ խորաններով հուշարձանների կերտողները իրենց ստեղծագործության հիմքում որպես նախօրինակներ ընդունեցին դեռևս VII դարում կառուցված Չորավարն ու Իրինդը, այնպես էլ Անիի Աղջկա, կամ Կուսանաց վանքի Հռիփսիմե եկեղեցու ստեղծողը Չորավարից ու մյուս բազմախորան տաճարներից բացի նկատի ունեցավ Սըբխեչն ու Ծովիվը, ընդունելով վերջիններիս հատկապես արտաքին պարագծերի ստեղծման սկզբունքը:

Կուսանաց վանքի Հռիփսիմեն միակն է վեց խորաններով հուշարձանների շարքում, որի արտաքին ու ներքին պարագծերը միմյանց գրեթե ճշտորեն կրկնում են: Սրա վեց խորաններից հինգը բոլորակ են նաև դրսից: Եռանկյունի խորշեր այստեղ չկան (գծ. 41դ):

Այս եկեղեցին ծավալատարածական հորինվածքով նույնպես երկաստիճան է, առաջին աստիճանը վեց կիսակլոր հիմքով թմբուկների մի փունջ է, թևերից մեկով հարում է երկթեք տանիքով ուղղանկյուն կառուցվածքին: Երկրորդ աստիճանը տասներկու նիստերով գմբեթաթմբուկն է հովհարաձև

зодчества. (Архитектурное наследство № 23, 1975, Москва, էջ 100—118): Հիշյալ հետապոստության մեջ օգտագործված են Ն. Բունիայանի, դեռևս 1914 թվականին կատարած չափագրական նյութերը և ջրաներկ նկարը:

<sup>1</sup> Халпахчьян О. Х. Церковь Григория рода Абу-гамренц в Ани и ее место в истории Закавказского



41. (դ.) Կուսանաց վանքի ս. Հովհաննես եկեղեցու հատակագիծ (չափագրություն Թ. Թորամանյանի)

վեղարով: Անկախ վեցթերթ ծաղկանման հատակաձևին, շինության որմնախարիսխը ընդհանուր երկաստիճան բոլորակ է:

Առաջին աստիճանի թմբուկներից յուրաքանչյուրի վրա դեկորատիվ սյունակամարաշարի երեք թռիչքներ կան, որոնք միմյանց կապվելով, օղակում են ողջ հուշարձանը: Ամեն թմբուկի միջին թռիչքի վրա բացվում է կոր վերնամասով ոչ մեծ պատուհան: Այնտեղ, որտեղ ուղղանկյուն կառուցվածքը հպվում է վեցերորդ խորանին, դեկորատիվ սյուները չկան, սակայն երեք կամարները (ուղղանկյուն շինության տանիքից վերև) կան:

Կիսաբոլորակ սյուները, որ կանգնած են կույզ-կույզ, ունեն գնդաձև խարիսխներ և խոյակներ: Վերջիններիս վրա հենվող կամարները, ինչպես և նրանց միջև առաջացած անտրվոլտերը ծածկված են ծաղկաքանդակով:

Առաջին աստիճանը պսակող քիվի վրայից սկսվել է տանիքը, որը հիմա չկա, սակայն նրա երբեմնի հովհարաձև լինելը հասկացվում է գմբեթաթմբուկի բոլորակ ներքնամասի վրա մնացած որոշակի հետքով:

Գմբեթաթմբուկի նիստերի հանդիպումներում կանգնած են սյունափնջեր, ստեղծված գնդաձև խարիսխ ու խոյակ ունեցող երեքական կիսասյուներով: Սրանք վերևից միմյանց կապվում են բավական վարգացած կողադեմ ունեցող փղպաղաձև քիվով, որով և պայմանավորված է վեղարի հովհարաձևությունը: Քիվի փղպաղներով նիստերի վրա առաջացած եռանկյունի հարթությունները քանդակապատ են:

Գմբեթի առանցքային նիստերի վրա բացվում են ձգված համաչափությամբ, կոր վերնամասով չորս պատուհաններ, որոնք ունեն քառանկյունի պարագծերով, նույնպես քանդակապատ շրջանակներ:

Եկեղեցին XIII դարի սկզբում կառուցել է Տիգրան Հոնենցը:

Հուշարձանին ձորալանջի կողմից հարող ուղղանկյուն կառուցվածքը բոլոր կողմերից ծածկված է պատերով, յուսանկարներում երևացող ծայրի պատի վրա կա վերնապարդով փոքրիկ պատուհան:


Հայ ճարտարապետության պատմության գրքերում այդ կառուցվածքի հատակագիծը պատկերվում է երեք կողմերից բաց՝ սյունապարդ օթյակի ձևով: Գծագրական նյութերի և յուսանկարների պակասության պատճառով հնարավոր չի դառնում պարզել այդ առեղծվածը՝ ակներև անհամապատասխանությունը պարբերաբար հրատարակվող յուսանկարների և հատակագծի միջև:

#### ՀՈՎԻ ԵԿԵՂԵՑԻ

Հուշարձանի այս անվան հետ է կապված մի գեղեցիկ լեգենդ, որ բերում է նրա վերակապության նախագիծն ստեղծող Թորոս Թորամանյանը իր աշխատությունների առաջին ժողովածուում:

Անկախ այդ լեգենդից, հայ վարպետների կերտած այս կոթողը եզակի է իր տեսակի մեջ ոչ միայն մեր, այլև ընդհանուր ճարտարապետության անդաստանում:

Հովվի եկեղեցու հատակաձևը կատարյալ աստղակերպ է և՛ ներսից, և՛ դրսից: Վերևում բերված մյուս հուշարձաններում խորաններն իրենց հիմքում կամ կիսաշրջան են, կամ մտերկու-երրորդ շրջան, այստեղ դրանք եռանկյունաձև են և իրենցով ստեղծում են վեցթևանի աստղի պատկերը: Արևելյան աստղաթևը գլխավոր սեղանն է, հարավ-արևմտյան թևի վրա բացվում



41. (ե) Հովվի եկեղեցու հատակագիծ (չափագրություն Թ. Թորանայանի)

է մուտքի դուռը, մյուս չորս թևերի վրա՝ մեկական պատուհան:

Աստղապատկերի արտաքին թևերը ներսի համեմատությամբ ավելի մեծաքանակ են և հասնում են 18-ի (զծ. 41ե):

Այս եկեղեցին ի տարբերություն մյուս վեց և ութ խորաններով երկաստիճան տաճարների, եռաստիճան է, սակայն՝ երկհարկ: Առաջին հարկը կապնում է առաջին աստիճանը, երկրորդ հարկը՝ երկրորդ և երրորդ աստիճանները, բուն եկեղեցին, փաստորեն երկրորդ հարկում է, իսկ երրորդ աստիճանը եկեղեցու գմբեթն է:

Առաջին աստիճանի ծածկը բավական յուրօրինակ է. այն վերևից հարթ է, քանի որ երկրորդ աստիճանի հատակն է: Եվ ահա, այդ հարթ հատակը իրականացնելու համար կառուցողը այն հենել է արտաքին պատերի ներքին վեց որմնամույթերից կամարներ նետելով դեպի կենտրոնում գտնվող «օդից կախված» փականային քարը: Այս փականային քարը այնպես է ձևավորվել, որ որպես կոնստրուկտիվ տարր չի ընկալվում: Հուսալի կայունություն ապահովելու համար բազմահմուտ կառուցողը արտաքին պատի աստղաթևերից վեց խոշորները դրել է հիշյալ վեց կամարների ուղղությամբ:

Հարթ ծածկի կառուցման այս սրամիտ ձևը իրականացված միայն քարով, առանց երկաթե գամերի ու լրացուցիչ միջոցառումների դեռևս XI դարի սկզբում զգալի հետաքրքրություն է առաջացրել ոչ միայն իր ժամանակակիցների, այլև XX դարասկզբում հուշարձանը հետապտողների մոտ:

Հովվի եկեղեցին շատ շքեղ կառուցվածք է, հարուստ ճարտարապետական ձևերով: Իր արտաքին ընդհանուր եռաստիճան հորինվածքի սկզբունքով հիշեցնում է ոչ հեռու գտնվող վվարթնոցանման հոյակերտ Գագկաշենը, որ նույնպես եռաստիճան կապնություն ուներ:

Սրա առաջին աստիճանի համատարած եռանկյունի խորշերով առաջացած Վիգպագաձև հիմքով թմբուկը պատած է 18 դեկորատիվ սյուներով, որոնք տեղադրված են այդ Վիգպագների 18 գագաթներում: Սյուներն ունեն գնդաձև խոյակներ, վրաները բազմանիստ խորանարդիկներ, խարիսխները խոյակներից հարուստ են, նստած ողջ հուշարձանը բոլորող ընդհանուր որմնախարիսխի վրա:

Եռանկյունի խորշերը վերևից ծածկող կիսակոնների երակամարները հարթ են՝ առանց կողադեմի: Թմբուկը պսակող քիվը հորիզոնական է նիստերին համապատասխան անկյուններով:


Տաճարի երկրորդ աստիճանը 12 նիստերով թմբուկ է, նիստերից վեցը լայն են, մյուս վեցը՝ նեղ: Բոլոր նիստերը վերևից ավարտվում են համապատասխան ձակտոններով: Լայն նիստերից յուրաքանչյուրի վրա փոքր չափերի մեկ պատուհան կա, նեղ նիստերի վրա ողջ նիստի լայնությամբ՝ խորշ, որոնցում բացվում են լուսամուտներ, բացի արևելակողմի խորշից, որի թիկունքակողմում եկեղեցու ավազ սեղանն է:

Հովվի եկեղեցու գմբեթը բոլորակ թմբուկ է, կոնաձև տանիքով: Գլխավոր առանցքների վրա բացվում են մեկական փոքր չափերի ուղղանկյունի լուսամուտներ:

Եկեղեցու ներսը իր շքեղությամբ գերազանցում է դրսին: Բոլոր վեց որմնամույթերը, որոնց կողերը կապնում են աստղաթևերի թեք հարթությունները, ձոխացված են գեղեցիկ խոյակներ ու խարիսխներ ունեցող սյունափնջերով, նաև կիսաշրջան հիմքով խորշերով:

Ողջ շինությունը կերտված է խոշոր չափերի





41. (վ.) Կիագմիս-ալթի եկեղեցու հատակագիծ (ըստ Ե. Թաղախչվիլու)

սրբատաշ տուֆաքարով, ամենայն կատարելությամբ:

Մինչև վերջերս եկեղեցին կիսով չափ կանգուն էր, ներսի շաղախապանգվածին կառչած պահպանվում էին տուֆակերտ սյուներ ու խոյակներ, քիվեր ու կամարաղեղներ, նաև գմբեթաթղմբուկի որոշ մասեր: Այժմ մնացել է քիչ բան:

Հովվի եկեղեցին մեր միջնադարի գոհարներից էր, որ Անիի մայր տաճարի նման սա էլ իր չափով սնունդ հանդիսացավ Եվրոպական Վերածընդնդի նորաստեղծ ոճերի համար:

#### ԿԻԱԳՄԻՍ-ԱԼԹԻ<sup>1</sup>

Խորագույն Հայքի վեց խորանով եկեղեցիներից Կիագմիս-ալթին յուրահատուկ է նրանով, որ սրա արևելյան խորանը մյուս հինգ խորաններից տարբերվում է ոչ թե լայնքով, այլ խորու-

<sup>1</sup> Խորագույն Հայքում գտնվող վեց խորանով տաճարը, որին Ե. Թաղախչվիլին անվանում է Կիագմիս ալթի, Նեյց և Դանիել Գուշոֆները 1971 թ. հեղինակում իրենց հրատարակած մի աշխատության մեջ այն կոչում են Կամիս (kamfiis):

թյամբ: Այստեղ գմբեթադղ խորանի կիսաբոլորակը գմբեթատակ բոլորակից հեռացած է ուղղանկյուն թաղակապ տարածությամբ:

Տաճարի արևելյան մասի այս ձևափոխությամբ հնարավոր է դարձել ավագ խորանի երկու կողմերում ունենալ ավանդատներ: Այս վերջիններս իրենց կիսակլոր վերջավորությամբ ուղղված են ոչ թե դեպի արևելք, ինչպես Արուհամրենցի ս. Գրիգորում է, այլ հյուսիսայինը՝ հյուսիս, հարավայինը՝ հարավ:

Կիագմիս-ալթիի հատակագիծը ստեղծված է 12 կողերով կանոնավոր բազմանկյան հիման վրա, սակայն արևելյան խորանի ձգվածության հետևանքով արտաքին նիստերի քանակը, ինչպես երևում է գծագրում, սովորական 12-ից հասել է 14-ի:

Այստեղ խորանների ներքին հանդիպումներում առկա են կիսաշրջան հիմքով որմնասյուներ, որոնց իրար կապող կամարների և թեթևակի արտահայտված առագաստների վրա բարձրանում է գմբեթը: Վերջինիս հիմքով, ներսից անցնում է պարզ կողաղեմով քարակերտ գոտի:

Տաճարի մուտքերը երկուսն են, որ բացվում են արևմտյան և հյուսիս-արևմտյան խորանների վրա: Մեկական պատուհան ունի խորաններից յուրաքանչյուրը:

Հինգ միանման խորանների միջև արտաքուստ առկա են եռանկյունի հիմքով չորս խորշեր: Մյուս երկուսի տեղում ավանդատներն են (գծ. 41 վ):

Տաճարի առաջին բազմանիստ թմբկապատի վրայով անցնում է դեկորատիվ կամարաշարը, հենված կույզ կիսասյուներին, որ առկա են նիստերի անկյուն կապող հանդիպումներում: Այդ թմբուկի 12 նիստերի վրա մեկընդմեջ միմյանց հաջորդում են համեմատաբար փոքր խորություն ունեցող եռանկյունի խորշերը և կոր վերնամասով պատուհանները:

Կոնաձև վեղարով ավարտվող գմբեթաթմբուկը հիմքում բոլորակ է, նրա պատուհաններն ունեն ձգված համաչափություններ:

Տաճարի մեծ և փոքր թմբկապատերը ավարտվում են հաճելի կողաղեմ ունեցող քիվով:

Շինության պատերը ներսից ու դրսից երեսապատված են սրբատաշ կարմրագույն տուֆաքարով. հետագայում միայն ներսից սվաղվել են:

Պատկերաքանդակների, որմնանկարների, ինչ



41. (է.) Օլթիի ս. Գևորգ (ըստ Չղանկիչի)

պես և արձանագրությունների հետքեր այդ պատերի վրա չեն հայտնաբերվել<sup>1</sup>:

#### ՕԼԹԻՒ Ս. ԳԵՎՈՐԳ

Համեմատաբար լավ է պահպանվել Օլթի գետի աջ ափում գտնվող հնագույն բերդի վեց խորան ունեցող «Սուրբ Գևորգ» եկեղեցին: Ինչպես երևում է լուսանկարից (նկ. 80), երեսպատումը գրեթե չկա, թափված է: Հավանաբար շրջակա նոր բնակիչները եկեղեցու քարերը պոկոտել, իրենց տները կառուցելիս օգտագործել են: Պատերի կրակբետոնն միջուկով, սակայն, հնարավոր է դառնում գաղափար կապել նրա հատակագծի, ընդհանուր ծավալատարածական հորինվածքի, ինչպես և արտաքին ճարտարապետական ձևերի վերաբերյալ: Երևում են դռների, պատուհանների, եռանկյուն հիմքով խորշերի տեղերն ու մոտավոր չափերը և այլ մանրամասներ:

Հետպոստողները այս եկեղեցու մասին գրում, բայց նյութերը չեն հրապարակում: Այդպես է վարվում նաև Ե. Թաղաիշվիլին: Նա Կիագմիս-ալթի եկեղեցու գծագրերը և լուսանկարը հրատարակում, միաժամանակ հիշում է, որ սա և «Օլթիի եկեղեցին միմյանց շատ նման են»:

Օլթիի ս. Գևորգ եկեղեցու հատակագծի ընդ-

<sup>1</sup> Այս տաճարի նյութերը, այդ թվում և ավերակի լուսանկարը, ինչպես և Ա. Կալգինի չափագրության գծագրերը Ե. Թաղաիշվիլին հրատարակել է 1909 թվականին (տե՛ս MAK, Ե. XII, էջ 85):

հանուր ուրվագիծը մենք տեսնում ենք Չղանկիչի մի ալբոմում միայն (գծ. 41 է):

Մեզ մատչելի առկա նյութերին ծանոթանալով, նկատում ենք, որ Օլթիի և Կիագմիս-ալթիի եկեղեցիների միջև տարբերություններն առավել նշանակալից են, քան նմանությունները: Ճիշտ է, երկուստեք ներքին խորանների քանակը նույնն է, դրանցում ավագ խորանները մյուսների համեմատությամբ դեպի արևելք զգալի խորացել են, բայց և հնարավոր չէ չնշել, որ Օլթիի ս. Գևորգը իր ծավալատարածական հորինվածքով և որոշ մանրամասներով նման չէ Կիագմիս-ալթիին: Այստեղ շինության առաջին աստիճանի հատակագիծը ստեղծված է ոչ թե 12 (ինչպես Կիագմիս-ալթիում է), այլ վեց կողեր ունեցող կանոնավոր բավանկյան հիման վրա և, հետևաբար, նիստերի քանակը կրկնակի փոքր է:

Ս. Գևորգի մեծ թմբկապատի վրա ոչ պատուհաններ կան, ոչ եռանկյունի խորշեր, որպիսիք կան Կիագմիս-ալթիում, և հակառակը՝ այստեղ 12 նիստերով գմբեթաթմբուկի վրա առկա են եռանկյունի խորշեր, որպիսիք չկան Կիագմիս-ալթիի բոլորակ գմբեթում:

Տաճարի լիակատար ուսումնասիրության համար անհրաժեշտ չափագրական և այլ նյութերի պակասության հետևանքով որոշ հարցեր, ցավոք, առեղծվածային բնույթ են ստանում: Այսպես, թրվում է, թե Չղանկիչի հատակագծային սխեման կապված է տաճարի ոչ թե առաջին, այլ երկրորդ աստիճանի համար, այսինքն՝ 12 կողերով բավանկյան հիման վրա: Հենց 12 կողերով բավանկյան հիման վրա է ստեղծված սրա երկրորդ աստիճանը՝ գմբեթաթմբուկը, ինչպես այդ տեսնում ենք լուսանկարում (նկ. 80):

Հնարավոր էր այդպես էլ համոզվել, եթե Չղանկիչը իր ներկայացրած սխեմայում միաժամանակ ցույց տված չլիներ տաճարի վեց խորանները, որոնք, հասկանալի է, չպիտի երևային գմբեթային մասի հատակագծում, քանի որ այդպիսիք գտնվում են տաճարի ոչ թե երկրորդ, այլ առաջին աստիճանի սահմաններում:

Երբ այսպիսին է իրավիճակը, հնարավոր չէ՞ մտածել, թե Օլթիի ս. Գևորգը թերևս եղած լինի եռաստիճան՝ առաջին աստիճանը՝ թմբուկ վեց-նիստերով (որպիսին երևում է լուսանկարում), երկրորդ աստիճանը՝ թմբուկ 12 նիստերով (որ նույնպես երևում է լուսանկարում), երրորդ աս-

տիճանը՝ գմբեթաթմբուկ, որի ձևերը նրա կործանված լինելու պատճառով անհայտ են (բնականաբար լուսանկարում էլ չէր կարող երևալ)։

Անմիջապես նշենք, որ սույն ենթադրության հավանականությունը խիստ փոքր է, հետևաբար պակաս հավանական է նաև Չղաննիչի կապված հատակագծի ուրվակնկարը։

Ոչ պակաս առեղծվածային է ներկա լուսանկարներից ստացվող այն տպավորությունը, որի համաձայն խորանները ընկած են վեց կողերով բազմանկյան անկյունների դիմաց, որտեղ այդ խորանների տեղադրումը առավել հարմար է, քան եթե տեղադրվեին բազմանկյան կողերի դիմաց։ Այս նկարում, սակայն, բացառվում են խորաններում պատուհաններ ունենալու հնարավորությունները։ Իրականում, համաձայն լուսանկարի (նկ. 80), իրոք որ առաջին աստիճանի թմբկապատի նիստերի վրա պատուհաններ չկան։ Այդ նույն ձևով հնարավոր չպիտի լիներ մուտքի դռների բացվելը խորանների վրա, ինչպես սովորաբար լինում է։

Համաձայն լուսանկարի, երբեմնի մուտքի կիսավեր բացվածքը ընկած է նիստերից մեկի առանցքի վրա, որը, սակայն, համապատասխանում է ոչ թե խորաններից որևէ մեկին, այլ խորաններից երկուսի ներքին հանդիպմանը, որտեղ սովորաբար կանգնած է լինում կիսակտր կամ երեք-բառորդ շրջանի հիմքով որմնասյուն, հետևում է, որ այդտեղ մուտք չէր կարող բացվել, եթե իրոք երևացող վեց նիստերով զգալի բարձրություն ունեցող ծավալը շինության պատվանդանային մասը չէ։

Տաճարի գմբեթաթմբուկի կրաբետոնյա զանգվածից և նրանից կառչած որոշ քարերից հնարավոր է եկրակացնել, որ պատերը արտաքինից եղել են երեսպատված կանոնավոր շարք կազմող սրբատաշ տուֆաքարով և, թերևս թմբկապատի վրայով անցել է դեկորատիվ պլանակամարաշար. մինչդեռ, համաձայն լուսանկարի, առաջին աստիճանի ավելի մեծ չափերի թմբկապատը չի ունեցել նման երեսպատում և համապատասխան ձևավորում։ Այս ինչ-որ չափով անսպասելի է։ Հնարավոր չէ՞ արդյոք ենթադրել, որ լուսանկարում երևացող պատը, որ շարված է անկանոն քարերով, հետագա գործողության արգասիք է, այսինքն՝ տաճարի սկզբնապես լավ երեսպատումով կառուցված պատը շտապ ծած-

կըված լինի այդ անարվեստ կերտված պատով պատերապաններից որևէ մեկի ժամանակ եկեղեցին ամրոցի փոխարկելու կապակցությամբ։ Հնարավոր է մտածել նաև, որ այդ միջոցառումը ուղղված է եղել խախտված պատերի կայունությունը երկարաձգելուն։

Օլթիի ս. Գևորգ եկեղեցու, որպես ճարտարապետական հետաքրքիր հուշարձանի, հանգամանալից ուսումնասիրությունը, որ շատ ցանկալի է և օգտակար, հնարավոր կարող է լինել միայն տեղում, մանրամասն չափագրումների և լուսանկարման միջոցով։

**ԱՐԴԱՀԱՆԻ Ս. ԳԵՎՈՐԳ  
(ԳՈԳՅՈՒԲԱ, ԳԵՈՐԳՈՒԿՅ)**


Այս եկեղեցու ավերակը գտնվում է Արդահանի շրջանում, նրանից արևելք, մոտ 30 կմ-ի վրա։

Անիում կառուցված վեց խորանով եկեղեցիների նման, այստեղ ևս բոլոր խորանները, այդ թվում և արևելյանը, միաչափ են ու պայտաձև։ Հատակաձևով և ծավալատարածական հորինվածքով սա Աբուհամրենց ս. Գրիգորի մերձավորագույն օրինակն է։ Սրանց տարբերությունը արտահայտվում է մի բանում միայն, այդ այն է, որ առաջինը արևելյան խորանի երկու կողմերում փոքրիկ ավանդատներ ունի, երկրորդը՝ չունի (գծ. 41 ը)։

Արդահանի ս. Գևորգը համեմատաբար վատ է պահպանվել. կանգուն է մերկացած կմախքը միայն՝ պատամեջի բետոնապանգվածի ամբողջությունը։ Երեսպատման քարերը որոշ դրվագներում են միայն մնացել, առավելապես ներսում։ Եվ այնուամենայնիվ այն բավարար ձևով չափագրվել է Ե. Թաղաիշվիլու արշավախմբի հետազոտողների կողմից դեռևս այս դարասկզբում։

Տաճարը, ինչպես ներսից, այնպես էլ դրսից, գրեթե բոլոր առանցքների նկատմամբ սիմետրիկ է։ Այն խախտվում է մուտքի երկու դռներով միայն, որոնցից մեկը բացվում է արևմտյան, մյուսը՝ հյուսիս-արևմտյան խորանների վրա։ Մեկական պատուհան ունի խորաններից յուրաքանչյուրը։ Եռանկյունի հիմքով և կիսակոն վերնամասով խորշեր են եղել դրսից բոլոր խորանների միջև։ Գմբեթը բարձրացել է խորանների ներքին հանդիպումների վերջավորություններում կանգնած երեք-բառորդ հիմքով որմնասյունները միաց-





41. (ը) Արդահանի ս. Գևորգ (Գոգյուբա) եկեղեցու հատակագիծը (ըստ Ե. Թաղաշիշվիլու)

նող գմբեթակիր կամարների վրա: Այստեղ բերվող լուսանկարի վրա (նկ. 81) երևում է հյուսիս-արևմտյան եռանկյունի խորշի ակուններով մշակված կիսակոն ծածկի մի հատվածի մնացորդը և մի կամարաքար:

Հետաքրքիր կապություն է ունեցել ս. Գևորգի գմբեթը: Այն դրսից և ներսից ունեցել է վեցական նիստեր, ըստ որում, ներսի նիստերից յուրաքանչյուրը ձևավորվել է մեկ կամարաթռիչքով, մինչ արտաքին նիստերից յուրաքանչյուրը՝ երկու կամարաթռիչքով: Այս պարագաներում պզալի դժվարացել է լուսամուտների կանոնավոր տեղադրությունը նիստերի վրա, չէ՞ որ ներսի կամարների (նիստերի) առանցքներին համընկնում են արտաքին կամարների հանդիպման հանգույցները:

Խնդիրը կմնար անլուծելի, եթե գմբեթի արտաքին կամարների բոլոր հանդիպումներում սովորականի նման որմնասյուներ դրվեին:

Լուսանկարի տվյալներով պարզվում է, որ ճարտարապետը արտաքին նիստերի կենտրոններում, որտեղ հանդիպում են կամարները, խոյակաձև քարեր դրել է, սակայն որմնասյուներ չի դրել, դրանց տեղերում բացել է պատուհաններ: Բարեբախտաբար լուսանկարով հնարավոր է դառնում պարզել, որ ս. Գևորգը կամարաշարից բացի, ունեցել է նաև որմնասյունաշար:

Գմբեթաթմբուկի հյուսիս-հյուսիս-արևմտյան նիստի արևելակողմի անկյան խոյակից կախմամբ փույգ սյուների դրվազը կա մեկ քարի բարձրությամբ: Այդ սյուները տեղադրված են եղել նիստերի հանդիպման անկյուններում միայն, այսինքն՝ վեց տեղում, անկախ տասներկու կամարների առկայության:

Ինչպես Աբուհամբենցի ս. Գրիգորում, այստեղ ևս գմբեթի հիմքում առկա է պարզ կողադեմով քիվ: Սրա ստորին կեսը գլան է, վերին կեսը՝ ուղղանկյուն գոտի, ստորին թեք հարթությամբ:

Գմբեթի կիսագնդաձև ծածկի զագաթում մութ սովերի մեջ՝ նշմարվում են քարակերտ երեք ճառագայթների մնացորդներ, ըստ երևույթին դրանք եղել են վեց հատ:


Տաճարի ներքին ու արտաքին հարթությունների մշակման մեջ գործադրված ճարտարապետական ձևերի նրբագեղության վերաբերյալ կասկած չի կարող լինել, բայց և գմբեթի նիստերի փոքրաթիվ լինելը այս կամ այն չափով հուշում է նրա ծանրաքաշ տպավորության մասին: Նույնը հնարավոր է ասել վաղուց գոյություն չունեցող լայն նիստերով բրգաձև վեղարի մասին: Այս առումով Աբուհամբենցը Գոգյուբայից շահեկանորեն տարբերվել է:

Ե. Թաղաշիշվիլին Արդահանի հուշարձանների մասին խոսելիս, Գոգյուբայի վերաբերյալ գրում է. «Վրացական աղբյուրներում Գոգյուբայի մասին ոչ մի տեղեկության մենք չենք հանդիպում»<sup>1</sup>: Նույն տեղում (էջ 74) նա շարունակում է. «Եկեղեցու ներսում որմնանկարների հետքեր չեն երևում, դատելով ռելիեֆ նախշերով, նրա պատերը, ըստ երևույթին, չեն էլ նախատեսվել սվաղվելու համար»: Այս հանգամանքը որոշակիորեն ասում է, որ տաճարը նախապես կառուցվել է լուսավորչական համայնքի համար: Առանց սրբապատկերների և որմնանկարների IX—XI դարերում քաղկեդոնական եկեղեցիներ չեն եղել:

#### ԹԱԼԻՆԻ ՎԵՑ ԽՈՐԱՆՈՎ ԳՐԻԳՈՐԱՇԵՆ

Այս եկեղեցին գտնվում է Արագած գյուղից մոտ 5 կմ դեպի արևմուտք, Ախուրյան գետի ձախափնյա մի ոչ մեծ տափարակի վրա, ժայռեղեն

<sup>1</sup> «В грузинских источниках мы не встречаем никаких известий о Гогюбской церкви». (Е. Такашвили, МАК, в. XII, Москва, 1905, էջ 75):



41 (թ.) Թալինի վեց խորանով Գրիգորաշեն եկեղեցու հատակագիծը (չափագրություն Ա. Մանուչարյանի)

շրջապատում<sup>1</sup>: Այն կառուցված է սրբատաշ դեղնավուն տուֆաքարով, բարձրացված քառաստիճան հարթակի վրա:

Դիտարկվող հուշարձանը իր հորինվածքով ընդհանուր լինելով վերևում բերված վեց խորանով տաճարների հետ, օժտված է նրանցից տարբերվող կողմերով: Ամենանշանակալիցն այն է, որ այս հուշարձանը մինչև այժմ հայտնի բազմախորան հուշարձաններից, այդ թվում՝ Եղվարդի Չորավարից և Իրինդից, ամենահինն է (սրա կառուցման ժամանակի հարցը անպայման կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրության):

Այս տիպի մյուս հուշարձաններում գմբեթային փոխանցման համակարգը առազաստային է, նաև տրոմպային. երկու դեպքում էլ համակարգը տեղավորվում է խորանների ելրակամարների և գմբեթի հիմքով անցնող գոտու միջև՝ առավելապես պատի մեկ կամ երկու շարքի սահմաններում:

Թալինի Գրիգորաշենում գմբեթաթմբուկի հիմքով գոտի չի անցնում, գմբեթատակ բազմանիս-

տը շարունակում է բարձրանալ մինչև պատուհանների կիսաբոլորակ բարավորների կրկաքարերը: Այստեղ, բարավորների բարձրության վրա երկշարք՝ մեծ ու փոքր տրոմպները վեցնիստը փոխարկում են 12 և 24 նիստերի, դրանց վրա էլ նստում է ծածկի կիսագունդը<sup>2</sup>:

Այստեղ գործադրված գմբեթային փոխանցման տրոմպային համակարգը գրեթե նույնական է VII դարի հուշարձան Պենպաշենի եկեղեցու (Մախմուտաճուքի) նույն դրվագի հետ, սակայն շատ ավելի պարզ է ու նախնական, աներկբա՝ ավելի հին:


Տաճարում վերոհիշյալից բացի մեկից ավելի նշաններ կան (որպիսիք նշում է առաջին հետազոտող Ա. Մանուչարյանը), որոնք հավաստում են նրա խոր հնությունը. դրանք են՝ խարսխահարթակի բազմաստիճան լինելը, շքամուտքի ձևերի հնօրինակությունը, պատուհանների բացվածքների մեծ չափերը, որմերի մեծ հաստությունը, հիմքում պայտաձև խորանների մեծ խորությունը, արտաքին եռանկյունի աննախադեպ պարագծերով խորշերի լայնական ու խորքային մեծ չափերը:

Տաճարի ամբողջական ծավալատարածական հորինվածքը, որքանով այդ հնարավոր են դարձնում ելրակացնել լուսանկարները, ստեղծված է ծավալների հաճելի, ներդաշնակ համաչափություններով, ելրագծերի ընդգծված հստակությամբ, վերծ պարզաբանողակներից (բացառությամբ պատուհանների կամարադեղների պարզ գծաբանողակների և գմբեթաթմբուկի վերևում առկա քիվերի երկշարքը): Ակներև է վերին շարքի հետագա նորոգումների արգասիք լինելը, մի բան, որ տեղի է ունեցել դեռևս VII դարում, իր ժամանակին խիստ բնորոշ կամարիկների մոտիվի գործադրմամբ:

Մեր առավել վաղ հուշարձաններում շինությունը շրջանցող եռաստիճան որմախարսխայինները ինչպես պատերի, այնպես էլ արտաքին խորշերի պարագծերը կրկնում են: Ինչպես հնարավոր է ենթադրել, Թալինի վեցխորանով այս տաճարը կառուցող Գրիգորը հնարավոր է համարել հիշյալ ավանդույթին չհետևել բազմաստիճան որմախարսխի պարզությունը չխաթարելու նկատառումով:

<sup>1</sup> А. Манучарян. Два новооткрытых памятника многоабсидной композиции (տես Պատմա-բանասիրական հանդես, 1976, № 3, էջ 259—268):

<sup>2</sup> Տաճարի այս դրվագը հար և նման է VII դարի ճարտարապետ Թողոսակի կառուցած Աթեն տաճարի գմբեթային փոխանցման համակարգի վերնամասին:



41. (ժ.) ւ. Շուշանիկի վեց խորանով եկեղեցու հատակագիծը (չափագրություն Ա. Մանուչարյանի)

### Ս. ՀՈՒՇԱՆԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Նորահայտ հուշարձաններից երկրորդը գտնվում է նախորդից հարավ, մոտ 3—4 կմ-ի վրա՝ հանրահայտ Բագարանի ավերակներում:

Այս եկեղեցին, ինչպես և մոտը գտնվող քառախորան եկեղեցին կառուցվել են կարմիր երանգի սրբատաշ տուֆաքարով ու կրաշաղախով:

Այիջանի, նաև Թորամանյանի մոտ կան ակնարկներ, որ Բագարանի Թեոդորոսի կաթողիկեից բացի, այդտեղ կան նաև այլ հուշարձաններ, սակայն նրանց կողմից մասնագիտական հետազոտության չեն ենթարկվել:

Համաձայն առաջին հետազոտող Ա. Մանուչարյանի, բնակիչների մոտ այս հուշարձանը հայտնի է «ւ. Շուշանիկ» անվամբ: Ինչպես երևում է իտալացի ճարտարապետ Պաոլո Կունեոյի կատարած լուսանկարներից և Ա. Մանուչարյանի կազմած հատակագծից, այստեղ առկա է հուշարձանախուրճ՝ մի փոքր մատուռ, քառա-

խորան եկեղեցի և վեց խորանով ւ. Շուշանիկի եկեղեցին: Այս վերջինս շատ կողմերով մոտ է IX—X դարերում կառուցված մեր մի շարք նույնատիպ հուշարձաններին: Հատակագծային ու ծավալատարածական ընդհանուր հորինվածքը, գմբեթային փոխանցման առագաստային համակարգը, ճարտարապետական մասերի համաչափությունները բերում են համոզման, որ ւ. Շուշանիկ եկեղեցին կառուցվել է IX—X դարերի սահմանագծում: Այստեղ նույնպես խորանները հատակագծում պայտաձև են ու խոր, խորանների հանդիպումներում բացակայում են կիսաբոլորակ հիմքով որմնամուկթերը, որպիսիք կան այդ տիպի համեմատաբար ուշ հուշարձաններում:

Այստեղ բացառիկ երևույթ է գմբեթադր խորանների երկաստիճան կազմությունը: Տաճարը գմբեթաթմբուկի պատուհաններից բացի, լուսավորվում է արևելյան և արևմտյան խորանների լուսամուտներով:

Ս. Շուշանիկ եկեղեցու գլխավոր մուտքը բաց-



վում է արևմտյան խորանի վրա: Այն մշակված է որպես շքամուտք: Մի երկրորդ մուտք էլ առկա է հարավ-արևմտյան խորանում, որով ստեղծվում է կապ և անցնում դեպի անմիջապես մտքը գտնվող քառախորան եկեղեցին: Նկատի ունենալով, որ երկրորդ մուտքը վերծ է վարդանախշերից ու շքամուտքի ձևերից, առաջին հետապոտող Ա. Մանուչարյանը ենթադրում է, որ այդ մուտքը հետո է բացվել, երբ ս. Շուշանիկ եկեղեցու հարավակողմում կառուցվել է քառախորան եկեղեցին. նա գրում է. «На основании вышесказанного можно с уверенностью заключить, что хронологически многоабсидная церковь предшествует тетраконхе и что строительство последней послужило причиной появления второго входа»<sup>1</sup>.

Հաջորդ էջում նա շարունակում է. «На основании всего изложенного можно заключить, что сначала были построены многоабсидная церковь и небольшая колокольня, куда входили через площадку у ступенек. Второй этап строительства, судя по технике кладки камней тетраконхи, не намного отделен от первого; в это время была построена тетраконха и переделана в придел колокольня»<sup>2</sup>.

Այս հուշարձանախմբի երեք բնակացուցիչների հատակագծերի փոխադարձ դասավորությունը մեկ բերում է տրամագծորեն հակառակ կարծիքի՝ սկզբնապես կառուցված է եղել փոքրիկ մատուռը (արևելակողմի հիմքում պայտաձև խորանով), ապա հարավ-արևմտակողմից նրան հարմարեցվել է քառախորան եկեղեցին (որից այժմ պահպանվում են հյուսիս-արևմտակողմի պատերը) և երրորդ հերթում կառուցվել է վեց-խորանով ս. Շուշանիկ եկեղեցին:

Ս. Շուշանիկ եկեղեցու բոլոր խորանների միջև, դրսի կողմից ստեղծված են եռանկյունի հիմքով խորշեր, մինչ հարավ-արևելյան և հարավ-արևմտյան խորանների միջև այդպիսի խորշ չի ստեղծվել, նկատի ունենալով, որ այդ կողմից եկեղեցու նիստը ծածկվել է մինչ այդ կառուցված մատուռի ծավալով: Ինչպես հաստատում է Ա. Մանուչարյանը, խորշի տեղում վերակառուցումների որևէ հետք չկա (էջ 267):

Ս. Շուշանիկ եկեղեցու և մատուռի միաժամանակ կառուցվելու դեպքում, նրանց միջև որևէ կապ կլիներ, եթե ոչ կոնստրուկտիվ, ապա գեթ կոմպոզիցիոն: Նման բան չկա: Եթե հետապոտողը ս. Շուշանիկ եկեղեցին համարում է IX—XI դարերի գործ, ապա մոտի միաժամանակ կառուցված մատուռը չայտի վանգակատուն անվաներ, քանի որ այդ ժամանակներում մեկ մոտ առանձին կանգնած վանգակատներ չէին կառուցվում:

Մյուս կողմից, եթե մատուռը քառակոնխից հետո կառուցվեր, առավել պատշաճ ձևով կհավեր եկեղեցուն, մինչդեռ նա իր դրվածքով բավական ինքնուրույն է և խորանի ձևով՝ ավելի հին: Այդ մատուռը քառախորան եկեղեցու համար չի հանդիսացել միաժամանակ կառուցված ավանդատուն, այդպես լինելու դեպքում մատուռի հյուսիսային պատը կկապեր քառախորանի հյուսիսային խաչաթևի ճակատային նիստի շարունակությունը, ինչպես առկա է արևելակողմում, մինչդեռ հիշյալ հյուսիսային պատը քառախորան տաճարի հյուսիսային խորանի ճակատային պատից մոտ մեկ մետրով ավելի հյուսիս է:

Որ վեց խորանով եկեղեցին է հարմարվել քառախորան եկեղեցուն և նրանց միջև գտնվող մատուռին, ելրակացվում է նրանով, որ կառուցողը իր եկեղեցու գլխավոր՝ արևելք-արևմուտք առանցքը թեթև է դեպի հյուսիս, դրանով իսկ հնարավոր դարձրել հարավ-արևմտյան խորանում դուռ ստեղծելու և քառախորան եկեղեցու հյուսիսային խաչաթևում բացվելիք դռան հետ կապվելու համար:

Այս երկու եկեղեցիների գլխավոր առանցքները ճշտորեն արևելք-արևմուտք ուղղելու դեպքում, այդ եկեղեցիները միմյանց հետ չէին կարող կանոնավոր կերպով հաղորդակցվել, քանի որ քառախորան եկեղեցու հյուսիսային խորանի առանցքին կհամապատասխաներ վեց խորանով եկեղեցու ոչ թե խորաններից որևէ մեկը, այլ երկու խորանների միջև առկա հոծ պատը, որի մեջ դուռ բացել չէր կարելի:

Նկատելի է նաև, որ վեց խորանով եկեղեցու հարավ-արևմտյան դուռը իր խորանում շատ ավելի կանոնավոր դիրքում է, քան քառախորան եկեղեցու հյուսիսային դուռը իր խորանում: Հետևում է, որ հետագայում դուռ է բացվել, ոչ թե վեց խորանով եկեղեցում, այլ մինչ այդ գոյություն ունեցող քառախորան եկեղեցու հյուսիսային խորա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 266:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 267:

նում, երբ կառուցվում էր վեց խորանով եկեղեցին:

Սրանով պարզվում է, որ Բագարանում ևս գոյություն է ունեցել վաղ միջնադարում կառուցված քառախորան եկեղեցի:

Կաթողիկոս Դրասխանակերտցու այն վկայությունը, որ Աշոտ Բագրատունին Բագարանում Ախուրյանի գետափին կառուցել է եկեղեցի, հետագոտող Ա. Մանուչարյանը այդ տեղեկությունը, որոշակի փաստերի հիման վրա, վերագրում է վերևում դիտարկվող վեց խորանով ս. Շուշանիկին նվիրված եկեղեցուն և կառուցման ժամանակը նշում է 914—918 թվականները:

### ԲՈՋՈՐՄԱ


Վրաստանի Թիանթթի շրջանում (Կախեթիա), Կվետերայից մոտ 15 կմ հարավ, Իորի գետի ձորաբերանում, բարձրաբերձ ժայռերին կառուցել է հնադարյան Բոջորմա բերդ-ամրոցը, որի պարիսպների ներսում իր կիսավեր գոյությունն է պահպանում ս. Գևորգ եկեղեցին:

Ինչպես Կվետերա ամրոցի <sup>3</sup>/<sub>4</sub> խորշերով քառախորան եկեղեցու, այնպես էլ Բոջորմա ամրոցի ս. Գևորգ եկեղեցու կառուցումը վերագրվում է պատմական Կախեթիայի վերջին տիրակալ Ախսորթանին, մինչ նրա գերվելը<sup>1</sup> և այդ երկրի ներգրավվելը Վրաստանի սահմանների մեջ:

Բոջորմայի ս. Գևորգը վեց խորանով եկեղեցիների թվում հետաքրքիր օրինակներից է: Այն որոշ կողմերով մյուսներին նման, այլ կողմերով տարբեր է: Նման է նրանով, որ այստեղ նույնպես կենտրոնական վեցնիստ բազիլիկայնը հարում են վեց, հիմքում կիսակլոր խորաններ իրենց նախախորաններով: Դրանցից հինգը միաձև են և միաչափ, վեցերորդը, որ արևելակողմի (գլխավոր) սեղանն է, ունի կրկնակի խորություն, նրա երկու կողմերում ավանդատներ չկան (գծ. 41ի):

Ծավալատարածական հորինվածքով նույնպես

<sup>1</sup> Հ. Դեվոնդ Մովսեսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, 1923, Վիեննա: Այս աշխատության 86-րդ էջում կարդում ենք. «Կախեթի Կյուրիկյան հարստությունը կը հիմնվի Գագիկով (1039—1058), որ վրաց պատմագրին մոտ «Գագ» ձևով ավանդված է: 1102—1105, Հերեթի և Կախեթի պետերը միանան, բռնեն փնքը (Ախսորթանին—վերջին մեղք թագավորին) և հանձնեն Դավիթ վերանորոգողի, որ ամբողջ Հերեթն ու Կախեթը նվաճեց:



41 (ի) Բոջորմա (Վրաստան) եկեղեցու հատակագիծը (ըստ Գ. Չուբինաշվիլու)

ս. Գևորգը նման է տվյալ տիպի մյուս հուշարձաններին: Այն երկաստիճան է՝ երկու թմբուկներ, մեկը մյուսի վրա:

Արդ, որո՞նք են Բոջորման մյուսներից տարբերող կողմերը: Նախորդ հուշարձանները դիտելիս ակներև է առաջին աստիճանի միասնական թմբկածավալը, նրա վերևում գմբեթը: Բոջորմայում թմբկածավալը եռանկյունի խորշերի մեծ խորության հետևանքով պատկերվում է, որպես առանձին ծավալների ի մի բերված խուրձ, այն ավելի աստղակերպ է, քան՝ թմբկած: Այդպես է նաև Անիի միջնաբերդից ոչ հեռու գտնվող վեց խորանով եկեղեցուն: Այդ տպավորությունը հատկապես խորանում է տաճարի առաջին աստիճանը պսակող հորիզոնական քիվի փոխարեն, առանձին նիստերի ճակտոններով վերևից ավարտվելը: Բանն այն է, որ այդ ճակտոնները խորանների արտաքին ուղղանկյունաձև ծավալները որքան միմյանց հետ կապում, շատ ավելի միմյանցից անջատում են, ջնորհիվ իրենց բնորոշ ցցուն ձևերի:

Ծավալների մասնատվածությունը առավել որոշակի է ներկայանում հատկապես հատակագծապատկերում: Այդ տպավորությունն ուժեղանում է Կախեթիայի մի խումբ հուշարձաններում, նաև Բոջորմայում առկա յուրահատուկ նախախորան-

ների երազների կտրտվածությամբ:<sup>1</sup> Նկատենք, որ մյուս վեց խորանով եկեղեցիներում նախախորաններ չկան, բացառությամբ մի քանիսի, որոնց արևելակողմի խորանները իրենց նախախորանի չափով հեռացված են գմբեթատակ տարածությունից:

Այստեղ բոլոր խորաններն ունեն մեկական պատուհան, հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան խորանները՝ նաև մուտքի դռներ: Դռների բացվածքները դրսից ուղղանկյունի են, ստեղծված տիմպանի քարով, որին ներսից համապատասխանում է կամարակապ բարավորը:

Մուտքի դռների առջևում ստեղծված են հատակագծում ուղղանկյունի նախամուտքեր, որոնցից հյուսիս-արևմտակողմինը չկա, հարավ-արևմտակողմինը կա՝ վնասված վիճակում: Սրանք ժամանակին իրենց դուրս ցցված ծավալներով խանգարել են հուշարձանի ամբողջական դիտմանը:

Բոջորմայում գմբեթը բարձրանում է խորանների ներքին հանդիպումներում առկա մույթերը և կիսաշրջանից փոքր-ինչ պակաս հիմքով որմնասյուները միմյանց կապող գմբեթակիր կամարների վրա:

Շինության պատերի ներսի և դրսի երեսները շարվել են սրբատաշ քարով, ըստ որում, ներսի շարքը դրսի շարքի համեմատությամբ ավելի կանոնավոր է և լավ պահպանված: Պատերի ներսի երեսները հետագայում սվաղվել և պատկերավարդվել են:

Տարիների ընթացքում կրած բազմաթիվ նորոգումներով եկեղեցու առաջին աստիճանի թմբկապատը զգալի աղավաղվել է. տարբեր գույնի քարերով և աղյուսով լցված են եռանկյունի խորշերը, պատուհանները, մուտքերից մեկը և պատերի այլ փլուզված հատվածներ: Պահպանված որոշ ղրբվագների օգնությամբ հաստատվում է, որ թմբկապատի վրայով դեկորատիվ սյունաշար չի անցել. առկա են կամարաղեղների մնացորդներ, որոնք սակայն, ինչպես երևում է, միմյանց կապված չեն եղել և թմբկապատը չեն յղակել:

Տաճարի ներսում բոլոր մույթերը, այդ թվում և կիսակլոր հիմքով որմնասյուները իրենց վերևում խոյակի փոխարեն ունեն փոքր բարձրության քարասալեր, որոնք շրջանցելով նախախո-

րաններն ու խորանները՝ ընդհատվում են պատուհանների սահմաններում միայն, կոր բարավորների կրկաքարերի բարձրության վրա:

Գմբեթատակ վեցնիստ տարածությունից անցումը գմբեթի բոլորակին կատարվել է կախեթական ճարտարապետության համար ավանդական ձևով՝ գմբեթակիր կամարներին հենվում են տըրումպներ հիշեցնող փոքր կամարներ, որոնց ներքնամասը առագաստաձև լցված է քար ու շաղախով:

Տաճարի կործանված գմբեթից տեղում գոյատևում է պատի մի հատված մեկ նիստի սահմաններում: Դատելով այդ դրվագից, պարզվում է, որ գմբեթը ներսից եղել է բոլորակ, դրսից՝ բազմանիստ: Արտաքին 12 նիստերի հանդիպումներում գոյություն են ունեցել կիսակլոր հիմքով զույգ որմնասյուներ, որոնց խոյակների վրա նստել են կամարաղեղները: Նիստերից վեցի վրա բացվել են ներսը լուսավորող պատուհաններ: Գմբեթի ներսի երեսպատման քարերը տաճարի ստորին մասի պատերի երեսպատման քարերից չափերով փոքր են եղել:

Գմբեթաթմբուկի հիմքով, ներսից և դրսից անցել են պարզ կողաղեմով գոտիներ: Գմբեթաթմբուկն ավարտվել է հորիզոնական քիվով, որից սկսվել և վեր է բարձրացել կոնաձև վեղարը:

Բոջորմայում գմբեթաթմբուկը առաջին աստիճանի թմբուկի համեմատությամբ բավական փոքր է եղել, նրանց արտաքին տրամագծերի հարաբերությունը 1:1, 81 է. այդ հարաբերությունը Աբուհամրենցում 1:1, 48 է, Անիի միջնաբերդի եկեղեցում 1:1, 36, Եղվարդի Չորավարում 1:1, 34, Անիի Փրկչի եկեղեցում 1:1, 24 և այլն:

«Կախեթիայի ճարտարապետությունը» գրքի Բոջորմային վերաբերող գլխում վեց խորաններով հուշարձանների առաջացման վերաբերյալ երկու միմյանց հակասող տեսակետներ են շարադրված: Առաջինում ասվում է. «Խոսք անգամ չի կարող լինել հին ավանդույթների մասին, որ իբր վերապրում են նրանց մեջ» (տե՛ս էջ 423): Երկրորդում ասվում է. «Բոջորման իր վեց խորաններ ունեցող հատակագծով մի ավելորդ անգամ ընդգծում է վերևում արտահայտած այն պնդումը, որ այդ ժամանակ ճարտարապետները զբաղված էին անցած ճարտարապետության մեջ իրենց որոնած հատակագծերի և ձևերի վերամշակումով և վերափոխումով և այժմ ամբողջությամբ նորից վերամշակում են դրանք: Նրանք տալիս են հին

<sup>1</sup> Արդպես է Նինոմինդայում, Ալավերդում, Կվետրայում և հատկապես ուշ հուշարձաններում:



թեմաներով նոր տարբերակներ» (տե՛ս էջ 421):

Առկա նյութերը (Չորավար, VII դար, Իրինդ, VII դար) աներկբա հաստատում են կարծիքներից երկրորդի ճշմարտացի լինելը: Ճշմարիտ է նաև այն, որ Բոչորման և մյուսները միմյանց նման են: Նույն գրքի 422 էջում կարդում ենք. «Դրանք անմիջականորեն նման են միմյանց և, հատկապես Բոչորմա տաճարին»:

#### ԿԱՑՆԻ

Այս եկեղեցին գտնվում է Իմերեթիայում (Արևմտյան Վրաստան), Կացխուրո գետափին: Սրա հատակագիծը նույն կապնությունն ունի, ինչ որ մյուս վեց խորանով եկեղեցիները, երկու ոչ անկարևոր տարբերությամբ: Այստեղ, ի տարբերություն մյուսների, կենտրոնական մասին երեք կողմերից (հյուսիսից, հարավից, արևմուտքից) շրջանցում է բոլորակ սրահ, արևելակողմի խորանաձև երկու վերջավորություններով:

Մյուս տարբերությունն այն է, որ խորանների միջև դրսից եռանկյունի խորշեր չկան: Դրանց փոխարեն պատերի հոծ վանգվածները թեթևացվել են տարբեր պարագծերի հինգ (թերևս՝ վեց) ավանդատների ստեղծումով:


Նախախորանի առկայությամբ արևելյան խորանը ստացվել է մյուսներից կրկնակի խոր (գծ. 41 լ):

Ինչպես բուն եկեղեցին, այնպես էլ բոլորակ սրահը ունեն երեք մուտք (հյուսիս-արևմուտքից արևմուտքից և հարավ-արևմուտքից):

Ծավալատարածական առումով նույնպես Կացխին մյուս վեց խորանով եկեղեցիներից տարբերվում է. սա եռաստիճան կառուցվածք է (ինչպես Հովվի տաճարն էր Անիում), ըստ որում առաջին աստիճանը երեք կողմերից շրջանցող սրահն է, որը, համաձայն հետապոտոդների, կառուցվել է բուն եկեղեցուց ուշ: Սրանից հետևում է, որ տաճարը սկզբնապես եղել է մյուսների նման երկաստիճան:

Մտովի բոլորակ սրահը հեռացնելով, մեր դեմ պատկերվում է անսովոր բարձրության առաջին աստիճանի թմբուկը, նրա վրա երկրորդ աստիճանը՝ գմբեթը:

Մարդ ակամայից տարակուսում է, փորձում է ենթադրել, որ թերևս շրջանց սրահը հենց սկզբնապես, տաճարի առաջին մտահղացման



41 լ) Կացխի (Վրաստան) եկեղեցու հատակագիծը (ըստ Վ. Բերիձեի)

մեջ, կենտրոնական մասի հետ միաժամանակ գոյություն է ունեցել, որպես ամբողջի անբակտելի, օրգանական մասը:

Բանն այն է, որ եկեղեցու ամբողջական հորինվածքը համամասնության առումով, շրջանց սրահի առկայությամբ ավելի ըմբռնելի և տրամաբանական է ներկայանում, քան առանց այդ սրահի, երբ բուն տաճարի առաջին աստիճանի վերձիգ համաչափությունները գերապանցում են նույնիսկ որոշ կանգակատների համաչափությունները: Այդ XI դարի համար ինչ-որ չափով խորթ է:

Հետաքրքիր է, որ մեծ թմբկապատի 12 նիստերից վեցի վրա բացված պատուհանները գտնվում են շատ բարձր դիրքում. արևմտակողմի նիստի պատուհանի ձևավոր շրջանակի վերնամասը բարձրացել, գրեթե հասել է դեկորատիվ սյունաշարի տվյալ նիստի կամարի գագաթին: Իսկ ինչո՞վ է լցվել նիստի ստորին կեսից ավելի պարապությունը. մուտքեր 12 նիստերից միայն երեքի վրա կան:

Ժամանակակից տաճարում բոլորակ սրահի նիստերի ձևակոնների գագաթները ճշտորեն հասնում են պատուհանների ներքնամասին: Եթե նախօրոք շրջանց սրահի ավելացումը մտածված չլիներ, թմբկապատի նիստերի վրա պատուհաններն իրենց քանդակածածկ շրջանակներով, անտարա-

կույս, ավելի ցածր դիրքում կլինեն և, ընդհանրապես ողջ թմբկապատն այդքան բարձր չէր լինի:

Մասնագիտական գրականության մեջ եղած սովյալներով, տաճարի պատերը դրսից ստացել են նոր երեսպատում (1854 թ.), ներսի երեսներն էլ ծածկված են սվաղով: Արդ, հնարավոր չէ տեսնել և հետապոտել շինության կառուցման ընթացքը, կամ նրա որևէ վերակառուցումը, որ կարող է տեղի ունեցած լինել:

Տաճարի երրորդ աստիճանը գմբեթաթմբուքուն է հովհարաձև վեղարով: Հովհարաձև ծածկ ունեն տաճարի նաև առաջին և երկրորդ աստիճանները: Ծածկերի այդ ձևը հետևանք է թմբկապատերի ճակտոնավոր նիստերի:

Տասներկու նիստերով գմբեթաթմբուքի վրայով անցնում է դեկորատիվ սյունակամարաշար, հար և նման մեծ թմբուկը ձևավորող սյունակամարա-

շարին: Նիստերի հանդիպման անկյուններում նանգնած զույգ կիսակլոր սյուների խոյակները իրար են կապում բարակ, զույգ կիսագլան կողադեմով կամարները: Գմբեթաթմբուքի բոլոր նիստերի վրա բացվում են կոր վերնամասով, ձրգված համաչափության պատուհաններ:

Համաձայն շրջանց սրահի բոլորաձև քանդակապատկերի շուրջը առկա արձանագրության, կառուցել է Արզվեսի Էրիսթավ Հովհաննը (ՊՕԱԻ): Նա, դեռևս XI դարում սելջուկների դեմ մղած պայքարով հայտնի դարձած ասպետ Լիպարիտի որդին էր:

Այսպիսով մեզ հայտնի վեց խորանով տասներկու հուշարձաններից երկուսը գտնվում են Սովետական Հայաստանում, երկուսը՝ Վրաստանում, ութը՝ Արևմտյան Հայաստանում:

Վաղ միջնադարում կառուցվել են ութ խորանով տաճարներ, որոնց օրինակները հասել են մինչև մեր օրերը և, անկախ իրենց կիսակործան վիճակի, ներկայանում են որպես բարձր արվեստի իսկական ստեղծագործություններ:

Դրանցից ճարտարապետության պատմությանը հայտնի են Աշտարակի շրջանի Եղվարդի Չորավարը, Իրինդավանքը Արագածի արևմուտքյան լանջում, Տայոց Քարը Խորագույն Հայքում և Փրկչի եկեղեցին Անիում<sup>1</sup>:

Անհետաքրքիր չէ խորանուխ լինել, թե ինչն է եղել հիմնական առիթը այս տեսակի բազմախորան տաճարների ստեղծման: Հնարավոր է մտածել, թե այդ արգասիք է տաճարի ներքին տարածության, նրա տարողության մեծացմանն ուղղված միջոցառման. չէ որ վաղ միջնադարում նույն նպատակին հետամուտ տարբեր միջոցներով ընդարձակվում էին տաճարների նաև այլ տիպեր: Օրինակ, Բագարանը կառուցողը ստեղծեց ներքին ընդարձակ տարածությամբ տաճար, առանց մեծացնելու գմբեթի տրամագիծը: Նա գմբեթը բարձրացրեց շինության ներսում առանձին կանգնած չորս սյուներն իրար կապող կամարների վրա: Չվարթոնց կառուցողը նույն նպատակով անփոփոխ թողնելով ներքին քառակոնիսի և գմբեթի չափերը, տաճարն ընդարձակեց կենտրոնի շուրջը բոլորակ սրահի ստեղծմամբ: Հետագայում այդ և այլ առիթներով գոյություն ունեցող եկեղեցիների արևմտակողմում ստեղծվեցին գավիթներ և այլ շինություններ:

<sup>1</sup> Ճարտարապետության պատմությանը նվիրված որոշ աշխատություններում բազմախորան տաճարներին անբաշխառնակա, երբեմն, վեց խորան ունեցող Կացխի եկեղեցին ութ խորաններով ներկայացնելու փաստը մեզ համար մնում է անհասկանալի:

Հնարավոր է նաև ենթադրել, թե կառուցողը մտածել է ոչ այնքան տաճարի ներքին տարածությունը մեծացնելու, որքան ներսում խմբված հավատացյալներին արարողությանն անմիջական մասնակից դարձնելու մասին: Ուրիշ ինչով բացատրել մյուս վեց խորանները (Իրինդում) գլխավոր՝ արևելյան խորանին հավասար մեծությամբ ստեղծելը: Պետք է կարծել, որ հավատացյալները հանդես են եկել ոչ պասիվ լսողի դերում, յուրաքանչյուրն անձամբ մասնակցել է իրեն անմիջական մտ գտնվող խորաններից որևէ մեկում տեղի ունեցող արարողությանը: Այդ նույն նպատակին էին ուղղված ավանդատները արևելյան պատում խորանաձև կլորացումներով մատուռի նշանակության փոխարկելը, նաև տաճարի տարբեր մասերում կիսակլոր հիմքով խորշեր ստեղծելը:

Հավանական պետք է համարել և այն, որ բոլորաձև տաճարի ներքին տարածությունը խորանների կամ ուղղանկյուն խորշերի շարքով կազմավորելը հետևանք լինի արարողության պահանջներից բացի, նաև շինության իրականացման հետ կապված ճարտարապետական-կառուցողական պահանջների բավարարման: Չէ որ տաճարի երկրորդ աստիճանը՝ գմբեթաթմբուկը առաջին աստիճանի սահմաններում պետք է հիմք ունենար, իսկ այդպիսին կարող էր լինել սյունակամարաշարը, ինչը և առկա է ուսումնասիրվող տաճարներում: Իսկ այդ սյունակամարաշարի և արտաքին թմբկապատի միջև եղած տարածությունը, կամ հոծ պատի թանձրությունը ցանկացած ձևով կարող էր թեթևացվել, ինչպես այդ արվել է յուրովի, տաճարներից յուրաքանչյուրում առանձին վերցրած:

Մի շատ հետաքրքիր ընդհանրություն կա



Վաղարշապատի ս. Հռիփսիմեի գմբեթաթմբուկի և բազմախորան տաճարների թմբկաձև առաջին աստիճանի կապնության միջև: Հռիփսիմեում (նաև Մահմուտուքում VII դարի տաճար) գմբեթաթմբուկի պատը անհամեմատ հաստ է տաճարի ներքնամասի պատերից, սակայն ներսից թեթևացված է կիսակլորին մոտ խորշերով: Այդ միջոցառումը ակներև ունեցել է հակաերկրաշարժային նպատակ: Այդտեղ պատը հիմքում եղել է բավական լայն և աշխատել է տարածականորեն:


Բազմախորան տաճարներում լայն հիմքով փորան-խորշերով թեթևացված թմբկապատերը Հռիփսիմեի գմբեթաթմբուկի օրինակով աշխատել են տարածականորեն, դիմագրավել երկրաշարժերին, ինչպես և գմբեթաթմբուկից առաջացող և ստորին մեծ թմբուկի պատերին փոխանցվող, դեպի դուրս հրող ուժերին: Այստեղից հետևում է, որ բազմախորան տաճարներում խորաններն ու խորշերը ունեցել են նաև շատ կարևոր՝ կոնստրուկտիվ հակաերկրաշարժային նշանակություն:

Խորագույն Հայքում գտնվող ութ խորան—խորշեր ունեցող տայոց Քար հուշարձանի ճարտարապետությունը ավելի հասկանալի դարձնելու նպատակով ստորև, համառոտ նկարագրության ձևով դիտարկվում են նաև Եղվարդի, Իրինդի և Անիի Ամենափրկչի ութ խորան ունեցող եկեղեցիները:

### ՁՈՐԱՎԱՐ

Սա հայ ճարտարապետության պատմությանը հայտնի բոլորակ հատակագծով հուշարձանների շարքում, թերևս ամենաառաջիններից է: Մինչ այդ կառուցվել էին բազմաթիվ քառախորան եկեղեցիներ, այդ թվում նաև երեք-քառորդ խորշերով, բայց ութ խորանով տաճարներ և ոչ մի:

Ութ խորանով եկեղեցիների առաջնապլը VII դարի երկրորդ կեսի ընթացքում միանգամայն տրամաբանական էր: Ավանում, Գառնահովտում, Հռիփսիմեում և այդ տիպի հուշարձաններում ղըրա համար արդեն ստեղծվել էին նախադրյալներ: Դրանցում առկա էին չորս խորաններ և չորս երեք-քառորդ խորշեր: Ավանում և Գառնահովտում երեք-քառորդ խորշերը իրենց մեծությամբ փոքր չափով միայն զիջում էին կողային խորաններին: Հետագայում, երբ ավանդատների կարիքը



42 (ա) Չորավար եկեղեցու հատակագիծը (չափագրություն Թ. Թորանսյանի)

վերանում է, երեք-քառորդ խորշերը նպատակալրկվում, գոյատևում էին լոկ դեկորատիվ նպատակներով, միտք է առաջանում հավասարության նշան դնել խորանների և այդ խորշերի միջև: Ութ խորաններ ունեցող Եղվարդի և Իրինդի համար լավ նախօրինակ է ծառայել Մաստարան, որի ներսը ընկալվում է որպես ութ կամարաղեղներով ելրագծված մի ամփոփ տարածություն, ի՞նչ փույթ, թե այդտեղ առկա են գմբեթարդ ծածկով չորս խորաններ և կիսակոն վերնամասով չորս անկյուններ:

Բնական է ելրակացնելը, որ Մաստարայի տիպից մինչև Բագարանը (ներքին պլաներով), մյուս կողմից՝ մինչև ութ խորաններ ունեցող (անպլան) տաճարները մի քայլ է միայն:

Յոթերորդ դարի վաթսուհակնի սկզբում բոլորակ հիմքով Չվարթնոցի հոյակերտ շինությունը արդեն իրականություն էր և չէր կարող ստեղծագործող ճարտարապետներին չնդել իրենց նոր ձեռնարկներում ինչ-որ չափով անդրադարձնել այդ չնաշխարհիկ կերտվածքի որևէ կողմը:

Այսպիսով, բոլորակությունը վերցնելով Չվարթնոցից, ութ խորանները բխեցնելով երեք-քառորդ խորշեր ունեցող քառախորան տաճարներից և Մաստարայից, ստեղծվում է Եղվարդի

ութ խորանները մի ընդհանուր բոլորակի մեջ առնված Չորավար եկեղեցին<sup>1</sup> (գծ. 42ա) :

Հետաքրքիր է, որ Չորավարում գործադրվում են եռանկյունի հիմքով խորշեր, որ գալիս են Գառնահովտից և Հռիփսիմեից, արտաքին հարդարանքում՝ կամարաղեղներում ու քիվերում տեղ են գտել Չվարթնոցի քանդակատեսակների ընդօրինակումներ:

Իոսիֆ Սորժիգովսկին իր «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» աշխատության առաջին հատորում բերում է գծագրեր, որտեղ պատկերված են տարբեր տիպի տաճարների վարգացման շրջանները: Այդտեղ վարգացումը պարզից գնում է դեպի բարդը՝ նախ գծված է վեց խորանով տաճարների սխեման, ապա ութ խորանով տաճարների սխեման: Այդ բնական է և միանգամայն տրամաբանական: Սույն աշխատության մեջ նույնպես վեց խորանով տաճարները քննվում են ավելի վաղ, քան բարդ՝ ութ խորանով տաճարները: Սակայն տվյալ դեպքում ութ խորանով տաճարները իրենց ամբողջության մեջ բարդ լինելով վեց խորանով տաճարներից, ըստեղծվել են առավել պարզ տրամաբանությամբ՝ չորսը ութի փոխարկելով, որ ավելի անմիջական է, քան չորսը վեցի փոխարկելը: Եթե չլիներ Թալինի շրջանի Գրիգորաշեն վեց խորանով նորահայտ եկեղեցու գոյության փաստը, առանց տատանվելու կարելի էր երակացնել, որ ութ խորանով տաճարները նախորդել են վեց խորան ունեցող տաճարներին:

Չորավարի ներսում գմբեթատակ տարածությանը բոլոր կողմերից հարում են ութ խորաններ, որոնցից յոթը միաձև են և միաչափ, արևելյանը անհամեմատ մեծ է ոչ միայն խորությամբ, որ արդյունք է նախախորանի առկայության, նաև լայնությամբ, որպես բացառիկ երևույթ բավմա-

<sup>1</sup> Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի ութ խորանով եկեղեցին, համաձայն մեր հավաստի մատենագիրների, կառուցել է իշխան Գրիգոր Մամիկոնյանը, երբ Հայաստանի արաբական խալիֆաթին ենթակա մասի կառավարիչ էր (662—681): Ըստ երևույթին, դրանով էլ պետք է բացատրել եկեղեցու «Չորավար» անվանումը:

Այդ եկեղեցու կառուցման ժամանակը ունաց կողմից VII դարից X դարի վերջը տեղափոխելը, նրա X, XI—XIII դարերում կառուցված վեց և ութ խորան ունեցող եկեղեցիների համար ավելի քան նախօրինակ հանդիսանալը ժխտելը կամայական է, անընդունելի:

խորան տաճարների շարքում (արևելյան խորանը մյուսներից լայն է նաև Անիի Ամենափրկիչում):

Այստեղ խորանների ներքին հանդիպումներում կանգնած են հիմքում շրջանի երեք-քառորդ մակերեսով որմնամույթեր, որոնց խոյակները միմյանց կապելով բոլորվում են գմբեթակիր կամարները: Խորանները տաճարի արտաքինում արտահայտվում են եռանիստ թմբկապատի ձևով: Հարևան խորանների կողային թեք նիստերով էլ առաջանում են եռանկյունի խորշեր, որոնց խորքում առկա է կիսակլոր հիմքով մեկական սյուն: Դրանցից մի քանիսի խորանարդաձև խոյակներին, ավելի խորացող կիսաշրջան հիմքով խորշերի ֆոնի վրա դրված են եղել կլոր քանդակներ, որոնք հիմա չկան: Մյուս խորշերում, այդ սյուները խոյակներ չունեն և շարունակում են բարձրանալ, մտնելով խորշի կիսակոնաձև ծածկի մեջ:

Գառնահովտում, Թալինի և Արթիկի Կաթողիկե եկեղեցիներում խորշերի ներսի սյուները, ի տարբերություն Եղվարդի և Իրինդի, գույգ-գույգ են:

Եղվարդում եռանկյունի խորշերը ընդգրկում են նիստի ողջ լայնությունը: Տվյալ տիպի հուշարձանների մեծ մասում այդ խորշերը պահեցնում են նիստերի միջին մասը միայն: Խորշերից ապատ նիստերի վրա բացվում են զգալի չափերի կոր վերնամասով և աղեղապսակով պատուհաններ, որոնք լուսավորում են խորանները և տաճարի ներսը:

Տաճարը, ըստ երևույթին, ունեցել է երեք շքամուտք, որոնցից պահպանվում են հյուսիսայինն ու արևմտյանը: Հարավային մուտքի երբեմնի գոյությունը հնարավոր է ենթադրել միայն, քանի որ տաճարի հարավային հատվածը, որտեղ պիտի եղած լիներ այն, կործանված է, չկա: Շքամուտքերի բացվածքների երկու կողմերում եղել են որմնամույթեր, որ իրենց վերևում կրել են պատի հարթությունից դուրս եկած կամարաղեղը: Մուտքերն ուղղանկյունի են. տիմպանի քարին ներսից համապատասխանում է կիսաշրջան բարավորը:

Տաճարի առաջին աստիճանի մեծ թմբուկը ունի ոչ թե 16, այլ՝ 18 նիստ (արևելյան խորանը արտաքուստ արտահայտվում է հինգ նիստերով, հաշված երկու հարևան խորշերի արևելյան կողմերը):

Թմբուկը վերևից պսակող քիվը պատած է կողովահյուս վիմափոր բանվածքով:

Չորավարի երկրորդ աստիճանը արտաքուստ

12 նիստերով, ներքուստ՝ բոլորակ գմբեթաթմբուկըն է կիսագնդաձև ծածկով և բրգաձև տանիքով: Միստերի անկյունները կիսաայունաձև կտրագվել են, դրանք ստորին թմբուկի տանիքի վերևից սկսվում և բարձրանում են մինչև գմբեթաթմբուկը պսակող քիվի աստամաշար ներքնամասը:

Չորս առանցքային նիստերի վրա բացվում են կոր բարավորով և աղեղապսակով զգալի չափեր ունեցող չորս պատուհանները, որոնք լուսավորում են ընդարձակ գմբեթի, նաև տաճարի ներսը:

Անցումը գմբեթատակ ութնիստ պարագծից զմբեթի բոլորակին կատարվում է գմբեթակիր կամարների միջև՝ անտրվոլտերի առագաստաձև շարվածքով և գմբեթաթմբուկի հիմքով բոլորաձև անցնող քարակերտ գոտով:

Տաճարն ամբողջությամբ՝ ներսից և դրսից երեսպատված է սրբատաշ տուֆաքարի կանոնավոր շարվածքով:

Չորավարը հայ ճարտարապետության վաղ միջնադարի ամենարժեքավոր կենտրոնագմբեթ հուշարձաններից է, այն փոքրաթիվ օրինակներից մեկը, որի սկզբունքով ստեղծվեցին հաջորդ ժամանակաշրջանի ութ և վեց խորանով տաճարներն ընդհանրապես, այդ թվում և Խորագույն Հայքի տվյալ տիպի հուշարձանները:

#### ԻՐԻՆՂԱԿԱՆՔ

Արագածի արևմտահայաց լանջի Իրինղ գյուղի կիսավեր ութ խորաններ ունեցող կենտրոնագմբեթ եկեղեցին, ինչպես և Չորավարն էր, այն օրինակն է, որի վերամշակումով ստեղծվել են X-XIII դարերի վեց և ութ խորանով եկեղեցիները:

Ընդհանուր առմամբ Իրինղը նման է Չորավարին, նրանց հատակագծային, նաև ծավալատարածական ձևերն ու չափերը միմյանց բավական մոտ են: Ի տարբերություն Չորավարի, Իրինղի յոթ խորանները, այդ թվում և արևելյանը, միաչափ են և միանման. արևմտյան խորանը, որի վրա բացվում է տաճարի միակ շքամուտքը, փոխարկվել է քառակուսու, ծածկվել խաչաձև թաղով: Այստեղ արևելյան խորանի երկու կողմերում առկա են քառակուսի հատակաձևով ավանդատըներ, որոնցով էլ պայմանավորված է բավանիստ տաճարի արևելյան հատվածի արտաքին ուղղանկյուն հորինվածքը (գծ. 42 ք):

Չորավարի բոլոր խորշերում պուներ կան, Իրինղում պուներ կան շքամուտքի երկու կողմերի խորշերում միայն, մյուս չորս խորշերում չկան. դրանց փոխարեն գույգ կիսապուներ կան խորշերի արտաքին անկյուններում: Հայտնի է, որ Չորավարի մեծ թմբկապատի վրայով, ինչպես Իրինղում է, չի անցնում որևէ պուներակամարաշար: Իրինղում հիշյալ գույգ պուների խոյակների վրա աղեղվում են երկու կարգի կամարներ, դրանցից խորշերի եզրակամարները մնում են թմբկապատի հարթությանը հավասար, մինչ խորաններին համապատասխանող նիստերի կամարները, Երերուքի պատուհանների ակոսներով մշակված շրջանակները հիշեցնող կողաղեմով դուրս են գալիս թմբուկի հարթությունից: Ստացվում է, որ առանձին շրջանակներ ունեն խորանների արտաքին նիստերը, և առանձին՝ եռանկյունի խորշերը. դրանցից խորշերի եզրակամարները առավել հարուստ քանդակապարզված են: Անկախ այդ կամարների՝ տարբեր հարթությունների վրա գտնվելուն և միմյանցից տարբեր բովանդակության ու հարստության քանդակապարզմանը, թմբուկի վրայով անցնող դեկորատիվ պուներակամարաշարը միասնական է. այն օգնում է թմբկապատի ամբողջական ընկալմանը:

Իրինղավանքի գմբեթաթմբուկը ութ նիստ ունի և Մաստարայի ու Գառնահովտի գմբեթների խորշերի նման ութ եռանկյունի խորշեր նիստերի հանդիպումներում:

Միստերից յուրաքանչյուրի վրա կոր բարավորով, առանց կամարաղեղի մեծ չափերի մեկ պատուհան կա:


Գմբեթաթմբուկը պսակող քիվը իր մանրամասներով նման է ստորին թմբկապատը պսակող քիվին:

Ընդհանրապես Իրինղավանքում տեղ գտած ճարտարապետական ձևերը և այլ մանրամասներ մեծ նմանություն ունեն հատկապես VII դարի հուշարձաններում գործադրված ձևերին: Ավելի ուշ նման ձևեր հայ ճարտարապետության կոթողներում չեն հանդիպում:

Այստեղ նույնպես շինության բոլոր պատերն ու ծածկերը իրականացված են սրբատաշ տուֆի կանոնավոր շարվածքով, հետագայում միայն ներսի կողմից սվաղվել են, նրանց մնացորդները այժմ էլ նկատելի են:

Իրինղավանքի կառուցումը VII դարով թվագ-





42 (բ) Իրինդավանքի հատակագիծը (չափագրություն Թ. Թորամանյանի)

րելը միանգամայն տրամաբանական է և հիմնավոր: Որոշ հետապոստողների կողմից այս հուշարձանի կառուցման ժամանակը X դար տեղափոխելը անհիմն է: Այդ նշանակում է չըմբռնել, թե ինչն է յուրահատուկ VII և ինչը՝ X դարերին:

Ինչպես Չորավարի, այնպես էլ Իրինդավանքի ստեղծողները եղել են բարձրաճաշակ, մասշտաբի և համաչափության նուրբ զգացումով օժտված քանաքարավոր ճարտարապետներ: Նրանք նաև ի հայտ են բերել մեծ հմտություն երկրաշարժերով հարուստ հողի վրա ճարտարագիտության պահանջներին համապատասխան շինության հատակակառուցի և ծավալատարածական հորինվածքի ստեղծման գործում:

### ՓՐԿՅԻ ԵԿԵՂԵՑԻ

Ութ խորաններով հուշարձանների շարքում Անիի Փրկչի եկեղեցին երրորդն է, ըստ որում առաջին երկուսը՝ Եղվարդն ու Իրինդը կառուցվել են VII դարում, սա՝ XI դարում:

Այստեղ խորաններից յոթը միմյանց նման են, չափերով՝ հավասար, ութերորդը, որ արևելյանն է՝ եկեղեցու գլխավոր սեղանը, ինչպես Չորավարում էր, մյուսներից գրեթե կրկնակի լայն է:

Տաճարն ունի մի մուտք, որ բացվում է հա-

րավային խորանի մեջ: Երկաստիճան տաճարի առաջին աստիճանում պատուհանները սակավ են, մինչ դրանց թիվը երկրորդ աստիճանում հասնում է 12-ի:

Ի տարբերություն վեց և ութ խորաններով հուշարձանների, Փրկչի եկեղեցում չկան եռանկյունի հիմքով արտաքին խորշեր (այդպես էր նաև Կացխիում):

Բազմախորան տաճարների շարքում անհամեմատ մեծ գմբեթ ունենալու պայմաններում (արտաքին տրամագիծը, 12,45 մետր), կառուցողը առաջին աստիճանի պատերի ոչ մեծ զանգվածները ապահովաբար պահպանել՝ չի ջլատել խորշերով:

Տաճարում, խորանների ներքին հանդիպումներում կանգնած են լրիվ բոլորակ սյուներ, որոնց խոյակները միմյանց կապող կամարների ու նրանց միջև փոքր առազաստաձև պատերի վրա բարձրանում է գմբեթը (գծ. 42գ):

Փրկչի եկեղեցու ստորին թմբկապատի վրայով անցնում է դեկորատիվ սյունակամարաշար. նրա զույգ կիսասյուները կանգնած են բոլոր 19 նիստերի հանդիպումներում:


Հետաքրքիր է և շատ գնահատելի, որ կառուցողը արտաքին դեկորատիվ սյունաշարի քայլը չի կապել խորանների դիրքի և թվի հետ, առաջնորդվել է կամարակապ հարթությունների հաճելի համաչափություններ ունենալու սկզբունքով և սովորական 16-ի փոխարեն ստեղծել է 19 նիստ:

Դեկորատիվ սյուների խարիսխներն ու խոյակները գնդաձև են. խարիսխներն ունեն խորանարդաձև միացյալ ներքնամաս, խոյակները՝ նույն ձևի վերնամաս: Սյուները կապող կամարները երկշերտ են, անվարդ:

Թմբկապատը վերևից ավարտվում է շատ պարզ կողդդեմ ունեցող քիվով՝ ներքին թեք մաս և ուղիղ վերնասալ:

Թմբկապատի հարավային նիստը մյուսներից զգալի լայն է, նրա ստորին մասը սյունից սյուն զբաղեցնում է ճոխ, դասական և ինքնատիպ ձևերով մշակված շքանուտքը, սրանից մի քիչ վերև՝ քանդակավարդ շրջանակով բոլորակ մի լուսամուտ: Վերնապարդով լուսամուտ ունի նաև արևելյան խորանը:

Տաճարի երկրորդ աստիճանը՝ այժմյան գմբեթը ժամանակակից չէ ստորին թմբուկին: Համա-



42 (գ) Փրկչի եկեղեցու հատակագիծը (չափագրություն Թ. Թորամանյանի)

ձայն Թորամանյանի, այն կառուցվել է 1173 թվականին: Մյուս հետազոտողները հիմնվելով պահպանված արձանագրության վրա, նրա կառուցումը վերագրում են Չաքարե Սպասարի թոռանը՝ Վահրամին (1342 թ.): Այս գմբեթը, որ հիմքում բոլորակ է, արտաքուստ պատած է 24 թռիչք ունեցող դեկորատիվ շատ նրբագեղ համաչափության սյունակամարաշարով: Կիսասյուները զույգ-զույգ կանգնած են գմբեթաթմբուկի հիմքով անցնող շրջայապարդ գոտու վրա:

Գնդաձև խոյակների խորանարդաձև վերնամասից սկսած, կամարները մանվածո քանդակված են: Գմբեթի թմբկապատը վերևից պակտող գեղեցիկ քիվը նույնպես քանդակված է: Կամարաշարի և քիվի միջև թմբուկը բոլորում է մեկ քարի բարձրության քանդակածածկ մի շերտ: Տաճարի տանիքը կոնաձև է: Ն. Տոկարսկու վերակապնությամբ սկզբնական գմբեթը ունեցել է հովհարաձև տանիք:

Վերջին տարիներին տաճարի արևմտյան կեսը վերից վար ճեղքվել և, ապա կործանվել է: Մյուս կեսը կանգուն է և դա շնորհիվ այն բանի, որ երեսպատումից պրկված ներքնամասը մեր դարի տասական թվականներին նորոգվել էր Անիի արշավախմբի գիտնականների ջանքերով:

Ա. Վ. Կուլնեցովը իր մի աշխատության<sup>1</sup> մեջ Անիի Փրկչի եկեղեցու հատակագիծը համարում է մաքուր անտիկ՝ հին հռոմեական ձևի՝ ութ խորշերը հոծ պատի թանձրության մեջ: Տարբերություն տեսնում է միայն Փրկչի եկեղեցու ստորին թմբուկի և քիվի նիստերով մշակված լինելու մեջ:

Որ հին հռոմեական դասարանային շինություններում նման խորշերը տեղադրված են հոծ պատի թանձրության մեջ, ճիշտ է. բայց ճիշտ է և այն, որ Փրկչի եկեղեցու հատակագիծը և, հատկապես, նրա ծավալատարածական լուծումն ու արտաքին, նաև ներքին հարթությունների մշակումը ճշգրտորեն իր նմանակը չունի ոչ անտիկ, ոչ էլ միջնադարի այլ կոթողների շարքում. այն Անիի ամենայուրօրինակ, հետաքրքիր ու արժեքավոր հուշարձաններից մեկն է, որոշ կողմերով իր տեսակի մեջ եզակի:

Տաճարը կառուցել է Գրիգոր Պահլավունու որդի Այլղարիպ մարպպանը. շինարարության ավարտը տեղի է ունեցել 1036 թվականին:


#### ՏԱՅՈՑ ՔԱՐ

Դեռևս 1906 թվականին գրած մի հոդվածում Թորամանյանը տեղեկացնում է. «...Օլթիի շրջանին մեջ Թավուլքիարի եկեղեցին, որուն համար կըսվի, թե ոչ միայն Չվարթնոցի նմանն է և կանգուն է ցարդ, այլև Ներսես Գ-ի (VII դար) շինած լինելու հավաստիքներ կան»<sup>2</sup>:


Տայոց Քար եկեղեցին գմբեթատակ բոլորակ տարածության շուրջն ունի ութ, հատակագծում ուղղանկյունի թաղածածկ խորշեր (գծ. 42-դ) արևելյանը, որ երկու կողմերում ունի (անկանոն եկրագծերով) ավանդատներ, ավարտվում է կիսաբոլորակ խորանով: Հարևան խորշերի միջև, դեպի տաճարի ներսն ուղղված մասում, կան երեք քառորդ շրջանագծի հիմքով ութ որմնասյուներ, դեպի դուրս ուղղված մասում եռանկյունի խորշեր: Խորան-խորշերից և ավանդատներից յուրաքանչյուրը լուսավորվում է մեկ պատուհանով:

<sup>1</sup> А. В. Кузнецов. Тентоника и конструкция центральных зданий, Москва, 1951, էջ 128:

<sup>2</sup> Թորոս Թորամանյան նյութեր... 1942, Երևան, էջ 25: Այդ հուշարձանը գտնվում է Իջևանից արևմուտք, մոտ 20 կիլոմետրի վրա:



42 (դ) Տայոց Քար եկեղեցու հատակագիծը (չափագրություն Ա. Կալզինի)



42 (ե) Տայոց Քար, արևմտյան ճակատ (վերակազմություն Ա. Կալզինի)

Եկեղեցին մուտքեր ունի արևմուտքից, հարավից և հյուսիսից:

Տաճարի առաջին աստիճանը կապող մեծ թմբուկի 16 նիստերի վրա միմյանց հաջորդում են լուսամուտներն ու եռանկյունի խորշերը:

Տաճարի երկրորդ աստիճանը՝ գմբեթաթմբուկը, բարձրանում է ներքին որմնասյուները միմյանց կապող գմբեթակիր կամարների վրա:

Տայոց Քարի պատերը թե՛ ներսից, թե՛ դրսից ունեցել են կանոնավոր շարքեր, շարված սրբատաշ քարով:


Իր հատակագծային, ամբողջական կոմպոզիցիոն և նույնիսկ արտաքին պատի պլաստիկ մշակմամբ Տայոց Քար եկեղեցին ընդհանուր շատ բան ունի Եղվարդի և Իրինդի VII դարի ութ խորանով հուշարձանների հետ: Ուշադրության արժանի է, որ Իրինդ և Տայոց Քար եկեղեցիներում ինչպես հիմնական թմբկաձև ծավալի, այնպես և գմբեթաթմբուկի տրամագծերը նույն չափերն ունեն: Իրինդում ութ խորաններից յոթը կիսաշրջանաձև է, գմբեթարդ ծածկով, մեկը ուղղանկյունի, թաղածածկ (գծ. 42-բ), Տայոց Քարում յոթը ուղղանկյուն է<sup>1</sup>, թաղածածկ, մեկը՝ կիսա-

շրջան հատակագծով, ծածկը՝ գմբեթարդ: Երկուսն էլ արևելակողմի խորանի երկու կողմերում ունեն փոքրիկ սենյակներ: Հարևան խորանների միջև երկուստեք ներսից ունեն որմնասյուներ, դրսից՝ եռանկյունաձև խորշեր: Եվ մեկում, և մյուսում գմբեթները ծանրացած են ներքին որմնասյուները կապող կամարների վրա:

Ա. Կալզինը եկեղեցու ճակատը վերակազմելիս գմբեթաթմբուկի նիստերի հանդիպման անկյուններում կլորացումներ կամ որմնասյուներ չի նշել, մինչդեռ ավերակի լուսանկարում այդպիսիք եղած լինելու նշաններ կան: Գմբեթաթմբուկի երեսպատումը պզալի չափով պահպանված է, մինչդեռ նրա նիստերի հանդիպման անկյուններում վերիցվար երեսպատումը չկա. ընկած են այն քարերը, որոնք իրենց վրա ունեցել են կամ կլորացումներ (Չորավարի գմբեթաթմբուկի նմանողությամբ), կամ բոլորածև սյուների մասեր: Դեռ ավելին, նիստերի հանդիպման անկյունների վերնամասում ընկած քարերի տեղը աջ ու ձախ լայնանում է, ըստ երևույթին, այդ մասերում եղել են կամ որմնասյուների խոյակներ, կամ խոյակների վրայից սկսվող՝ սյուները կապող կամարաղեղներ:

<sup>1</sup> Սալոնիկում, մոտավորապես IV դարում կառուցված Գեորգիի եկեղեցու հատակագծում ներքին բոլոր խորշերը, թվով ութ հատ, ուղղանկյունի են, սակայն դրսից խորշեր չկան:






42 (դ) Տայոց Քար, արևմտյան ճակատ (վերակապնություն S. Մարությանի)

Ահա այն ամենը նկատի առնելով է, որ Տայոց Քարի համար մեր կողմից ներկայացվում է ճակատի վերակապնության նոր տարբերակ (գծ. 42-ւ), որտեղ գմբեթաթմբուկը (որ ցույց է տրված 16 նիստերով), պատած է խուլ սյունակամարաշարով, ինչպես VII դարի Թալինի կամ Սիսիանի գմբեթաթմբուկներն են:

Ա. Կալզինի վերակապնած ճակատում (գծ. 42-ե) մեծ թմբուկի քիվը ստացվել է խիստ ցածր, այն ուղղակի նստած է եռանկյուն խորշերի կիսակոնաձև վերնամասի վրա: Այս հանգամանքն է մեկ ստիպել մեծ թմբուկի քիվը բարձրացնել:

Ավերակի նյութերի հիման վրա հնարավոր է ենթադրել, որ Տայոց Քարը նույնպես կառուցված լինի VII դարում ու, թերևս, ճիշտ է Թորանանյանը, գրելով թե «...Ներսես Գ-ի շինած լինելուն հավաստիքներ կան»:



Խորագույն Հայքում գմբեթավոր տաճարներից բացի, կառուցվել են նաև միանավ և եռանավ բազիլիկ եկեղեցիներ: Դրանք իրենց որոշ կողմերով վաղ միջնադարում կառուցված մեր բազիլիկ եկեղեցիների վերանշակումներն են: Միանավ սրահների տիպը հայ ճարտարապետությանը ծանոթ է վաղ ժամանակներից, որոնց ոչ քիչ օրինակները դեռևս V—VII դարերից պահպանվում են նաև մեր օրերում: Աշխատության մեջ ներկայացվում են Խորագույն Հայքում կառուցված Սխտորուտ և Իշխան միանավ սրահների հատակագծերը: Եռանավ բազիլիկները, որ վաղ միջնադարում մեծաքանակ էին, հետագայում շատ քիչ էին կառուցվում, ավելի այժմեական էին դարձել գմբեթասրահները: Խորագույն Հայքում կառուցված Չորդվան (Դորթքիլիսա) և Պարխար բազիլիկ տաճարները բացառիկ երևույթներից են: Նրանցում գործադրված ճարտարապետական որոշ ձևեր և այդ ձևերի գործադրման եղանակներ ունեն ավելի տեղական բնույթ: Այս տաճարների արտաքին հարդարանքում առկա դեկորատիվ բնույթի որոշ նորաձևություններ հետագայում տեղ և գործադրություն գտան ճարտարապետական տարբեր շրջանակներում, ինչ խոսք, նույնպես նորովի մշակումով հանդերձ:

Հատկանշական է, մի երկու դրվագի բացառությամբ, քանդակի բացակայությունը Չորդվան և Պարխար հուշարձաններում:

**ՍԽՏՈՐՈՒՏ**

Էգրեկ եկեղեցուց դեպի հարավ մեկ ու կես կիլոմետրի վրա է գտնվում Սխտորուտ բնակավայրի տասը մետր երկարություն և վեց ու կես մետր լայնություն ունեցող միանավ, արևելակողմի

կիսաբոլորակ գմբեթարդ խորանով եկեղեցին (գծ. 43-ա): Այն հետագայում փոխարկվել է մակիթի:

**ԻՇԽԱՆ**

Այս փոքր եկեղեցին գտնվում է ներսեսաշեն կաթողիկեի հարավակողմում՝ ուղղակի կողքին: Այն միանավ սրահ է, արևելյան կիսաշրջան խորանով (գծ. 43-բ): Պատուհաններ ունի արևելքից և արևմուտքից: Միակ դուռը հյուսիսակողմից է, որով և հաղորդակցվել է մեծ եկեղեցու հետ: Հենց միայն դռան դասավորությամբ պարզ է դառնում, որ այն կառուցվել է մեծ եկեղեցուց հետո:

Սխտորուտ և Իշխան միանավ եկեղեցիները մեր այդ տիպի բազմաթիվ հուշարձանների օրինակներ են Խորագույն Հայքում:




Մեր պատմիչներ Եղիշեի և Փարպեցու հաղորդումներից հայտնի է, որ Հմայակ Մամիկոնյանը ուղարկվում է Հունաց մոտ, օգնություն խնդրելու Պարսից դեմ:

451 թվականին Վարդանանց պատերազմից հետո քաշվելով Տայք, Հմայակը իրենց շրջապատող քաջերի հետ հարձակվում, սաստիկ ճակատամարտ է տալիս Տայոց Չորագավառի պարսիկների հետ ու այդտեղ էլ նահատակվում:

Աշխարհագրագետների հետապոտություններով պարզվում է, որ այդ եղելությունը տեղի է ունեցել Պարխարի կողմերում՝ Քաջքարում<sup>1</sup>: Ենթադրվում է, որ թերևս այդ վայրը նախապես կրել է Խաչքար անունը և հիշյալ դեպքից հետո ժողովրդի կողմից վերանվանվել է Քաջքար: Հա-

<sup>1</sup> Հ. Տաշյան, Տայք, դրացիք և Խոտորուտ (Հանդես ամսօրյա, 1970—1973թթ.):



43 (ա) Մխտրուտ (Տայք), (բ) Իշխան (Տայք), հատակագծեր (ըստ Ե. Թաղախչվիլու)

դորդվում է, որ պարսիկները ընդհարման նախօրեին այրել էին այդտեղի հայկական եկեղեցիները:

Ճակատամարտից հետո Հնայակի մարդիկ հետ են քաշվում դեպի Պարխար: Հնարավոր է դառնում ենթադրել, որ նրանք իրենց հետ վերցրած նահատակների աճյունները ամփոփում են տեղի եկեղեցիներում: Հետագայում այդ սրբավայրերի տեղում նրանց մնացորդների վրա, ի հավերժացումն քաջ նահատակների հիշատակի, կառուցվում են առավել շքեղ եկեղեցիներ: Ոհ գետի (ձորոխ) ձախափնյա կողմերում հայտնի են IX—X դարերով թվագրվող Չորղվան և Պարխար եկեղեցիները:

Բանն այն է, որ այդ տաճարները իրենց հատակաձևով, ծավալատարածական հորինվածքով, որ տիպիկ բազիլիկներ են, բացառիկ երևույթ են IX—X դարերի համար: Այդ ժամանակներում կառուցվում էին առավելապես գմբեթավոր եկեղեցիներ: Հավանական պետք է համարել, որ այդ եկեղեցիների ընդհանուր հորինվածքի հարցը կանխորոշված է եղել սրբագործված ավանդականի անփոփոխ պահպանման նկատառումներով: Այդ վարվելակերպը առաջնություն սովորական, ընդունված երևույթ էր:

Եվ իսկապես, IV—V դարերում ինչպես քրիստոնեականի վերափոխվող հեթանոսական տաճարները, նույնպես և նորակառույցները ունենում էին այդ ձևը, նրանք ուղղանկյուն երկայնական սրահներ էին և բազիլիկներ՝ մեկ կամ երեք նա-

վերով, այսինքն՝ ունեին այնպիսի հատակաձև, որպիսին ունեն Չորղվանն ու Պարխարը:

Հանրահայտ է և այն, որ այդտեղ՝ եպիսկոպոսական ամբիոնում աթոռակալ լինելը Մամիկոնյանների տան ժառանգական իրավունքն էր և այդ շարունակվում էր նաև հետագայում:

### ՉՈՐՂՎԱՆ (ԳՈՐԹՔԻՆԻՍԱ)

Հուշարձանի կառուցմանը ժամանակակից տեղի բնակչությունը իր բարբառով այն անվանել է Չորղվան:

Ե. Թաղախչվիլին հայտնում է, որ տեղի (նոր) բնակիչները այս անվանումը բացատրում են ոչ թե նրանով, որ այդտեղ կա չորս եկեղեցի, այլ որ հռչակավոր Իշխան, Օշկ և Խախու տաճարների շարքում այդ չորրորդն է:

Այս վայրը մեծ հռչակ է ունեցել որպես մայրավանք, որը ծաղկում էր Դավիթ կյուրապաղատի օրոք, մինչ եկեղեցին, ըստ Ե. Թաղախչվիլու, կառուցվել է այդ ժամանակներից վաղ՝ 9-րդ դարում:

Այս վանքը, նրա գլխավոր Չորղվան եկեղեցին, գտնվում է ձորոխի ձախ ափին:

Չորղվանը իսկական բազիլիկ եկեղեցի է, հատակագծում ուղղանկյունի, եռանավ (գծ. 43-գ): Միջին՝ գլխավոր նավը իր արևելյան ծայրում ավարտվում է կիսաշրջան խորանով, երկու կողային, անհամեմատ նեղ նավերը՝ ուղղանկյունի ավանդատներով: Եկեղեցու ներքին տարածությունը երեք նավերի են բաժանում երկու շարք չորսական մույթերը: Վերջիններիս իրար կապող կամարների վերա շարունակվում են մեծ բարձրության հասած միջին նավի երկայնական պատերը, դրանց վերնամասում կողային ցածր նավերի տանիքներից բարձր, բացվում է հինգական լուսամուտ:

Ե. Թաղախչվիլին հայտնում է, որ պատերը սկզբնապես կառուցվել են քառակուսի ձև ունեցող խոշոր չափերի աղյուսով, իսկ հետո երեսպատվել մաքուր տաշված մույթ և շագանակագույն քարով: Եկեղեցու ներսում երեսպատվել են միայն սյուները, որմնասյուները և թաղակիր կամարները: Երեսպատման աշխատանքները իրականացվել են Դավիթ կյուրապաղատի օրոք, որ իբր այդ է հաստատում արևելյան պատին ամրացված եռանկյունաձև աղյուսի վրայի գիրը, որտեղ ասվում է՝ «Քրիստոս, փառավորի թագավոր-կյուրապաղատ Դավթին»:



Այս հիման վրա հնարավոր է դառնում գալ ճիշտ հակառակ եպրակացության՝ քանի որ Դավթին նվիրված գիրը պահպանվում է աղյուսե տախտակի վրա, ապա Դավթի օրոք էլ պետք է կառուցված լինի աղյուսաշեն տաճարը: Եթե նրա օրոք իրականացվեր միայն քարի երեսպատումը, բնականաբար արձանագրությունն էլ կգրվեր քարի վրա:

Եկեղեցու արտաքին պատերի վրայով անցնում է դեկորատիվ կամարաշար: Շինության երկու ծայրերում—կենտրոնական նավի դիմաց այդ կամարները բարձրանում են՝ պահեցնում ճակտոնի հարթությունը: Միջին նավի երկայնական պատերի վերնամասերի վրայով անցնում է տամբերեքական թռիչքով դեկորատիվ սյունակամարաշար:

Որոշ լուսանկարների վրա երևում է, որ դեկորատիվ սյուներից շատերը բուն պատի հետ կամ ավելի ճիշտ պատի երեսպատվածքի հետ շինարարական կապ չունենալու հետևանքով, թափվել են: Եթե սյուները և պատի դրսի երեսը միաժամանակ երեսպատված լինեին, ապա սյուները այդպես անկապ չէին կառուցվի: Այստեղից հետևում է, որ պատերը սկզբից էլ եղել են երեսպատված մաքուր տաշ քարով, հետագայում միայն ստացել են սյունակամարաշարի հավելում:


Տաճարի ներսում, նրա արևմտյան մասի բաց վերնահարկը կառուցվել է ավելի ուշ, այդ ժամանակ մասամբ վնասվել է պատի վրայի արձանագրությունը: Գրերի մնացորդներից Ե. Թաղաիշվիլին կարդացել է՝

«...հանուն աստծո  
...Բաղադուրին (°)  
...Գայանե (°)

Պատերը ներսից սվաղված են, որմնանկարներ միայն խորանում կան:

#### ՊԱՐԽԱՐ

Գյուղը<sup>1</sup> գտնվում է Պոնտական սարերից սկիզբ առնող Պարխար գետի ձորահովտում: Այլ վտակների հետ, Պարխար գետն է թափվում նաև Արմենիսի (<այոց ձոր) անունով վտակը: Ավելի վերևում արտավայրեր են, որոնցից մեկի անունը՝ Լավաշեն: Պարխարը շատ հարուստ է ջրերով, սրանից եկելով է, որ բնակիչները Խորագույն <այքի երեք մեծ եկեղեցիների շարքն են դասել



43 (գ) Չորդվան բազիլիկ տաճարի հատակագիծը (ըստ Ե. Թաղաիշվիլու)

նաև Պարխար բազիլիկ եկեղեցին ասելով՝ «Խշխանը հռչակված է իր որմնանկարներով, Օշկը իր գեղեցկությամբ, Խախուն՝ իր դիրքով, Պարխարը իր ջրերով»<sup>2</sup>:


Խուկաս Ինճիճյանը նոր Հայաստանի աշխարհագրությանը նվիրված իր աշխատության մեջ մի երկու էջ է հատկացրել Պարխարին: Նա գրում է, որ այդ գյուղի և եկեղեցու պատմական անունը Պարխար է: Լեռնային այդ շրջանը, որ սահմանակից է Լազիկային և հարևան Բաբերգին, անցյալում Խո-

<sup>1</sup> Այս եկեղեցու անունը ծագել է հայկական Պարխար լեռան անունից: <այոց տոմարի ամենամայս 13-րդ օրը ևս կոչվում էր Պարխար (տե՛ս Ղ. Ալիշան, <ին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1910, էջ 157—158. նաև Հ. Ս. Բաղայան, Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 100—102):


րագույն Հայքի մի մասն էր: Ասում է նաև, որ այնտեղ պահում և բազմացնում էին «չեփիչ» այծեր, երկիրը հարուստ է երկաթահանքով: Անցյալում Պարխարը քաղաք էր, այժմ՝ թուրքաբնակ գյուղ, վերևում Պարխար լեռներն են, ներքևում Պարխար գետակը: Գյուղում կա ամբողջովին քարակերտ օրորոցանման եկեղեցի երեսուներկու պատուհաններով (կամարներով, մարմարյա սյուներով, վրաները՝ վրացերեն գրեր): Եկեղեցու շուրջը վանքի ավերակներ կան: Գանձ որոնողները, իբր 1779 թվականին եկեղեցու թաքստոցից դուրս են բերել և տարել ութ կոտ ոսկի...

**Վախուշտին Պարխարի մասին ոչինչ չի հաղորդում, թեպետ և հիշում է այն, որպես շրջան Պարխարի անվամբ, նույնացնելով այն Թավուսկարի կամ Տառ-ի հետ:** Պարխարը նույնպես բազիլիկ տաճար է (գծ. 43-դ, ե): Նրա հատակագիծը, ծավալատարածական հորինվածքը, ինչպես և արտաքին ճարտարապետական մշակումը գրեթե ամբողջությամբ Չորդվանի կրկնությունն է:

Պարխարն իր նախորդից մի քիչ երկար է, հարավակողմից ունի նախամուտք: Արտաքին պատերի վրայով անցնող դեկորատիվ կամարաշարն ավելի ձիգ համաչափություններ ունի: Արևելյան ճակատի կամարներից միջին երեքը շատ ավելի պացիկ են և հասնում են ճակատնի քիվին, մի երևույթ, որը առկա է նաև Օշկ տաճարի ճակատների վրա: Այստեղ կենտրոնական կամարն ավելի լայն է, քան մյուսները: Միջին նավի վերնամասի դրսի դեկորա-



43 (դ) Պարխար տաճարի հատակագիծը (ըստ Ե. Թաղախչվիլու)



43. (ե) Պարխարի արևելյան և հյուսիսային ճակատների վերակազմություն

տիվ որմնասյունակամարաշարի թռիչքների թիվը 12 է: Հիշյալ որմնասյունակամարաշարի միջկամարային հարթությունները լի են վրացերեն գրերով, կատարված ներկով, մոտավորապես XV դարում, որոնց հեղինակներն են, ըստ Թաղաիշվիլու, պատրիարք Հովնանն ու իր, առնվազն վեց, աշակերտները:

Չարմանալին այն է, որ այդ գրերը արվել են նաև իբր վարդեր, համենայն դեպս այդպես է բացատրում Ե. Թաղաիշվիլին (նկ. 94,95):

Պարխարում արևմտակողմի վերնահարկը ժամանակակից է բուն տաճարի կառուցմանը:

Տաճարի գլխավոր ճակատը եղել է հարավայինը, սակայն այն մասամբ ծածկված է եղել պանապան շինություններով:

Ե. Թաղաիշվիլու հետապոստության համաձայն Պարխարը ևս կառուցել է Դավիթ Մեծ կյուրապաղատը, երբ դեռ մագիստրոս էր, կառուցումն ավարտվել է 973 թվականին:

Այժմ տաճարն օգտագործվում է որպես մկկիթ և ըստ այնմ՝ պահպանվում:

\*  
\* \* \*

Խորագույն Հայքում, դեռ վաղ ժամանակներից, ընդհուպ մինչև այս դարի առաջին երկու տասնամյակները, ապրում էր կոմպակտ հայ բնակչություն: Թերևս դրանով էլ պայմանավորված է այն, որ այդտեղ առաջացել մշակվել և յուրօրինակ կերպարանք է ստացել երկրի ճարտարապետական արվեստը: Այն ձեռք է բերել այնպիսի մի արտահայտություն, նախասիրությունները ստացել են այնպիսի դեմք, որոնցով, փաստորեն բնորոշվում է հայ ճարտարապետությունը, նրա ազգային դեմքը: Այդ այն նույն ոճն է, որը ստեղծել է հայ ժողովուրդը ինչպես կենտրոնում, այնպես էլ ծայր գավառներում: Աշխատության էջերում զուգահեռաբար բերված ճարտարապետական հուշարձանների օրինակները լավագույն հաստատումն են այն սերտ կապի, որ շարունակաբար գոյություն է ունեցել երկրի կենտրոնի և ծայրամասերի միջև: Այդ կապը անմիջականորեն անդրադարձել է ճարտարապետական նշանակության շինությունների հատակագծերում, ծավալային-տարածական հորինվածքներում և արտաքին կերպարներում:

Այստեղ բերված հուշարձաններից կան այնպի-

սիները, որոնք նման են հատակագծապատկերով, երբեմն չափերի նույնությամբ, մյուսները ուղղակի նույնատիպ են և տարբերվում են լոկ մանրամասներով: Այդպիսիները հանդիսանում են նույն ընդհանրական պատկերի տարատեսակները: Կան նաև հուշարձաններ, որոնք կառուցման ժամանակով նախորդելով մյուսներին, հաջորդների համար հանդիսացել են նախօրինակ, նախատիպ, անկախ այն բանից, որ մշակվածությամբ և բացարձակ չափերով վիջում են երկրորդներին: Ըստ որում, այդ նախատիպերը երբեմն ստեղծվել են կենտրոնական գավառներում, ընդօրինակվել ծայրամասերում, երբեմն ուղղակի հակառակը՝ ստեղծվել են ծայրգավառներում, ընդօրինակվել՝ կենտրոնում: Այս պատկերն ինքնին խոսում է այն կենդանի և անմիջական կապի մասին, որը հարատևել է ժողովրդի ներքին կյանքում և արվեստի մեջ դարեր ի վեր:

Ողջ վերոհիշյալը հատակորեն ուրվագծվում է, երբ հետապոստոն անդրադառնում է Խորագույն Հայքի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրմանը: Ահա այդ էլ այն տրամաբանական հիմքն է, որով եպրակացվում է, որ Արևելյան և Արևմտյան Հայաստանում մինչև այժմ կանգուն կամ ավերակ վիճակում գտնվող հայ ճարտարապետության հուշարձանները կան ու երբեք չեն դադարել իրենց ստեղծողներին պատկանելուց:

Կղարջից հարավ գտնվող Խորագույն Հայքի հուշարձանները, այդ թվում՝ Իշխան, Բանակ, Օշկ, Խախու, Էգրեկ, Տայոց Քար, Իս, Սբխեչ, կառուցվել են երկրի բուն ժողովրդի՝ հայ-լուսավորչական և հայ-քաղկեդոնական համայնքների համար: Դրանց կառուցումն իրականացվել է այդ նույն ժողովրդի պավակների՝ վարպետ-ճարտարապետների ձեռքով, Մամիկոնյանների, ապա Բագրատունյաց տան Տայքի ճյուղի իշխանների, թագավորների և հոգևոր պետերի պատվերով ու միջոցներով: Պատմական այդ հուշարձանները իրենց ճարտարապետությամբ՝ հատակագծային կազմությամբ, ծավալատարածական ամբողջական հորինվածքով, արտաքին հարթությունների պլաստիկ մշակմամբ, առանձին դրվագներով ու մանրամասներով ընդհանուր են, անմիջականորեն հարապատ և գերապանցապես նույնական այն ամենի հետ, որ ստեղծվել է պատմական Հայաստանի մյուս նահանգներում: Առկա երանգավորումները արգասիք են նույն ճարտարապետության ոլորտում տարբեր դպրոցների գոյության:



# ПАМЯТНИКИ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

## ГЛУБИННАЯ АРМЕНИЯ

(Резюме)

История архитектуры древней Армении еще не получила своего всестороннего освещения, поскольку создание такого капитального труда связано с рядом серьезных трудностей. Достаточно, например, сказать, что многие памятники армянского зодчества разрушены и нуждаются в археологическом изучении. Тем не менее в настоящее время накоплен значительный материал, на основании которого можно составить определенное представление по ряду важнейших проблем истории древнеармянского зодчества.

\*  
\* \*

Памятники, которым посвящено настоящее исследование, находятся в Глубинной Армении. Глубинная Армения была расположена юго-восточнее Черного моря за Пархарским горным массивом Понтийского хребта. Территория края охватывала бассейны среднего и верхнего течений р. Чорох с ее притоками и истоки р. Куры.

В VIII в. до н. э. Глубинная Армения, именовавшаяся Диаухи, входила в состав государства Урарту, на территории которого в конце VII в. до н. э. образовалось Армянское царство. В период персидской династии Ахеменидов (VI—IV вв. до н. э.) территория Диаухи входила в 18-ую сатрапию Персидского государства. С III в. до н. э. страна входила в Армянское царство Ервандидов, а с 189 г. до н. э., при Арташесиде—в состав Армении.

Начиная с I в. н. э. Глубинная Армения является сперва наследным поместьем кня-

жеского рода Мамиконянов, а потом собственностью Тайкской ветви Багратидов. Во второй половине X в. известным политическим деятелем был представитель родового дома этой ветви Багратидов куропалат Давид (960—1001 г.г.), наиболее влиятельное лицо среди армянских и грузинских князей, при котором Глубинная Армения превратилась в сильное независимое княжество.

Великий куропалат Давид за оказание военной помощи византийскому императору Василию II получил от последнего новые земли. Однако в дальнейшем он был вынужден «завещать» свою страну Византии, в связи с тем, что поддержал Варда Покаса, поднявшего восстание против Василия II.

Во времена нашествия полчищ турок-сельджуков, завоевавших одну за другой восточные провинции Византии, после падения Ани (1064 г.) и Маназкерта (1071 г.) наследник дома Мамиконянов-Торникянов византийский администратор Глубинной Армении Григор Бакурян, предположительно с 1074 года, прекратил свою самостоятельную деятельность.

Независимо от указанных обстоятельств, край сохранял свои национальные особенности. Подавляющее большинство его населения, вплоть до 20-х гг. XX в., составляло армянское крестьянство.

Глубинная Армения богата ценнейшими архитектурными памятниками, которые в большинстве своем еще не исследованы—отсутствуют подробные описания, археологические изыскания, обмеры сохранившихся сооружений и их фотофиксация. Исследователи прошлых времен изучали только главнейшие

из памятников, причем те, которые близко расположены к дорогам. Естественно, что в настоящей работе не приведены описания, возможно не менее древних и оригинальных памятников, о которых мы мало знаем, поскольку лишены возможности проведения необходимых полевых исследований.

\*  
\* \*

На протяжении всего своего существования культурная жизнь Глубинной Армении являлась составной частью культурной жизни всей Армении. Этим обусловлена определенная стилевая общность их памятников, тождественность плановых и объемно-пространственных композиционных решений и примененных в них архитектурных средств. Наряду с этим, важнейшие памятники края характерны присущей им особенностью, например, расположением купола. В восточной части их сохраняется тип крестообразных в плане центральнокупольных церквей. Западное крыло, обычно полукруглое или прямоугольное, совпадающее по своим размерам с остальным, принимает вид удлиненных зальных церквей. Купол храма не занимает, как обычно, центральное положение на продольных фасадах, а сдвинут к востоку, придавая этим акцент восточной части сооружения. Эта характерная черта архитектуры Глубинной Армении ярко отразилась в целом ряде признанных произведений западноевропейской архитектуры эпохи Возрождения.

\*  
\* \*

Характерные черты архитектуры Глубинной Армении наиболее ярко выражены в постройках Ишхан, Ошк и Хаху. Эти памятники в свою очередь лучшим образом представляют школу армянской архитектуры данного края.

#### ХРАМ ИШХАН

Крестообразный в плане с полукруглой, алтарной апсидой на востоке. Апсида огра-

ничена колоннадой, через которую попадали в окружающее ее помещение (галерею). С обеих сторон апсиды расположены двухэтажные приделы. Прямоугольные северное и южное крылья неглубокие, западное же крыло имеет вид однефной залы, к которой с северной стороны примыкает продолговатое помещение. Купол храма покоится на арках, связывающих между собой четыре отдельно стоящие в средокрестии мощные пилоны. Шестнадцатигранный барабан купола прорезан чередующимися круглыми и прямоугольными с полукруглым верхом окнами. Покрытие купола—коническое (черт. 1, 2, рис. 1—20).

Храм Ишхан построен в 30-х гг. VII в. настоятелем местной паствы епископом Нерсесом, который в 40-х гг. был избран армянами католикосом. Пострадавший от нашествия арабов храм в начале IX в. был обновлен епископом Сабаном, а в X веке или в 30-х гг. XI в. облицован Мораисгеаном (по Н. Саркисяну), приобретя характерные черты архитектуры того времени. Все это не внесло коренных преобразований, не изменило планового и объемно-пространственного решения первоначального здания храма.

Нельзя считать сколько-нибудь обоснованным то распространенное мнение, будто Нерсесов храм был круглым, подобно Банаку или Звартноцу, и якобы в настоящее время от него, кроме колоннады восточной апсиды, ничего не сохранилось.

Несмотря на указанные изменения, вызванные временем, храм, построенный в Ишхане, по-прежнему занимает достойное место среди исторических ценностей искусства армянского народа.

#### ХРАМ БАНАК

Построен армянским католикосом Нерсесом III Строителем в 652—658 г.г. во время его временного пребывания в родном крае, где он скрывался от преследований Теодороса Рштуни.

Банак—один из разновидностей Звартноца, с тетраконхом вписанный в круг и обве-

денный кольцеобразной галереей. Эти памятники имеют много общего, особенно в деталях. В центре композиции Банака вместо обычного креста, как в Звартноце, положен план Багарана. Между крыльями крестообразного центра размещены такие же приделы, какие, имеются в круглых церквах Гарни, Мармашен и в церкви Саркиса в Хцконке.

Банак снаружи имеет трехъярусное построение—три барабана с постепенно уменьшающимися диаметрами поставлены друг на друга. Украшенные аркатурой, снаружи 28-гранные, первый и второй ярусы покрыты односторонней кровлей, а 16-гранный барабан купола—конической. Каждая грань имеет по окну. Наружная стена первого яруса разделена тонкой тягой на две части. Антривольты украшены орнаментальной резьбой с изображением плодов и ветвей винограда и граната. Выше тяги до карниза небольшая по высоте поверхность стены гладкая, без проемов. Входы с севера, юга и запада (черт. 3—20, 26—28, 30, 32, рис. 26—49).

Банак превратился в руины в середине XIX в. На протяжении многих веков отдельные части здания разрушились и реставрировались. Большие восстановительные работы велись при царе Адрнерсе (рукою Кюрике). При восстановлении общая композиция первоначального здания не пострадала. В более поздние века храм значительно видоизменился и превратился из трехъярусного в двухъярусное сооружение.

#### ХРАМ ОШК ВАНК

Расположен у западного берега озера Тортум. Построен в середине X в. сыновьями Адрнерсе III—«князем князей» Баграмом и магистром, впоследствии куропалатом Давидом. Архитектурная композиция Ошка разработана по первообразу Ишхана. Здесь восточная апсида с его боковыми приделами полностью повторяется в северном и южном крыльях. В отличие от остальных трех крыльев, западное представляет собой прямоугольную сводчатую залу. С северной сторо-

ны западного крыла расположен продолговатый придел с апсидальным закруглением на восточном конце, а с южной—открытая галерея с такими же четырьмя закруглениями на северной и восточной сторонах. Двадцатичетырехгранный купол храма Ошк, как и в Ишхане, поддерживается четырьмя арками, опертые на отдельно стоящие в средокрестии пилоны. Фасадные стены храма и купол покрыты декоративными аркатурами (черт. 33, рис. 58—67).

Ошк является главной церковью армянской халкедонитской паствы. Здесь, как и в других аналогичных храмах, официальное богослужение проходило на греческом, грузинском и ассирийском языках. Независимо от этого, его называли «Ошк ванк», «Эошк-ванк» и просто «Ванк»—чисто армянское название—и тогда, когда он строился и был окружен домами армянского населения, и в середине XIX в., во время изучения Н. Саркисяном<sup>1</sup>, и, как свидетельствует Е. Такайшвили, в начале XX в., когда храм окружали дома с населением, говорящим на турецком языке<sup>2</sup>.

#### ХРАМ ХАХУ ВАНК

Храм Хаху ванк расположен в уезде Окахе (область Тортум). Это крестообразный центрально-купольный храм. Восточная апсида в плане полукруглая, с конховым покрытием. Северное и южное крылья—прямоугольные. Западное—представляет собой продолговатую трехнефную залу со сводчатым перекрытием. К нему с северной и западной сторон примыкают залы различной конфигурации, а с юга—открытая галерея.

Купол Храма возвышается над арками, которые связывают внутренние углы крыльев. Фасады имеют богатые архивольты из разноцветных камней. Шестнадцатигранный барабан купола украшен декоративной аркатурой.

<sup>1</sup> Ն. Սարգսեան, Տեղագրութիւնք Ի Փոքր և Ի Մեծ Հայիկ, Վենետիկ, 1864, էջ 86:

<sup>2</sup> Е. Такайшвили. Археологическая экспедиция 1917 года в южные провинции Грузии. Тбилиси, 1952.



рой, коническое покрытие купола—черепичное (черт. 34, рис. 68—76).

Некоторые исследователи датируют строительство храма серединой X в., а само строительство приписывают куропалату Давиду. В отличие от них, Н. Саркисян, основываясь на обнаруженные им надписи (ՍԳ—ՅԺԷ, расшифровывается как «Святой Григор—868»), время строительства храма отсылит к 868 году.

Армянский историк и писатель Атрпет находит, что Хаху—то поместье, которое, согласно историческим данным, принадлежало Григорию Просветителю под названием Хах. Согласно историку В. Ташьяну, Хаху армянская деревня, где до 1921 года жили в основном армяне.

### ХРАМ ЭГРЕК

Храм Эгрек расположен недалеко от крепости Тортум в одноименном селении. Представляет собой крестообразный, центральнокупольный памятник, восточная полукруглая в плане апсида которого фланкирована с обеих сторон приделами с апсидальными закруглениями с востока. Остальные три крыла—неглубокие прямоугольники. Купол возвышается над арками, связывающими внутренние углы крыльев.

По своим плановым особенностям Эгрек близок к храму Хаху, с той лишь разницей, что западное его крыло короче и равно по

глубине трем остальным. Стены храма как с наружи, так и внутри облицованы чистотесанными каменными плитами черного и кирпичного цвета (черт. 36—в, рис. 77).

Армянский историк Н. Адонц, основываясь на сохранившейся в храме греческой надписи, приписывает его строительство военачальнику, стратегу Ларисы и Македонии армянину Григору Таронаци.

Эгрек был церковью армян-халкедонитов греческой ориентации. Этим и объясняется появление на его стене надписи на греческом языке.

Расположенные южнее Кхарджка памятники Глубинной Армении (Тайка), в их числе: Ишхан, Банак, Ошк, Хаху, Эгрек, Тайоц Кар, Ис, Сбхеч были сооружены для армянопросветительской и армяно-халкедонской общин страны. Строили их мастера-строители и архитекторы по заказам и на средства армянских царей, духовных правителей, князей Мамиконянов и представителей Тайкской ветви княжеского дома Багратидов. Эти исторические памятники по своей архитектуре—плановому решению, объемно-пространственной композиции, пластической обработке внешних плоскостей, отдельным фрагментам и деталям—едины, родственны, и в подавляющем большинстве тождественны всему тому, что было создано в других областях исторической Армении. Наличествующие незначительные различия—результат существования в одной архитектурной сфере разных школ.

## LES MONUMENTS ARCHITECTURAUX DE L'ARMÉNIE PROFONDE

### (Résumé)

L'histoire de l'architecture arménienne n'est toujours que très incomplète. Elle se doit encore de combler d'importantes lacunes comme de surmonter de sérieuses difficultés, ne seraient-ce que celles dues à l'état de dépravation de la grande majorité des monuments d'art ou au fait de leur inaccessibilité pour le chercheur quand il s'agit de les découvrir sous d'épaisses couches de terre.

Des conditions particulièrement favorables s'y prêtant et l'importance, même relative, des matériaux accumulés le permettant, la publication d'ouvrages de cet ordre ne saurait, aujourd'hui, mieux contribuer à l'élaboration d'une histoire intégrale de l'art arménien.

\* \* \*

Les monuments qui font la matière du présent ouvrage sont situés en Tayk, quatorzième province de la Grande Arménie, connue également sous le nom d'Arménie profonde. Délimitée par le littoral Sud-est de la mer Noire, dont elle est séparée par les monts Parkhar de la chaîne Pontique, cette contrée occupe le bassin du fleuve Djorokh et de ses affluents et s'étend jusqu'aux sources du fleuve Koura.

Au VIII<sup>e</sup> siècle avant notre ère, l'Arménie

profonde qui s'appelait Dyaouékhi, était comprise dans le royaume d'Ourartou. Avec ce dernier centre dans la composition du royaume d'Arménie. A l'époque des Achéménides, l'Arménie profonde se trouva partagée entre les 13<sup>e</sup> et 18<sup>e</sup> satrapies. Au III<sup>e</sup> siècle avant notre ère elle revint au royaume arménien des Ervandides et fit partie, sous les Artachides, du royaume de la Grande Arménie. La domination des marzpanats et des Arabes ne la détacha pas de l'Arménie.

Dès les premiers siècles de notre ère l'Arménie profonde constitua le domaine héréditaire de la famille princière arménienne des Mamikonian, pour devenir plus tard la propriété de la branche taykienne des Bagratides arméniens.

C'est dans la seconde moitié du Xe siècle, sous le curopalate David (960—1001), célèbre personnage politique issu des Bagratides de l'Arménie profonde et le plus influent parmi les princes arméniens et géorgiens, que l'Arménie profonde jouit de l'indépendance.

En contrepartie de l'aide militaire qu'il lui fournit, David reçut de l'empereur byzantin Basile II des terres dont il agrandit son pays, l'Arménie profonde, qu'il se verra contraint, plus tard, de lui céder par „testament“ pour

avoir soutenu Vard Phocas, révolté contre ce même empereur.

Bientôt, alors que les hordes des Turcs seldjoukides s'emparaient, les unes après les autres, des possessions byzantines, ainsi que des villes arméniennes d'Ani (1064) et de Manazkert (1071), l'Arménien Grigor Bakourian, issu d'une branche latérale de la dynastie des Mamikonian. Thornikian en 1074 environ, met fin à l'administration de la régence de l'Arménie profonde qu'il gouvernait au nom du royaume de Byzance.

Indépendamment de ces circonstances l'Arménie profonde conserve sa physionomie nationale, et jusqu'en 1920 une population arménienne.

\* \* \*

L'Arménie profonde est d'une richesse architecturale incomparable. Ses monuments, dans leur grande majorité, ne sont pas étudiés. On n'en possède aucune description, aucun plan, aucune photographie. Les savants du passé ne se sont intéressés qu'aux plus en vue et à ceux bordant immédiatement les grandes routes. C'est là raison pour laquelle le présent ouvrage n'a pu traiter, faute de données suffisantes et l'auteur n'ayant pu encore entreprendre des recherches appropriées d'un nombre important de monuments des plus anciens et des plus originaux.

\* \* \*

En dépit des murailles administratives et politiques qui purent le tenir éloignée de la Mère Patrie, l'Arménie profonde sut vivre à l'unisson avec celle-ci; volonté qui ne cessa de s'exprimer dans le domaine qui nous touche et qui est une communauté d'esprit se dégageant de l'architecture des églises, de leur composition planimétrique et spatiale ainsi que des particularités stylistiques.

En même temps les principaux monuments l'Arménie profonde ont leur côté spécifi-

que qui apparaît dans la position des coupoles des églises vis-à-vis de l'axe Est-ouest.

La partie orientale de la construction relève du type des églises cruciformes à coupole centrale, tandis que le bras occidental qui se veut généralement demi-circulaire ou rectangulaire et égal par ses dimensions aux autres bras, se transforme pour adopter la forme originale des églises ou des salles rectangulaires de type longitudinal. Dans ces conditions, la coupole de l'église se trouve être par rapport à l'ensemble, non pas en position centrale, mais déplacée vers la partie orientale, ce qui confère à l'édifice entier un caractère grandement dynamique.

Cette particularité de l'architecture de l'Arménie profonde a fortement marqué maints ouvrages d'architecture d'Europe occidentale de la Renaissance.

\* \* \*

Les aspects particulièrement frappants de l'architecture de l'Arménie profonde nous sont surtout révélés dans les églises Ichkhan, Ochk et Khakhou. Celles-ci sont caractéristiques de l'école taykienne de l'architecture arménienne du Xe siècle.

Nous donnons ici une description assez détaillée de ces monuments et de quelques autres.

#### L'EGLISE ICHKHAN

Elle s'est conservée jusqu'à nos jours avec un plan cruciforme. L'abside orientale, demi-circulaire, qui est aussi le maître autel, comporte une arcature et offre sur ses deux côtés des sacristies à deux étages et à l'est une ouverture de passage. Les bras nord et sud sont très peu profonds et rectangulaires. Le bras ouest est une salle longitudinale à nef unique avec une grande sacristie attente à son mur nord. La coupole de l'église repose sur les voûtes reliant entre eux quatre piliers isolés.



Des fenêtres rondes ou oblongues alternent une à une sur chacun des 16 côtés du tambour de la coupole (dessin 1, 2, photo 1—25).

Cette église fut érigée dans les années 30 du XIIe siècle par l'évêque Nersès, chef du diocèse du lieu, qui ne devait pas tarder, dans les années 40, à devenir catholicos des Arméniens. Endommagée par les invasions arabes elle fut restaurée par Saban au début du IXe siècle. Dans les années 30 du XIe siècle, Moraïstsiàn, d'après N. Sarkissian, la protège d'un revêtement, tout en lui donnant un aspect approprié à l'époque nouvelle, les frontons extérieurs et le tambour de la coupole se rehaussant d'une arcature décorative.

Néanmoins, ces transformations n'affectèrent en rien le plan primitif de l'église ni non plus sa composition spatiale extérieure et intérieure.

La théorie en cours selon laquelle l'église-cathédrale construite par Nersès au VIIe siècle fut une église circulaire du type de Banak ou de Zvartnotz dont il ne serait rien conservé hormis l'arcature de l'abside orientale de l'église cruciforme, est absolument dénuée de tout fondement.

Monuments de la période classique de l'architecture arménienne, l'église Ichkhan que Nersès fit bâtir au VIIe siècle et qui ne subit que quelques travaux de restauration existe toujours et occupe, parmi les ouvrages d'art arméniens de valeur, une place particulière.

### L'ÉGLISE BANAK

Fut construite au VIIe siècle (652—658 environ) par le catholicos arménien Nersès III le Bâtitseur, qui fuyant les persécutions de Théodoros Rchtouni, se réfugia provisoirement pendant presque 6 ans en sa contrée natale de l'Arménie profonde.

Cette église est une variante de celle de Zvartnotz. S'inspirant d'une même architecture, elles offrent des ressemblances, notamment dans les détails.

Cependant, au lieu de la forme en croix simple de Zvartnotz, le centre de la composition adopte ici le plan de l'église de Bagaran

dans son ensemble. Entre les bras de la croix sont situées des sacristies carrées (ainsi que des étages supérieurs) comme on en voit dans l'église circulaire de Garni, de Marmachen et dans l'église St. Sarkis de Khdzkonk.

Par son aspect extérieur, l'église Banak est à trois niveaux et montre trois tambours superposés de diamètres différents. Les premiers et seconds tambours sont couverts d'un toit en pente, tandis que le tambour de la coupole de l'Est d'un toit conique. Les murs tambours sont lornés d'une arcature décorative. Le premier et le second tambour ont 28 côtés, le troisième 16, chaque côté étant éclairé d'une fenêtre.

La paroi extérieure du premier tambour est divisée en deux par un mince bandeau horizontal délimitant entre elle l'arcature décorative, et une surface sculptée de reliefs de raisins et de grenades. Au dessus de cette bande et jusqu'à la corniche ceignant le tambour, on remarque un mur plan aveugle de faible hauteur. On compte trois entrées principales respectivement situées à l'ouest, au sud et au nord (dessin 3—20, 26—28, 30, 32, photo 26—49).

Cette église qui sombra définitivement au milieu du XIXe siècle ne cessa, au cours de sa longue existence, d'être maintes fois endommagée et même détruite partiellement, restaurée chaque fois et rendue à la vie. La restauration la plus importante, due à Kuriké, se fit sous le roi Adrnerseh (888—923), sans qu'elle affectât cependant la composition générale originelle. C'est à la suite de reconstructions irrégulières et peu soucieuses de l'art, effectuées au cours des derniers siècles, que l'église subit de sensibles transformations qui s'exprimèrent par la suppression d'un de ses trois étages.

### LE COUVENT D'OCHK

Vank est situé à l'ouest du lac Thorthoum. Il fut construit au milieu du Xe siècle par les fils d'Adrnerseh III, le prince des princes Bagrad et le magistre David qui reçut, plus tard, le titre de curopalate.

Le couvent d'Ochk-vank est célèbre par son église du même nom, dont le plan de l'architecture en général, s'inspirent de l'église Ichkhan. L'abside orientale avec ses deux sacristies latérales s'y répète dans les zones nord et sud du carré de la coupole. A la différence de ces trois bras en forme d'abside recouverts par la coupole, le bras ouest est une salle longitudinale rectangulaire voûtée. Au mur nord de celle-ci est attenante une autre salle longitudinale dont l'extrémité orientale se termine par l'hémicycle de l'abside, et au mur sud une galerie ouverte avec quatre extrémités arrondies en abside.

La coupole repose, de même que celle de l'église Ichkhan, sur des arcs reliant entre eux quatre piliers isolés.

Les faces externes ainsi que le tambour de 24 côtés de la coupole s'ornent d'une arcature décorative (dessin 33, photo 58—66).

Cette église fut le principal sanctuaire de la communauté chalcédonienne arménienne de la province de l'Arménie profonde. La langue des cérémonies religieuses y fut, comme dans les autres églises arméniennes d'observance chalcédonienne, toujours suivant la sphère d'influence, le grec, le géorgin ou le syrien. Les inscriptions, en langue géorgienne, d'Ochk sont inscrites à la peinture

Ce monument s'appelait en arménien «Ochk-vank», «Eochk-vank», ou encore simplement «Vank» à l'époque où elle fut construite dans son milieu essentiellement arménien. A milieu du XIXe siècle lorsque le savant N. Sargsian<sup>1</sup> en recopia les [inscriptions ou au début du XXe siècle alors que la région comptait une population parlant en turc, ce que constate E. Taghaïchvili<sup>2</sup>.

L'église Ochk est un des monuments précieux de l'architecture arménienne du Xe siècle.

#### LE COUVEN DE KHAKHOU VANK

Est situé dans le canton d'Okaghé (Thorhoum).

L'église a un plan cruciforme à coupole centrale. L'abside orientale est demi-circulaire et recouverte d'une coupole. Les bras nord et sud de la croix sont rectangulaires, tandis que le bras ouest représente une salle longitudinale voûtée à trois nefs avec des salles de différents périmètres attenantes aux côtés nord et ouest et une salle à colonnes attenantes au côté sud.

La coupole de l'église prend appui sur les voûtes reliant les angles intérieurs des bras de la croix. Les façades s'ornent de corniches, d'arcades somptueuses et de linteaux en éventail, les pierres étant de deux couleurs. Le tambour de la coupole qui a 16 côtés est rehaussé d'une arcature. La coupole elle-même, a un toit conique en tuiles (dessin 34, photo 68—72).

D'aucuns attribuent la construction de cette église, qu'ils situent dans la seconde moitié du Xe siècle, au curopalate David. Le savant N. Sargsian interprète l'inscription (ՍԳ—ՅԺԷ) qu'il y a découverte, comme «Sourb Grigor» (St. Grigor—868). Cette date de 868 suppose peut-être celle de la construction de l'église.

L'écrivain-historiographe Atrpet n'exclut pas la possibilité d'un rapprochement de «Khakh», nom que l'histoire nous a conservé du fief qui appartient à Grégoire l'Illuminateur avec celui de «Khakh-ou». D'après l'historien V. Tachian, «Khakh-ou» fut un village arménien ou jusqu'à 1921 en grande majorité vivaient des arméniens.

<sup>11</sup> L'église Khakhou, cathédrale de la communauté arménienne du Tayk est également l'un des plus importants monuments de l'architecture arménienne du Moyen Age.

#### L'EGLISE EGREK

(Agrak, Agarak) est située dans le village

<sup>1</sup> N. Sargsian. La topographie de la Petite et de la Grande Arménie, Venise, 1864, p. 86 (en arménien).

<sup>2</sup> E. Taghaïchvili, l'Expédition archéologique de 1917 dans les provinces méridionales de la Géorgie, Tbilissi, 1952, p. 45 (en russe).

de Thorthoum, ancienne localité arménienne, à proximité du château-fort du même nom. C'est une construction cruciforme à coupole centrale. L'abside demi-circulaire est dotée sur ses deux côtés de sacristies dont les extrémités orientales respectives se terminent en forme d'abside. Les trois autres bras de la croix constituent de légers renforcements rectangulaires peu profonds. La coupole prend appui sur les voûtes reliant les angles formés de la rencontre des bras de la croix.

Par son plan général, cette église rappelle celui de Khakhou, sauf que le bras ouest y est plus court et égal aux autres.

L'ensemble témoigne d'une haute maîtrise. Les murs sont revêtus, à l'intérieur comme à l'extérieur, de pierres polies noires ou brunes (dessin 36 g, photo 77).

L'inscription grecque du monument permet à l'historien N. Adontz d'en attribuer la construction à Grigor Toromatsi, stratège arménien de Larissa et de Macédoine.

Cette église fut celle de la communauté

arménienne chalcédonienne d'Arménie profonde comprise dans la sphère d'influence grecque, cette circonstance déterminante, comme précédemment, la nature et l'origine de l'inscription.

Les compositions planimétriques et spatiales de la Kghartjk du Sud réparties dans l'Arménie profonde parmi lesquelles sont celle d'Ichkhan, Banak, Ochk, Khakhou, Egrek, Tayotz-Kar, Is Sbkhech et d'autres édifiées pour des communautés arméniennes orthodoxes ou chalcédoniennes furent mécennées par les rois arméniens, la dynastie des Mamikonians, la dynastie des Bagratides arméniens de l'Arménie profonde et des éminences religieuses. Ces monuments historiques sont par l'architecture, les solutions planimétriques et spatiales, les solutions plastiques des surfaces planes, leurs fragments, le résultat d'une parenté organique, identiquement unifiée dans toutes les compositions architecturales de l'Arménie historique. Les infimes variantes ou nuances qui les diffèrent, sont dues au style des écoles de valeur locale.



- Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964 թ.:
- Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948 թ.:
- Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց, Վենետիկ, 1910:
- Ղ. Ալիշան, Նշմարք Հայկականք, պրակ ա, բ, գ, Վենետիկ, 1870 թ.:
- Ներսես Ալիևյան, Մատենագրական հետազոտություններ, հատոր Դ., Վիեննա, 1938 թ.:
- Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, Գառնի, III, Երևան, 1962 թ.:
- Աարպետ, ձորոխի ավազանը, Վիեննա, 1929 թ.:
- Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.), որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր (Բանբեր Մատենադարանի, № 5), Երևան, 1960 թ.:
- Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963 թ.:
- Հ. Ս. Էփրիկյան, Պատկերապարզ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1889 թ.:
- Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, 1942 թ.:
- Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների երկրորդ ժողովածու, Երևան, 1948 թ.:
- Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1-ին (դասագիրք), Երևան, 1963 թ.:
- Ղ. Ինձիճեան, Ստորագրություն հին Հայաստանեայց Մեծ Հայք, Վենետիկ, 1822 թ.:
- Ե. Լալայան, Ջավախք (պզգագրական հանդես, Ա. գիրք), 1895 թ.:
- Արմեն Խաչատրյան, Տայքի ճարտարապետության առանձնահատկությունները («Cahiers archéologiques» հանդեսի XVII պրակ), Փարիզ, 1967 թ.:
- Մովսես Կաղանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից, Մոսկվա, 1860 թ.:
- Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969 թ.:
- Յակովբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, ս. Էջմիածին, 1903 թ.:
- Թ. Խ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960 թ.:
- Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատոր II, Երևան, 1956 թ.:
- Վ. Ա. Հարությունովա, Գրիգոր Պակուրիանը (Բակուրյանը) և Պետրիժոնում վանք հիմնելու նրա նպատակները (Մառը և հայագիտության հարցերը—ժողովածու), Երևան, 1968 թ.:
- Հ. Մեսրոպ ձանաղեան, Դավիթ Կիրապաղատ (պատմական ուսումնասիրություն), Վենետիկ—ս. Ղապար, 1972 թ.:
- Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944 թ.:
- Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Գ., Երևան, 1952 թ.:
- Պրոֆ. դոկտ. Մարկվարտ, Բագրատունեաց ծագումը (թարգմանություն Հ. Մ. Հոպոլյանի), Վիեննա, 1913 թ.:
- Տիրան Մարության, Չվարթնոց և պարթնոցատիպ տաճարներ, Երևան, 1963 թ.:
- Ս. Մելիք-Բախչյան, Հայաստանը VII—IX դարերում, Երևան, 1968 թ.:
- Պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա. (Ե—ԺԲ դար.), Երևան, 1934 թ.:
- Պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Բ. (ԺԳ—ԺԸ դար.), Երևան, 1936 թ.:
- Ս. Խ. Մնացականյան, Չվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971 թ.:

- Հ. Անդր Մովսեսյան, Լոռիի կիրճերի թագավորներու պատմությունը, Վիեննա, 1923 թ.:
- Մ. Տեր-Մովսիսյան, Էջմիածին և Հայոց հնագույն եկեղեցիներ, ՍՊԲ, 1905 թ.:
- Պ. Ա. Մարտիրոսյան, «Պատմություն պղնձե քաղաքի» պոլսյի վրացական պատումների ու նրանց փոխհարաբերության շուրջը (Բանբեր Մատենադարանի, № 6), Երևան, 1962 թ.:
- Պ. Մ. Մարտիրոսյան, Գրիգոր Բակուրյանի «Սահմանք»-ի հունարեն և վրացերեն խմբագրությունների գեահատության հարցի շուրջը (Պատմա-բանասիրական հանդես, № 1), Երևան, 1963 թ.:
- Պ. Մ. Մարտիրոսյան, Վրացերեն արձանագրությունները Հայաստանում (հայագիտական հետազոտություններ, պ. Ա), Երևան, 1974 թ.:
- Հ. Յակոբոս, Վ. Տաշեան, Հայ բնակչությունը Սև ծովն մինչև Կարին, Վիեննա, 1921 թ.:
- Հ. Յ. Տաշեան, Տայք, Դրացիք և խոտորջուր (Հանդես ամսօրեայ), 1970—1973 թ.:
- Հ. Թ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, հատոր 1, Երևան, 1965 թ.:
- Համազասպ Ոսկեան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951 թ.:
- Պրոֆ. Ս. Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հատոր 2-րդ (դասագիրք), Երևան, 1965 թ.:
- Հ. Ներսիսի Մարգինյան, Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայք, Վենետիկ, 1864 թ.:
- Ա. Ա. Սահինյան, Կ. Լ. Հովհաննիսյան, Ս. Խ. Մնացականյան, Լ. Մ. Բարսեղյան, Ավանարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964 թ.:
- Ստեփանոսի Տարոնեցույ, Ասողական Պատմություն տիեզերական, ՍՊԲ, 1885 թ.:
- Նիկողայ Տակարակի, ճարտարապետական եզակի հուշարձան Անիի 1911 թ. պեղումներից (Հայկական արվեստ № 1), Երևան, 1974 թ.:
- Ա. Օրագեան, Չուարթնոց, Գալիլի, 1956 թ.:
- И. В. Абуладзе—Замечания по поводу статьи П. М. Мурадяна «Армянская надпись храма Джвари» (Мацне, № 4), Тбилиси, 1968 г.
- Р. Я. Агабян—Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950 г.
- Н. Адонц—Армения в эпоху Юстиниана, СПб, 1908 г.
- Ш. Амиранашвили—История грузинского искусства, Москва, 1963 г.
- Б. Н. Аракелян, В. М. Арутюнян, С. Х. Мнацаканян—О некоторых вопросах истории армянской архитектуры (по поводу книги Г. Н. Чубинашвили «Разыскания по армянской архитектуре»), Ереван, 1969 г.
- Б. Аракелян—Гарни, I, Ереван, 1952 г.
- В. М. Арутюнян, С. А. Сафарян—Памятники армянского зодчества, Москва, 1951 г.
- Атлас Грузинской Советской Социалистической Республики, Тбилиси—Москва, 1964 г.
- Д. М. Бакрадзе—Археологические путешествия по Грузии и Адчаре, СПб, 1888 г.
- Д. Бакрадзе—Статьи по истории и древностям Грузии, СПб, 1887 г.
- Н. Бердзенишвили, И. Джавахишвили, С. Джанашиа—История Грузии, I (учебник), Тбилиси, 1946 г.
- В. Беридзе—Архитектура Грузии, IV—XIX века, Москва, 1948 г.
- В. Беридзе—Грузинская архитектура, Тбилиси, 1967 г.
- Вахтанг Беридзе—Против искажения истории грузинского искусства (Древнегрузинское искусство в свете зарубежной науки), Тбилиси, 1949 г.
- Вахтанг Беридзе—Некоторые вопросы истории грузинского искусства в свете работ И. В. Сталина по языкознанию, Тбилиси, 1953 г.
- А. Вермишев—Материалы для истории грузино-армянских отношений, СПб, 1904 г.
- Всеобщая история архитектуры, I, Москва, 1958 г. (учебник) (главный редактор Б. П. Михайлов).
- Всеобщая история архитектуры, 3, Москва, 1966 г. (ответственный редактор Ю. С. Яралов).
- И. Джавахов—К вопросу о времени построения грузинского храма в Аteni по вновь обследованным эпиграфическим памятникам (Христианский восток Т, в. III) СПб, 1912 г.
- С. Джанашиа—Об одном примере искажения исторической правды по поводу книги Н. Токарского «Архитектура древней Армении», Тбилиси, 1947 г.
- Жордания—Хроники и др. I, 1893 г.

- Искусство стран и народов мира, I, Москва, 1962 г. (Краткая художественная энциклопедия).
- История Византии, т. 3, Москва, 1967 г. (ответственный редактор Г. Г. Литаврин).
- История СССР, том I, части III—IV, М.—Л., 1939 г. (на правах рукописи).
- Кавказское слово (газета, Тбилиси, 3 марта 1915 года).
- Н. П. Кондаков—Древняя архитектура Грузии (древности... т. VI). Москва, 1876 г.
- А. В. Кузнецов—Тектоника и конструкция центральных зданий, Москва, 1951 г.
- М. Д. Лордкипанидзе—К вопросу о надписях храма Джвари в Мцхета (Мацне, 4), Тбилиси, 1968 г.
- Н. Я. Марр—Ани, Ереван, 1939 г.
- Н. Я. Марр—Аркауи, Монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах, СПб, 1905 г.
- Н. Я. Марр—О раскопках и работах в Ани летом 1906 г. (Тексты и разыскания по армяно-грузинской филологии, книга X), СПб, 1907 г.
- С. Х. Мнацаканян—Звартноц, Москва, 1971 г.
- Георгий Мерчул—Житие св. Григория Хандатийского, грузинский текст, перевод Н. Марра, Москва, СПб, 1911 г.
- П. М. Мурадян—Неопубликованная статья Н. Я. Марра об «Аркауи». Комментарии (Известия общ. наук № 12), Ереван, 1964 г.
- Н. Л. Окунев—Отчет о командировке летом 1917 г. на Кавказский фронт... (Известия Российской АН № 17), СПб, 1917 г.
- И. А. Орбели—Избранные труды, Ереван, 1963 г.
- К. Патканов—Ванские надписи и значения их для истории передней Азии (Журнал м-ва народного просвещения), СПб, 1883 г.
- К. Патканов—О древней грузинской хронике (журнал м-ва народного просвещения), 3 декабря, СПб, 1883 г.
- Б. Б. Пиотровский—Ванское царство, Москва, 1963 г.
- Русское слово (газета), 7 февраля 1915 г.
- Сенковский—Собрание сочинений, том шестой, СПб, 1859 г. (некоторые сомнения касательно истории грузин, 1838 г.).
- Н. Скабаланович—Византийское государство и церковь в XI веке, СПб, 1884 г.
- Н. П. Северов—Памятники грузинского зодчества, Москва, 1947 г.
- Иосиф Стржиговский—Архитектура армян и Европа (рукопись на русском языке).
- Е. Такайшвили—Археологическая экспедиция 1917 г. в южные провинции Грузии, Тбилиси, 1952 г. То же, на грузинском языке, Тбилиси, 1961 г.
- Е. Такайшвили—Бана (Материалы по археологии Кавказа, выпуск XII), Москва, 1909 г.
- Е. Такайшвили—Археологическая экспедиция 1907 г. в Кола-Олтиси, Чаггли, Париж, 1938 г. (на грузинском языке).
- Е. Такайшвили—О грузинских землях, захваченных Турцией. «Заря Востока», (№ 107), Тбилиси, 1946 г.
- Е. Такайшвили—Альбом древнегрузинской архитектуры, (на грузинском языке), Тбилиси, 1924 г.
- Н. М. Токарский—Архитектура древней Армении, Ереван, 1946 г.
- Н. М. Токарский—Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961 г.
- Труды V археологического съезда в Тифлисе, Москва, 1887 г.
- О. Х. Халпахчян—Церковь Григория рода Абугамренц в Ани и ее место в истории Закавказского зодчества (Архитектурное наследство, 24, Москва, 1975 г.).
- В. Цинцадзе—Храм Баграта, Тбилиси, 1964 г.
- И. Г. Чавчавадзе—Армянские ученые и вопиющие камни, Тифлис, 1902 г.
- Г. Н. Чубинашвили—История грузинского искусства, том I, Тбилиси, 1936 г. (на грузинском языке).
- Г. Н. Чубинашвили, Н. П. Северов—Пути грузинской архитектуры, Тбилиси, 1936 г.
- Г. Н. Чубинашвили—Еще к вопросу о датировке Аруцкого храма в Армении (к методике изучения архитектурных памятников), сообщения Академии наук Грузинской ССР, том VIII, № 8, Тбилиси, 1946 г.



- Г. Н. Чубинашвили**—Армянское искусство с конца IX и до начала XI века (Сборник «Давид Сасунский» под редакцией проф. Меликсет-Бека), Тбилиси, 1939 г.
- Г. Н. Чубинашвили**—Памятники типа Джвари, Тбилиси, 1948 г.
- Г. Н. Чубинашвили**—Архитектура Кахетии (текст), Тбилиси, 1959 г.
- Г. Н. Чубинашвили**—Архитектура Кахетии (альбом), Тбилиси, 1956 г.
- Г. Н. Чубинашвили**—Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967 г.
- А. Л. Якобсон**—Очерк истории зодчества Армении V—XVII вв., М.—Л., 1950 г.
- А. Л. Якобсон**—О книге Г. Н. Чубинашвили «Разыскания по армянской архитектуре», Тбилиси, 1967 г. (Советская археология 3, 1968 г.).
- Harald Busch und Gottfried Edelmann.** Europäische Baukunst, Romanik, Frankfurt am Main, 1970, 42 149.
- E. Honigmann** — Die Ost-grenze des Byzantinisches Reiches, vom 363 bis 1071, Bruxelles, 1935.
- Koch** — Reise in Pontiscen Gebirge, II, 1846, Weimar.
- Josef Strzygowski** — Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

## ԳՆԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

1. Իշխան տաճարի հատակագիծը, (չափագրություն Ա. Կալգինի, կատարում՝ Ն. Մանրովի)
2. Իշխան տաճարի «հին» և «նոր» հատակագծերի համադրման փորձ (զծ. Տ. Մարությանի)
3. Բանակ տաճարի հատակագիծը (զծ. Կարլ Կոխի)
4. Բանակ տաճարի հատակագիծը (ըստ Դ. Բաքրաձեի)
5. Բանակ տաճարի հատակագիծը (զծ. Թ. Թորամանյանի)
6. Բանակ տաճարի առաջին աստիճանի հատակագիծը (վերակազմություն Ս. Կղիաշվիլու)
7. Բանակ տաճարի կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (վերակազմություն Ս. Կղիաշվիլու)
8. Բանակ տաճարի առաջին աստիճանի հատակագիծը (վերակազմություն Ա. Կալգինի)
9. Բանակ տաճարի հատակագիծը երկրորդ հարկի բարձրության վրա (վերակազմություն Ա. Կալգինի)
10. Բանակ տաճարի երկրորդ աստիճանի հատակագիծը (վերակազմություն Ա. Կալգինի)
11. Բանակ տաճարի երրորդ աստիճանի հատակագիծը (վերակազմություն Ա. Կալգինի)
12. Բանակ տաճարի կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (վերակազմություն Ա. Կալգինի)
13. Բանակ տաճարի հատակագիծը ըստ «Ճարտարապետության համընդհանուր պատմություն» դասագրքի
14. Բանակ տաճարի կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով ըստ հիշյալ դասագրքի
15. Բանակ տաճարի արևմտյան ճակատը (վերակազմություն Տ. Մարությանի)
- 15-ա. Բանակ տաճարի I, II, III աստիճանների հատակագծեր, կտրվածք և ճակատ (վերակազմություն Ստ. Մնացականյանի)
16. Բանակ տաճարի առաջին աստիճանի թմբկապատի արտաքին կամարաշարի և քանդակապարզ գոտու դրվագ (զծ. Տ. Մարությանի)
17. Բանակ տաճարի առաջին աստիճանի թմբկապատի արտաքին կամարաշարի դրվագ, առանց քանդակապարզ գոտու (զծ. Տ. Մարությանի)
18. Բանակ տաճարի առաջին աստիճանի հատակագիծ (վերակազմություն Տ. Մարությանի)
19. Բանակ տաճարի երրորդ աստիճանի (գմբեթաթմբուկի) հատակագիծ (վերակազմություն Տ. Մարությանի)
- 19-ա. և 19-բ. Բանակ տաճարի գմբեթային մասի վերակազմության երկու տարբերակ (զծ. Տ. Մարությանի)
20. Բանակ տաճարի կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (վերակազմություն Տ. Մարությանի)
21. Եղեգնամոր (Չանգի, Կալդվան) եկեղեցու և իր գմբեթաթմբուկի հատակագծեր (չափագրություն Ա. Կալգինի, կատարում Բ. Ռյաբովի)
22. Եղեգնամոր (Չանգի) եկեղեցու արևմտյան ճակատը (չափագրություն Ա. Կալգինի, կատարում Բ. Ռյաբովի)
23. Եղեգնամոր (Չանգի) եկեղեցու կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (չափագրություն Ա. Կալգինի, կատարում Բ. Ռյաբովի)
24. Չվարթնոցի և Բանակի գմբեթակիր մույթերի հատակագծերը
25. Հայկական տաճարների հատակագծեր Բանակ տաճարի կոմպոզիցիայով, պայմանականորեն առնված շրջանց սրահների մեջ (զծ. Տ. Մարությանի)
  - ա Էջմիածին
  - բ Բազարան
  - գ Գառնի (բոլորակ եկեղեցի)
  - դ Մարմաշեն (բոլորակ եկեղեցի)

- ե Խծկոնք (Սարգսի եկեղեցի)  
 Կ Բանակ
26. Համաչափություններ Բանակ տաճարի հատակագծում (ըստ Տ. Մարությանի)
27. Համաչափություններ Բանակ տաճարի կտրվածքում (ըստ Տ. Մարությանի)
28. Բանակ տաճարի հատակագծի՝ ատեղծման՝ ընթացքը (ըստ Տ. Մարությանի)
29. Չվարթոնոց տաճարի առաջին աստիճանի հատակագիծը (վերակազմություն՝ Թ. Թորամանյանի, Տ. Մարությանի փոքր հավելումներով)
- 29ա. Չվարթոնոց տաճարի առաջին աստիճանի՝ վերահանրկի հատակագիծը (վերակազմություն Տ. Մարությանի)
30. Բանակ տաճարի արևմտյան ճակատի տարբերակ (գծ. Տ. Մարությանի)
31. Գագվաջենի տաճարի հատակագիծը (վերակազմություն Թ. Թորամանյանի)
32. Բանակ տաճարի վերակառուցումներ (գծ. Տ. Մարությանի)  
 ա) սկզբնապես՝ հայոց կաթողիկոս՝ Ներսես Գ. Շինողի կառուցած տաճարի հատակագիծը և կտրվածքը (652—658 թթ.)  
 բ) տաճարի հատակագիծը և կտրվածքը՝ Աղոներսեհի (888—923 թթ.) վերակառուցումներով  
 գ) տաճարի կտրվածքը վերջին վերակառուցումներով
33. Օշկի վանք տաճարի հատակագիծը (չափագրություն Ա. Կալգինի, կատարումը՝ Մ. Կերնի)
34. Խախու վանք տաճարի հատակագիծը (չափագրություն Ա. Կալգինի, կատարումը՝ Բ. Ռյաբովի)
- 35.ա Ողջաբերդ (վերակազմություն Ն. Տոկարսկու)  
 բ. Բջնի, (<ՊՊԿ)  
 գ Սուրբ Գևորգ՝ Ղուրախու (չափագրություն Տ. Մարությանի)  
 դ Լնբառ (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 ե. Կարմրավոր (<ՊՊԿ)  
 Կ Մալարճուք (ըստ Գ. Չուբինաշվիլու)
- 36.ա Կոշ (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 բ Արտավազիկ (չափագրություն Ա. Յակոբսոնի)  
 գ) Էգրեկ՝ Խորագույն Հայք (ըստ Ե. Թաղախչվիլու)  
 դ Եղեգնամոր՝ Կարս (չափագրություն Ա. Կալգինի)
- 37.ա Օրթուկու (ըստ Ե. Թաղախչվիլու)  
 բ Դորթթիխա՝ կող (ըստ Ե. Թաղախչվիլու)  
 գ Պարտեկ (ըստ Ե. Թաղախչվիլու)  
 դ Ալաման (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 ե Հացառատ (<ՊՊԿ)  
 Կ Թալին (չափագրություն Թ. Թորամանյանի)
38. ա Խ՝ Խորագույն Հայք (ըստ Ե. Թաղախչվիլու)  
 բ Մահմուդճուք (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 գ Սխ՝ Շապին Գարահիսար (չափագրություն Թ. Գուշակյանի)
- 39.ա Սբխեջ, Խորագույն Հայք (ըստ Ե. Թաղախչվիլու)  
 բ Փենիկ Խորագույն Հայք (ըստ Ե. Թաղախչվիլու)  
 գ Մուխաջիքիխա (ըստ Ե. Թաղախչվիլու)  
 դ Շուվիկ (<ՊՊԿ)  
 ե Արվնի (չափագրություն Վ. Գրիգորյանի)  
 Կ Վանեվան (<ՊՊԿ)  
 է Հոգեվանք (չափագրություն Վ. Գրիգորյանի)  
 ը Բոբոսգիր (ըստ Ե. Թաղախչվիլու)
- 40.ա Փարբի (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 բ Մանկանոց (<ՊՊԿ)  
 գ Շողազավանք (չափագրություն Մ. Հասարթյանի)
- 41.ա Անիի միջնաբերդի վեց խորանով եկեղեցի (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 բ) Անիի միջնաբերդից ոչ հեռու ս. Գրիգոր եկեղեցի (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 գ) Աբուհամրենց ս. Գրիգոր (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 դ Կուսանաց վանքի ս. Հռիփսիմե (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 ե Հովվի եկեղեցի (չափագրություն Թ. Թորամանյանի)  
 Կ) Կիսգմիս-ալթի՝ Խորագույն Հայք (ըստ Ե. Թաղախչվիլու)



- է Օլթի ս. Գևորգ (ըստ Չղանկիչի)
- ը Արղահանի ս. Գևորգ՝ Գոգյուբա, Գեօրգորայ (ըստ Ե. Թաղաիշվիլու)
- թ Գրիգորաշեն՝ Թալինի շրջան (ըստ Ա. Մանուչարյանի)
- ժ Ս. Շուշանիկ՝ Թալինի շրջան (ըստ Ա. Մանուչարյանի)
- ի Բոգոսրմա՝ Վրաստան (ըստ Գ. Չուբինաշվիլու)
- լ Կացխի՝ Վրաստան (ըստ Վ. Բերիձնի)
- 42.ա Չորավար (չափագրություն Թ. Թորամանյանի)
- բ Իրինդավանք (չափագրություն Թ. Թորամանյանի)
- գ Փրկչի եկեղեցի (չափագրություն Թ. Թորամանյանի)
- դ Տայոց Քար, հատակագիծ (չափագրություն Ա. Կազմինի)
- ե Տայոց Քար՝ Խորագույն Հայք, արևևտյան ձևկատ (վերակապություն Ա. Կազմինի)
- զ Տայոց Քար՝ արևևտյան ձևկատ (վերակապություն Տ. Մարուսյանի)
- 43.ա Սյնտորուտ՝ Խորագույն Հայք (ըստ Ե. Թաղաիշվիլու)
- բ Իշխան՝ Խորագույն Հայք (ըստ Ե. Թաղաիշվիլու)
- գ Չորդվան՝ Խորագույն Հայք (ըստ Ե. Թաղաիշվիլու)
- դ Պարխար՝ Խորագույն Հայք (ըստ Ե. Թաղաիշվիլու)
- ե Պարխար արևևյան և հյուսիսային ձևկատների վերակապություն (ըստ Ե. Թաղաիշվիլու)

## ПЕРЕЧЕНЬ ЧЕРТЕЖЕЙ

1. Ишхан. План храма, Обмер А. Калыгина (исполн. Н. Северов).
2. Ишхан. Попытка совмещения «нового» и «старого» планов храма. Чертеж Т. Марутяна.
3. Банак. План храма. Чертеж К. Коха.
4. Банак. План храма по Д. Бакрадзе.
5. Банак. План храма. Чертеж Т. Тораманяна.
6. Банак. План первого яруса храма. Реконструкция С. Клдиашвили.
7. Банак. Разрез храма по оси север-юг. Реконструкция С. Клдиашвили.
8. Банак. План первого яруса храма. Реконструкция А. Калыгина.
9. Банак. План храма на высоте второго этажа (хора). Реконструкция А. Калыгина.
10. Банак. План второго яруса храма. Реконструкция А. Калыгина.
11. Банак. План третьего яруса храма. Реконструкция А. Калыгина.
12. Банак. Разрез храма по оси север-юг. Реконструкция А. Калыгина.
13. Банак. План храма по учебнику «Всеобщая история архитектуры».
14. Банак. Разрез храма по тому же учебнику.
15. Банак. Западный фасад храма. Реконструкция Т. Марутяна.
- 15а. Банак. Планы этажей, разрез и фасад. Реконструкция Ст. Миацаканяна.
16. Банак. Фрагмент декоративной аркатуры на наружной стене первого яруса и орнаменты на поверхности антривольта. Чертеж Т. Марутяна.
17. Банак. Фрагмент декоративной аркатуры на наружной стене первого яруса без орнамента в антривольте. Чертеж Т. Марутяна.
18. Банак. План первого яруса. Реконструкция Т. Марутяна.
19. Банак. План третьего яруса (купола) храма. Реконструкция Т. Марутяна.
- 19а и 19б. Банак. Варианты купольной части храма. Реконструкции Т. Марутяна.
20. Банак. Разрез храма по оси север-юг. Реконструкция Т. Марутяна.
21. Ехегнамор. (Чангли, Кагизман). Планы церкви и его купола. Обмер А. Калыгина (исполн. Б. Рябова).
22. Ехегнамор. (Чангли). Западный фасад церкви. Обмер А. Калыгина (исполн. Б. Рябова).
23. Ехегнамор (Чангли). Разрез церкви по оси север-юг. Обмер А. Калыгина (исполн. Б. Рябова).
24. Звартиц и Банак. Планы пионов храмов. Чертеж Т. Марутяна.
25. Условные планы армянских церквей по композиции храма Банак. Чертеж Т. Марутяна.
  - а) Эчмиадзин
  - б) Багаран
  - в) Гарни (круглая церковь)
  - г) Мармашен (круглая церковь)
  - д) Хцконк (церковь Саргиса)
  - е) Банак
26. Банак. Пропорции в плане по Т. Марутяну.
27. Банак. Пропорции в разрезе по Т. Марутяну.

28. Банак. Эволюция создания плана по Т. Марутяну.
29. Звартноц. План первого яруса по Т. Тораманяну (с маленькими дополнениями Т. Марутяна).
29. Звартноц. План второго кольцевого этажа (галереи хора) в пределах первого яруса храма. Реконструкция Т. Марутяна.
30. Банак. Вариант западного фасада храма, чертеж Т. Марутяна.
31. Гагикашен. План первого яруса. Реконструкция Т. Тораманяна.
32. Банак. Реконструкции храма. Чертеж Т. Марутяна.
  - а) План и разрез храма (652—658 гг.) возведенного католикосом Нерсесом III Строителем.
  - б) План и разрез храма после восстановления царем Андрнасе (888—923)
  - в) Разрез храма после последних восстановлений.
33. Ошк ванк. План храма. Обмер А. Кальгина (исполн. М. Керна).
34. Хаху ванк. План храма. Обмер А. Кальгина (исполн. Б. Рябова).
35. а) Вохчаберд. Реконструкция Н. Токарского.
  - б) Дджи. ООПА.
  - в) Сурб Геворг (Курсалу). Обмер Т. Марутяна.
  - д) Кармравор ООПА.
  - е) Мазарджук. По Г. Чубинашвили.
36. а) Кош. Обмер. Т. Тораманяна.
  - б) Артавазик. Обмер А. Якобсона.
  - в) Эгрек (Глубинная Армения). По Е. Такайшвили.
  - г) Ехегнамор (Карс). Обмер А. Кальгина.
37. а) Ортулу. По Е. Такайшвили.
  - б) Дорткилиса (Кола). По Е. Такайшвили.
  - в) Партез. По Е. Такайшвили.
  - г) Аламан. Обмер Т. Тораманяна.
  - д) Ацарат. ООПА.
  - е) Талин. Обмер Т. Тораманяна.
38. а) Ис (Глубинная Армения). По Е. Такайшвили.
  - б) Махмутчук. Обмер. Т. Тораманяна.
  - в) Сис (Шапиг Гарансар). Обмер Т. Гушакяна.
39. а) Сурб Хач (Глубинная Армения). По Е. Такайшвили.
  - б) Пенник (Глубинная Армения). По Е. Такайшвили.
  - в) Мухладжиклиса (Глубинная Армения) По Е. Такайшвили.
  - г) Црвиз. ООПА.
  - д) Арзни. Обмер В. Григоряна.
  - е) Ваневан ООПА.
  - ж) Хогеванк. Обмер В. Григоряна.
  - з) Бобосгир. По Е. Такайшвили.
40. а) Парби. Обмер Т. Тораманяна.
  - б) Манканоц. ООПА.
  - в) Шохагаванк. Обмер М. Асратяна.
41. а) Шестиапсидная церковь в цитадели Ани. Обмер Т. Тораманяна.
  - б) Церковь св. Григория недалеко от цитадели Ани. Обмер Т. Тораманяна.
  - в) Церковь Григория рода Аbugамренц в Ани. Обмер Т. Тораманяна.
  - г) Церковь св. Рипсиме Девичьего монастыря в Ани. Обмер Т. Тораманяна.
  - д) «Пастушья» церковь в пригороде Ани. Обмер Т. Тораманяна.
  - е) Книгмис алты. По Е. Такайшвили.
  - ж) Церковь св. Георгия в Олты. По Зданевичу.
  - з) Церковь св. Георгия в р-не г. Ардаган (Гогюба).
  - и) Григорашен (Талинский р-н). Обмер А. Манучаряна.
  - к) С. Шушаник (Талинский р-н). Обмер А. Манучаряна.
  - л) Бочорма (Грузия). По Г. Чубинашвили.
  - м) Кацхи (Грузия). По В. Беридзе.
42. а) Зоравар. Обмер Т. Тораманяна.



- б) Ирндаванк. Обмер Т. Тораманяна.
  - в) Церковь Спасителя в Ани. Обмер Т. Тораманяна.
  - г) Тайоц Кар. План. Обмер А. Кальгина.
  - д) Тайоц Кар. Западный фасад. Реконструкция А. Кальгина.
  - е) Тайоц Кар. Западный фасад. Реконструкция Т. Марутяна.
43. а) Схторут (Глубинная Армения). По Е. Такайшвили.
- б) Ишхан (Глубинная Армения). По Е. Такайшвили.
  - в) Чордван (Глубинная Армения). По Е. Такайшвили.
  - г) Пархар (Глубинная Армения). По Е. Такайшвили.

1. Իշխան տաճարի տեսքը հարավակողմից
2. Իշխան տաճարի տեսքը հյուսիս-արևմտակողմից
3. Իշխան տաճարի և փոքր եկեղեցու տեսքը հարավակողմից
4. Իշխան տաճարի տեսքը արևելակողմից
5. Իշխան տաճարի արևմտյան թևի հարավային պատի դրվագ
6. Իշխան տաճարի գմբեթը հենված հյուսիս-արևելյան մույթին
7. Իշխան տաճարի կենտրոնական մասի այժմյան տեսքը (1970 թ. լուսանկար Ֆրանկո Մարայի)
8. Իշխան տաճարի արևելյան խորանի սյունակամարաշարը
9. Իշխան տաճարի գմբեթային մասի ներքին տեսքը
10. Իշխան տաճարի արևելյան խորանի ստորին մասը
11. Իշխան տաճարի հյուսիս-արևելյան հատվածի ներքին տեսքը
12. Իշխան տաճարի հարավ-արևելյան հատվածի ներքին տեսքը
13. Իշխան տաճարի արևելյան խորանի կամարաշարի դրվագ (հարավային ծայրը)
14. Իշխան տաճարի արևելյան խորանի սյունակամարաշարի դրվագ
15. Իշխան տաճարի արևելյան խորանի սյուներ իրենց խարսխապատով, տեսքը արևելակողմի սրահից
16. Իշխան տաճարի լայնական կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (վերակազմություն Ա. Կալզինի, գծ. Ն. Սևերովի)
17. Իշխան տաճարի հարավ-արևելյան հատվածի ներքին տեսքը
18. Իշխան տաճարի գմբեթակիր մույթեր և կամարներ
19. Իշխան տաճարի հարավային թևի ներքին տեսքը
20. Իշխան տաճարի հարավային թևի արևմտյան անկյունը
21. Իշխան տաճարի հյուսիսային թևի վրա բացվող վերնահարկի կամարակապ գույզ բացվածքներ
22. Իշխան տաճարի հարավ-արևմտակողմի գմբեթակիր մույթի խոյակ
23. Իշխան տաճարի հյուսիս-արևմտակողմի գմբեթակիր մույթի խոյակ
24. Իշխան տաճարի արևմտյան թևի հարավային պատի ներքին տեսքը
25. Իշխանի փոքր եկեղեցու տեսքը հյուսիս-արևմտակողմից
26. Բանակ տաճարի ավերակը հյուսիս-արևելակողմից
27. Բանակ տաճարի այժմյան տեսքը արևելակողմից (1970 թ.)
28. Բանակ տաճարի այժմյան տեսքը հյուսիս արևմտակողմից (1970 թ.)
29. Բանակ տաճարի արևմտյան ճակատ (վերակազմություն Ա. Կալզինի)
30. Բանակ տաճարի ավերակի հյուսիս-արևելյան հատվածի ընդհանուր տեսքը
31. Բանակ տաճարի առաջին աստիճանի դրվագ ավերակ վիճակում
32. Բանակ տաճարի առաջին աստիճանի թմբկապատի արտաքին քանդակագոտու դրվագ դեկորատիվ կամարաշարի անտրիվոտում
33. Բանակ տաճարի ավերակի հարավ-արևելյան հատվածի ընդհանուր տեսքը (1970 թ.)
34. Բանակ տաճարի ավերակի հարավ-արևմտյան հատվածի ընդհանուր տեսքը
35. Բանակ տաճարի արևմտակողմի ճակտոնով մուտքի հետքեր քանդակագարդ կամաքի ներսում
36. Բանակ տաճարի արևելյան խորանի ներքին տեսքը

37. Բանակ տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը
38. Բանակ տաճարի արևելյան խորանի ձախ վերնամասը
39. Բանակ տաճարի արևելյան խորանի գմբեթադր վերնամասի ներքին տեսքը
40. Բանակ տաճարի ներքին վերնահարկ օթյակը հյուսիս- արևելյան աշտարականման ծավալի երկրորդ հարկաբաժնում
41. Բանակ տաճարի ներքին վերնահարկ օթյակը հարավ-արևելյան՝ աշտարականման ծավալի երկրորդ հարկաբաժնում
42. Բանակ տաճարի արևելյան խորանի սյունակամարաշար
43. Բանակ տաճարի բոլորակ սրահի հյուսիս-արևելյան հատվածի ներքին տեսքը
44. Բանակ տաճարի առաջին աստիճանի թմբկապատի հետագա հաստացումը կամարակապ պատի ձևով, տեսքը բոլորակ սրահի ներսից
45. Բանակ տաճարի հյուսիս-արևելյան կողմի առանձին կանգնած ականթախոյակ մույթի վրա բարձրացած կամարները և կամարաթռիչքներից մեկի գոցվելը խուլ պատով
46. Բանակ տաճարի առաջին աստիճանի մեծ և երկրորդ աստիճանի փոքր սրահները բացված հյուսիսային խորանի և արտաքին թմբկապատի կործանումով
47. Բանակ տաճարի հյուսիս-արևելյան հատվածում առանձին կանգնած ականթաքանդակ խոյակով սյուն
48. Բանակ տաճարի արևելյան խորանի ձախից երրորդ սյան խոյակը (1970 թ.)
49. Բանակ տաճարի արևմտյան ճակատը (վերակազմություն Տ. Մարությանի)
50. Բանակ տաճարի հյուսիսային խորանի սկիզբը, երկրորդ պլանում՝ արտաքին թմբկապատի հետագայում հաստացված կամարակապ պատի մնացորդը, տեսքը բոլորակ սրահի կողմից
51. Չվարթնոց տաճարի արծվաքանդակ խոյակ
52. Չվարթնոց տաճարի արևմտյան ճակատ (վերակազմություն Թ. Թորամանյանի)
53. Չվարթնոց տաճարի քանդակազարդ գոտու դրվագ
54. Չվարթնոց տաճարի սյունակամարաշարի սյան կողովահյուս խոյակ
55. Գագկաշեն տաճարի քարե մանրակերտը Գագիկ թագավորի ձեռքերում
56. Սեն-Շապել (Փարիզ) եկեղեցու երկու հարթաքանդակ Չվարթնոցի պատկերով
57. Դվինի հնագույն շինության կողովահյուս խոյակ
58. Օշկ վանք տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից
59. Օշկ վանք տաճարի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից
60. Օշկ վանք տաճարի տեսքը հարավից
61. Օշկ վանք տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից
62. Օշկ վանք տաճարի կառուցողների հարթաքանդակները
63. Օշկ վանք տաճարի արևմտյան թևի հարավային պատի ներքին տեսքը
64. Օշկ վանք տաճարի գմբեթատակ տարածության տեսքը արևմտյան թևից
65. Օշկ վանք տաճարի արևմտյան ճակատի պատուհանը
66. Օշկ վանք տաճարի լայնական կտրվածքը հյուսիս-հարավ առանցքով (չափագրություն Ա. Կալզինի, կատարումը՝ Մ. Կերնի)
67. Օշկ վանք տաճարի հարավային ճակատի դրվագ
68. Խախու վանք տաճարի ընդհանուր տեսքը հարավ- արևելքից
69. Խախու վանք տաճարի տեսքը հարավակողմից
70. Խախու վանք տաճարի տեսքը հյուսիս-արևելքից
71. Խախու վանք տաճարի հյուսիս-արևելյան հատվածի ներքին տեսքը
72. Խախու վանք տաճարի երկայնական կտրվածքը արևելք-արևմուտքի առանցքով. (չափագրություն Ա. Կալզինի, կատարումը Բ. Ուլաբովի)
73. Խախու վանք տաճարի արևելյան խորանի ձախակողմյան չորս խորշերը
74. Խախու վանք տաճարի հարավային ճակատը (չափագրությունը Ա. Կալզինի, կատարումը Բ. Ուլաբովի)
75. Խախու վանք տաճարի արևմտյան թևի սյունակամարաշար ներքնամասը
- 75.ա Խախու վանք տաճարի սյան խոյակ
76. Խախու վանք տաճարի հարավակողմի սյունաարահում պահպանված սրբի քանդակապատկեր
77. Էզրեկ տաճարի արևելյան ճակատը
78. Տայոց Քար (Թավուլքար տաճարի ընդհանուր տեսքը ավերակ վիճակում
79. Տայոց Քար տաճարի ներքին տեսքը ավերակ վիճակում
80. Սլթիի վեց խորանով տաճարի ընդհանուր տեսքը ավերակ վիճակում



81. Գոգյուբա տաճարի ընդհանուր տեսքը
82. Կիսագմիս-ալթի տաճարի ընդհանուր տեսքը
- 82.ա Ս. Շուշանիկ (Թալին) տաճարի գմբեթային փոխանցման համակարգը
83. Եղեգնամոր տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևելակողմից
84. Եղեգնամոր տաճարի գմբեթակիր մույթի և կամարների գրվագ
85. Եղեգնամոր տաճարի գմբեթային մասի ներքին տեսքը
86. Չորդվան տաճարի արևելյան ճակատը
87. Չորդվան (Դորթքիլիսա) տաճարի ընդհանուր տեսքը արևելակողմից
88. Քյոլնի (ԳՖՀ) Առաքելոց տաճարի արևելյան խորանի ներքին տեսքը
89. Պարխար տաճարի վերնամասի ընդհանուր տեսքը (1970 թ.)
90. Պարխար տաճարի արևելյան ճակատը
91. Պարխար տաճարի արևելյան ճակատի հյուսիսակողմից երկրորդ լուսանկարի քանդակապարզ կամարադեղը
92. Չորդվան տաճարի ներքին տեսքը
93. Պարխար տաճարի ներքին տեսքը
- 94, 95. Պարխար, ներկով գրված ուշ արձանագրություններ տաճարի միջին նավի վերնամասի պատերի վրա
96. Կենտրոնագմբեթ տաճարի ավերակ խորագույն Հայքում (1970 թ.)

## ПЕРЕЧЕНЬ ФОТОСНИМКОВ

1. Ишхан. Вид храма с юга.
2. Ишхан. Вид храма с северо-запада.
3. Ишхан. Вид храма и малой церкви с юга.
4. Ишхан. Вид храма с востока.
5. Ишхан. Фрагмент южной стены западного крыла храма.
6. Ишхан. Купол храма, опирающийся на пилон северо-восточной стороны.
7. Ишхан. Современный вид центральной части храма (1870 г.).
8. Ишхан. Колоннада восточной апсиды храма.
9. Ишхан. Внутренний вид купольной части храма.
10. Ишхан. Нижняя часть восточной апсиды храма (1970, фото Франко Марра).
11. Ишхан. Внутренний вид северо-восточной части храма.
12. Ишхан. Внутренний вид юго-восточной части храма.
13. Ишхан. Фрагмент южного конца аркады восточной апсиды храма.
14. Ишхан. Фрагмент колоннады восточной апсиды храма.
15. Ишхан. Цокольная стена колоннады восточной апсиды.
16. Ишхан. Поперечный разрез храма. Реконструкция А. Кальгина, (исполн. Н. Северова).
17. Ишхан. Внутренний вид юго-восточного угла храма.
18. Ишхан. Подкупольные пилоны и арки храма.
19. Ишхан. Внутренний вид южного крыла храма.
20. Ишхан. Западный угол южного крыла храма.
21. Ишхан. Парные проемы хора северного крыла храма.
22. Ишхан. Капитель юго-западного подкупольного пилона.
23. Ишхан. Капитель северо-западного подкупольного пилона.
24. Ишхан. Внутренний вид южной стены западного крыла храма.
25. Ишхан. Малая церковь, северо-западный вид.
26. Банак. Северо-восточный вид развалин храма.
27. Банак. Современный вид развалин с востока (1970 г.).
28. Банак. Современный вид развалин с северо-запада (1970 г.).
29. Банак. Западный фасад храма. Реконструкция А. Кальгина.
30. Банак. Общий вид развалин храма с северо-востока (в пределах четырех граней).
31. Банак. Фрагмент стены первого яруса.
32. Банак. Фрагмент орнаментированного пояса в пределах антривольта первого яруса храма.
33. Банак. Общий вид развалин с юго-востока (Фото Франко Марра, 1970 г.).
34. Банак. Общий вид развалин храма с юго-запада.
35. Банак. Следы фронтона западного входа на грани стены первого яруса храма.
36. Банак. Общий вид восточной апсиды изнутри.
37. Банак. Внутренний вид восточной части храма.
38. Банак. Фрагмент конхового перекрытия восточной апсиды храма.
39. Банак. Остаток конха восточной апсиды храма.
40. Банак. Северо-восточный хор в пределах второго этажа.
41. Банак. Юго-восточный хор в пределах второго этажа.
42. Банак. Колоннада восточной апсиды храма.

- 43 Банак. Внутренний вид галереи в северо-восточной части храма.
44. Банак. Утолщение наружной стены первого яруса изнутри галереи в виде арочной стены.
45. Банак. Закрытие арочного пролета с левой стороны отдельно стоящей колонны.
- 46 Банак. Открытые торцы галереи первого и второго ярусов.
47. Банак. Отдельно стоящая колонна в северо-восточной части галереи.
48. Банак. Капитель колонны восточной апсиды (фото Франко Марра, 1970 г.).
49. Банак. Западный фасад храма. Реконструкция Т. Мрутяна.
50. Банак. Начало стены северной апсиды и остаток утолщенной стены галереи.
- 51 Звартноц. Капитель отдельно стоящей колонны храма.
- 52 Звартноц. Западный фасад храма. Реконструкция Т. Тораманяна.
- 53 Звартноц. Фрагмент орнаментированного пояса храма.
- 54 Звартноц. Капитель колонны экседров.
55. Гагикашен. Статуя царя Гагика, в руках модель храма.
- 56 Сен-Шапель (Париж). Барельеф с образом Звартноца.
- 57 Двин. Капитель старинного сооружения, раскопанного в Двине.
- 58 Ошк ванк. Общий вид храма с юга.
- 59 Ошк ванк. Общий вид храма с северо-востока.
- 60 Ошк ванк. Вид храма с юга.
- 61 Ошк ванк. Общий вид храма с юго-запада.
- 62 Ошк ванк. Барельеф строителей на южном фасаде.
- 63 Ошк ванк. Внутренний вид южной стены западного крыла храма.
- 64 Ошк ванк. Подкупольное пространство.
- 65 Ошк ванк. Окно западного фасада.
- 66 Ошк ванк. Поперечный разрез храма. Обмер А. Кальгина (исполн. М. Керна).
- 67 Ошк ванк. Фрагмент южного фасада храма.
- 68 Хаху ванк. Общий вид храма с юго-востока.
- 69 Хаху ванк. Вид храма с юга.
- 70 Хаху ванк. Вид храма с северо-востока.
- 71 Хаху ванк. Внутренний вид северо-восточной части храма.
72. Хаху ванк. Продольный разрез по оси восток—запад. Обмер А. Кальгина (ист. Б. Рябова).
73. Хаху ванк. Ниши левой половины восточной апсиды.
74. Хаху ванк. Южный фасад храма. Обмер А. Кальгина (исполн. Б. Рябова).
- 75 Хаху ванк. Арочные проемы между нефами западного крыла.
- 75а Хаху ванк. Капитель колонны.
- 76 Хаху ванк. Барельеф святого в южной галерее.
- 77 Эгрек. Восточный фасад храма.
- 78 Тайоц Кар (Тавузкиар). Общий вид развалин храма.
- 79 Тайоц Кар. Внутренний вид развалин храма.
80. Олти. Шестиапсидная церковь. Общий вид развалин.
- 81 Гогюба. Общий вид развалин храма.
- 82 Киагмис-адты. Общий вид развалин храма.
- 82а С. Шушаник (Талин). Фрагмент купольного перехода.
- 83 Ехегнамор. Общий вид храма с юго-востока.
- 84 Ехегнамор. Фрагмент пилона и арок.
- 85 Ехегнамор. Внутренний вид купольной части храма.
- 86 Чордван. Восточный фасад храма.
- 87 Чордван (Дорткилиса). Общий вид храма с востока.
88. Храм Апостолов. (Кёльн—ФРГ). Внутренний вид восточной апсиды.
- 89 Пархар. Общий вид верхней части храма (фото Франко Марра 1970 г.).
- 90 Пархар. Восточный фасад храма.
- 91 Пархар. Орнаментированная арка восточного фасада.
- 92 Чордван. Внутренний вид храма.
- 93 Пархар. Внутренний вид храма.
- 94, 95 Пархар. Надписи на верхних стенах среднего нефа храма (выполнены красками намного позже строительства храма).
96. Банак (район). Развалины шестиапсидного храма (фото Франко Марра, 1970 г.).



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածութիւն	3
ԻՇխան	11
ԲԱՆԱԿ	34
ՕՇԿ ՎԱՆՔ	104
ԽԱՆՈՒ ՎԱՆՔ	109
ՊԱՐՁ, ԽԱՉԱՉԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ	114
Էգրեկ	114
Եղեգնանոր՝ Չանգի	117
ԲԱԶՄԱՆՈՐԱՆ ՏԱՃԱՐՆԵՐ	120
<b>Եռախորան տաճարներ</b>	<b>120</b>
Օրթուլու	120
Իս տաճարը	120
Դորթքիլիսա՝ Կող	121
Պարտեկ	123
<b>Քառախորան տաճարներ</b>	<b>124</b>
Սրխեչ՝ սուրբ խաչ	126
Մուկաշիքիլիսա	126
Փենիկ և Կինեպոս	127
Բորուզեր	127
Չափարլի Կիշյա	128
Փանասկերո	128
<b>Վեց խորանով տաճարներ</b>	<b>129</b>
Անիի միջնաբերդի վեց խորանով եկեղեցի	130
Անիի միջնաբերդից ոչ հեռու ս. Գրիգոր	130
Արուհամրենց ս. Գրիգոր	131
Կուսանաց վանքի ս. Հովսեփ	132
Հովվի եկեղեցի	133
Կիազմիս-Ալթի	135
Օլթիի ս. Գևորգ	136
Արդահանի ս. Գևորգ՝ Գոգյուբա, Գեորգոբայ	137
«Գրիգորաշեն» (Թալինի շրջան)	138
Ս. Շուշանիկ (Թալինի շրջան)	140
Բոչորմա՝ Վրաստան	142
Կացիի՝ Վրաստան	144
<b>Ութ խորանով տաճարներ</b>	<b>146</b>
Չորավար	147
Իրինդավանք	149
Փրկչի եկեղեցի	150
Տայոց Քար	151
ԲԱԶԻԼԻԿ ՏԱՃԱՐՆԵՐ	154
Սխտորուտ	154
Իշխան	154
Չորդվան (Դորթքիլիսա)	155
Պարխար	156
ПАМЯТНИКИ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ ГЛУБИННАЯ АРМЕНИЯ (Резюме)	159
LES MONUMENTS ARCHITECTURAUX DE L'ARMÉNIE PROFONDE (résumé)	163
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	168
ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ	172
ПЕРЕЧЕНЬ ЧЕРТЕЖЕЙ	175
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ	<b>176</b>
ПЕРЕЧЕНЬ ФОТОСНИМКОВ	181

**Մարության Տիրան Հարությունի**  
**ԽՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՔ**

Հրատ. խմբագիր՝ Օ. Ա. Մարկոսյան  
Նկարիչ՝ Վ. Ա. Հարությունյան  
Գեղ. խմբագիր՝ Յգ. Ա. Ասատրյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

**Тиран Арутюнович Марутян**  
**ГЛУБИННАЯ АРМЕНИЯ**  
(На армянском языке)

Издательство «Советакан грох», ул. Теряна, 91  
Ереван — 1978.

ИБ—393

Հանձնված է շարվածքի 5/V 1977 թ.: Ստորագրված է տպագրության 18/XI 1977 թ.: Թուղթ № 1, 84×108<sup>1</sup>/<sub>16</sub>, տպագր. 11,5 մամ. = 19,32 պայմ. մամ., հրատ. 17,3 մամ. + 32 ներդիր: Գինը՝ 2 ռ. 90 կ.: Պատվեր 305: ՎՖ 05743: Տպաքանակ 5000:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91:  
ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

Типография № 1 Госкомитета Сов. Мин. Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул.

Алавердяна, 65.





